



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2(114)2024






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
2(114)2024



ISSN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՆՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ,
Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Սահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Սահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- ԻՐԱՎԱԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ CONTRA LEGEM ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ – **Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ**..... 11
- ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ – **Ն. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**..... 49
- «ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ» ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ – **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**..... 69
- ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ՀԻՄՔԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԵԼՈՒ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ (ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ) – **Ա. ՂԱԶԱՐՅԱՆ**..... 84
- THE CONSTITUTIONAL CYCLES OF THE REPUBLIC OF ARMENIA – **A. HARUTYUNYAN** (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՑԻԿԼԵՐԸ – **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**)..... 116
- ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻՉՄԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ – **Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ** 133
- ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ – **Դ. ՀԱԿՈՐՅԱՆ**..... 163

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

- ՏԵՂԵԿԱՑՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ – **Շ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**..... 180

- POLITICAL AND LEGAL ANALYSIS OF UN PEACEKEEPERS' MANDATE IN THE CENTRAL AFRICAN REPUBLIC – **T. SIMONYAN** (ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱԿ-ի ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻ ՄԱՆԴԱՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ – **S. ՍԻՄՈՆՅԱՆ**)..... 192
- ՊԵՏԱԻՇԽԱՆԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄԸ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ. ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ – **Ն. ԲԱԼՅԱՆ**..... 205

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- РЕЦЕНЗИЯ НА МОНОГРАФИЮ ИЛЮХИНОЙ В.А. “ПРИНЦИПЫ ПРАВА В НАЦИОНАЛЬНЫХ ПРАВОВЫХ СИСТЕМАХ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ И РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ)” – **А. ГАМБАРЯН** (ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Վ.Ա. ԻԼՅՈՒԽԻՆԱՅԻ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ (ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)» ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ – **Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ**)..... 220

II. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1717-1728)

- 2023 թվականի օգոստոսի 22-ին ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 թվականի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1717, 5 մարտի 2024 թվականի) 227

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 2(114)2024
4

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 233

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1718, 12 մարտի 2024 թվականի)..... 251

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 261

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ
ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ»
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1719, 12 մարտի 2024 թվականի) 268

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 283

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1720, 22 մարտի 2024 թվականի)..... 290

2(114)2024
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ ՏԵՂԵԿԱԳՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 5

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 295
- 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԱՆՎՏԱՆԳ ԿԱՊԻՒՂՈՒ ՄԱՍԻՆ» ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ
ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
(ՍԴՈ – 1721, 22 մարտի 2024 թվականի)..... 302
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 307
- 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՍԻԱԿԱՆ
ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1722, 9 ապրիլի 2024 թվականի)..... 314
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 321
- ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
18-Ի «ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԹԻՎ 1
ՀՈՂՎԱԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՎ
ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆՁԵՌԵԼՈՒ ԴԵՊԻ ԵՆԹԱՍԱՀԱՐԱԿԱՆ ԱՖՐԻԿԱ
ԵՎ ԻՐԱՔ» ԹԻՎ 259 ԲԱՆԱՁԵՎՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1723, 9 ապրիլի 2024 թվականի)..... 328

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 2(114)2024
6

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 332

- ԼԻԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԵՎ ՀԱՍՄԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 184-ՐԴ ՀՈԴԿԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1724, 9 ապրիլի 2024 թվականի)..... 339

- «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԹՐԱՆՍ ԿԱՎԿԱՋՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 131-ՐԴ ՀՈԴԿԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 195-ՐԴ ՀՈԴԿԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1725, 16 ապրիլի 2024 թվականի) 365

- «ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԼԵՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴԿԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 11-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1726, 23 ապրիլի 2024 թվականի)..... 389

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 414

- 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԱԹԵՆՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1727, 14 մայիսի 2024 թվականի)..... 416

2(114)2024
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 7

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 420
- 2000 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1728, 14 մայիսի 2024 թվականի)..... 427
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... 430

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է
ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻ ԹԻՄԻՆ..... 437
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ
ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԳՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ..... 439
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ..... 440
- ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ..... 442
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ..... 443

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024 ՏԵՂԵԿԱԳԻՐ

- ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻՆ..... 444
- ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՆՈՐԸՆՏԻՐ ԴԱՏԱՎՈՐ ԴԱՎԻԹ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ..... 445

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԺԱՆ ՄՈՆԵԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ..... 446
- ԵՎՐԱՍԻԱ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՎ «ՏԱԹԵՎ» ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՅՅ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ..... 447
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ..... 448

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ..... 449
- ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ XIX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ..... 450

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵՐ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ..... 452
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱՅԼ ԱՅՅԱՆՆԵՐ..... 453

- ՀՀ ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ Է ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ... 454



DOI: 10.59560/18291155-2024.2-11

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

**ԻՐԱՎԱԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ CONTRA LEGEM
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

Ամփոփագիր

Աշխատանքի նպատակն է ներկայացնել, թե contra legem իրավունքի զարգացման դոկտրինը իրավաընկալման ռի տիպի պայմաններում է հնարավոր: Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը կիրառման հնարավորություն ունի իրավական ռեյատիվիզմի պայմաններում, երբ իրավաընկալման որևէ տիպ չի բացարձականացվում: Բնական իրավունքի դոկտրինը պարարտ հող է ստեղծում օրենքին հակառակ իրավունքի զարգացման համար, իսկ կոշտ լեգիզմը բացառում է դատավորի կողմից օրենքին հակառակ իրավունքի զարգացման որևէ դրսևորում:

Contra legem իրավունքի զարգացման դոկտրինը քննարկվում է էքսկլյուզիվ և ինկլյուզիվ իրավաբանական պոզիտիվիզմի տեսանկյունից: Եզրակացություն է արվում, որ էքսկլյուզիվ իրավաբանական պոզիտիվիզմը որոշակի իրավիճակներում հնարավոր է համարում, որ իրավունքը կարող է զարգանալ օրենքին հակառակ:

Հետխորհրդային ավանդույթների պայմաններում պոզիտիվիստ դատավորը, եթե նույնիսկ փաստացի գործի օրենքին հակառակ,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024
11

ապա այդ երևույթը քողարկելու նպատակով կօգտագործի «օրենքը շտկող մեկնաբանություն», կամ «օրենքից ողջամիտ բացառություն» ձևակերպումները:

Հոդվածում *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը մեկնաբանվում է հարաբերական և բացարձակ իմաստներով:

Հիմնաբառեր. *contra legem*, իրավաընկալում, բնական իրավունք, էքսկլյուզիվ պոզիտիվիզմ, ինկլյուզիվ պոզիտիվիզմ, դատարան, լեգիզմ, իրավաբանական ռեյաստիվիզմ:

1. Ընդհանուր դրույթներ

Contra legem իրավունքի զարգացման և դրա մասին տեսության գոյաբանական հիմքն իրավաընկալումն է: Օրենքի դրույթին հակառակ իրավունքի զարգացումը հնարավոր է, եթե կոնկրետ իրավական համակարգը հիմնված է իրավաընկալման բազմակարծության վրա: Եթե, օրինակ՝ կոնկրետ պետությունում, գետերոնոմ ուժի միջոցով իրավունքը նույնացվում է օրենքի տեքստի հետ, ապա *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը դատապարտված է: Նախկինում նշել ենք, որ պոզիտիվիզմն ու լեգիզմը չեն կարող հանդուրժել օրենքին հակառակ իրավակիրառման որևէ դրսևորում, մինչդեռ *contra legem* իրավունքի զարգացումը հնարավոր է արդարացնել միայն լայն իրավաընկալման տեսանկյունից¹: Այժմ նշված մոտեցումը հստակեցնելու և ճշգրտելու ժամանակն է, ինչը, սակայն, հեշտ աշխատանք չէ և բարդությունը պայմանավորված է, ի թիվս այլ գործոնների, նաև իրավաընկալման տիպերի ռեյաստիվիզացիայով (հարաբերականացմամբ):

Հարաբերական են դարձել իրավաընկալման տարբեր տիպերի դեմարկացիոն գծերը: Դա ակնհայտ տեսանելի է, երբ իրավաբանական պոզիտիվիզմի շրջանակներում համադրում ենք էքսկլյուզիվ (կոշտ, խիստ, բացառող) և ինկլյուզիվ (փափուկ, մեղմ, ներառող) պոզիտիվիզմի ուղղությունները: Այսպես՝ ամերիկյան իրավունքի փիլիսոփայության երկու խոշոր ներկայացուցիչների՝ Ռ. Դվորկինի և Հ. Հարթի տևական

¹ **Гамбарян А.С.** Развитие права вопреки закону (*contra legem*) в Республике Армения // Государство и право. 2023. № 5. - С. 146.

բանավեճի արդյունքում Հ. Հարթը, տեղի տալով Ռ. Դվորկինի ինտելեկտուալ հարձակումներին, իր մահից հետո վերահրատարակված՝ «Իրավունքի հայեցակարգը» աշխատության «Հետգրությունում»¹ բարձրացրեց «սպիտակ դրոշ»՝ ընդունելով, որ իր տեսությունը պարզապես սոցիալական փաստերի մասին չէ և անվանեց այն ինկլյուզիվ պոզիտիվիզմ, որը հնարավոր էր համարում իրավունքում բարոյական սկզբունքների ներմուծումը²: Այլ կերպ՝ Հ. Հարթն իր «Հետգրությունում» մեղմել էր իր դիրքորոշումը և ընդունել էր, որ ճանաչման կանոնը՝ որպես իրավական վավերության չափանիշներ, կարող է ներառել բարոյական սկզբունքների համապատասխանությունը³: Այս ամենի արդյունքում ամերիկյան իրավաբանական պոզիտիվիզմը պառակտվեց երկու ճամբարների՝ էքսկլյուզիվ և ինկլյուզիվ պոզիտիվիզմի:

Պատմությունը վկայում է այն մասին, որ իրավաընկալման որևէ տիպի (ուղղության) տևական ժամանակով բացարձականացումը հնարավոր չէ: Ժամանակակից աշխարհում դժվար է Վիշինսկու ոճով իրավունքի միասնական և համապարտադիր բնորոշում տալ, քանի որ իրավունքն ու դրա ընկալումները, հիմնված լինելով բազմակարծության վրա, հարաբերական են: Իրավունքը և իրավաընկալումը կախված են կոնկրետ պատմական ժամանակաշրջանից ու սոցիալ-արժեքային համակարգից: Ռեյատիվիզմը (հարաբերականությունը), որպես իրավափիլիսոփայական սկզբունք, իրավունքը դիտարկում է բազմակարծության (տարբեր իրավաընկալումների) հիման վրա՝ պահանջելով չկտրել իրավունքը մշակութային, գաղափարախոսական

¹ **Hart H.L.A.** The Concept of Law, 2d ed., ed. Joseph Raz and Penelope Bullock. Oxford: Oxford University Press, 1994. PP. 238-276. Ռուսերեն թարգմանվել է Հ. Հարթի «Իրավունքի հայեցակարգը» աշխատության 1961 թ. առաջին հրատարակությունը: (**Харт Г.Л.А.** Понятие права / Пер. с англ. - СПб.: Изд-во С.-Петербурга. ун-та, 2007).

² **Hart's Postscript:** Essays on the Postscript to "The Concept of Law". Ed. Jules L. Coleman. Oxford, 2001. **Dworkin R.** Hart's Postscript and the Character of Political Philosophy // Oxford Journal of Legal Studies. 2004. Vol. 24, No. 1. PP. 1-37.

³ **Уакс Р.** Философия права. Краткое введение / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2020. - С. 65-66.

հիմքերից և արժեքների համակարգից¹: Ամերիկացի իրավաբանները նշում են.

«Այն փաստը, որ իրավունքը բարդության բարձր աստիճանի սոցիալական ինստիտուտ է՝ բազմաթիվ տեսանկյուններով, որոնք իրենց բնույթով տարբերվում են տարբեր հասարակություններում և պատմական զարգացման տարբեր փուլերում, դժվարացնում է տալ դրա սահմանումը: Այնուամենայնիվ, Արևմուտքում իրավունքի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում հատուկ ուշադրություն է դարձվել այս հասկացություններից (իրավալնկալումներից՝ հեղ.) մեկին. դրանք չեն կարող ընկալվել մեկուսացված այն ընդհանուր սոցիալ-պատմական պայմաններից, որոնցից դրանք առաջացել են: Այս տեսակի հայեցակարգերը մրցել են միմյանց հետ քաղաքակրթության պատմության ողջ ընթացքում»²:

Այն ռուս տեսաբանները, որոնք քաջատեղյակ են արևմտյան իրավագիտության ավանդություններին, ևս նշում են, որ իրավունքը պարզապես անուն է, որը մարդիկ տվել են սոցիալական իրականության առանձին հատվածին, իսկ այդ սոցիալական իրականությունն ու դրա սահմանները փոփոխական են, այդ պատճառով իրավունքի բուն հասկացությունը դարաշրջանից դարաշրջան, ժողովրդից ժողովուրդ ևս փոխվում է³: Ընդ որում՝ ամերիկյան իրավունքի փիլիսոփայությունում նշվում է, որ իրավունքը սոցիալական փաստերին տրված պիտակ է (ярлык, label), իսկ իրավունքի տեսությունը պիտակավորման (պիտակ կացնելու) տեսություն է (labeling theory)⁴:

¹ Մանրամասն տե՛ս **Тонков Е.Н.** Релятивизация правоприменения в современных обществах // Релятивизм в праве: коллективная монография / Под ред. И.И. Осветимской, Е.Н. Тонкова. - СПб.: Алетейя, 2021. - С. 35-64.

² **Берман Г., Грейнер У., Салиба С.** Природа и функции права / Пер. с англ. – Москва, Челябинск: Социум, 2022. - С. 17-18.

³ **Антонов М.В.** Теория государства и права: учебник и практикум. - М.: Изд. Юрайт, 2023. - С. 321.

⁴ **Шапиро С.** Законность / Пер. с англ. - М.: Изд -во Института Гайдара, 2021. - С. 80.

Ավելին՝ հարաբերական է դարձել նույնիսկ իրավունքի փիլիսոփայությամբ զբաղվող գիտնականների նույնականացումը այս կամ այն իրավաընկալման կրողի հետ: Օրինակ՝ ընդունված է Ռոնալդ Դվորկինին համարել բնական իրավունքի հայեցակարգի կրող (թեև նա իր ուսմունքը բնութագրելու համար «բնական իրավունք» ձևակերպումը չի գործածել¹), իսկ Ջոզեֆ Ռազին՝ էքսկլուզիվ իրավաբանական պոզիտիվիզմի հետևողական կողմնակից: Ռուսական աղբյուրներում Ջ. Ռազին համարում են նեոպոզիտիվիզմի ներկայացուցիչ²: Մինչդեռ Ջ. Ռազին իր «Իրավունքի հեղինակությունը (...» աշխատության երկրորդ հրատարակության նախաբանում զարմանք է հայտնում այն կապակցությամբ, որ իրեն համարում են պոզիտիվիստ, իսկ Ռ. Դվորկինին՝ բնական իրավունքի կողմնակից: Նա նշում է.

«Դվորկինին բնական իրավունքի կողմնակից համարելը, ինչպես նրան հաճախ անվանում են այն իրավաբանները, որոնք քիչ են համակրում նրա աշխատությունները, նույնքան տարօրինակ և սխալ է, որքան ինձ նման հեղինակներին իրավական պոզիտիվիստներ համարելը, որոնք հերքում են իրավական պոզիտիվիզմի շատ ավանդական դրույթներ»³:

Լիբերտար-իրավաբանական տեսության հիմնադիր Վ. Ներսեսյանցն իր տեսությունը՝ բնական իրավունքի դոկտրինի հետ միասին, համարում էր իրավաբանական իրավաընկալում՝ ի հակադրություն լեգիստական իրավաընկալման⁴: Մինչդեռ նրա աջակերտները և հետևորդները հետագայում Վ. Ներսեսյանցի ազատական-իրավաբանական դոկտրինը որակեցին ոչ թե որպես մաքուր իրավաբանական իրավաընկալում,

¹ Антонов М.В. Теория государства и права: учебник и практикум. - М.: Изд. Юрайт, 2023. - С. 234.)

² Малиновская Н.В. Право и ценности в условиях кризиса правового регулирования // Кризис права: история и современность: монография / Под общ. ред. В. В. Денисенко, М.А. Беляева, Е. Н. Тонкова. - СПб.: Алетейя, 2023. - С. 214.

³ Раз Дж. Авторитет права. Эссе о праве и морали / Пер. с англ. И. Дягиловой. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 10.:

⁴ Нерсисянц В.С. Философия права: учебник для вузов. - М.: Норма, 1999. - С. 32-35.

այլ որպես ինտեգրալ (ինտեգրատիվ) իրավաընկալման տեսակ՝ պոզիտիվիզմի և բնական իրավունքի հայացքների սինթեզի համակարգ¹:

Այս ամենը վկայում է այն մասին, որ իրավաընկալման ռեյա-տիվիզացիայի պայմաններում *contra legem* իրավունքի զարգացումը հնարավոր չէ կապել միայն կոնկրետ իրավաընկալման հետ՝ բացառելով մյուսների հետ վերջինիս առնչությունը:

Այնուամենայնիվ, օրենքին հակառակ իրավունքի զարգացումն անկասկած հնարավոր չէ, եթե կոնկրետ իրավական համակարգը կառուցված է բացառապես լեգիստական (ֆորմալիստական) պոզիտիվիզմի հիման վրա, որտեղ բացառվում (հերքվում) է օրենքի տեքստից դուրս իրավունքի գոյությունը: Մյուս կողմից՝ *contra legem* իրավունքի զարգացումը հնարավոր է բնական իրավունքի հայեցակարգի, նույնիսկ իրավաբանական պոզիտիվիզմի այլ ուղղությունների տեսանկյունից:

2. *Contra legem* իրավունքի զարգացումն արդարացնող և բացառող իրավաընկալումները

2.1. Ընդհանուր դրույթներ

Առաջին հայացքից կարող է թվալ, որ *contra legem* իրավունքի զարգացման համար պարարտ հող է ստեղծում հատկապես իրավաբանական (դատական) ռեալիզմը, սակայն դա այդպես չէ, քանի որ իրավաբանական ռեալիզմը *in abstracto* հերքում է մինչև դատական իրավակիրառումը օրենքի տեքստի նշանակությունը կամ այն ճանաչելու հնարավորությունը (օրինակ՝ Մ. Տրոպերը)²: Այս պարագայում դատարանի որոշումը չի կարող լինել *contra legem* այն պարզ պատճառով, որ օրենքի տեքստը, նախքան դատարանի որոշումը, որևէ նշանակություն չունի. դատական ակտն ինչպես կարող է հակադրվել մի բանի, որն ըստ էության գոյություն չունի, դատական ակտն ինչպես կարող է լինել *contra legem*, եթե դատարանի համար «lex»-ը չունի որևէ նշանակություն:

¹ Четвернин В.А. Российская конституционная концепция правопонимания // Конституционное право: восточноевропейское обозрение. 2004. № 4. - С. 15.

² Այս մասին տե՛ս Стратегии судебного толкования и принципы права: учебное пособие // Под ред. Е. В. Тимошиной. - Санкт-Петербург, 2022. - С. 24-25, 34-36:

Բացի այդ, *contra legem* իրավունքի զարգացումն արդարացնող իրավաընկալման տիպերը քննարկելիս, պետք է նկատի ունենալ, որ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինն առանձնացնում է օրենքին հակառակ իրավունքի զարգացման երկու որակապես տարբեր ուղղություններ.

1) *contra legem* իրավունքի զարգացման քելզենյան ուսմունքը, ըստ որի՝ հաջողված հեղափոխություններից հետո հեղափոխական իրավունքը զարգանում է տապալված կառավարության օրենքներին հակառակ.

2) *contra legem* իրավունքի զարգացման դասական դոկտրինը, ըստ որի՝ օրենքի կոնկրետ դրույթի աղաղակող անարդարության կամ անտրամաբանության դեպքում դատավորը գործում է օրենքի կոնկրետ հոդվածին հակառակ՝ հիմնվելով իրավունքի սկզբունքների վրա:

Contra legem իրավունքի զարգացման այս ուղղությունները հնարավոր է բացատրել իրավաընկալման տարբեր տիպերի հիման վրա. այսպես, հաջողված հեղափոխությունից հետո հեղափոխական իրավունքի հին օրենքներին հակառակ զարգացումն արդարացվում է Հ. Քելզենի նորմատիվիստական ուսմունքով, իսկ *contra legem* իրավունքի զարգացման դասական դոկտրինը՝ հատկապես բնական իրավունքի ուսմունքով:

2.2. *Contra legem* իրավունքի զարգացումը քելզենյան նորմատիվիստական ուսմունքի տեսանկյունից

Contra legem իրավունքի զարգացման քելզենյան ուսմունքը բացատրում է հաջողված հեղափոխությունների դեպքում հին օրենսդրությանը հակառակ նոր իրավակարգ ձևավորելու գործընթացը:

Հեղափոխությունները, ինքնին, օրենքներին հակասող գործընթացներ են, սակայն հաջողված հեղափոխության պարագայում նոր իշխանությունը (արդյունավետ կառավարությունը), որպես կանոն, նախաձեռնում է նոր Սահմանադրության և օրենքների ձևավորման գործընթաց: Ընդ որում, այդ գործընթացն իրականացվում է դեռևս վավեր, սակայն գործունությունը կորցրած հին Սահմանադրությանը հակասող ճանապարհով: Հ. Քելզենը նշում էր.

«(...) այն պահից, երբ հին Սահմանադրությունը կորցնում է իր գործունեությունը (действенность), իսկ նոր սահմանադրությունը դառնում է գործուն, (...) հին սահմանադրության հիման վրա ընդունված, սակայն նոր կարգերի կողմից ըմբռնելիություն չստացած օրենքներն այլևս վավեր (действительными) չեն, իսկ հին սահմանադրությամբ լիազորված մարմիններն այլևս իրավասու մարմիններ չեն»¹:

Ա. Ն. Մեդուշևսկին տվել է հեղափոխական իրավունքի լեգիտիմացման մասին քելզենյան ուսմունքի դիպուկ գնահատականը.

«Սահմանադրական հեղափոխության նորմատիվիստական տեսությունը, չնայած իր մաքիավելիզմին, իրավագիտության շատ արժեքավոր ձեռքբերումներից է, քանի որ այն թույլ է տալիս բացատրել XX-րդ դարի պատմության այնպիսի պարադոքսալ երևույթներ, ինչպիսիք են հակասահմանադրական ուժերի՝ սահմանադրական եղանակով իշխանության գալը կամ դասական սահմանադրականության գաղափարների օգտագործումը՝ ուժի միջոցով հաստատված քաղաքական ռեժիմները լեգիտիմացնելու համար»²:

Նորմատիվիստական ուսմունքի տեսանկյունից *contra legem* իրավունքի զարգացման օրինակ է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընդունված «Դատարանի մասին» 24.11.1917 թ. դեկրետի 5-րդ կետը.

«Տեղական դատարանները գործերը լուծում են Ռուսաստանի Հանրապետության անունից և իրենց որոշումներում և դատավճիռներում ղեկավարվում են տապալված կառավարությունների (ցարական իշխանությունների՝ հեղ.) օրենքներով միայն այնքանով, որքանով դրանք չեն վերացվել

¹ Кельзен Г. Чистое учение о праве. 2-е изд. / Пер. с нем. - СПб., 2015. - С. 262.

² Медушевский А.Н. Кризис права как проблема теоретической юриспруденции // Политические сочинения: право и власть в условиях социальных трансформаций. - М., СПб., 2015. - С. 41.

հեղափոխությամբ և չեն հակասում հեղափոխական խղճին և հեղափոխական իրավագիտակցությանը»¹:

Խորհրդային իշխանության՝ ցարական Ռուսաստանի օրենսդրությանը հակառակ գործելու մասին դիրքորոշումը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է *contra legem* իրավունքի զարգացման քելզենյան ուսմունքին, քանի որ հեղափոխական իշխանությունն ուներ բավարար ուժ՝ ապահովելու իր սահմանած նոր օրենքների գործունեությունը: Այնուամենայնիվ, «Դատարանի մասին» դեկրետի 5-րդ կետի առկայության պարագայում *contra legem* իրավունքի զարգացման մասին պետք է խոսել վերապահումով, քանի որ խորհրդային դատավորը ցարական Ռուսաստանի օրենքներին հակադրվելու էր ոչ թե անմիջապես քելզենյան դոկտրինի, այլ «Դատարանի մասին» դեկրետի 5-րդ կետի հիման վրա²:

Պետք է քննարկել ևս մեկ հարց. հեղափոխության դեպքում հին և նոր իրավակարգերի «պայքարի» համատեքստում ինչքանով է արդարացված օգտագործել «իրավունքի զարգացում» ձևակերպումը. միգուցե այս դեպքում պետք է խոսել ոչ թե հին օրենքներին հակառակ հեղափոխական իրավունքի զարգացման, այլ նոր իրավակարգի ձևավորման մասին: Հեղափոխությունից հետո նոր իշխանությունը ձգտում է ձևավորել նոր իրավակարգ, սակայն հեղափոխական իշխանությունը չի կարող միանգամյա ակտով ամբողջ ծավալով կտրել կապը նախորդ իշխանությունների (տապալված կառավարության) ստեղծած օրենսդրության հետ: Հին իշխանությունների ընդունած օրենսդրության հետ կապն ամբողջ ծավալով կտրելու դեպքում պետական-հասարակական համակարգը պարզապես կաթվածահար կլինի և մարդիկ կհայտնվեն հոբսյան «բնական ազատության վիճակում»: Այդ իսկ պատճառով հեղափոխությունից հետո հին օրենքներից շատերը դեռևս վավեր են և նոր իրավունքը «ծնվում» և

¹ Декреты Советской власти. Т. I. - М.: Гос. изд. полит. литературы, 1957. - С. 125.

² Այս մասին տես **Гамбарян А.С.** Развитие права советскими судьями вопреки закону (*contra legem*) // Судебная власть и уголовный процесс. 2023. № 2. - С. 7-26.

զարգանում է հին օրենքներին հակառակ: Հեղափոխությունից հետո հին Սահմանադրության հիման վրա ընդունված օրենքների գործողությունը, հեղափոխական իշխանության ուղղակի կամ լռելյայն կամքով, որոշ ժամանակ պահպանվում է, ուստի այս պարագայում կարելի է խոսել հին օրենքներին հակառակ հեղափոխական իրավունքի զարգացման մասին:

Հ. Քելզենն այս կապակցությամբ նշել է.

«Այստեղ մենք գործ ունենք ոչ թե իրավունքի ամբողջական վերստեղծման հետ, այլ մի իրավակարգի կողմից մեկ այլ իրավակարգի նորմերի ռեցեպցիայի հետ»¹:

2.3. *Contra legem* իրավունքի զարգացումը բնական իրավունքի դոկտրինի տեսանկյունից

Բնական իրավունքի դոկտրինը, որում առկա է բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի դուալիզմ, ընդունում է օրենքի դրույթներին հակառակ իրավունքի զարգացման հնարավորությունը: Բանն այն է, որ «ռացիոնալ» բնական իրավունքն ամենահաճախն է հակադրվում պետության օրենսդրությանը. հանդես գալով որպես բազմաթիվ հեղափոխությունների և պոզիտիվ իրավունքի արմատական բարեփոխումների դրոշակակիր՝ այն կատարում է նորարարական գործառույթ՝ հավակնելով զբաղեցնել անկատար և հնացած օրենսդրության տեղը²:

Ռ. Դվորկինը, ում տեսությունը, ըստ էության, հիմնված է բնական իրավունքի դոկտրինի վրա, հնարավոր էր համարում իրավունքի ծանրակշիռ սկզբունքների հիման վրա հակադրվել օրենքի կոնկրետ հոդվածներին: Նա որպես օրինակ նշում է Ռիգսի գործը (*Riggs v. Palmer*, 115 N.Y. 506, 1889), որտեղ Նյու Յորքի վերաքննիչ դատարանը 1889 թ. դատական ակտով որոշել էր այն հարցը, թե անձն արդյո՞ք կարող է ըստ կտակի ստանալ ժառանգություն, եթե մեղավոր է ճանաչվել կտակարարի

¹ Кельзен Г. Чистое учение о праве. 2-е изд. / Пер. с нем. - СПб., 2015. - С. 261.

² Михайлов А.М. Философия права: классический юснатурализм и историческая школа юристов: учебное пособие для вузов. 2-е изд. - М.: Изд. Юрайт, 2023. - С. 348.

սպանության մեջ (տվյալ գործով թողը թունավորելու եղանակով սպանել էր պապին, քանի որ մտավախություն ուներ, որ պապը, որը նպատակ ուներ ամուսնանալու, կարող էր փոխել կտակը)՝ Ռ. Դվորկինը նշում է.

«Ռիգսի գործով նորմի փոփոխությունը (կտակի մասին օրենսդրական ակտի նոր մեկնաբանությունը) արդարացված էր այն սկզբունքով, որ ոչ ոք չի կարող օգուտ քաղել իր կատարած հանցագործությունից»²:

Թեև Նյու Յորքի դատարանը իր որոշման մեջ «բացահայտ հայտարարել է, որ որոշում է կայացրել օրենքի տառին հակառակ՝ դիմելով նպատակաբանական (տելելոլոգիական) մեկնաբանությանը և իրավունքի ընդհանուր սկզբունքներին»³, սակայն Ռ. Դվորկինն ուղղակիորեն չի օգտագործում «օրենքին հակառակ» կամ «օրենքին հակադրվել» ձևակերպումները: Նա տերմինների օգտագործման հարցում ընտրել է առավել մեղմ ձևակերպումներ. «օրենքում փոփոխություն կատարել» կամ «օրենքի նոր մեկնաբանություն»:

Contra legem իրավունքի զարգացման դոկտրինին մեծ, նույնիսկ մահացու վնաս են հասցնում բնական իրավունքի «վախճանի» կամ դրա ներուժի «սպառման» մասին տարբեր տեսաբանների մոտեցումները, ինչպես նաև՝ իրավունքի նկատմամբ կոշտ լեգիստական մոտեցումը:

2.4. *Contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի գլխավոր հակառակորդները

2.4.1. Բնական իրավունքի «մահախոսականը»: Դժվար է համաձայնել գերմանացի իրավաբան Օ. Հյոֆեի այն գնահատականի հետ, ըստ որի.

¹ Riggs v. Palmer. 115 N.Y. 506, 1889. 22 N.E. 188, 115 N.Y. 506, 23 Abb. N. Cas. 452, 42 Hun 388, 26 N.Y. St. Rep. 198, URL: https://www.nycourts.gov/reporter/archives/riggs_palmer.htm

² Дворкин Р. О правах всерьез. // Пер. с англ. - М.: Российская политическая энциклопедия, 2004. - С. 65.

³ Аллахвердиев И.Г. Толкование contra legem: место в системе видов толкования // Теория государства и права. 2022. № 4(29). - С. 43.

«Այսօր (...) բնական իրավունքի մասին խոսելը ոչ տեսության, ոչ էլ իրավունքի պրակտիկայի համար այլևս որևէ էական դեր չի խաղում»¹:

Բնական իրավունքը չի կարող այն աստիճան սպառել իր հնարավորությունները, որ այլևս որևէ ուշադրության չարժանանա: Եթե նույնիսկ նման բան տեղի ունենա, ապա դա կվկայի այն մասին, որ տվյալ հասարակությունը բռնել է հակամարդկային մոլագարության ճանապարհը, որտեղ անմարդկային-մարդկային ուժին (օրինակ՝ միապետին կամ ավտոկրատին) կփոխարինի անմարդկային-արհեստական ուժը (օրինակ՝ արհեստական բանականությունը), իսկ նրա ստեղծած «թվային իրավունքը» կդառնա իր անմարդկային ծրագրերն իրականացնելու գործիքը: Նման իրավիճակում արդեն «թվայնացված» լեզվով կհանդիսանա արհեստական ուժի անմարդկություններն արդարացնելու գաղափարախոսական հիմքը:

Բնական իրավունքի «մահվան» կամ նրա պոստենցիալի սպառման մասին դատողություններ անելիս չպետք է մոռանալ, որ Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Գերմանիան ստիպված էր հետևողականորեն պայքարել իրավունքի ուտիլիզացիայի (օգտահանության) դեմ, որը նացիզմը ձեռնարկել էր իր հակամարդկային նպատակներն իրականացնելու համար: Ֆրանսիացի մասնագետ Ռայմոն Լեգերը (Раймон Леже) նացիստական գերմանիայում իրավունքի քայքայման կապակցությամբ նշել է.

«Սա հիանալի կերպով ցույց է տալիս, թե ինչ հետևանքների կարող է հանգեցնել իրավական պոզիտիվիզմի բացարձականացված հայեցակարգը»²:

XXI-րդ դարում կարիք կա Գերմանացի գիտնականներին հիշեցնել ամերիկյան իրավաբան Լ. Ֆուլերի հետևյալ խոսքերը.

¹ Хёффе О. Политика. Право. Справедливость. Основоположения критической философии права и государства / Перев. с нем. - М.: Изд. Гнозис, 1994. - С. 52.

² Леже Р. Великие правовые системы современности: сравнительно-правовой подход / Пер. с фр. - 2-е изд., перераб.- М.: Изд. Волтерс Клувер, 2010. - С. 54-55.

«Գերմանական իրավաբանական պոզիտիվիզմը ոչ միայն իրավագիտությունից դուրս մղեց իրավունքի բարոյական նպատակների մասին ցանկացած դատողություն, այլև անտարբեր դարձավ այն բանի նկատմամբ, ինչը ես անվանում էի իրավունքի ներքին բարոյականություն: Գերմանացի իրավաբանը տարօրինակ կերպով պատրաստ էր որպես իրավունք ընդունել այն, ինչ հրատարակվել էր պետության կողմից (. . .) եթե գերմանական իրավաբանությունը խստորեն զբաղվեր իրավունքի ներքին բարոյականության հարցերով, ապա նման հղումներ (նկատի ունի Ռադբոուխի բանաձևի վկայակոչումը՝ հեղ.) անելու անհրաժեշտություն չէր լինի»¹:

Մարդկությունն իրեն չպետք է հասցնի այնպիսի իրավիճակի, որպեսզի կրկին ստիպված լինի խոսել բնական իրավունքի վերածննդի անհրաժեշտության մասին. չպետք է կրկնել Գ. Ռադբոուխի սխալը, որը մինչև նացիստական բռնապետությունը լինելով Գերմանիայի արդարադատության նախարարը, չափից շատ էր տարված իրավաբանական լեզվիցով:

2.4.2. Լեզիզմը: Contra legem իրավունքի զարգացումը հնարավոր չէ այն համակարգերում, որտեղ ճանաչում ունի բացառապես կոշտ լեզիզմը, որտեղ արդարությունն ածանցվում է օրենքից, և արդար է համարվում այն, ինչ օրինական է:

Արդարությունը չի կարող լինել բացառապես լեզիստական: Հնարավոր է նաև աղաղակող անարդարություն, որի աղբյուրը հենց օրենքն է: Պատահական չէ, որ տարբեր իրավակարգերում, օրինակ՝ միջազգային իրավունքում, արդարության և օրենքի հարաբերակցության հիման վրա արդարությունը բաժանվում է երեք տեսակի՝ intra legem (ըստ օրենքի) արդարություն, praeter legem (օրենքից դուրս) արդարություն և contra legem (օրենքին հակառակ)

¹ Фуллер Л.Л. Позитивизм и верность праву: ответ профессору Харту // Философия и язык права. - М.: Канон+ РООИ «Реабилитация», 2024. - С. 317.

արդարություն, իսկ որոշ իրավաբաններ ավելացնում են նաև չորրորդ տեսակը՝ արդարություն *ex aequo et bono* (ըստ՝ բարու և արդարության):

Առանձին երկրների ներպետական իրավունքում (օրինակ՝ Լեհաստանի իրավունքի տեսությունում) իրավակիրառման և արդարության հարաբերակցության հիման վրա առանձնացվում է արդարության երեք հայեցակարգ՝ լեգիստական, ոչ լեգիստական և հակալեգիստական²:

Արդարության լեգիստական հայեցակարգի համաձայն՝ արդար է այն որոշումը, որն օրինական է: Ինչն օրինական է, դա էլ արդար է: Դատարանը օրենքը չի գնահատում արդարության տեսանկյունից:

Արդարության ոչ լեգիստական հայեցակարգի համաձայն՝ արդար է այն որոշումը, որը կայացվում է օրենքի հիման վրա, քանի որ օրենքն արդար է: Օրենքները կիրառվում են, եթե արդար են, չեն կիրառվում, եթե անարդար են: Վերջին դեպքում դատավորը ռնում է «արդարացի իրավունքի ազատ որոնման» ուղին, որը դուրս է օրենքի շրջանակներից և բռնում է արդարադատության հակալեգիստական (ալեգիստական) հայեցակարգի ճանապարհը:

Արդարության հակալեգիստական (ալեգիստական) հայեցակարգի համաձայն՝ դատարանը որոշում է կայացնում անկախ օրենքից: Դա կարող է լինել *praeter legem* (օրենքը շրջանցող) կամ *contra legem* (օրենքին հակառակ):

Հետխորհրդային պետություններում դեռևս պահպանվում են կոշտ լեգիզմի ավանդույթները: Այս տեսանկյունից զարմանալի է Ա.Ֆ. Չերդանցևի այն պնդումը, ըստ որի՝ ռուսական իրավունքը միջանկյալ դիրք է զբաղեցնում մի կողմից՝ լեգիստական արդարության, մյուս կողմից՝ ոչ լեգիստական և հակալեգիստական արդարության հայեցակարգերի միջև: Նա նշում է.

¹ **Lapidoth, R.** Equity in International Law // Israel Law Review. 1987, №22(2), pp. 161 – 183; **Lowe V.** The Role of Equity in International Law // Australian Year Book of International Law. 1989, № 4, PP. 56; **Вялков А.** Роль принципа справедливости при оценке убытков по международному обычаю: куда дело Диалло и дело судна “Арктик Санрайз” ведут состояние права? // Международное правосудие. 2018. №4 (28). - С. 64.

² Մեքերունն ըստ՝ **Черданцев А.Ф.** Теория государства и права: учебник для вузов. - М.: Юрайт-М, 2001. - С. 338-339.

«Դատարանը կամ այլ մարմինը պետք է որոշում կայացնի գործող իրավունքի նորմերին համապատասխան: Դատավորը ելնում է այն բանից, որ արդարությունը ներդրված է հենց օրենքի մեջ: Եթե օրենքը թույլ է տալիս լուծումների մի քանի տարբերակ՝ դատավորն ընտրում է այն տարբերակը, որն ավելի շատ է համապատասխանում այս հարաբերությունների նկատմամբ կիրառվող արդարությանը»¹:

«Լեգիստական - ոչ լեգիստականան - հակալեգիստական» արդարության հայեցակարգերում ռուսական իրավունքի «միջանկյալ դիրքի» մասին տեսաբանի դատողությունը զարմանք է առաջացնում երկու պատճառով:

Նախ՝ նրա դատողությունում խոսքը բացառապես արդարության լեգիստական հայեցակարգի մասին է, քանի որ նա նշում է օրենքով թույլ տրված հայեցողական լիազորությունների միջև արդարացի ընտրություն կատարելու մասին: Դժվար է այստեղ տեսնել ոչ լեգիստական, առավել ևս՝ հակալեգիստական արդարություն. չէ որ իրավակիրառողը ընտրություն է կատարում հենց օրենքով նախատեսված երկու լիազորությունների միջև:

Երկրորդ՝ տեսաբանը ինչպե՞ս կարող է խոսել «լեգիստական - ոչ լեգիստականան - հակալեգիստական» արդարության հայեցակարգերում ռուսական իրավունքի «միջանկյալ դիրքի» մասին, չէ որ դա ճանապարհ կհարթի դեպի իր կողմից սուր քննադատության արժանացած ինտեգրատիվ իրավաընկալում²:

Այսպիսով՝ կան և կլինեն տեսաբաններ, որոնք բնական իրավունքի «մահվան» մասին հայտարարությանը զուգահեռ՝ կխոսեն նաև լեգիզմի, լեգիստական արդարության ու տրամաբանության (տրամաբանական է այն, ինչ օրինական է) բացառիկության մասին: Պատմության մեջ

¹ Черданцев А.Ф. Теория государства и права: учебник для вузов. - М.: Юрайт-М, 2001. - С. 338-339.

² Այս մասին տե՛ս Черданцев А.Ф. Интегративное недопонимание права // Журнал российского права. 2016. № 10 (238). - С. 14.

կրկին կհայտնվեն Վիշինսկիներ, որոնք իրենց բացառիկ ինտելեկտուալ կարողությունները կօգտագործեն հիմնավորելու իրենց՝ իռացիոնալ բացառիկ լեգիտիմություն ձեռք բերած քաղաքական ղեկավարների (այս անգամ՝ արհեստական բանականության) ստեղծած պոզիտիվ (թվային) իրավունքի անվերապահ արժեքն ու դրան ենթարկվելու անհրաժեշտությունը:

Պատմության հրեշավոր օրինակների կրկնվելու հնարավորությունը չի կարելի բացառել, սակայն դրանց «վերակենդանացման» շանսերը հնարավոր է նվազեցնել կամ հետաձգել, եթե պետաիրավական համակարգում առկա լինեն փոքր մասշտաբի հարցերով (օրինակ՝ օրենքի մեկնաբանման կանոնները, կոլիզիաների լուծումը, օրենքի գործողությունը ժամանակի մեջ) պետության աղաղակող անարդարություններին կամ անտրամաբանություններին հակազդեցության կառուցակարգեր: Եթե որևէ իրավական համակարգ չի պարունակում փոքր մասշտաբի հարցերով աղաղակող անարդար կամ անտրամաբանական կարգավորումներին հակազդելու գործունե կառուցակարգեր, ապա ժամանակի ընթացքում այդ անարդարության կամ անտրամաբանության փոքր մասշտաբները կընդլայնվեն և կհասնեն անասելի չափերի:

Contra legem իրավունքի զարգացման տեսությունը կարող է փորձել կատարել այդ գործառույթը: Այսպես՝ եթե մինչև ողբերգությունների վրա հասնելը կոնկրետ հասարակության իրավական համակարգը որպես սոցիալական փաստ ճանաչի փոքր մասշտաբի հարցերով դատարանների կողմից օրենքին հակառակ իրավունքը զարգացնելու հնարավորությունը, ապա դա թույլ կտա զսպել լայնամասշտաբ ողբերգությունները:

Այսպիսով՝ contra legem իրավունքի զարգացումը բացառվում է լեգիզմի պայմաններում, երբ իրավունքը նույնացվում է քաղաքական իշխանության ստեղծած օրենքի տեքստի հետ, մինչդեռ իրավաբանական պոզիտիվիզմի այլ դրսևորումները չեն բացառում նման քննարկումները:

3. *Contra legem* իրավունքի զարգացումը և իրավաբանական պոզիտիվիզմը

3.1. Ընդհանուր դրույթներ

Ժամանակակից իրավաբանական պոզիտիվիզմը գնալով դառնում է ավելի հմուտ և բարդ: Ինչպես նշվեց՝ ամերիկյան իրավաբանական պոզիտիվիզմը պառակտվել է երկու ճամբարի՝ էքսկլյուզիվ (կոշտ, խիստ, բացառող) և ինկլյուզիվ (փափուկ, մեղմ, ներառող) պոզիտիվիստների, որոնց միջև ծագում են շարունակական բանավեճեր:

Ամերիկյան տեսական աղբյուրներում օգտագործվող էքսկլյուզիվ և ինկլյուզիվ իրավաբանական պոզիտիվիզմը չպետք է շփոթել ռուսական գրականությունում գործածվող «կոշտ լեգիզմ» և «փափուկ պոզիտիվիզմ» ձևակերպումների հետ¹: Վերջիններիս առանձնացման հիմքը ոչ թե իրավունքի և բարոյական սկզբունքների հարաբերակցությունն է, այլև իրավունքի՝ օրենքի տեքստից կախվածության աստիճանը:

3.2. *Contra legem* իրավունքի զարգացումը էքսկլյուզիվ և ինկլյուզիվ պոզիտիվիզմի պայմաններում

3.2.1. Էքսկլյուզիվ և ինկլյուզիվ պոզիտիվիզմն ամերիկյան իրավունքի փիլիսոփայությունում: Կախված իրավունքի և բարոյականության հարաբերակցությունից՝ ամերիկյան իրավունքի փիլիսոփայությունում մրցակցում են իրավաբանական պոզիտիվիզմի երկու ուղղություններ՝ էքսկլյուզիվ և ինկլյուզիվ պոզիտիվիզմը: Էքսկլյուզիվ պոզիտիվիզմն անվանում են նաև «կոշտ պոզիտիվիզմ» (hard positivism), իսկ ինկլյուզիվ պոզիտիվիզմը՝ «փափուկ պոզիտիվիզմ» (soft positivism):

Ըստ էքսկլյուզիվ պոզիտիվիզմի (exclusive positivism)՝ ինչ-որ բանն «իրավունք» համարելու որոշումը չի կարող կախված լինել կանոնի բովանդակությունից, դրա նյութական արժեքից կամ արժանիքներից: Այլ կերպ ասած՝ կոշտ պոզիտիվիստները իրավունքի ճանաչման հարցում բացառում են բարոյականության վրա որևէ հղում: Այդ է

¹ Лапаева В.В. Типы правовопонимания: правовая теория и практика: монография. - М.: Российская академия правосудия, 2012; Караваев И.В. Пределы судейского усмотрения и правовой критерий как основа юридического метода: теория и практика рассмотрения экономических споров // Труды Института государства и права РАН. 2020. Том 15. № 5. - С. 104.

պատճառը, որ կոշտ պոզիտիվիստներին անվանում են նաև բացառող պոզիտիվիստներ:

Ըստ ինկլյուզիվ պոզիտիվիզմի (inclusive positivism)¹ իրավունքի համակարգը կարող է ներառել բնական իրավունքների նվազագույն բովանդակությունը և իրավունքի որոշման համար հնարավոր է հղում կատարել բարոյականության վրա: Այստեղից էլ ուղղության անվանումը՝ ներառական (ինկլյուզիվ), որի ներկայացուցիչներին անվանում են նաև ինկորպորատիվիստներ: Սակայն բարոյականությունը կարող է հանդիսանալ իրավական վավերականության պայման միայն այն դեպքում, երբ դա սահմանում է «ճանաչման կանոնը»: Օրինակ, այնտեղ, որտեղ Սահմանադրությունը (կամ Իրավունքների մասին Բիլը) դատարանից պահանջում է գործը լուծել՝ այն կապելով արդարության և ազնվության սկզբունքների հետ, դատավորից ակնկալվում է, որ նա կորոշի գործի ելքը՝ վերլուծելով (կշռադատելով) այդ բարոյական արժեքները¹:

Այնուամենայնիվ, էքսկլյուզիվ և ինկլյուզիվ պոզիտիվիզմի սահմանազատումը հարաբերական է: Օրինակ՝ ժամանակակից ամերիկյան էքսկլյուզիվ պոզիտիվիզմի ներկայացուցիչները նշում են, որ ինչպես էքսկլյուզիվ, այնպես էլ ինկլյուզիվ պոզիտիվիստները համաձայն են, որ դատավորները պարտավոր են կիրառել բարոյական նորմեր, եթե ծագման չափանիշները (օրենքի նորմերը՝ հեղ.) սպառվել են: Նրանք պարզապես տարածայնություններ ունեն այն հարցի շուրջ, թե ինչպես պետք է նկարագրել այն, ինչ անում են դատավորները. ինկլյուզիվ իրավաբանական պոզիտիվիստի համար դատավորը կիրառում է իրավական նորմ, իսկ էքսկլյուզիվ իրավաբանական պոզիտիվիստը կարծում է, որ դատավորը ոչ թե կիրառում, այլ ստեղծում է իրավական նորմ²: Էքսկլյուզիվ իրավաբանական պոզիտիվիստների տրամաբանությունը հետևյալն է. եթե նույնիսկ իրավական համակարգը (օրենքը) դատավորին, բարդ գործեր քննելիս, պարտավորեցնում

¹ Уакс Р. Философия права. Краткое введение / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2020. - С. 65-66; Пищулин А.В. Юридический позитивизм в современном правопонимании: автореф. дис. ... канд. юрид. наук. - М., 2010. - С. 10.

² Шапиро С. Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 457-458.

է դեկավարվել բարոյական սկզբունքներով, ապա օրենքի այդ վերապահումն ինքնին բարոյական սկզբունքները չի դարձնում օրենքի մաս, ուստի տվյալ դեպքում դատավորը չի կիրառում իրավունք: Այն, ինչ կիրառում է դատավորը, դեռ իրավունք չէ: Նրանք զուգահեռներ են տանում միջազգային կոլիզիոն իրավունքի հետ, երբ մի պետության քաղաքացիական օրենսգիրքը պարտավորեցնում է դատավորին կիրառել մեկ այլ պետության օրենքը, սակայն այս դեպքում օտարերկրյա օրենքը չի դառնում այն կիրառող դատավորի պետության օրենսդրության համակարգի մաս:

Արդյո՞ք իրավաբանական պոզիտիվիզմը հնարավոր համարում է contra legem իրավունքի զարգացումը: Պոզիտիվիստները հաճախ նշում են, որ բարոյական սկզբունքները (որոնք չունեն սոցիալական ծագում) կարելի է կիրառել այն դեպքում, երբ օրենքի նորմերը (սոցիալական ծագում ունեցող փաստերը) սպառվել են կամ պարունակում են անորոշություններ: Եթե դատավորը բարոյական սկզբունքները պետք է կիրառի այն ժամանակ, երբ տվյալ հարաբերությունը կարգավորող օրենքն սպառվել է (այսինքն՝ բացակայում է նորմը), ուստի այս պարագայում contra legem իրավակիրառման մասին խոսք լինել չի կարող. դատավորը բարոյական սկզբունքների հիման վրա ինչի՞ն պետք է հակադրվի, եթե կիրառման ենթակա օրենքի նորմը սպառված է: Օրենքի սպառված լինելու իրավիճակում բարոյական սկզբունքներ կիրառելը, ըստ էության, extra legem իրավունքի զարգացում է (իրավունքի անալոգիայի ձևով):

Այնուամենայնիվ, ամերիկյան իրավաբանական պոզիտիվիստների աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նրանք չեն բացառում օրենքին հակադրվելը: Ասվածը հաստատելու համար քննարկենք էքսկլյուզիվ իրավաբանական պոզիտիվիզմի կողմնակիցներ Ջոզեֆ Ռազի և Սկոտ Շապիրոյի աշխատությունները:

3.2.2. Contra legem իրավունքի զարգացումը էքսկլյուզիվ պոզիտիվիզմի պայմաններում

3.2.2.1. *Ջ. Ռազը դատավորի կողմից օրենքին հակառակ գործելու մասին:* էքսկլյուզիվ իրավաբանական պոզիտիվիզմի հետևողական

կողմնակից Ջ. Ռազը կարծում էր, որ իրավունքը բաղկացած է կանոններից, որոնց դատարանները պարտավոր են հետևել: Նա նշում է, որ մի շարք իրավական համակարգերում մարդկանց թույլատրվում է չկատարել օրենքի պահանջները, եթե դրա համար առկա են ծանրակշիռ պատճառներ (օրինակ՝ կրոնական համոզմունքների հիման վրա գինվորական ծառայությունից հրաժարվելը), սակայն Ջ. Ռազը իրավաբանական պոզիտիվիզմին հատուկ ոճով շարունակում է, որ ոչ իրավական պատճառները չեն արդարացնում օրենքի պահանջներից շեղվելը, եթե դա օրենքով թույլատրված չէ: Նա նաև անդրադառնում է այն հարցին, թե ի՞նչ պետք է անել, եթե օրենսդիրը, այնուամենայնիվ, չի կարգավորել ծանրակշիռ փաստարկների պատճառաբանությամբ օրենքի պահանջները կատարելուց հրաժարվելու իրավիճակը: Ջ. Ռազը չէր լինի պոզիտիվիստ, եթե այս հարցին չտար հետևյալ պատասխանը.

« (...) օրենքը պետք է ճանաչի գործին առնչվող բոլոր փաստարկները, իսկ եթե դա այդպես չէ, ապա դա օրենքի բարոյական թերությունն է: Ինչ-որ իմաստով, այն փաստը, որ օրենքը երբեմն թույլ չի տալիս դատարաններին ճանաչել որոշակի փաստարկների ծանրակշիռ լինելը, իսկապես բարոյական թերություն է: Թող այդպես լինի, բայց դա անխուսափելի չարիք է»¹:

Մեկ այլ դեպքում նա նշում է.

«(...) հաճախ ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ կոնկրետ դեպքն անհրաժեշտաբար պետք է դիտել որպես կանոնից բացառություն, և որ մարդկանց, կամ գոնե դատարաններին, պետք է տրվի նման բացառությունները ճանաչելու իրավասություն, այսինքն՝ պետք է տրվի ընդհանուր լիազորություն ազատելու օրենքի պահանջներից՝ բարդության կամ արդարության հիման վրա: **Հնարավոր է, որ սա կարող է արդարացված լինել որոշակի իրավական խնդիրների**

¹ **Раз Дж.** Авторитет права. Эссе о праве и морали / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 69.

համար: Բայց շատ ոլորտներում այս դեղամիջոցն ավելի վատը կլինի, քան բուն հիվանդությունը» (ընդգծումը՝ հեղ.)¹:

«Անխուսափելի չարիք» ու «դեղամիջոցն ավելի վատն է, քանի հիվանդությունը» ձևակերպումներից հետո թվում էր, թե Ջ. Ռազը պիտի բացառեր որևէ իրավիճակում կամ որևէ արդարացմամբ դատավորի կողմից օրենքին պահանջներին հակադրվելու կամ օրենքի պահանջները կատարելու պարտականությունից ազատելու հնարավորությունը, սակայն դա այդպես չէ: Նա աշխատանքում մի քանի անգամ հստակ նշում է, որ բացառիկ դեպքերում դատավորը կարող է ազատել անձին օրենքի պահանջները կատարելու պարտականությունից կամ կարող է օրենքով նախատեսված ընդհանուր կանոնից անել բացառություն: Ճիշտ է, այս հարցում Ջ. Ռազի ձևակերպումները զգուշավոր են, սակայն այդ զգուշավորությունը չի հասնում երկիմաստության: Նա նշում է.

«Ընդհանուր իրավունքի համակարգերում դատարանները կանոններն ազատորեն անտեսելու կամ դրանք փոփոխելու լիազորություն չունեն, եթե դրանք վերաբերում են ընդհանուր իրավունքի պարտադիր նորմերին: Նրանք չեն կարող փոխել դրանք, երբ կարծում են, որ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները՝ դա կլինի լավագույն տարբերակը: **Նրանք կարող են փոխել նորմերը միայն որոշակի պատճառներով: Նրանք կարող են փոխել դրանք, օրինակ, անարդարության պատճառով, ծայրահեղ անարդար խտրականության պատճառով:** Բայց եթե դատարանը կարծում է, որ դրանք լավագույն կանոնները չեն և որևէ այլ պատճառով դրանք ընդունելի չեն, նա, այնուամենայնիվ, պարտավոր է հետևել այդ կանոններին» (ընդգծումը՝ հեղ.)².

¹ **Раз Дж.** Авторитет права. Эссе о праве и морали / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 70.

² **Раз Дж.** Авторитет права. Эссе о праве и морали / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 201-202.

Այս մեջբերումից պարզ է դառնում, որ էքսկլյուզիվ պոզիտիվիզմի ջատագով Ջ. Ռազը հնարավոր է համարում, որ դատավորը կարող է անտեսել օրենքի պահանջները, եթե դրանք ծայրահեղ անարդար ու խտրական են: Այս միտքը հիշեցնում է Ռադբուֆսի բանաձևը, ըստ որի՝ աղաղակող անարդար օրենքը ենթակա չէ կիրառման:

Ջ. Ռազի ասածն ավելի պարզ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանները չեն կարող, ըստ ցանկության կամ ըստ նախասիրության, զուտ բարոյական հիմնավորումներով, անտեսել օրենքը, սակայն կարող են տեղ գտնել բացառիկ իրավիճակներ, որոնք, այնուամենայնիվ, արդարացնում են դատարանի կողմից օրենքն անտեսելու (օրենքին հակադրվելու) վարքագիծը:

Ջ. Ռազի տեսությունում *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի համար պարարտ հող է ստեղծվում, երբ նա օրենքի ինքնության (գոյության) չափանիշը ինստիտուցիոնալիզացնում է, այսինքն՝ օրենքը իրավական համակարգի մաս է համարում, այն պարագայում, երբ ճանաչվում է իրավակիրառ մարմինների կողմից: Այլ կերպ ասած՝ նա օրենքի արդյունքայնությունը (ռեզուլտատիվությունը) համարում է դրա գոյության պայման, որի պարագայում շեշտը իրավաստեղծ մարմիններից տեղափոխվում է իրավակիրառ մարմինների վրա: Նա նշում է.

«Երբ իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների գործողությունները միմյանց հետ հակասության մեջ են մտնում, ապա իրավունքի սուբյեկտների կողմից հաշվի են առնվելու հենց իրավակիրառ մարմինների գործողությունները, հենց իրավակիրառ սուբյեկտներն են ամենաբարձր մարմինը, որը որոշում է, թե որն է համարվում իրավունք»¹:

Այս մեջբերումից պարզ է դառնում, որ Ջ. Ռազը իրավաստեղծ մարմինների և իրավակիրառ մարմինների գործողությունների միջև հակասության դեպքում իրավունքը որոշելու հնարավորությունը

¹ **Раз Дж.** Авторитет права. Эссе о праве и морали / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 160.

վերապահում է իրավակիրառողներին, իսկ դա ոչ այլ ինչ է, քան իրավակիրառ մարմինների կողմից օրենքին հակադրվելու իրավիճակ: Նա նշում է.

«Եթե դատարանները ստատուսը հետևողականորեն մեկնաբանում են այնպես, որը շեղվում է դրա սկզբնական իմաստից, ապա օրենք է դառնում հենց նրանց մեկնաբանությունը և ոչ թե օրենքի սկզբնական իմաստը: Այս մոտեցման համաձայն՝ օրենքի գոյությունը տրամաբանորեն կապվում է իրավակիրառ մարմինների պրակտիկայի հետ»:

Այսպիսով, օրենքի գոյության և արդյունքայնության հարցը քննարկելիս՝ Ջ. Ռազն ուղիղ նշում է, որ եթե դատավորները հետևողականորեն հրաժարվեն կիրառել օրենքը, ապա օրենքը չի համարվի իրավական համակարգի մաս, նույնիսկ եթե այդ օրենքը գործողության մեջ է դրվել օրենսդրական կարգով և չի վերացվել: Այս ոլորտում նրա զգուշավորությունը վերաբերում է իրավաբանական ռեալիզմի ներկայացուցիչների հետ չնույնանալուն:

3.2.2.2. Ս. Շապիրոն Պլաններին (օրենքներին) հակառակ գործելու մասին: Ս. Շապիրոն Պլանավորման իրավական տեսության (Planning Theory of Law) հիմնադիրն է: Այն էքսկլյուզիվ պոզիտիվիստական տեսություն է, որի համաձայն՝ իրավական կանոնները համարվում են պլաններ կամ պլանանման (planlike) նորմեր (այսուհետև՝ Պլան), որոնք ընդունվել են այն անձանց կողմից, ովքեր լիազորված են պլանավորել այլոց վարքագիծը: Ըստ այս տեսության՝ օրենքն առաջին հերթին սոցիալական պլանավորման կառուցակարգ է: Պլանները, ի տարբերություն տրամաբանության օրենքների և բարոյական սկզբունքների, «պոզիտիվ» երևույթներ են. դրանք ստեղծվում են ընդունման միջոցով (adoption) և ապահովվում՝ ճանաչման միջոցով (acceptance): Տրամաբանության և բարոյականության նորմերը ոչ մեկի կողմից չեն ստեղծվում, դրանք գոյություն ունեն պարզապես իրենց

¹ **Раз Дж.** Авторитет права. Эссе о праве и морали / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 160.

վերջնական իրականության ուժով: Ս. Շապիրոն հստակ նշում է, որ եթե Պլաններն (օրենքները) ընդունվել են, ապա ռացիոնալությունը պահանջում է կիրառել և կատարել այդ Պլանները, քանի որ անհմաստ կլիներ Պլաններ կազմել, եթե դրանցով չէին առաջնորդվելու¹:

Իրավական պլանավորման տեսությունն արդյոք հնարավոր համարում է այնպիսի իրավիճակ, երբ պլանավորման մասնակիցը, արդարացված որևէ պատճառով, հակադրվում է ընդհանուր Պլանի որևէ դրույթին: Այս հարցի պատասխանը կփորձենք տալ Ս. Շապիրոյի «Խոհարարական ակումբի» մասին փոխաբերության օրինակով, որտեղ ակումբի անդամները պլանավորում են ընթրիքներ պատրաստելու գործընթացը և դրա արդյունավետությունը բարձրացնելու համար որոշում են իրենց ակումբից որևէ մեկին ընտրել որպես շեֆ խոհարար, ով ակումբի անդամների համար պետք է սահմանի ընթրիք պատրաստելու ընդհանուր Պլանը, որում պետք է նշվեն, թե ով ինչ պետք է պատրաստի, ինչ պետք է գնի, որտեղից պետք է գնի և այլն:

Անկասկած, եթե ակումբի անդամները ճանաչել են Պլաններ կազմելու հարցում շեֆ խոհարարի «վերադասությունը», ուստի տրամաբանորեն պարտավոր են հետևելու նրա մշակած ընդհանուր Պլանին և կատարել դրանում առկա հանձնարարությունները: Սակայն *contra legem* իրավունքի զարգացման տեսության տեսանկյունից հետաքրքիր է, թե Շապիրոն ինչպես կգնահատեր այն իրավիճակը, եթե օրինակ՝ շեֆ խոհարարը կազմում է թանապուր պատրաստելու ընդհանուր Պլան և դրանում սահմանում է ակումբի բոլոր անդամների գործողությունները, տալիս է հանձնարարականներ, որոնց ցանկում է նաև թանապուրի մեջ լիմոնաջուր լցնելու հանձնարարությունը (բոլորին հայտնի է, որ լիմոնաջուրը և թանապուրը աղաղակող աստիճանի անհամատեղելի են): Եթե ենթակա խոհարարը կատարի թանապուրի մեջ լիմոնաջուր լցնելու Պլանի կանոնը, ապա դրանով անվերապահորեն կփչացնի թանապուրը: Արդյո՞ք խոհարարը պետք է կատարի շեֆ խոհարարի Պլանում առկա այդ կետը, թե՞ պետք է հակադրվի աղաղակող անընդունելի (աղաղակող անտրամաբանական) հանձնարարականին:

¹ Шапиро С. Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 217, 226-228, 270, 229, 295.

Contra legem իրավունքի զարգացման տեսությունն այս հարցին կտա հստակ պատասխան՝ ենթակա խոհարարը, հիմք ընդունելով խոհարարության ոլորտում առկա համապատասխան սկզբունքները, պետք է հակադրվի շեֆ խոհարարի Պլանի՝ լիմոնաջուր օգտագործելու մասին հիմար կանոնին: Հակառակ պարագայում՝ թանապուր պատրաստելու Պլանը պարզապես չի իրագործվի: Ուստի, եթե Պլանի իրական նպատակն արդյունք ունենալն է, ապա ենթակա խոհարարը պետք է հակադրվի ընդհանուր Պլանի այդ կետին:

Ամենայն հավանականությամբ Ս. Շապիրոն չէր ցանկանա համաձայնվել contra legem իրավունքի զարգացման տեսության վերը նշված մոտեցման հետ, քանի որ նա ուղիղ նշում է, որ Պլանը կարող է լինել հիմար կամ արատավոր, սակայն եթե սուբյեկտն ընդունել է ընդհանուր Պլան, որը սահմանում է ստորադասություն, ապա ռացիոնալության տեսանկյունից նա պարտավոր է հետևել այդ Պլանին, նույնիսկ եթե նրանց վերադասները տգետ են, էթիկայից դուրս են կամ անպատասխանատու են: Հիերարխիայում (աստիճանակարգությունում) ստորադաս դիրքի ճանաչումը ստեղծում է ենթարկվելու ռացիոնալ պահանջ: Ս. Շապիրոն նշում է, որ նույնիսկ անգրագետ և անպատասխանատու ղեկավարների դեպքում, «այնուամենայնիվ, հաճախ առկա են հնազանդվելու ծանրակշիռ պատճառներ»¹:

Ընդհանուր առմամբ, իռացիոնալ է այն իրավիճակը, երբ ենթակա խոհարարը մի կողմից՝ ճանաչում է շեֆ խոհարարի Պլանը, մյուս կողմից՝ նրան հնարավորություն է տրվում չկատարել շեֆ խոհարարի Պլանի պահանջները: Սակայն առավել քան իռացիոնալ է, եթե պնդում ենք, որ ենթակա խոհարարն անվերապահորեն պետք է կատարի ընդհանուր Պլանի այն պահանջը, որի իրականացումը զրոյացնում է Պլանով ակնկալված արդյունքը:

Մյուս կողմից, եթե ուշադիր հետևում ենք Ս. Շապիրոյի ձևակերպումներին, ապա քննարկվող հարցում նրա մոտեցումները հարաբերական (ռելյատիվիստական) են: Նա աշխատանքի տարբեր հատվածներում նշում է, որ Պլանները ինքնանպատակ և քարացած չեն:

¹ Шапиро С. Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 251-252.

«Օրենքի նպատակը պլանավորելը չէ հանուն պլանավորման: Եթե իրավական համակարգերը պարզապես պետք է ընդունեին և կիրառեին պլանները՝ անկախ մեթոդից կամ բովանդակությունից, ապա խնդիրն ավելի լավ կլուծվեր մետաղադրամ շրջելով»¹:

Նա նշում է ծանրակշիռ այնպիսի պատճառների մասին, որոնք կարող են արդարացնել Պլանի կետերին հակադրվելը: Քննարկվող հարցն առավել ակնառու դարձնելու համար մեջբերենք Ս. Շապիրոյի մի քանի դատողություն:

1) «Իհարկե, պլանի ընտրությունը չի նշանակում, որ այն քարի վրա է փորագրված և չի կարող փոփոխվել: **Պլանի վերանայումը ռացիոնալ է միայն և միայն այն ժամանակ, երբ դրա համար առկա են բավարար ծանրակշիռ հիմքեր**»²:

2) «Նույնիսկ տնտեսական կամ ֆիզիկական հարկադրանքի դեպքերում, հենց որ մարդիկ ձևավորում են մտադրություն շեֆի հրահանգները դիտարկել որպես իրենց պլանավորման հաղթաթուղթ, նրանք փոխակերպում են իրենց նորմատիվ իրավիճակը և, եթե ոչ բարոյապես, ապա գոնե ռացիոնալ առումով ձգտում են հետևել դրանց, **եթե հանկարծ չծագեն ծանրակշիռ պատճառներ, որոնք կստիպեն նրանց վերանայել իրենց կարծիքը**»³:

3) «(...) պաշտոնյաների մեծ մասն իսկապես ընդունում է գլխավոր իրավական պլանը և նրանց քննադատում են օրենքին չհնազանդվելու համար՝ **հիմնավոր պատճառների բացակայության դեպքում**»⁴:

Այս մեջբերումներում մեր կողմից արված ընդգծումները վկայում են այն մասին, որ Ս. Շապիրոն հնարավոր է համարում Պլանի կետին հակադրվելը, եթե դրա համար առկա են ծանրակշիռ պատճառներ: Contra legem իրավունքի զարգացման տեսության առումով կարևոր է երկու հարց՝

¹ Шапиро С. Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 295.

² Шапиро С. Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 295.

³ Шапиро С. Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 252.

⁴ Шапиро С. Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 314.

1) ին՞չ ծանրակշիռ պատճառներ են, որոնք թույլատրում են հակադրվել (չհնազանդվել) Պլանին,

2) Պլանն արդյո՞ք պետք է նախատեսի Պլանի դրույթներին հակադրվելու (վերացնելու) պայմաններ:

Առաջին հարցի կապակցությամբ Ս. Շապիրոն, որպես ծանրակշիռ պատճառ, նշում է «նվազագույն չարիքի ընտրությունը»:

«Նվազագույն չարիքի առկայությունն այն պատճառն է, որը օրենքը բավականաչափ համոզիչ է համարում՝ խախտելու իր սեփական կանոնները»¹:

Ս. Շապիրոն, որպես նվազագույն չարիքի օրինակ, նշում է ծայրահեղ անհրաժեշտությունը, որը թույլատրում է անձանց խախտել օրենքը, եթե դա համարվում է նվազագույն չարիքի ընտրություն: Նա Պլանի դրույթներին հակադրվելու ծանրակշիռ պատճառը ուղիղ չի կապում իրավունքի սկզբունքների պահպանման անհրաժեշտության հետ, թեև նվազագույն չարիքի ընտրությունը կարող է կապված լինել իրավունքի սկզբունքի պահպանման անհրաժեշտության հետ:

Երկրորդ հարցի կապակցությամբ Ս. Շապիրոն նշում է, որ Պլանը պետք է նախատեսի իր դրույթները «խախտելու» պայմանները:

«Եթե կան ծանրակշիռ պատճառներ, ապա օրենքը սովորաբար թույլ է տալիս իր սուբյեկտներին վերանայել իրենց ուղղությունը: Այստեղ բարդությունն այն է, որ օրենքը հավակնում է սեփական ուժը կորցրած ճանաչելու պայմանները որոշելու իրավունքին»²:

Ս. Շապիրոն կարծում է, որ օրենքին հակադրվելը պետք է նախատեսված լինի օրենքով, այսինքն՝ նվազագույն չարիքն ընտրելու եղանակով օրենքի պահանջները «խախտելու» հնարավորությունը պետք է սահմանված լինի հենց օրենքով:

¹ Шапиро С. Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 342-343.

² Шапиро С. Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - С. 342-343.

Եթե նույնիսկ համարենք, որ Ս. Շապիրոն խոսում է օրենքին հակառակ գործելու մասին, ապա դա դժվար է նույնականացնել *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի հետ, քանի որ՝

1) նա ուղիղ չի նշում, որ օրենքին կարելի է հակադրվել իրավունքի սկզբունքների հիման վրա, մինչդեռ *contra legem* իրավունքի զարգացման դասական դոկտրինն օրենքին հակառակ գործելն արդարացնում է իրավունքի սկզբունքներով.

2) ըստ նրա՝ օրենքը պետք է նախատեսի մեկ այլ հոդվածին հակադրվելու (այն «խախտելու») հնարավորություն, մինչդեռ բառի իսկական (խիստ) իմաստով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինն օրենքին հակադրվելը կախվածության մեջ չի դնում օրենքով նման հնարավորություն նախատեսված լինելու հանգամանքի հետ:

Այժմ *contra legem* իրավունքի զարգացումը քննարկենք ինկյուզիվ իրավաբանական պոզիտիվիզմի տեսանկյունից:

3.2.3. *Contra legem* իրավունքի զարգացումն ինկյուզիվ իրավաբանական պոզիտիվիզմի պայմաններում

Ինկյուզիվ պոզիտիվիզմի կողմնակիցներն արդյոք հնարավոր համարում են այն, որ դատավորը կարող է հակադրվել օրենքի նորմերին, եթե դրանք աղաղակող կերպով հակասում են բարոյական սկզբունքներին: Կարելի է ենթադրել, որ նրանք բարոյական սկզբունքների հիման վրա օրենքին հակադրվելու մոտեցման հետ կհամաձայնվեն միայն այն պայմանով, եթե օրենքով ուղղակի կնշվի, որ դատավորը կարող է ղեկավարվել բարոյական սկզբունքներով ոչ միայն այն դեպքում, երբ օրենքն իրեն սպառել է, այլ նաև այդ սկզբունքների և օրենքի կոնկրետ դրույթի աղաղակող հակասության դեպքում:

Եթե պատկերացնենք, որ օրենքում առկա է հոդված, ըստ որի դատավորն իրավասու է գործել օրենքի կոնկրետ դրույթին հակառակ, եթե այն աղաղակող աստիճանի հակասում է իրավունքի սկզբունքներին (օրենքի վերապահում), ապա այս դեպքում արդյոք առկա է *contra legem* իրավունքի զարգացման իրավիճակ, չէ՞ որ դատավորին նման հնարավորություն տրվել է օրենքով:

Խիստ իմաստով *contra legem* իրավունքի զարգացումն առկա է այն դեպքերում, երբ օրենքում նախատեսված չէ օրենքի կոնկրետ դրույթներին հակառակ գործելու հնարավորության մասին որևէ հոդված, սակայն դատավորը, հիմք ընդունելով իրավունքի սկզբունքները, հակադրվում է օրենքի կոնկրետ դրույթին: Հենց սա է բացարձակ իմաստով *contra legem* իրավունքի զարգացումը:

Մյուս կողմից՝ հաշվի առնելով հետխորհրդային իրավական համակարգում գերակայող լեգիզմը՝ *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի ճանաչման շանսերը կմեծանան, եթե օրենքի մեջ նախատեսվի դրույթ, ըստ որի դատավորը կարող է հակադրվել օրենքի կոնկրետ դրույթին, եթե օրենքի այդ դրույթն աղաղակող աստիճանի անհամատեղելի է իրավունքի սկզբունքների հետ: Օրենքում նման վերապահման առկայության դեպքում *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինն անկասկած մեղմվում է, և այդ պարագայում *contra legem* իրավունքի զարգացման մասին կարելի է խոսել վերապահումով (հարաբերական իմաստով):

3.3. *Contra legem* իրավունքի զարգացման քողարկումը հետխորհրդային իրավաբանական պոզիտիվիզմի կողմից

Ռուսական, ինչպես նաև հայկական իրավական համակարգերում օրինականության սկզբունքը դեռևս համարվում է «սկզբունքների սկզբունքը», ուստի օրենքի կարգավորումներից շեղվելու, առավել ևս օրենքին հակառակ գործելու մասին դատողություններն առաջացնում են հակազդեցություն: Միայն վերջին ժամանակներում է, որ ռուսական դոկտրինում առավել ինտենսիվ է խոսվում «*contra legem*» մեկնաբանման կամ իրավակիրառման մասին¹: Իսկ ՀՀ բարձրագույն դատական

¹ **Поляков С.Б.** Изменение законодательства судебным правотворчеством // Юридическая техника. 2023. №17. - С. 132-139; **Ясинская-Казаченко А.В.** Интерпретация юридических фактов в суде при движении трудового спора // Ежегодник трудового права. 2023; **Аллахвердиев И.Г.** Толкование *contra legem*: место в системе видов толкования // Теория государства и права. 2022. № 4 (29). - С. 40-56; **Демидова И.С.** Правовое ограничение государства: эволюция и содержание основных теорий // Российский юридический журнал. 2009. № 3 (66). - С. 21-26; **Бабурин С.Н.** Современное общество между несправедливым законом и справедливым беззаконием // Социальная справедливость и право: проблемы теории и практики: Материалы международной конференции, Москва, 19 февраля 2016 года / Под общей редакцией Т.А. Сошниковой. М., 2016. - С. 19-25; **Федотов А.В.** Возможно ли применение *contra legem* в демократическом правовом государстве? // Журнал российского права. 2002. № 8. - С. 92-99.

խորհուրդն անուղղակի նշել է contra legem իրավունքի զարգացման հնարավորության մասին: Այսպես՝ նա 13.07.2020 թ. թիվ ԲԴԽ-39-Ո-Կ-11 որոշմամբ նշել է.

«Կարող է ծագել մի իրավիճակ, երբ վիճելի հարցերն իրապես չեն ունենա նորմատիվ կարգավորում կամ առկա նորմերի կիրառումը կհանգեցնի անարդար արդյունքի»:

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը թեև էքսպլիցիտ չի նշել, որ նման դեպքերում ՀՀ դատարանները պետք է իրավունքը զարգացնեն անարդար օրենքին հակառակ, սակայն նրա արտահայտած այս կարևոր դատողությունը կարող է ճանապարհ բացել Հայաստանում contra legem իրավունքի զարգացման դոկտրինի ճանաչման համար: Ավելին, ներկայումս առանձին հայ դատավորներ, հատուկ կարծիքներում հղում կատարելով contra legem իրավունքի զարգացման դոկտրինի վրա, հակադրվում են օրենքի կոնկրետ դրույթներին¹:

Հետխորհրդային պոզիտիվիստ դատավորը քաջ գիտակցում է, որ օրենքներում այնուամենայնիվ հնարավոր են անտրամաբանություններ, թերություններ և սխալներ, իսկ նման թերություններ ունեցող օրենսդրական դրույթներին ենթարկվելը (կիրառելը) երբեմն պարզապես անհնարին է (առկա է ֆիզիկական անհնարինություն), կամ էլ դրանք կիրառելը կառաջացնի աղաղակող աստիճանի անտրամաբանական կամ անարդար հետևանքներ: Պոզիտիվիստ դատավորը, ամենայն հավանականությամբ, գիտակցում է, որ նման իրավիճակներում պետք է շարժվի ոչ թե օրենքում նշված ուղիով, այլ պետք է ընտրի մեկ այլ ճանապարհ, որի դեպքում նա կշեղվի օրենքի տեքստից (ըստ էության՝ կհակադրվի օրենքի տեքստին): Բարդությունն այն է, թե լեզվական ինչ արտահայտություններով նա պետք է նկարագրի այդ՝ «մեկ այլ ճանապարհը». այդ վարքագիծը պետք է բնութագրի «իրավունքը օրենքին հակառակ զարգացնել» կամ «օրենքին հակառակ գործել» ձևակերպումներով, թե՛ «օրենքը շտկող մեկնաբանություն (interpretatio correctiva, abrogans)», կամ «ողջամիտ բացառություն» ձևակերպումներով:

¹ Տե՛ս ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Ռ. Խանդանյանի ՎԴ/8729/05/21 գործով 03.07.2023 թ. որոշման վերաբերյալ հատուկ կարծիքը:

Պոզիտիվիստ դատավորը օրենքի կոնկրետ պահանջին փաստացի հակադրվող իր վարքագիծն ամենայն հավանականությամբ չի բնութագրի «օրենքին հակառակ» ձևակերպմամբ: Նա իրական երևույթը քողարկելու նպատակով կօգտագործի տարբեր ձևակերպումներ և կդիմի տարբեր հնարքների, օրինակ՝ իբրև օրենսդրի իրական կամքը բացահայտելու նպատակով նա օրենքից բխեցրել է ողջամիտ բացառություն (թեև օրենքով էքսպլիցիտ նման բացառություն նախատեսված չէ), կամ դիմել է շտկող (коррекционного, interpretatio correctiva, abrogans¹) մեկնաբանման օգնությանը, բայց նա երբեք չի խոսի իրականության մասին:

Ընդ որում, ժամանակակից ռուս մասնագետները նշում են, որ շտկող մեկնաբանությունը օգտագործվում է ոչ միայն օրենսդրի ակնհայտ սխալների հետևանքները վերացնելու համար, այլ նաև՝ ակնհայտ անախրոնիզմ (ժամանակավրեպ) նորմերի կիրառման ժամանակ²: Ավելին՝ օրենքի շտկող մեկնաբանության տեսությունը զարգացել է այն աստիճան, որ արդիականացնող-շտկող մեկնաբանման տեսակից բացի առանձնացվում է նաև լեզու-շտկող մեկնաբանության տեսակը, որի դեպքում իրավական նորմի բովանդակությունը համապատասխանեցվում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմին³:

Առանձին ռուս մասնագետներ օրենքին հակառակ գործելու վարքագիծը քողարկելու նպատակով օգտագործում են առավել կոշտ ձևակերպումներ, ինչպիսին է օրենքի գործողության փաստացի կասեցումը: Այսպես՝ Յարական Ռուսաստանում հայտնի մասնագետ Ն.Ս. Տազանցևը նշում էր.

«(...) եթե սխալը հնարավորություն չի տալիս պարզել օրենքի իրական իմաստը, բայց միևնույն ժամանակ սխալ տեքստի կիրառումը փաստացի կամ իրավաբանորեն

¹ **Васьковский Е.В.** Руководство к толкованию и применению законов. Для начинающих юристов. - М., 1913. - С. 85-86; **Михайловский И.В.** Очерки философии права. Том I. - Томск, 1914. - С. 424-425.

² **Калиновский К.Б.** Коррекционное толкование отдельных положений законов о внесении изменений в УПК РФ // Журнал российского права. 2008. №8 (140). - С. 92.

³ **Смирнов А.В., Манукян А.Г.** Толкование норм права: учебно-практическое пособие. - М.: Проспект, 2008. - С. 89.

դարձնում է անհնար, ապա օրենքի գործողությունը պետք է փաստացի կասեցվի (սուսպենզացիա)՝ մինչև օրենսդրական փոփոխությունը»¹:

Քանի որ հեղինակը նշում է օրենքի գործողության ոչ թե *իրավաբանորեն*, այլ *փաստացի* կասեցնելու մասին, ուստի կարելի է ենթադրել, որ ցարական Ռուսաստանի օրենքներով նախատեսված չէր, մեկնաբանման ճանապարհով օրենսդրական սխալը ուղղելու անհնարինության դեպքում, օրենքի գործողությունը կասեցնելու մասին դրույթ: Այս պարագայում հեղինակի օգտագործած՝ օրենքի գործողությունը փաստացի կասեցնելու մասին ձևակերպումը համեմատաբար խիստ է: Այս պարագայում նույնպես ճիշտ չէ խոսել *contra legem* իրավունքի զարգացման մասին, քանի որ օրենքի գործողությունը փաստացի համարվում է կասեցված, ուստի իրավակիրառողը չի էլ կարող հակադրվել կասեցված օրենքին (քաղաքական իշխանության կամքին), այսինքն՝ չի կարող գործել *contra legem*: Մյուս կողմից՝ այդ օրենքն *իրավաբանորեն* շարունակում է գործել, ուստի օրենքի գործողության փաստացի կասեցման մասին դատողությունը պարզապես կոչված է քողարկելու *contra legem* վարքագիծը:

Այսպիսով՝ «օրենսդրի իրական կամքը բացահայտել» ձևակերպումը որպես վահան օգտագործելով՝ պոզիտիվիստ դատավորը կխոսի «օրենքը շտկող մեկնաբանման» կամ օրենքով էքսպլիցիտ չնախատեսված «ողջամտի բացառության», իսկ ծայրահեղ դեպքում՝ «օրենքի գործողության փաստացի կասեցման» մասին և այս ձևակերպումների գործածության պարագայում իրեն կթվա, որ ինքը չի հակադրվում քաղաքական իշխանության կամքին: Այս ամենն արվում է մեկ նպատակով՝ որպեսզի որևէ մեկը դատավորին չկասկածի քաղաքական իշխանության կամքին հակադրվելու մեջ:

Հետխորհրդային պոզիտիվիստ դատավորի նման վարքագիծը կարելի է բացատրել ոչ միայն խորհրդային լեզվումի ավանդույթներով, այլ նաև այն հանգամանքով, որ հետխորհրդային Սահմանադրություններում

¹ Таганцев Н.С. Русское уголовное право: лекции. Часть общая. В 2-х т. Т. 1. - М.: Наука, 1994. - С. 98-99.

քաղաքական իշխանությունները մի քանի անգամ շեշտել են, որ դատավորները պետք է ենթարկվեն օրենքին: Օրենքին (իսկ իրականում՝ քաղաքական իշխանության կամքին) անվերապահ ենթարկվելու գաղափարն անասելի խորությամբ ներթափանցել է հետխորհրդային դատավորի գիտակցության խորքերը:

Բացի այդ, իրավունքն օրենքին հակառակ զարգացնելը հետխորհրդային պոզիտիվիստ դատավորների մոտ ընկալվում է ժողովրդավարական լեգիտիմությանը հակադրվելու կոնտեքստում. եթե նրանք հակադրվում են օրենքի կարգավորմանը, ապա դա նշանակում է, որ ըստ էության նրանք հակադրվում են ժողովրդավարական լեգիտիմությանը, ժողովրդի կամքին: Մեկ այլ առիթով նշել ենք, որ այս փաստարկն անկասկած իր ուժը թուլացրել է, քանի որ XXI-րդ դարում քաղաքական դերակատարների ժողովրդավարական լեգիտիմության հաղթաթուղթը չունի նույն ընկալումը և նույն արժեքը, ինչ XX-րդ դարում էր:

4. Եզրակացություններ

Իրավաբանական ռեյաստիվիզմի պայմաններում *contra legem* իրավունքի զարգացումը հնարավոր է, եթե կոնկրետ իրավական համակարգը հիմնված է իրավաընկալման բազմակարծության վրա:

Այս դոկտրինի համար պարարտ հող է ստեղծում հատկապես բնական իրավունքի ուսմունքը, հետևապես դրա գլխավոր հակառակորդներն են բնական իրավունքի մահախոսականը, ինչպես նաև լեգիստական իրավաընկալման բացարձականացումը: Իրավունքի և օրենքի տեքստի նույնացումը զրոյացնում է իրավունքն օրենքին հակառակ զարգացնելու մասին դիսկուրսի հնարավորությունը:

Հարաբերական իմաստով *contra legem* իրավունքի զարգացման դեպքում պոզիտիվ իրավունքում առկա է վերապահում այն մասին, որ դատավորը իրավունքի սկզբունքների հիման վրա կարող է գործել օրենքի կոնկրետ դրույթին հակառակ, իսկ բացարձակ իմաստով *contra legem* իրավունքի զարգացման դեպքում դատավորը, չունենալով որևէ պոզիտիվ-իրավական հիմք, սակայն ղեկավարվելով իրավունքի սկզբունքներով, հակադրվում է օրենքի կոնկրետ դրույթներին:

Օգնագործված գրականության ցանկ

1. **Аллахвердиев И.Г.** Толкование contra legem: место в системе видов толкования // Теория государства и права. 2022. № 4(29).
2. **Антонов М.В.** Теория государства и права: учебник и практикум. - М.: Изд. Юрайт, 2023. - 497 с.
3. **Бабурин С.Н.** Современное общество между несправедливым законом и справедливым беззаконием // Социальная справедливость и право: проблемы теории и практики: Материалы международной конференции, Москва, 19 февраля 2016 года / Под общей редакцией Т.А. Сошниковой. - М., 2016.
4. **Берман Г, Грейнер У, Салиба С.** Природа и функции права / Пер. с англ. - Москва; Челябинск: Социум, 2022. - 1074 с.
5. **Васьковский Е.В.** Руководство к толкованию и применению законов. Для начинающих юристов. - М., 1913. - 152 с.
6. **Вялков А.** Роль принципа справедливости при оценке убытков по международному обычаю: куда дело Диалло и дело судна «Арктик Санрайз» ведут состояние права? // Международное правосудие. 2018. №4(28).
7. **Гамбарян А.С.** Развитие права вопреки закону (contra legem) в Республике Армения // Государство и право. 2023. № 5.
8. **Гамбарян А.С.** Развитие права советскими судьями вопреки закону (contra legem) // Судебная власть и уголовный процесс. 2023. № 2.
9. **Дворкин Р.** О правах всерьез / Пер. с англ. - М.: Российская политическая энциклопедия, 2004. - 392 с.
10. Декреты Советской власти. Т. I. - М.: Гос. изд. полит. литературы, 1957. - 650 с.
11. **Демидова И.С.** Правовое ограничение государства: эволюция и содержание основных теорий // Российский юридический журнал. 2009. № 3(66).
12. **Калиновский К.Б.** Коррекционное толкование отдельных положений законов о внесении изменений в УПК РФ // Журнал российского права. 2008. №8 (140).

13. **Караваяев И.В.** Пределы судейского усмотрения и правовой критерий как основа юридического метода: теория и практика рассмотрения экономических споров. Труды Института государства и права Российской академии наук, 15 (5), 2020.

14. **Кельзен Г.** Чистое учение о праве. 2-е изд. / Пер. с нем. - СПб., 2015. - 542 с.

15. **Лапаева В.В.** Типы правопонимания: правовая теория и практика. - М., 2012. - 577 с.

16. **Леже Р.** Великие правовые системы современности: сравнительно-правовой подход / Пер. с фр. - 2-е изд., перераб. - М.: Изд-во Волтерс Клувер, 2010. - 576 с.

17. **Малиновская Н.В.** Право и ценности в условиях кризиса правового регулирования // Кризис права: история и современность: монография / Под общ. ред. В. В. Денисенко, М.А. Беляева, Е.Н. Тонкова. - СПб.: Алетейя, 2023. - 514 с.

18. **Медушевский А.Н.** Кризис права как проблема теоретической юриспруденции // Политические сочинения: право и власть в условиях социальных трансформаций. - М.; СПб., 2015. - 512 с.

19. **Михайлов А.М.** Философия права: классический юснатурализм и историческая школа юристов: учебное пособие для вузов. 2-е изд. - М.: Изд. Юрайт, 2023. - 595 с.

20. **Михайловский И.В.** Очерки философии права. Том I. - Томск, 1914. - 269 с.

21. **Нерсесянц В.С.** Философия права: учебник для вузов. - М.: Изд. Норма, 1999. - 453 с.

22. **Пищулин А.В.** Юридический позитивизм в современном правопонимании: автореф. дис. ... канд. юрид. наук. - М., 2010. - 170 с.

23. **Поляков С.Б.** Изменение законодательства судебным правотворчеством // Юридическая техника. 2023. №17.

24. **Раз Дж.** Авторитет права. Эссе о праве и морали / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - 552 с.

25. **Смирнов А.В., Манукян А.Г.** Толкование норм права: учебно-практическое пособие. - М.: Проспект, 2008. - 144 с.
26. Стратегии судебного толкования и принципы права: учебное пособие / Под ред. Е.В. Тимошиной. - Санкт-Петербург, 2022. - 362 с.
27. **Таганцев Н.С.** Русское уголовное право: лекции. Часть общая. В 2-х т. Т. 1. - М.: Изд. Наука, 1994. - 380 с.
28. **Тонков Е.Н.** Релятивизация правоприменения в современных обществах // Релятивизм в праве: коллективная монография / Под ред. И.И. Осветимской, Е.Н. Тонкова. - СПб.: Алетейя, 2021. - 348 с.
29. **Уакс Р.** Философия права. Краткое введение / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2020. - 176 с.
30. **Федотов А.В.** Возможно ли применение contra legem в демократическом правовом государстве? // Журнал российского права. 2002. № 8.
31. **Фуллер Л.Л.** Позитивизм и верность праву: ответ профессору Харту // Философия и язык права. - М.: Канон РООИ «Реабилитация», 2024.
32. **Хёффе О.** Политика. Право. Справедливость. Основоположения критической философии права и государства / Перев. с нем. - М.: Изд. Гнозис, 1994. - 320 с.
33. **Черданцев А.Ф.** Теория государства и права: учебник для вузов. - М.: Изд. Юрайт-М, 2001. - 432 с.
34. **Черданцев А.Ф.** Интегративное недопонимание права // Журнал российского права. 2016. № 10 (238).
35. **Четвернин В.А.** Российская конституционная концепция правопонимания // Конституционное право: восточноевропейское обозрение. 2004. № 4.
36. **Шапиро С.** Законность / Пер. с англ. - М.: Изд-во Института Гайдара, 2021. - 720 с.
37. **Ясинская-Казаченко А.В.** Интерпретация юридических фактов в суде при движении трудового спора // Ежегодник трудового права. 2023.
38. Hart's Postscript: Essays on the Postscript to "The Concept of Law". Ed. Jules L. Coleman. Oxford, 2001.

39. **Dworkin R.** Hart's Postscript and the Character of Political Philosophy // Oxford Journal of Legal Studies. 2004. Vol. 24, No. 1. pp. 1-37.

40. **Lapidoth R.** Equity in International Law // Israel Law Review. 1987, №22 (2).

41. **Lowe V.** The Role of Equity in International Law // Australian Year Book of International Law. 1989, № 4.

42. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Ռ. Խանդանյանի ՎԴ/8729/05/21 գործով 03.07.2023 թ. որոշման վերաբերյալ հատուկ կարծիքը:

ПРАВОПОНИМАНИЕ И РАЗВИТИЕ ПРАВА CONTRA LEGEM

Аннотация

Целью работы является представление того, в условиях какого типа правопонимания возможна доктрина развития права contra legem. Доктрина развития права contra legem имеет возможность применения в условиях правового релятивизма, когда какой-либо тип правопонимания не абсолютизируется. Благодатную почву для развития права вопреки закону создает доктрина естественного права, а жесткий легизм исключает любое проявление развития права вопреки закону судьей.

Доктрина развития права contra legem рассматривается с точки зрения эксклюзивного и инклюзивного юридического позитивизма. Делается вывод, что эксклюзивный юридический позитивизм считает возможным, что право в определенных ситуациях может развиваться вопреки закону.

В условиях постсоветских традиций судья-позитивист, даже если фактически будет действовать вопреки закону, то с целью маскирования данного явления будет использовать формулировки «толкование, корректирующее закон» или «разумное исключение из закона».

Доктрина развития права contra legem понимается в относительном и абсолютном смыслах.

Ключевые слова: contra legem, вопреки закону, правопонимание, естественное право, эксклюзивный позитивизм, инклюзивный позитивизм, суд, легизм, юридический релятивизм, толкование закона.

LEGAL UNDERSTANDING AND DEVELOPMENT OF LAW CONTRA LEGEM

Annotation

The purpose of the work is to present the conditions in which legal understanding the doctrine of the development of law contra legem is possible. The doctrine of the development of law contra legem has the possibility of application in the context of legal relativism, when any type of legal understanding is not absolutized. The doctrine of natural law creates fertile ground for the development of law contrary to the law, and strict legalism excludes any manifestation of the development of law contrary to the law by a judge.

The doctrine of the development of law contra legem is considered from the point of view of exclusive and inclusive legal positivism. It is concluded that exclusive legal positivism considers it possible in certain situations that law can develop contrary to the law.

In the conditions of post-Soviet traditions, a positivist judge, even if he actually acts contrary to the law, will use the wording “interpretation correcting the law” or “reasonable exception to the law” in order to mask this phenomenon.

The doctrine of the development of law contra legem is understood in relative and absolute terms.

Keywords: contra legem, contrary to the law, legal understanding, natural law, exclusive positivism, inclusive positivism, court, legalism, legal relativism, interpretation of the law.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 02.05.2024 թ., փրվել է գրախոսության 06.05.2024 թ., ընդունվել է փպագրության 17.05.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.2-49



ՆԱԶԵԼԻ ՍՈՒՔԻԱՅԱՆ

*ՀՊՏՀ «Հասարակական գիտությունների»
ամբիոնի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր*

**ՖԻՆԱՆՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է պետության ֆինանսական գործունեության ոլորտում ֆինանսական համակարգի առանձին օղակների իրավակարգավորումներին ուղղված ֆինանսական իրավունքի կիրառման և իրացման իրավանորմերի, դրանց տեսակների, գործածության արդյունավետության և իրավական առանձնահատկությունների բացահայտմանը:

Հայրենական իրավագիտության ոլորտում առաջին փորձն է գործող ֆինանսաիրավական օրենսդրության վերլուծությունների հիման վրա սահմանազատելու իրավական հարաբերությունների ներազդման ֆինանսաիրավական նորմերի կիրառման և իրացման գործնական արդյունավետությունը:

Ֆինանսական իրավունքի նորմերի կիրառման և իրացման գործընթացների վերլուծությունների հիման վրա օրենսդիր և գործադիր մարմինների կիրառման և իրացման իրավական ակտեր մշակելիս առաջարկվել է ֆինանսական իրավունքի կիրառման ակտերի մշակման օրինակելի մոդել, որը տնտեսական, սոցիալական, գաղափարական միասնական արժեքների համակցություն է, որոնց արտացոլման

համամասնությունը ֆինանսական իրավունքի կիրառման իրավական ակտերում կապահովի վերջիններիս բարձր արդյունավետությունը ֆինանսավարկային մարմինների գործունեության ոլորտում:

Հիմնաբառեր. իրավական նորմ, ֆինանսական իրավունքի կիրառման նորմ, իրացման նորմ, իրավական նորմի մոդել, սանկցիա, սանկցիայի արդյունավետություն, իրավունքի աղբյուր:

Իրավագիտության հիմնախնդիրները «Ժամանակի» փիլիսոփայության տիրույթում անվերջ են, որպես հասարակության գիտակցության ձև:

Իրավական նորմի հասկացության, տեսակների, իրավական ակտի և օրենսդրության, դրանց «կիրառման» և «իրացման» հիմնախնդիրների շուրջ ձևավորված հայեցակարգերը ժամանակին և այսօր էլ շարունակում են իրավագիտության ոլորտում մնալ անբացատրելի, որը հաճախակի տեղիք է տալիս տարակարծությունների:

Իրավունքի կամ իրավանորմի «կիրառման» և «իրացման» գործընթացների, դրանցիցյուրաքանչյուրի իրավական բովանդակության, ինչպես նաև գործնական կիրառման առանձնահատկությունների իրավագիտական բացահայտումներին ուղղված տարբեր իրավագետ հեղինակների դիրքորոշումները խիստ իրարամերժ են:

Հիմնախնդրի շուրջ տարակարծությունների դրսևորումները հայ իրավագիտության ոլորտում՝ կապված վերջիններիս իրավական բովանդակության հետ, երբեմն ճիշտ չեն ընկալվում կամ սխալ ընկալումների հետևանքով իրավունքի նորմի կիրառման հասկացությունը գրեթե նույնացվում կամ իրավական ակտերի դասակարգման հայեցակարգային դրույթների անտեսման պատճառով շատ հեղինակների մոլորության մեջ է գցում, այդ պատճառով վերջիններիս գիտական բացահայտումներում հակասություններ են նկատվում «նորմի կիրառում» և «իրացում» հասկացությունները բացահայտելիս:

Խոսքը հիմնականում վերաբերում է ռուսերենից կատարված “применение права”, “осуществление права”, “реализация права”, “использование права” հասկացությունների թարգմանություններին:

Իրավունքի կամ նորմի կիրառման և իրացման հասկացության, կառուցվածքի, ինչպես նաև գործածության փուլերի հարցում միասնական ըմբռնումներ չկան նաև ռուս իրավագետների աշխատություններում, չնայած հիմնախնդրի շուրջ ձևավորված տեսակետներն ունեն տասնամյակների պատմություն¹:

Հիմնախնդրի բացահայտումների շուրջ տարբեր դիրքորոշումների միակ ընդհանրությունն այն է, որ բոլոր հեղինակներն էլ «նորմի կիրառումը» համարում են վերջինիս նորմատիվային բնույթի առանձնահատկությունները, որի համակարգում նորմի կիրառմամբ սահմանվում, փոփոխվում կամ դադարեցվում են իրավահարաբերությունները:

Հետևաբար, գործնականում իրավունքի նորմի կիրառմամբ է սկսվում իրավունքի իրացումը, որը կյանքի է կոչվում կիրառման ակտի հասցեագրումների կոնկրետ դրսևորված հանգամանքի կապակցությամբ «իրացման ակտի» ընդունմամբ, որը կարող է արտահայտվել որոշման, վճռի, դատավճռի և այլ ակտերի միջոցով: Մեր դատողությունների պարզեցման նպատակով ընդգծենք, օրինակ, քրեական, քաղաքացիական, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը կամ համանուն դատավարական օրենսգրքերն ըստ էության «կիրառման» ակտեր են, որոնք ըստ իրավական կարգավորման օբյեկտների տարաբնույթ իրավական հարաբերություններ են սահմանում, փոփոխում կամ դադարեցնում, որոնց հիման վրա իրավապահ մարմիններն ըստ խախտման բնույթի ընդունում են իրացման ակտեր:

Դատարանները քրեական գործերով դատավճիռներ, քաղաքացիական գործերով վճիռներ կամ որոշումներ են կայացնում, կամ քրեական գործերի նախաքննության ընթացքում քննիչը, ղեկավարվելով քրեական դատավարության օրենսգրքի պահանջներով, «մեղադրանք է

¹ Տե՛ս մանրամասն **Имре Сабо**. Основы теории права - М.: “Прогрес”, 1974, էջ 122-125: Теория государства и права. – Л.: Изд-во ЛГУ, 1982, էջ 298-304: Теория государства и права. - М.: “Юридическая литература”, 1983, էջ 306-309: **Малько А.В., Нырков В.В., Шундигов К.В.** Теория государства и права - М.: “Кнорус”, 2009, էջ 121-126: **Марченко М.Н.** Теория государства и права (учебное пособие). - М.: “Проспект”, էջ 150-157:

առաջադրում» կասկածյալին, որոշում է կայացնում խափանման միջոցի ընտրության մասին:

Ֆինանսաիրավական նորմերի «կիրառման» և «իրացման» հիմնախնդիրների իրավագիտական մեկնաբանություններն ունեն տեսական, ավելին՝ գործնական կիրառման կենսական արժեք, որով պայմանավորված է սահմանադրությամբ ամրագրված օրինականության և իրավաբանական արդարացի պատասխանատվության սահմանումը, ինչպես և իրավաբանորեն հիմնավորված որոշումներ ընդունելու կարողությունը, որը կանխորոշում է հասարակության յուրաքանչյուր անդամի օրենքի և իրականության նկատմամբ դրսևորող հարգանքը, որով ապահովում է իրավապահ մարմինների հեղինակության անսասանությունը անհատի և քաղաքացու արժեքների գնահատման համակարգում:

Իրավապահ մարմիններում ներգրավված իրավաբանների ճնշող մեծամասնությունը հասարակական կեցության տարբեր ոլորտներում դրսևորվող իրավախախտների ընդհուպ ոչ իրավաչափ գործողությունները կամ անգործությունը որակելիս առաջնորդվում է կոնկրետ ոլորտի հասարակական հարաբերության խախտման բնույթի արտաքին նկարագրական դրսևորումներով և հանպատրաստից քրեական, վարչական, նյութական իրավախախտների վարույթը սկսում է համապատասխան օրենսդրությամբ սահմանված իրացման իրավանորմի բովանդակության բաղադրիչների պահանջների անհապաղ իրականացմամբ՝ անտեղյակության պատճառով շրջանցելով այն կիրառման ենթակա նորմատիվային բնույթի իրավական ակտը, որի սկզբունքային դրույթներով է մշակված կոնկրետ իրավախախտման փաստի որակման նպատակով իրացվող այս կամ այն իրավունքի ճյուղի համապատասխան իրավանորմը: Խոսքը վերաբերում է կիրառման ակտի պահանջների իրացմանն ուղղված ակտին, վերջինիս իրավական առանձնահատկություններին:

Իրավունքի համակարգի տարբեր ճյուղերի իրավակարգավորումների մեծածավալ աշխարհագրությունը շրջանցելով՝ իրավագիտական բացահայտումներով փորձենք լուսաբանել ֆինանսաիրավական

«կիրառման» և «իրացման» իրավանորմերի գործնական կիրառման արդյունավետության հիմնախնդիրները ՀՀ ֆինանսական համակարգի տարբեր ոլորտներում, որոնցից յուրաքանչյուրը հասարակության ֆինանսատնտեսական կեցության միասնական համակարգ է, որն արտացոլում է հանրային դրամական միջոցների հավաքման, բաշխման և օգտագործման գործընթացները:

Պետական ապարատում ներգրավված իրավապահ գործունեություն իրականացնող իրավաբանների հիշողության թարմացման նպատակով գիտական վերլուծությունները նպատակ ունեն ժամանակակից իրավագիտության նվաճումների հիման վրա ընդգծել, որ իրավական նորմի կիրառումն ըստ էության նորմում ամրագրված կարգադրագրերն են՝ ուղղված բազմաբնույթ իրավահարաբերությունների մասնակիցների վարքագծի կարգավորումներին, որոնք պայմանավորված են իրավական նորմի բովանդակությամբ և ուղղված են իրավունքի նորմերի պահպանմանը, կատարմանը, օգտագործմանը և նորմի իրացմանը¹:

Գործնականում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման արդյունավետությունը մեծամասամբ պայմանավորված է ակնարկվող այնպիսի իրավական կատեգորիաների բովանդակության և առանձնահատկությունների ճիշտ ընկալումներով, ինչպիսիք են «իրավունքի», «իրավական նորմի» կիրառումը, ինչպես նաև վերջիններիս հասցեագրումների պարտադիր պահանջների կիրառման նպատակով ընդունված «իրացման ակտերը», առանց որի թե՛ իրավունքը և թե՛ համապատասխան իրավունքի ճյուղի օրենսդրությամբ համախմբված իրավանորմերը երբեք կյանքի չեն կոչվի, կկորցնեն գործնական կիրառության արժեքը, կզրոյացվի վերջիններիս ծառայողական նշանակությունը՝ որպես իրավունքի աղբյուրի, որի նպատակը իրավահարաբերությունների ծագման, փոփոխման կամ դադարման իրավակարգավորումն է:

Պատահական չէ, որ հասարակական հարաբերությունների իրավակարգավորումների դերի, արդյունավետության բարձրացման

¹ Տես մանրամասն **Коморов С.А.** Общая теория государства и права. - М., 1997, էջ 300-303:

նպատակով հիմնախնդրի իրավագիտական բացահայտումներում իրավապահ մարմիններին ուղղորդում է ամենօրյա գործունեության մանրագնին իրավական քայլը սկսել իրավունքի և իրավական նորմի կիրառման հայեցակարգային դրույթների պահանջների խորը գիտակցմամբ՝ ուշադրությունը կենտրոնացնելով կոնկրետ դրսևորված իրավախախտների նկատմամբ կիրառվող ինչպես իրավունքի ճյուղի, ճյուղի օրենսդրությամբ ամրագրված իրավական նորմի, այնպես էլ նորմի կիրառումն ապահովող «իրացման» ակտի վրա:

Հիմնախնդրի գործնական կիրառման անհրաժեշտությունը պահանջում է իրավագիտական բավարար տեսական գիտելիքներ, որոնք կնպաստեն ճիշտ հասկանալ, յուրացնել, առաջին հերթին, իրավունքի, իրավական նորմի ճիշտ կիրառման անհրաժեշտությունը, որով պայմանավորված են իրավախախտման կապակցությամբ կիրառվող արդարացի իրավաբանական պատասխանատվության սկզբունքի պահանջները:

Իրավական նորմի կիրառման և իրացման հիմնախնդիրները իրավագիտության մեջ այսօր էլ նույն սրությամբ պահպանում են իրենց արդիականությունը:

Իրավունքի գիտական քննարկումներում տեղ գտած տարակարծությունների ընդհանրացման հիման վրա ընդգծենք, որ իրավունքի կամ իրավական նորմի կիրառումը պետք է դիտարկել որպես պետական մարմինների իշխանական գործունեություն, որն ուղղված է կոնկրետ դրսևորված իրավախախտման նկատմամբ իրավական նորմերի իրացմամբ¹:

Իրավունքի, ինչպես նաև իրավական նորմի կիրառումն ունի որոշակի իրավական հատկանիշներ, որով ընդգծված սահմանազատվում է սոցիալական մյուս նորմերից: Որպես յուրահատկություն նկատենք, որ իրավակիրառ գործունեությունը պետական մարմինների և պաշտոնատար անձանց մենաշնորհն է, քանի որ իրավական նորմի կիրառումը կյանքի է կոչվում պետության անունից, հետևաբար ունի պետական իշխանության բնույթ:

¹ Տե՛ս մանրամասն Теория государства и права в вопросах и ответах / Под. ред. Марченко М.Н. - М.: “Проспект”, 2015, էջ 150-157: **Малько А.В., Нырко В.В., Шумдик К.В.** Теория государства и права. - М.: “Кнорус”, 2009, էջ 122-126:

Իրավապահ մարմինների կողմից իրավական նորմի կիրառումը որպես կանոն իրացվում է վարույթային որոշակի փուլերով, որը սահմանված է գործընթացային իրավունքի ճյուղերով (քրեական, վարչական, քաղաքացիական դատավարությամբ):

Շարադրանքը վկայում է, որ իրավունքի, ապա իրավական նորմի կիրառման աղբյուրը համապատասխան ոլորտի իրավական կարգավորումը սահմանող իրավական ակտն է, որի ընտրությունը, գործնական կիրառումը յուրաքանչյուր իրավախախտման դեպքում պայմանավորված է կոնկրետ դրսևորված իրավախախտման բնույթով (իրավախախտման օբյեկտով):

Հետևաբար, իրավագիտության մեջ իրավական նորմի գործնական կիրառումը, իրավաբանական հիմնավորված պատասխանատվության կիրառման նպատակներով, իրավաչափ մարմիններից, նրանց պաշտոնատար անձանցից պահանջում է հետագա բողոքարկումներից զերծ մնալու համար ձեռնարկել օրենքով սահմանված անհրաժեշտ իրավական պարտադիր գործողություններ, որոնք իրավագետները համարում են իրավական նորմի կիրառման փուլեր: Որպես կանոն մինչև իրավական նորմը կիրառելը լիազոր իրավապահ մարմինը կամ նրա ղեկավարը պարտավոր է կատարել:

ա) կոնկրետ դրսևորված իրավախախտման գործի փաստական հանգամանքների հետազոտություն և վերլուծություն,

բ) փաստացի վերլուծված հանգամանքներին համահունչ կիրառման ենթակա իրավունքի նորմի ընտրություն,

գ) լիազորված պետական մարմնի կամ նրա պաշտոնատար անձի կողմից որոշման ընդունում:

Իրավունքի նորմի կիրառման իրավական փաստերի հիմքերի ավելի ընդարձակ վերլուծությունների ենք հանդիպում իրավագետներ Ս.Ա. Կամարովի, Ա.Բ. Վենգերովի, Ի.Յ. Դյուրյագինի աշխատություններում, որոնք, ըստ էության, իրավունքի նորմի կիրառման օրինականության և օբյեկտիվության մասին են վկայում:

¹ Տե՛ս մանրամասն **Дюрягин И.Я.** Правоприменительное отношение как форма управленческого отношения - М.: “Проспект”, 2021, էջ 95: **Венгеров А.Б.** Теория государства и права. - М., 1999, էջ 431:

Այլ խոսքով իրավունքի նորմի կիրառման գործընթացի արդյունավետությունը վկայում է, որ վերջինիս ներկայացվում են այնպիսի պահանջներ, ինչպիսիք են հիմնավորվածությունը, նպատակայնությունը, արդարությունը, օբյեկտիվությունը, որոնք իրենց ելակետային դրույթներով իրավագիտության ոլորտում շատ հեղինակների կողմից քննարկվում են որպես իրավունքի կիրառման սկզբունքներ¹:

Չանդրադառնալով հիշատակված պահանջների իրավագիտական բացահայտումներին՝ միայն ընդգծենք, որ վերջիններիս նպատակը նորմի իրավակիրառման օրինականության ապահովումն է, որը իրավունքի և իրավակարգի անկյունաքարերից մեկն է:

Հասարակական կեցության ցանկացած ոլորտի իրավակարգավորումների իրավական հիմքը իրավակիրառ գործունեությունը կյանքի կոչող իրավունքի նորմի «իրացման - կիրառման» ակտն է, որը, ըստ էության, բազմաբնույթ հասարակական հարաբերությունների վերջնական ամփոփման եզրափակումն է, որն արտացոլում է պետական մարմինների իշխանական գնահատականը անհատի և հասարակության համար վտանգ ներկայացնող երևույթի չեզոքացման և վերացման համար: Այս ակտը, սահմանելով իրավակիրառ նորմը, կոնկրետ դրսևորված փաստական հանգամանքները, ընդգծում է իրավակիրառման անհրաժեշտությունը, նպատակահարմարությունը, ինչպես նաև հիմնավորվածությունը: Իրավակիրառմանն ուղղված որոշումը վկայում է իրավունքի նորմի կիրառման պաշտոնական նշանակության իշխանական բնույթը:

Իրավաբանական գրականության մեջ բազմաթիվ փորձեր են կատարվել սահմանելու իրավունքի նորմի «իրացման» ակտի հասկացության, առանձնահատկությունների, բնույթի, տեսակների, ինչպես նաև իրավական հետևանքների և դրանց վերջնարդյունքի ապահովման իրավական ձևերի և եղանակների կարգը:

Իրավակիրառ նորմի «իրացման» ակտի իրավական բնույթի բացահայտումներին ուղղված իրավագետների տարաբնույթ կարծիքների

¹ Տես մանրամասն **Марченко М.Н.** Теория государства и права. Նշվ. աշխ., էջ 154-155:

ընդհանրացման հիման վրա կարելի է պնդել, որ իրավակիրառ նորմի իրացման ակտը պետական մարմնի օրենքով վերապահված իրավասության շրջանակներում ընդունված պետական փաստաթուղթ է, որը կատարվում է անհատական կոնկրետ իրավաբանական նշանակության հանգամանքները լուծելու գործընթացում և որպես անհատական կատեգորիկ վարքագիծ՝ ուղղված է իրավահարաբերության սուբյեկտների սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների շրջանակների որոշմանը:

Իրավական նորմի կիրառման կյանքի կոչող իրացման ակտերը նույնպես ունեն որոշակի իրավական առանձնահատկություններ, որով սահմանազատվում են իրավական ակտերի համակարգում:

Նկատենք, որ իրացման ակտերն ունեն իշխանական բնույթ: Այսինքն այդ ակտերում արձանագրված հասցեագրումներն ունեն կատեգորիկ բնույթ և պարտադիր կատարման նշանակություն բոլոր նրանց համար, որոնց վերաբերում են: Իրացման ակտի հասցեագրումներն իրենց կիրառման ընթացքում, որպես կանոն, ապահովվում են պետական հարկադրանքի ուժով:

Իրացման ակտն իր բնույթով անհատական է, ունի կոնկրետ հասցեատեր: Ակտը, ըստ անձանց ներգործության շրջանակի տարածվում է միայն այն անձանց վրա, ովքեր գտնվում են ակտի ներգործության տիրույթում:

Իրավունքի նորմի կիրառմանն ուղղված իրացման ակտերի տեսակները, դրանց գործնական կիրառումը պարզեցնելու նպատակով ընդգծենք, որ այս ակտերն ունեն ընդունման եղանակ, որոշակի ձև, որոնց իմացությունն անհրաժեշտություն է: Իրացման ակտերը ըստ ընդունման կարգի ունեն կոլեգիալ և միանձնյա ընդունված ակտի բնույթ: Ինչ վերաբերում է իրացման ակտի ձևին, ապա վերջիններս կարելի է դասակարգել **իրավական փաստաթղթերի**, օրինակ դատավճիռ, վճիռ, որոշում, հրաման, ինչպես նաև գործողությունների, որոնք հիմնականում դրսևորվում են բանավոր եղանակով, օրինակ՝ խոսք, նախազգուշացում, զգուշացում, բանավոր կարգադրություն և այլն:

Իրավունքի նորմի կիրառման և իրացման ակտերը, վերջիններիս գործնական կիրառման արդյունավետության հիմնախնդիրների իրավագիտական բացահայտումները հուշում են, որ իրավական այս ինստիտուտների գործունեությունն ըստ հասարակական կեցության գործունեության ոլորտների միանշանակ չէ, տարբեր է սրանց գործնական կիրառման արդյունավետությունը:

Խոսքը հատկապես վերաբերում է պետության ֆինանսատնտեսական գործունեության ոլորտները կարգավորող իրավունքի ճյուղերի և օրենսդրության, համապատասխան իրավական ակտերի կիրառման և կիրառումն ապահովող իրացման իրավական ակտերի արդյունավետությանը, որոնք մեծապես կարիք ունեն թարմացման, վերամշակման և նոր իրավական ակտերով համալրման:

Պետության ֆինանսական բյուջետային, հարկային, մաքսային, ինչպես նաև բանկային գործի կազմակերպման գործընթացները կարգավորող իրավական ակտերի մշակման, դրանց իրավական բովանդակության, կարգավորման առարկայի, հանրության ընկալման, իրավական արժևորման խնդիրները պայմանավորված են օրենսդիր մարմնի օրենսդրական նախաձեռնությունների, կարգավորման պահանջ ներկայացնող հասարակական կեցության ոլորտների ընտրության առաջնայնության, օրենքի լեզվի և բովանդակության, օրենքի մշակման առանձնահատկությունների և մասնագիտական կարողությունների հաշվառմամբ, որոնք շատ հաճախ «Ֆինանսական համակարգի առանձին ոլորտների հասարակական հարաբերությունների անիմաստ, աղճատված կարգավորումների սահմանման պատճառով տեղիք են տալիս գործնականում կիրառվող և ոլորտը կարգավորող կիրառման ակտերի և դրանց իրացմանն ուղղված իրավական ակտերի անարդյունավետ կիրառմանը, իսկ առանձին դեպքերում աչքի են ընկնում իրավական ակտերում ծվարած, ավելորդ, երևույթի կարգավորումից հեռու անարժեք իրավանորմերով:

Պետական մարմինների գործող իրավաստեղծ պրակտիկան կատարելագործելու, անորակ և իրավական բովանդակությունից զուրկ իրավական ակտերի մշակման և ընդունման գործունեությունը

կատարելագործելու նպատակով հողվածում առաջին անգամ փորձ է կատարվում ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի իրավական կարգավորումներին ուղղված իրավական ակտերի արդյունավետության բարձրացման օրինակելի մոդել, որի կիրառումը կընդլայնի ֆինանսատնտեսական հարաբերությունների կարգավորման շրջանակները, կպարզեցնի իրավահարաբերությունների սուբյեկտների կարգավիճակը, նրանց իրավասության շրջանակները, մասնագիտական որակների իմաստով կսահմանափակվեն կիրառման իրավունքի նորմերի խոցելիության հնարավորությունները, կբարձրանա ֆինանսական գործունեության ոլորտի իրավակիրառ ակտերի պահանջների իրացմանն ուղղված իրավական նորմերի արդյունավետությունը: Խոսքը վերաբերում է պետության ֆինանսական գործունեության առանձին ոլորտների կարգավորումն ապահովող այնպիսի իրավական ակտերի ծառայողական նշանակությանը, ինչպիսիք են բյուջեի ոլորտում ՀՀ «Բյուջետային համակարգի մասին», ՀՀ «Կենտրոնական բանկի մասին», ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին», ՀՀ «Մաքսային կարգավորման մասին» օրենքները, ինչպես նաև ՀՀ «Հարկային օրենսգիրքը»: Կարծում ենք նաև ՀՀ «Բյուջետային» կամ «Ֆինանսական» օրենսգրքի օրենսդրական նախաձեռնությունների ուղղությամբ ՀՀ օրենսդիր մարմնի գործունեության ակտիվացման ժամանակն է:

Ժամանակակից աշխարհի արտադրատնտեսական հարաբերությունները օրըստօրե ձեռք են բերում զարգացման նոր ուղղություններ, ծնունդ են առնում հասարակական-տնտեսական, պետական նոր հարաբերություններ, որոնք իրավական կարգավորման նոր, մինչ այս անհայտ պայմաններ են առաջադրում իրավունքի ճյուղերին:

Ներկա շուկայական տնտեսության զարգացման պայմաններում տնտեսական քաղաքականության մշակումը, դրա զարգացման հեռանկարները և դրանց իրավական կարգավորման անհրաժեշտությունը լուրջ դժվարություններ են ներկայացնում ՀՀ իշխանություններին հատկապես ֆինանսական գործունեության ոլորտում:

Պետության առջև ծառայած այս խնդիրների լուծման մի մասը բաժին է ընկնում իրավագիտությանը, հատկապես իրավագիտական

այն ուսմունքներին, որոնց գիտական մշակվածության աստիճանը հնարավորություն է ընձեռնում օրենսդիր և գործադիր մարմիններին բավարար հիմնավորումներով, օգտագործելով իրավական մեխանիզմները, ճիշտ լուծումներ տալ, ինչպես ներ, այնպես էլ արտաքին տնտեսական հարաբերություններում ծագած ֆինանսատնտեսական հիմնախնդիրներին:

Այսօր, իրավաբանական գիտությունների հետազոտությունների արդյունքների հիման վրա բարձրացել է իրավունքի դերը հասարակական հարաբերությունների կարգավորման և այդ հարաբերությունների մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում:

Հասարակական հարաբերությունների կարգավորման և պաշտպանության ոլորտում իրավագիտության ծառայական նշանակության ամենամեծ նվաճումներից մեկը հասարակական հարաբերությունների վրա իրավակիրառ նորմերի ներազդման արդյունավետության բարձրացմանն ուղղված գիտական հետազոտություններն են, որոնք ցավոք իրավունքի տարբեր ճյուղերի կողմից հավասարապես մշակված չեն:

Ուսումնասիրությունները վկայում են, որ եթե իրավունքի մի շարք ճյուղերում, ինչպիսիք են քրեական, վարչական, աշխատանքային իրավունքի ճյուղի իրավական նորմերը, որոնք հասարակական հարաբերությունների վրա ներգործության աստիճանի արդյունավետության բարձրացման ուղղությամբ տեսանելի հաջողություններ են արձանագրել, ապա նույնը չի կարելի ասել ֆինանսական իրավունքի և նրա ենթաճյուղերի (հարկային, բյուջետային, մաքսային) մասին:

Ֆինանսական իրավունքի տեսության ոլորտում ընդհանրապես, առավել ևս հայրենական գիտության ոլորտում, որտեղ բացի ուսումնական ձեռնարկներից, գիտական հետազոտությունների իմաստով ֆինանսական իրավունքի տեսությանը վերաբերող որևէ ուսումնասիրություն չի կատարվել, խոսք չի կարող գնալ ֆինանսահրավական կիրառման նորմերի սանկցիաների արդյունավետության և դրանց կատարելագործման ուղիների մասին:

Ֆինանսական սանկցիաների կիրառման արդյունավետության և դրանց կատարելագործմանն ուղղված գիտական այս հետազոտությունը նպատակ ունի ՀՀ ֆինանսական համակարգի իրավական կարգավորմանն ուղղված իրավակիրառ առանձին իրավական ակտերում տեղ գտած ֆինանսական սանկցիաների յուրաքանչյուր տեսակի առանձին կիրառման արդյունավետության ուսումնասիրության հիման վրա բացահայտել մեր կարծիքով երկու այնպիսի փոխկապված իրավական կատեգորիաների գործնական կիրառման նշանակությունը ինչպիսիք են՝

ա) ֆինանսական **սանկցիայի նպատակը** և բ) **ֆինանսակիրառ իրավական ակտերի սանկցիայի արդյունավետությունը**:

Իրավական այս կատեգորիաներին իմաստ և բովանդակություն հաղորդող առանձին բաղադրամասերի տեսական վերլուծությունները և բացահայտումները հնարավորություն կընձեռեն վերջիններիս պրակտիկ կիրառման արդյունքների հիման վրա հասնել ֆինանսակիրառ իրավանորմի սանկցիաների արդյունավետության աստիճանի բացահայտումներին և հնարավորություն կընձեռեն նկատված թերությունների շտկման ճանապարհով կատարելագործել ֆինանսական սանկցիաների նպատակաուղղվածությունը՝ այն ուղղորդելով ԱԺ իրավաստեղծ գործունեությամբ ֆինանսական օրենսդրության կատարելագործմանը:

Իրավագիտության ոլորտում ֆինանսահրավական կիրառման նորմի, սանկցիաների ուսումնասիրություններին ուղղված գիտահետազոտական վերլուծություններ չկա: Կարծում ենք, որ ֆինանսահրավական կիրառման նորմի սանկցիայի արդյունավետությունը որոշվում է նորմում ամրագրված նպատակների կենսագործման աստիճանով:

Այսպիսի մոտեցմամբ այսօր ծնունդ են առնում գիտահետազոտական կարիք հետապնդող այնպիսի հիմնահարցերի, որոնք ուղղված են «իրավունքի ճյուղի», «իրավակիրառ նորմի», ինչպես նաև դրանց սանկցիաների արդյունավետության ուսումնասիրություններին:

Նկատենք, որ հիշատակված իրավական կատեգորիաները չեն նույնանում, քանի որ ակնհայտ են դրանցից յուրաքանչյուրի

նպատակների տարբերությունները, որոնք պայմանավորված են վերջիններիս որակական և քանակական յուրահատկություններով:

Հետևաբար, այս կատեգորիաների արդյունավետության որոշումը հնարավոր է միայն վերջիններիս անմիջական և մասնավոր նպատակների պարզման ճանապարհով:

Ակնհայտ է, որ ֆինանսակիրառ սանկցիաների թե՛ անմիջական, և թե՛ մասնավոր նպատակներն ուղղված են պետության ֆինանսական համակարգի իրավախախտումների և դրանց վսասակար հետևանքների վերացմանը, իրավախախտների դաստիարակությանը, ինչպես նաև ֆինանսական իրավախախտումների կանխմանը:

Ֆինանսակիրառ նորմերի սանկցիաների գործնական կիրառման արդյունավետության բարձրացման ուղիները, ինչպես հիշատակել ենք, տարբեր են, տարբեր է նաև դրանց գործոնների ներագդեցության աստիճանը: **Այս հարցադրմամբ առաջարկում ենք ֆինանսակիրառ նորմերի սանկցիաների նպատակը մարմնավորող գործոնները, որոնցից կախված է սանկցիայի կիրառման արդյունավետությունը, ուսումնասիրել չորս** անբաժան բաղադրիչների համակցությամբ: Այդ գործոններն ունեն 1) իրավավերականգնողական, 2) դաստիարակչական, 3) մասնավոր և 4) ընդհանուր նախազգուշական ուղղվածություն, որոնց ուսումնասիրություններն անկասկած հնարավորություն կընձեռեն բացահայտել և նկատելի դարձնել ֆինանսական սանկցիաների գործնական կիրառման արդյունավետությունը և կնպաստեն վերջինների հասարակական և պետության պահանջներին համահունչ կատարելագործմանը:

Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական գործունեության իրավական կարգավորմանն ուղղված օրենսդրության ուսումնասիրությունները վկայում են, որ ոչ բոլոր իրավական ակտերն են ծառայում իրենց նպատակների իրականացմանը և կիրառման ընթացքում ապահովում են վերը հիշատակված չորս պահանջների միաժամանակյա բավարարումը: Սրանց համակարգում աչքի են ընկնում առանձին, հատուկենտ իրավական ակտեր, այն էլ միայն հարկային իրավունքի ոլորտում, որոնք ունեն խիստ նպատակային բնույթ և լիարժեք

ամբողջացնում են ֆինանսակիրառ իրավական նորմերի սանկցիայի նպատակները:

Հետևաբար, ֆինանսահրավական կիրառման նորմի սանկցիաների արդյունավետության որոշման չափորոշիչ պետք է ընտրել դրանց կիրառման արդյունավետության փոխհարաբերակցությունը վերջիններիս նպատակների հետ: Կարծում ենք՝ այս չափանիշներով առաջնորդվելու դեպքում ՀՀ ԱԺ կհաջողվի ֆինանսական գործունեության կարգավորմանն ուղղված իրավական ակտերի կառուցվածքում պարտադիր ամրագրել այն բոլոր պայմանները, որոնցից ուղղակիորեն կախված է համապատասխան իրավական ակտի հետագա կիրառման արդյունավետությունը: Գործնական շփումները՝ հատկապես ՀՀ պետական բյուջեից, համայնքների բյուջեներից կատարված նպատակային ծախսերի վերաբերյալ, բերում են այն համոզման, որ ընթացիկ տարվա թե՛ պետական, և թե՛ համայնքային բյուջեների մասին օրենքում և որոշումներում, դրանց առանձին բաժիններում, հատկապես ծախսերն ամփոփող հատվածներում ծախսերի իրացմանն ուղղված ֆինանսահրավական նորմերի պայմանների շրջանցումները հասցնում են բյուջետային անօրինական ծախսերի, որոնք միլիարդների վասաներ են հասցնում հանրապետությանը:

Պատահական չէ, որ այսօր իրավաբանների ուշադրությունը սևեռվել է հատկապես ֆինանսական իրավունքի նորմերի կիրառման **իրավական ակտերում արդյունավետության պայմաններն արտացոլող իրավական կատեգորիաների ուսումնասիրության վրա:**

Ավանդաբար իրավունքի նորմից, առավել ևս ինչպես նորմ կիրառման, այնպես էլ իրացման իրավական սանկցիայի արդյունավետությունն ապահովող կատեգորիաներից հիմք էին ընդունվում հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացման պայմանները, բարոյականությունը և իրավագիտակցությունը, իրավաստեղծ գործունեության ընթացքում կառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների պահպանումը կամ օրինականության ռեժիմին ուղղված պայմանները:

Այսպիսի ընդհանուր նշանակության պայմանների շարադրմամբ ֆինանսական իրավունքի կիրառման **նորմերը, բնական է, չեն**

բարձրացնում և չեն էլ կարող բարձրացնել հիշյալ իրավունքի ճյուղի իրավական նորմերի սանկցիաների արդյունավետությունը, քանի որ իրավունքի ցանկացած ճյուղ ունի ներհատուկ կարգավորման ոլորտ, որտեղ ձևավորվող և իրավական կարգավորում պահանջող հասարակական հարաբերություններն ունեն մի շարք այնպիսի յուրահատկություններ, որոնք ոչնչով չեն համընկնում կամ չեն նմանվում մյուս իրավական հարաբերություններին: Խոսքը կոնկրետ վերաբերում է պետության ֆինանսական գործունեության ոլորտում ծագող այն բոլոր հասարակական հարաբերություններին, որոնք խիստ բազմազան են և այս ճյուղի համակարգում սահմանազատվում են միայն իրավական կարգավորման ենթակա օբյեկտներով (պետական և համայնքային բյուջեներ, հարկային իրավունքում եկամուտ, շահույթ, գույք, հող, վարկ, արժեթուղթ, արժույթային օրենսդրության մեջ արժույթ, արտարժույթ, արժույթի կուրս և այլն):

Կարծում ենք՝ գործնականում ֆինանսական համակարգի տարբեր օղակներում ձևավորվող բազմաբնույթ իրավական հարաբերությունների արդյունավետ պաշտպանությանն ուղղված ամենատարբեր մտայնությունների վերլուծությունների հիման վրա անհրաժեշտություն է առաջանում առանձնացնել և հատուկ իրավագիտական կոնկրետ վերլուծությունների ենթարկել հիշատակված այն բոլոր պայմանները, որոնք կարող են նպաստել ֆինանսական սանկցիաների արդյունավետության բարձրացմանը: Մեր կողմից նկատված պայմանները կարելի է դասակարգել երկու ուղղությունների.

ա) ՀՀ-ում գործող ֆինանսական օրենսդրության արդյունավետությանը նպաստող պայմաններ և

բ) կոնկրետ ֆինանսական խախտումների դեպքերով կիրառվող սանկցիաների արդյունավետությանը նպաստող պայմաններ:

Պարզաբանման նպատակով ընդգծենք, որ առաջին խմբի պայմաններն երկուսն են՝

1. ֆինանսական սանկցիաների կիրառումը կարգավորող համակարգված և կայուն օրենսդրության առկայությունը,
2. ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտների տեղեկացվածությունը իրենց ֆինանսական պարտավորությունները

չկատարելու դեպքում օրենքով սահմանված ֆինանսական սանկցիաների (պատասխանատվության) կիրառման մասին:

Ֆինանսական սանկցիաների արդյունավետության վրա ազդող երկրորդ ուղղության գործոնները (պայմանները) բազմազան են, որոնց կիրառման արդյունավետությունը մշտապես կարող է կապվել տնտեսական, հասարակական-քաղաքական իրադրության հետ, և իրադրության փոփոխությունների հետ ֆինանսական սանկցիաների արդյունավետության աստիճանը կարող է փոփոխության ենթարկվել:

Բոլոր դեպքերում ֆինանսաիրավական նորմի կիրառման սանկցիաների արդյունավետության բարձրացում կարելի է ակնկալել, եթե մեր կողմից առանձնացված երկրորդ ուղղության բոլոր գործոնները (պայմանները) կիրառվեն համալիր ձևով: Էական նշանակության այսպիսի պայմաններ կարող են հանդիսանալ.

1. արձանագրված ֆինանսական կոնկրետ խախտումների գծով անհապաղ ֆինանսական վարույթի նախաձեռնումը,

2. ֆինանսական իրավախախտման կապակցությամբ ընդունված իրավավերականգնողական որոշման ընդունման և կատարման օպերատիվությունը,

3. ֆինանսական իրավախախտման կապակցությամբ ընդունված որոշման կատարման հնարավորությունը,

4. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարչական, դատական, ֆինանսական սանկցիայի պահանջների կատարումը,

5. գործնականում միատեսակ ֆինանսական խախտումների համար կիրառվող սանկցիաների կայունությունը,

6. ֆինանսական միջոցների գանձման արդարացի և օրինական լինելը,

7. ֆինանսական սանկցիաների զուգակցումը իրավական ներգործության այլ միջոցների հետ,

8. իրավակիրառ մարմինների հեղինակությունը,

9. ֆինանսական իրավախախտման գործերով սկսված վարույթի դաստիարակչական դերը և այլն:

Ֆինանսակիրառ ակտերով սանկցիաների կիրառման արդյունավետության ապահովմանը նպաստող այս պայմանները վերջնական չեն: Սրանք պայմանավորված են ֆինանսական խախտումների փաստի հանգամանքներով, իրավախախտման կազմով, որոնք որպես միասնական չափանիշներ չեն կարող հիմք հանդիսանալ կոնկրետ դեպքերում ֆինանսական սանկցիաների կիրառման արդյունավետության գնահատման հարցում¹:

Օգտագործված գրականություն ցանկ

1. **Коморов С.А.** Общая теория государства и права. - М., 1997.
2. Теория государства и права в вопросах и ответах / Под ред. М.Н. Марченко. - М., “Проспект”, 2015.
3. **Малько А.В., Ныркoв В.В., Шундикoв К.В.** Теория государства и права. - М.: “Кнорус”, 2009.
4. **Дюрягин И.Я.** Правоприменительное отношение как форма управленческого отношения. - М.: “Проспект”, 2021.
5. **Венгерoв А.Б.** Теория государства и права. - М., 1999.
6. **Сукиасян Н.Г.** Правовые проблемы финансовой ответственности в Республике Армения. - Ер., 2017.

¹ Տե՛ս մանրամասն **Сукиасян Н.Г.** Правовые проблемы финансовой ответственности в Республике Армения. - Ер., 2017, էջ 205-206:

ВЗАИМОДЕЙСТВИЕ ПРИМЕНЕНИЯ И РЕАЛИЗАЦИИ ФИНАНСОВО-ПРАВОВЫХ НОРМ И ЭФФЕКТИВНОСТЬ ИХ ИСПОЛЬЗОВАНИЯ

Аннотация

Статья посвящена актам применения и реализации норм финансового права, направленных на правовое регулирование отдельных звеньев в общей финансовой системе государства, установлению их видов, эффективности использования и раскрытию правовых особенностей.

В сфере отечественного правопедения это первая попытка на основании анализа действующего финансово-правового законодательства определить практическую эффективность применения и реализации финансово-правовых норм, влияющих на правоотношения.

При разработке правовых актов применения и реализации законодательных и исполнительных органов на основании анализа процессов применения и реализации норм финансового права предложена образцовая модель разработки актов применения финансового права, которая представляет собой сочетание единых экономических, социальных, идеологических ценностей, доля отражения которых в правовых актах применения норм финансового права обеспечит высокую эффективность последних в сфере деятельности финансово-кредитных органов и учреждений.

Ключевые слова: правовая норма, норма применения финансового права, норма реализации, модель правовой нормы, санкция, эффективность санкции, источник права.

INTERACTION OF THE APPLICATION AND IMPLEMENTATION OF FINANCIAL AND LEGAL REGULATIONS AND THE EFFECTIVENESS OF THEIR USE

Annotation

The article is focused on the legal acts of application and implementation of the norms of financial law aimed at legal regulation of individual links in the general financial system of the state, the establishment of their types, the effectiveness of use and the disclosure of legal features.

In the field of domestic jurisprudence, this is the first attempt, based on an analysis of current financial and legal legislation, to determine the practical effectiveness of the application and implementation of financial and legal norms that affect legal relations.

In the development of legal acts of application and implementation of legislative and executive bodies, based on the analysis of the processes of application and implementation of financial law norms, an exemplary model for the development of legal acts of application of financial law is proposed, which is a combination of unified economic, social, ideological values, the share of reflection of which in legal acts of application of financial law norms will ensure the high efficiency of the latter in the sphere of activity of financial and credit authorities and institutions.

Keywords: legal norm, norm of application of financial law, norm of implementation, model of legal norm, sanction, effectiveness of sanction, source of law.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 20.05.2024 թ., փրվել է գրախոսության 27.05.2024 թ., ընդունվել է փպագրության 01.06.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.2-69



ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, Հայ-ռուսական համալսարանի դոցենտ, իրավաբանական գիտությունների դոկտոր, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

**«ԻՆՔՆԻՀԻՄԱՆՈՒԹՅԱՆ»
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒՂՆԵՐԻ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ¹**

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է «ինքնիշխանություն» երևույթի էության բացահայտմանն ու վերջինի իրավական և քաղաքական բաղադրիչների ուսումնասիրմանը: Ուսումնասիրելով իրավունքի հասկացության ծագումնաբանությունը՝ հետազոտության ընթացքում առանձին ուշադրություն է դարձվել ժամանակակից պայմաններում «ինքնիշխանություն» հասկացության սահմանումներին: Ուսումնասիրության շրջանակներում հետազոտվել են նաև արդի պայմաններում «ինքնիշխանության» սահմանափակման հնարավոր դեպքերը և դրանց հիմքերը:

Հիմնաբառեր. ինքնիշխանություն, պետություն, սահմանադրություն, սահմանափակում, իրավունք, քաղաքականություն:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E006):

1. Ներածություն

Հնագույն ժամանակներից առայսօր «պետություն»-ը գտնվում է միջարք գիտնականների (հիմնականում՝ փիլիսոփաների, քաղաքագետների, իրավաբանների) հետազոտությունների կիզակետում: Վերջինների կողմից ուսումնասիրվում են պետության կառուցվածքը, ձևը, հատկանիշները, էությունը՝ բնութագիրը:

Ձևավորումից ի վեր, պետությունն ինքը՝ որպես հասարակական հարաբերությունների զարգացման արդյունք, էական փոփոխությունների է ենթարկվել, որի արդյունքում, պատմական տարբեր շրջաններում փոփոխության են ենթարկվել նաև պետության բնութագրերը: Փոխվել են պետության ձևի, կառուցվածքի, գործառույթների, նպատակների, էության մասին պատկերացումները: Օրինակ ստրկատիրական պետությունը, որն իր էությամբ ստրկատերերի քաղաքական կազմակերպություն էր, էապես տարբերվում էր այդ հասարակարգին հաջորդող ֆեոդալական պետությունից: Ֆեոդալական պետությունը, որը նախորդում էր բուրժուազիայի շահերն արտահայտող կապիտալիստական պետությանը, իր հերթին ֆեոդալների (ինչպես նաև՝ ավատատերերի, արհեստավորների, հոգևորականների) իշխանություն էր, իր էությամբ տարբերվում էր և՛ նախորդող՝ ստրկատիրական, և՛ հաջորդող՝ կապիտալիստական հասարակարգերից:

Պատմական զարգացմանը զուգընթաց, տեղի է ունեցել նաև պետության բովանդակության ընկալման փոփոխություն, որի արդյունքում պետությունը հասարակության որոշակի դասերի շահերն արտահայտող կազմակերպությունից վերածվել է ողջ հասարակության շահերն արտահայտող ու պաշտպանող կազմակերպության: Անշուշտ, այդ գործընթացին նպաստել են նաև 17-18-րդ դարերի ժողովրդավարական հեղափոխությունները, որոնց արդյունքում մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները մղվեցին առաջին պլան, իսկ պետությունը հարկադրանքի միջոցից վերածվեց ժողովրդի հավաքական իրավունքներն ու շահերն արտահայտողի ու պաշտպանի: Այս անընդհատ գործընթացը բերեց մի հանգրվանի, երբ, հատկապես երկրորդ աշխարհամարտին հաջորդող տարիներին, մի

շարք պետություններ (Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա և այլն) սկսեցին Սահմանադրական բարձր մակարդակում ամրագրել պետության ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական լինելու հանգամանքը:

Այս շարքում բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որը, մեկնարկելով անկախ պետականության հաստատման գործընթացը, սկզբից Անկախության մասին հռչակագրում¹ ամրագրեց պետության ինքնիշխան լինելու հանգամանքը, ապա Սահմանադրության ընդունմամբ, 1-ին անփոփոխելի հոդվածով² հայոց պետականության հիմնարար բնութագրեր հռչակեց ինքնիշխանությունը, ժողովրդավարական, սոցիալական ու իրավական պետությունը: Ներկայացված բնութագրերն առավել ընդհանուր ու ելակետային սկզբունքներ են, որոնք դրված են պետության կազմակերպման ու գործունեության ապահովման հիմքում, ինչպես նաև ուրվագծում են պետության էությունն ու առաքելությունը:

2. Ինքնիշխանության հասկացությունը և էությունը

Պետությունը՝ որպես ժողովրդի ու հասարակության շահերի արտահայտման հիմնական սուբյեկտ, ի զորու է ամբողջ ծավալով արտահայտելու իր քաղաքացիների կամքն ու ապահովելու նրանց իրավունքներն ու շահերը, բացառապես այն դեպքում, երբ ինքնիշխան է:

«Ինքնիշխանություն» հասկացության արմատները տանում են Նոր ժամանակի սկիզբ: Այն Եվրոպայում կրոնական պատերազմներին զուգահեռ նաև ազգային պետության քաղաքական գաղափարախոսության ձևավորման դարաշրջանն էր³: Հենց այս ժամանակաշրջանում ձևակերպվեց պետական ինքնիշխանության

¹ Հայաստանի անկախության մասին հռչակագիր: Ընդունվել է 23.08.1990 թ., URL: <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2602&lang=arm>

² Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 1-ին հոդված: Ընդունվել է 05.07.1995 թ. հանրաքվեով, URL: <https://concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra/sahmanadrowt-yown-endownvats-1995-t-vakani-howlisi-5-i-hanrak-veov>

³ **Мирумян К.А.** История политической науки. Часть II. Средневековье, Возрождение, Реформация. - Ер.: Изд. РАУ, 2005. - С. 394.

հայեցակարգը, որի շնորհիվ քաղաքական միտքը հակադրվեց միջնադարյան պետությունների անարխիային ու մասնատվածությանը: Անշուշտ, «ինքնիշխանություն» հասկացությունը հայտնի էր նաև անտիկ աշխարհին, բայց քանի որ ֆեոդալական հասարակարգում յուրաքանչյուր ֆեոդալ իրեն ինքնիշխան էր համարում, այն ֆեոդալական հասարակության քաղաքական գիտակցության մեջ հետին պլան էր մղվել:

«Ինքնիշխանություն»-ը ֆրանսիական ծագում ունեցող բառ է. հին ֆրանսերենում այն հնչում է որպես «sovereinite», իսկ վերջինս իր հերթին սերում է լատիներեն «supremapotestas» բառից, որը նշանակում է «բարձրագույն իշխանություն»: Չնայած բառի երկարամյա գոյությանը, իրավաքաղաքական մտքի պատմության մեջ «ինքնիշխանություն»-ը՝ որպես պետության էական հատկանիշ, առաջին անգամ ձևակերպվել, լայնորեն հիմնավորվել և գիտական շրջանառության մեջ է դրվել ֆրանսիացի քաղաքական և պետական գործիչ, փիլիսոփա, իրավաբան, փաստաբան Ժան Բոդենի կողմից: Հասկացությունը Ժ. Բոդենը սահմանում էր հետևյալ կերպ. «Ինքնիշխանությունը պետության բացարձակ և մշտական իշխանությունն է... Քաղաքացիների և հպատակների նկատմամբ բացարձակ, ոչ մի օրենքով չկապված իշխանություն»¹: Մատնանշելով պետության իշխանության բացարձակ և մշտական լինելու հանգամանքը՝ Բոդենը բացարձակ իշխանություն է համարում այն իշխանությունը, որը տրվում է ժողովրդի կողմից՝ առանց որևէ պայմանի և սահմանափակումների, իսկ մշտական իշխանություն այն իշխանությունը, որը գոյություն ունի իր իրավունքի հիման վրա և չի պատվիրակվում որոշակի ժամկետով: Հղում անելով այս մտքին՝ վերջինը նշում է, որ ինքնիշխանները չպետք է հնազանդվեն այլ մարդկանց հրամաններին և պետք է կարողանան (ինքնուրույն, առանց որևէ միջամտությունների – առանձնացվել է հեղինակի կողմից) իրենց հպատակների համար օրենքներ արձակել և չեղարկել դրանք... Ըստ Բոդենի՝ պետության իշխանությունը բարձրագույն և անկախ

¹ Антология мировой философии. В 4-х томах. - М., 1969-1970. - С. 146.

իշխանությունն է ինչպես երկրի ներսում, այնպես էլ այլ պետությունների հետ հարաբերություններում¹: Հակառակ դեպքում, ըստ նրա, խոսք անգամ չի կարող լինել ինքնիշխանության մասին:

Բողենյան «ինքնիշխանություն»-ը, որը սկսած 16-րդ դարից մուտք գործեց աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների խոսույթ, առաջնահերթ նշանակում էր պետության անկախությունը Հռոմի պապից, եկեղեցուց, գերմանական կայսրից, կալվածատերերից, այլ պետություններից: Այն, որպես գերագույն իշխանություն, ներառում է օրենքներ ընդունելու և չեղյալ հայտարարելու, պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու, բարձրաստիճան պաշտոնյաների նշանակման, գերագույն դատարանի գործադրման իրավունքը, ներման իրավունքը, մետաղադրամներ հատելու, հարկեր գանձելու իրավունքը:

Հաջորդող դարերում «ինքնիշխանություն» հասկացության աշխարհագրությունն էլ ավելի ընդլայնվեց և, ինչ-որ առումով, նաև որոշակիացվեց: Եթե ձևավորման շրջանում քննարկվում էր, թե ով է ի վերջո հանդիսանում ինքնիշխանության կրողը և ինչ լիազորություններով նա պետք է օժտված լինի, ապա 17-18 դարերում արդեն առաջ է գալիս նաև ինքնիշխանության աղբյուրի խնդիրը: Արդեն ականավոր մտածողներ Թոմաս Հոբսի, Ջոն Լոքի և Ժան Ժակ Ռուսոյի հայեցակարգերում, ինչպես նաև այդ դարերի քաղաքական պրակտիկայում ինքնիշխանության աղբյուր սկսեց դիտարկվել ժողովուրդը: Այսպես, եթե Ժ. Բողենը ինքնիշխանության կրող էր համարում բացառապես միապետին, որն անսահմանափակ իշխանություն ուներ ժողովրդի վրա², ապա 18-րդ դարում, ֆրանսիացի մտածող Ռուսոն, ով ինքնիշխանին անվանում էր ոչ այլ ինչ, քան կոլեկտիվ էակ, որը ստացել էր «ժողովուրդ» անունը, մշակեց ժողովրդական ինքնիշխանության դոկտրինը³: Համաձայն

¹ **Мирумян К.А.** История политической науки. Часть II. Средневековье, Возрождение, Реформация. - Ер.: Изд. РАУ, 2005. - С. 399.

² Governments of the World: A Global Guide to Citizen's Rights and Responsibilities / Tate C. N. (ed.). - Thomson Gale, 2006. - P. 1-2. - 392 p. - ISBN 0-02-865815-9.

³ **Руссо Ж.-Ж.** Об общественном договоре. Трактаты / Перевод с франц. А.Д. Хаютина и В.С. Алексеева-Попова. - М.,: "КАНОН-пресс", "Кучково поле", 1998. Книга 1, глава VI и далее. - ISBN 5-87533-113-5.

ժողովրդական ինքնիշխանության դոկտրինի՝ պետության ժողովուրդը հանդիսանում է գերագույն իշխանության միակ և օրինական կրողը՝ ու պետական ինքնիշխանության աղբյուրը²: Ներկայացված մոտեցումից ուղղակիորեն բխում է, որ ժողովուրդը, հանդիսանալով գերագույն իշխանության միակ և օրինական կրողը, իր ինքնուրույնության մի մասը կամավոր փոխանցում է պետությանը՝ վերջինիս պետական ինքնիշխանությամբ օժտելու համար: Այսինքն՝ պետության ինքնիշխանությունը բաղկացած է յուրաքանչյուր քաղաքացու և ընդհանրապես ողջ ժողովրդի կողմից պետությանը փոխանցված լիազորություններից: Միևնույն ժամանակ, Ազգային ինքնիշխանության (կամ ժողովրդական ինքնիշխանության) սկզբունքի յուրօրինակ բնութագրում է տրվել ֆրանսիացի իրավաբան Ադեմառ Էսմենի կողմից, համաձայն որի՝ «ժողովուրդը, ինչպես և անհատը, իրավունքի իմաստով չի կարող վաճառել կամ ինքն իրեն տալ ուրիշին: Քաղաքական ազատությունը, ինչպես անհատական ազատությունը, ըստ էության անօտարելի է: Բայց նույնիսկ եթե ենթադրենք, որ ինքնիշխանությունն ըստ էության անփոխանցելի (անզիջելի – առանձնացվել է հեղինակի կողմից) բան չէ, այնուամենայնիվ ակտը, որով որևէ ազգ որոշակի պահի զիջի այն, իրավական իմաստով պետք է համարվի անվավեր: Իրականում դուք կարող եք օտարել միայն այն, ինչ ձեզ է պատկանում: Մինչդեռ ազգային ինքնիշխանությունը չի պատկանում այս սերնդին, այն ունի անհրաժեշտ և օրինական իրավունք՝ ազատորեն օգտագործելու, բայց միայն օգտագործելու այն: Սակայն ազգային ինքնիշխանությունը պատկանում է պետության մեջ մարմնավորված ազգին, այսինքն հաջորդական սերունդների ամբողջ շարքին, այն որքան պատկանում է այսօրվա սերնդին, նույնքան պատկանում է վաղվա սերնդին: Դա այն սրբազան

¹ Левин И.Д. Суверенитет. - СПб.: Юридический центр Пресс, 2003. - С. 18. - ISBN 5-94201-195-8.

² Черниченко С.В. Государство как личность, субъект международного права и носитель суверенитета // Российский ежегодник международного права. - СПб.: Издательский дом СПбГУ, 1995. - С. 23-24.

ավանդն է, որը սերունդները փոխանցում են միմյանց»¹: Էսմենի մոտեցումը լրացնելով՝ բողեյյան «ինքնիշխանության անբաժանելիության» սկզբունքը փաստում է, որ չնայած ինքնիշխանությունը պատկանում է պետության մեջ մարմնավորված ազգին՝ այն որևէ պարագայում չի կարող զիջվել կամ փոխանցվել այլոց նաև ժողովրդի կողմից:

Վերոշարադրյալից ուրվագծվում է, որ իրավաքաղաքական մտքի պատմության տարբեր ժամանակահատվածներում ձևավորվել և շրջանառության մեջ են դրվել «ինքնիշխանության» տարբեր՝ պետական, ժողովրդական և ազգային մոտեցումներ: Մասնավորապես, եթե Նոր ժամանակի սկզբում Ժ. Բողեյի կողմից ձևակերպվեց և շրջանառության մեջ դրվեց «պետական ինքնիշխանության» հասկացությունը, ապա արդեն մեկ դար անց Ժ.Ժ. Ռուսոն, ինքնիշխանության կենտրոնում դիտարկելով ժողովրդին, մշակեց «ժողովրդական ինքնիշխանության» հայեցակարգը, իսկ ահա դրանից ոչ շատ ուշ մեկ այլ ֆրանսիացի իրավաբան Էսմենը հիմք դրեց «ազգային ինքնիշխանության» հասկացությանը: Ընդ որում, հարկ է նշել նաև, որ ներկայացված մոտեցումները հաճախ մրցակցության մեջ են մտնում՝ հայտնվելով մի շարք իրավաբան և քաղաքագետ գիտնականների հետազոտությունների կիզակետում, որոնք ուղղված են բացահայտելու նշյալ մոտեցումների փոխգործակցությունն ու հարաբերակցությունը: Դիտարկելով պետական և ժողովրդական ինքնիշխանության հասկացությունների հարաբերակցության հարցը՝ մասնագետների մի մասն ամբողջապես նույնացնում է դրանք, մյուսը գտնում է, որ պետական ինքնիշխանությունն ածանցվում է ժողովրդական ինքնիշխանությունից, իսկ երրորդներն ընդհանրապես բացառում են ժողովրդական ինքնիշխանության գոյությունը՝ ընդունելով միայն պետության ինքնիշխանությունը: Ինչ վերաբերում է ազգային ինքնիշխանությանը, ապա այն, որպես կանոն, կապվում

¹ Эсмен А. Общие основания конституционного права / Пер. с франц. / Под ред. В. Дерюжинского – СПб., 1898 г. – С. 140, URL: <https://upload.wikimedia.org/wikipedia/commons/b/b4/%D0%AD%D1%81%D0%BC%D0%B5%D0%BD.%D0%9E%D0%B1%D1%89%D0%B8%D0%B5.%D0%BE%D1%81%D0%BD%D0%BE%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F.%D0%BA%D0%BE%D0%BD%D1%81%D1%82%D0%B8%D1%82%D1%83%D1%86%D0%B8%D0%BE%D0%BD%D0%BE%D0%B3%D0%BE.%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0.%281898%29.pdf>

է ազգերի ինքնորոշման իրավունքի հետ: Ընդհանուր առմամբ, անկախ գոյություն ունեցող տարատեսակ մեկնաբանություններից, ինչպես արդարացիորեն նշում է Բ. Էբզեևը¹, ինքնիշխանությունը հանդես է գալիս որպես մեկ միասնական հասկացություն, որը չի կարող բաժանվել պետության, ժողովրդի և ազգի միջև, քանի որ այդ ինքնիշխանությունները միևնույն երևույթի տարբեր կողմեր են: Ժողովրդական և ազգային ինքնիշխանությունը գտնվում է պետության ինքնիշխանության հիմքում, որն իր հերթին հանդիսանում է ժողովրդի և ազգի ինքնիշխան կամքի արտահայտման իրավաքաղաքական ձևը:

Չնայած դարերի ընթացքում ինքնիշխանության հասկացության շուրջ ձևավորված տասնյակ մոտեցումներին՝ ժամանակակից իրավաբանական և քաղաքական գիտությունն առավելապես շարունակում է բողենյան ավանդույթները՝ պետական ինքնիշխանությանը վերագրելով այնպիսի հատկություններ, ինչպիսիք են գերակայությունը, ինքնուրույնությունը, լիիշխանությունը, անբաժանելիությունը, անկախությունը, իրավահավասարությունը, անօտարելիությունը, միասնությունը: Ինքնիշխանությունն անբաժանելի է, քանզի այն բնորոշ է պետությանը՝ որպես մեկ միասնական ամբողջություն, բայց ոչ նրա առանձին ինստիտուտներին, պաշտոնյաներին կամ հանրային իշխանության ներկայացուցիչներին:

Պետական ինքնիշխանությունը հավաքական քաղաքական-իրավական երևույթ է, որի քաղաքական և իրավական բաղադրիչները ոչ միայն գտնվում են անքակտելի կապի մեջ, այլև փոխլրացնում են միմյանց: Այսինքն՝ պետությունը կարող է համարվել ինքնիշխան միայն այն դեպքում, երբ առկա են նրա և քաղաքական, և իրավական ասպեկտները: Այս առումով տեղին է նշել Մ. Մարչենկոյին², ով նշում է, որ անկախ նրանից, թե ինչպես է հասկացվում և ինչպես է սահմանվում պետական ինքնիշխանությունը, նրա հասկացության և բովանդակության մեջ մեթոդաբանորեն կարևոր է առանձնացնել

¹ Эбзеев Б.С. Конституция, демократия, права человека. - М., 1992. - С. 169.

² Марченко М.Н. Государственный суверенитет: проблемы определения понятия и содержания // Правоведение. 2003. №1. - С. 186, 187.

երկու ասպեկտ՝ ֆորմալ-իրավական և փաստական: Իսկ ահա Պ. Օլը նշում է, որ «ինքնիշխանությունը սերտորեն կապված է քաղաքական իշխանության հետ, այսինքն՝ սուբյեկտի՝ իր կամքը քաղաքականության մեջ իրականացնելու իրական ունակության հետ»¹: Ասվածից բխում է, որ ինքնիշխանության միայն իրավական, ֆորմալ ամրագրումը բավարար չէ իրական ինքնիշխանություն ունենալու համար, անհրաժեշտ է նաև դրա փաստացի կյանքի կոչելու հնարավորության առկայությունը²:

Վերոշարադրյալը փաստում է այն, որ պետության ինքնիշխանությունը նրա քաղաքական-իրավական միացյալ հատկությունն է, որն արտահայտվում է երկրի ներսում պետական իշխանության գերակայությամբ և արտաքին հարաբերություններում՝ անկախությամբ: Այսինքն՝ **ինքնիշխանությունը պետական իշխանության գերակայությունն ու անկախությունն է իր տարածքի ներսում և անկախությունն ու իրավահավասարությունը այլ պետությունների հետ հարաբերություններում**: Իր տարածքի ներսում պետության ինքնիշխանությունը (ներքին ինքնիշխանություն) դրսևորվում է քաղաքական համակարգի այլ կազմակերպությունների նկատմամբ պետության գերակայությամբ և լիիշխանությամբ, ինչն արտահայտվում է օրենսդիր, գործադիր և դատական գործառույթներ իրականացնելու պետության բացառիկ և մենաշնորհային իրավունքով: Ընդհանուր առմամբ, պետության ինքնիշխանությունն իր մեջ ներառում է օրենքներ ընդունելու, հրապարակելու և դրանք կիրառության մեջ դնելու իրավունքը, պետական մարմիններ ձևավորելու և պետական խորհրդանիշներ (զինանշան, օրհներգ, դրոշ) սահմանելու իրավունքը, պետական դրամական միավոր ունենալու, հարկեր ու տուրքեր սահմանելու իրավունքը, պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու իրավունքը, օտարերկրյա պետություններում և վերապետական կազմակերպություններում իր ներկայացուցիչներին նշանակելու

¹ **Оль П.А.** Политико-правовая сущность суверенитета // Вестник Нижегородского ун-та им. Н.И. Лобачевского: Власть и право. 2003. Вып. 2. - С. 109.

² **Хабиров Р.Ф.** Соотношение государственного суверенитета и права // Право и государство: теория и практика. 2008. №. 6. - С. 29.

իրավունքը, միջպետական կազմակերպությունների համահիմնադիր հանդիսանալու և դրանց անդամագրվելու իրավունքը և այլն:

Որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, այլ պետությունների հետ հարաբերություններում պետության ինքնիշխանությունը (արտաքին ինքնիշխանություն) դրսևորվում է վերջինի անկախությամբ, իրավահավասարությամբ, պետության ներքին գործերին դրսից միջամտելու անթույլատրելիությամբ, վերպետական միջազգային կազմակերպություններին անդամության իրավահավասարությամբ: Անկախ պետության տարածքի չափից, բնակչության թվից, կառավարման և կառուցվածքի ձևերից՝ ինքնիշխանությամբ օժտված է ցանկացած պետություն: Պետությունների ինքնիշխանության սկզբունքը դրված է նաև ժամանակակից միջազգային իրավունքի հիմքում և արտացոլված է մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերում, որոնք, առանց օրինական հիմքերի, բացառում են պետության ինքնիշխանության սահմանափակումն ու պետության ներքին գործերին միջամտությունը: Ինքնիշխանության հարգումը և պետության ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը՝ որպես միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք, ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 7-րդ կետում¹ (որպես «jus sodeps» նորմ՝ միջազգային իրավունքի հրամայական նորմ) և «պետությունների ներքին գործերին միջամտելու և միջամտելու անթույլատրելիության մասին հռչակագրում»²:

3. Ինքնիշխանության սահմանափակումը

Միևնույն ժամանակ, պետությունների ինքնիշխանության ծավալը միատեսակ չէ և քիչ չեն դեպքերը, երբ պետությունների ինքնիշխանությունը սահմանափակված է կամ ձևական բնույթ է կրում: Առհասարակ, ժամանակակից աշխարհում պետական իշխանության ներքին գերակայությունն ու արտաքին անկախությունն ավելի ու ավելի են սահմանափակվում միջազգային իրավունքով:

¹ ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդված 2, կետ 7, URL: <https://www.un.org/ru/about-us/un-charter/full-text>

² Декларация о недопустимости интервенции и вмешательства во внутренние дела государств. Принята резолюцией 36/103 Генеральной Ассамблеи от 9 декабря 1981 года, URL: https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/internal_affairs_decl.shtml

Որպես կանոն առանձնացվում են պետության ինքնիշխանության սահմանափակման կամավոր կամ հարկադիր ենթատեսակներ: Ընդ որում, այն կարող է լինել ինչպես ամբողջական, այնպես էլ մասնակի: Ինքնիշխանության կամավոր սահմանափակում կարելի է համարել պետության անդամակցումը օրինակ համադաշնությանը կամ միջպետական կազմակերպությանը, որի արդյունքում պետությունն իր ինքնիշխան իրավունքների մի մասը փոխանցում է վերջիններին՝ փոխարենը այլ իրավունքներ կամ արտոնություններ ստանալով: Ինչպես արդարացիորեն նշում է Վ. Իվանովը¹ ընդհանրապես, պետության՝ միջազգային (միջպետական) հաղորդակցություն մեջ մտնելու փաստը՝ պայմանագրերի կնքում, մասնակցություն միջազգային կազմակերպությունների գործունեությանը և այլն, փաստացի նշանակում է պետության ինքնիշխանության սահմանափակում, քանզի այն մեխանիկորեն այլ ինքնիշխանությունների նկատմամբ առաջացնում է պարտավորություններ:

Որպես ինքնիշխանության հարկադիր սահմանափակման օրինակ կարելի է ներկայացնել պատերազմում հաղթող պետության կողմից հաղթված պետության նկատմամբ ներկայացվող միակողմանի պահանջները: Ինքնիշխանության հարկադիր սահմանափակման օրինակ են նաև ՄԱԿ-ի կանոնադրության յոթերորդ՝ «Գործողություններ խաղաղության սպառնալիքի, խաղաղության խախտումների և ագրեսիայի գործողությունների վերաբերյալ» գլխով նախատեսված սահմաններում և դեպքերում իրականացվող գործողությունները, երբ կարող է զինված ուժեր կիրառվել այն պետությունների նկատմամբ, որոնք թույլ են տալիս մարդու իրավունքների կոպտագույն և պարբերական խախտումներ, սպառնալիք են հանդիսանում խաղաղությանը: Այս գործողությունը միջազգային իրավունքում առավել հայտնի է հումանիտար ներխուժում (հումանիտար ինտերվենցիա, անգլ.՝ Humanitarian intervention) կամ մարդասիրական միջամտություն անվանումներով: Որպես հումանիտար ինտերվենցիայի օրինակ կարելի

¹ **Иванов В.** Государство и суверенитет. Спор о суверенитете // Русский журнал, 2009. www.russ.ru/Mirovaya-povestka/Gosudarstvo-i-suverenitet

է բերել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումների հիման վրա ինքնիշխանության սահմանափակման պրակտիկան Հարավսլավիայում, Իրաքում, Սիրիայում և այլն:

4. Ամփոփում

Այսպիսով, պետական ինքնիշխանությունն անկյունաքարային տեղ է զբաղեցնում ներպետական և վերպետական հարբերություններում: Այն բարդ, բազմաշերտ, և հավաքական երևույթ է, որի իրական գոյությունը հնարավոր է ապահովել բացառապես նրա երկու՝ քաղաքական և իրավական բաղադրիչների առկայության ու դրանց կայուն փոխգործակցության ու փոխլրացման արդյունքում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի անկախության մասին հռչակագիր: Ընդունվել է 23.08.1990 թ., URL: <http://www.parliament.am/legislation.php?sel=-show&ID=2602&lang=arm>

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 1-ին հոդված: Ընդունվել է 05.07.1995 թ. հանրաքվեով, URL: <https://concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra/sahmanadrowt-yown-endownvats-1995-t-vakani-howlisi-5-i-hanrak-veov>

3. **Мирумян К.А.** История политической науки. Часть II: Средневековье, Возрождение, Реформация. - Ер.: Изд. РАУ, 2005.

4. Антология мировой философии. В 4-х томах. - М., 1969-1970. - С. 146.

5. Governments of the World: A Global Guide to Citizen's Rights and Responsibilities / Tate C. N. (ed.). - Thomson Gale, 2006. - P. 1-2. - 392 p. - ISBN 0-02-865815-9.

6. **Руссо Ж.-Ж.** Об общественном договоре. Трактаты / Перевод с франц. А.Д. Хаютина и В.С. Алексеева-Попова. - М.: “КАНОН-пресс”, “Кучково поле”, 1998. Книга 1, глава VI и далее. — ISBN 5-87533-113-5.

7. **Левин И. Д.** Суверенитет. - СПб.: Юридический центр Пресс, 2003. - С. 18. - ISBN 5-94201-195-8.

8. **Черниченко С.В.** Государство как личность, субъект международного права и носитель суверенитета // Российский ежегодник международного права. - СПб.: Издательский дом СПбГУ, 1995. - С. 23-24.

9. **Эсмен А.** Общие основания конституционного права / Пер. с франц. / Под ред. В. Дерюжинского. - СПб, 1898 г. - С. 140, [URL: https://upload.wikimedia.org/wikipedia/commons/b/b4/%D0%AD%D1%81%D0%BC%D0%B5%D0%BD.%D0%9E%D0%B1%D1%89%D0%B8%D0%B5%D0%BE%D1%81%D0%BD%D0%BE%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F.%D0%BA%D0%BE%D0%BD%D1%81%D1%82%D0%B8%D1%82%D1%83%D1%86%D0%B8%D0%BE%D0%BD%D0%BD%D0%BE%D0%B3%D0%BE.%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0.%281898%29.pdf](https://upload.wikimedia.org/wikipedia/commons/b/b4/%D0%AD%D1%81%D0%BC%D0%B5%D0%BD.%D0%9E%D0%B1%D1%89%D0%B8%D0%B5%D0%BE%D1%81%D0%BD%D0%BE%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F.%D0%BA%D0%BE%D0%BD%D1%81%D1%82%D0%B8%D1%82%D1%83%D1%86%D0%B8%D0%BE%D0%BD%D0%BD%D0%BE%D0%B3%D0%BE.%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0.%281898%29.pdf)

10. **Эбзеев Б.С.** Конституция, демократия, права человека. - М., 1992. - С. 169.

11. **Марченко М.Н.** Государственный суверенитет: проблемы определения понятия и содержания // Правоведение. 2003. №1. - С. 186, 187.

12. **Оль П.А.** Политико-правовая сущность суверенитета // Вестник Нижегородского ун-та им. Н.И. Лобачевского: Власть и право. 2003. Вып. 2. - С. 109.

13. **Хабиров Р.Ф.** Соотношение государственного суверенитета и права // Право и государство: теория и практика. 2008. №. 6. - С. 29.

14. ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդված 2, կետ 7,
URL: <https://www.un.org/ru/about-us/un-charter/full-text>

15. Декларация о недопустимости интервенции и вмешательства во внутренние дела государств. Принята Резолюцией 36/103 Генеральной Ассамблеи от 9 декабря 1981 года,

URL: https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/internal_affairs_decl.shtml

16. **Иванов В.** Государство и суверенитет. Спор о суверенитете // Русский журнал, 2009, URL: www.russ.ru/Mirovaya-povestka/Gosudarstvo-i-suverenitet

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ПРАВОВОЙ И ПОЛИТИЧЕСКОЙ СОСТАВЛЯЮЩИХ “СУВЕРЕНИТЕТА”

Аннотация

Статья посвящена раскрытию сущности явления “суверенитет” и изучению правовых и политических составляющих последнего. В статье в ходе изучения генеалогии понятия права отдельное внимание было уделено определениям понятия “суверенитет” в современных условиях. В рамках исследования также были рассмотрены возможные случаи ограничения “суверенитета” в современных условиях и их основания.

Ключевые слова: суверенитет, государство, Конституция, ограничение, право, политика.

ON SOME ISSUES OF THE LEGAL AND POLITICAL COMPONENTS OF “SOVEREIGNTY”

Annotation

The article is devoted to the disclosure of the essence of the phenomenon of “sovereignty” and the study of the legal and political components of the latter.

Studying the genealogy of the concept of law, special attention was paid to the definitions of the concept of “sovereignty” in modern conditions. The study also examined possible cases of limitation of “sovereignty” in modern conditions and their grounds.

Keywords: sovereignty, state, Constitution, restriction, law, politics.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 20.05.2024 թ., տրվել է գրախոսության 20.05.2024 թ., ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.



DOI: 10.59560/18291155-2024.2-84

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի օգնական,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ
ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ՀԻՄՔԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԵԼՈՒ
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ
(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

Ամփոփագիր

Ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու իրավունքը մեղադրյալի առանցքային իրավունքներից է: Առանց այդ իրավունքի մեղադրյալի այլ իրավունքների իրականացումը կամ անիրական է, կամ խիստ անարդյունավետ (օրինակ՝ մեղադրյալը ցուցմունք տալու իր իրավունքից արդյունավետորեն կարող է օգտվել, երբ հանգամանորեն տեղեկացված է, թե ինչից պետք է պաշտպանվի, ինչ փաստական հանգամանքներ են իրեն վերագրվում, երբ է նա կատարել իրեն վերագրվող այդ արարքը և այլն, իսկ առանց հստակ իմանալու մեղադրյալի կողմից ցուցմունք տալով իր պաշտպանության իրավունքի իրացումը դառնում է պատրանքային: Նույն կերպ, մեղադրյալի՝ վարույթին նյութեր և ապացույցներ կցելու իրավունքը կարող է արդյունավետորեն իրացվել միայն այն դեպքում, երբ վերջինս հստակ իմանա՝ ինչի համար է մեղադրվում, այսինքն՝ մեղադրանքի հիմքի և բնույթի մասին և այլն): Այսպիսի օրինակները շատ են, հենց այդ պատճառով մեղադրյալի քննարկվող իրավունքը կարելի է իրապես կոչել նրա իրավունքների թագուհի:

Այս գիտագործնական մեկնաբանությունն ուղղված է հենց մեղադրյալի նշված իրավունքի մեկնաբանությանը, այդ իրավունքի էության բացահայտմանը, որը թույլ է տալիս նաև զանազանել մեղադրյալի քննարկվող իրավունքը մեկ այլ իրավունքից՝ գործի նյութերին ծանոթանալու մեղադրյալի իրավունքից:

Հիմնաբառեր. մեղադրյալ, մեղադրանքի բնույթ, մեղադրանքի հիմք, ապացույցներ:

1.1. Ընդհանուր դրույթներ

Ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու մեղադրյալի այս իրավունքն առանցքային նշանակություն ունի պաշտպանության կազմակերպման համար: Ընդհանրապես, որպեսզի հնարավոր լինի ինչ-որ մի բանից պաշտպանվել, նախ և առաջ անհրաժեշտ է իմանալ՝ **ինչ է այն, ինչից պետք է պաշտպանվել:**

Մեղադրյալի այս իրավունքը հենց կոչված է ապահովելու մեղադրյալի պաշտպանության համար հիմնաքարային նշանակություն ունեցող հարցը՝ **ինչից է պաշտպանվում**, որից հետո միայն **գործնական նշանակություն կստանան մեղադրյալի այլ իրավունքները:**

Հենց այս հաշվառմամբ է, որ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու մեղադրյալի իրավունքը **պատկերավոր կարելի է բնորոշել որպես մեղադրյալի իրավունքների «թագուհի»:**

Մեղադրյալի քննարկվող իրավունքի առանցքային կարևորությունից ելնելով էլ ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու իրավունքը՝ իբրև մեղադրյալի պաշտպանության իրավունքի բաղադրատարր, իր արտացոլումն է գտել թե՛ երկրի Հիմնական օրենքում («Սահմանադրության 67-րդ հոդված»), թե՛ երաշխավորված է կոնվենցիոնալ մակարդակում (ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի ա) ենթակետ):

Ընդ որում, թե՛ Սահմանադրությունը և թե՛ ՄԻԵԿ-ը չեն սահմանում, թե **ինչ կերպ, ինչ ձևով (մեթոդով) անձը** պետք է տեղեկացվի իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքերի մասին¹, դրա

¹ ՄԻԵԿ վերաբերելի մասով, տե՛ս *Pelissier and Sassi v. France* գործով 1999 թ. մարտի 25-ի վճիռը (գանգատ թիվ 25444/94), § 53:

կանոնակարգումն իր հերթին իրացվում է քրեադատավարական ճյուղային օրենսդրությամբ:

Միևնույն ժամանակ, սակայն, տեղեկացումը պետք է լինի այնպիսի **ձևով, որ չխոչընդոտվի մեղադրյալի կողմից իր պաշտպանության արդյունավետ կազմակերպումը:**

1.2.Ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելը

Մեղադրյալի պաշտպանության արդյունավետությունը պահանջում է, որ մեղադրյալը տեղեկացվի ինչպես մեղադրանքի փաստական կողմի (մեղադրյալին վերագրվող ենթադրյալ արարքը), այնպես էլ փաստական կողմին (մեղադրյալին վերագրվող ենթադրյալ արարքին) տրվող քրեաիրավական գնահատականի մասին:

Ընդ որում՝ արդյունավետ պաշտպանության կազմակերպման առանցքային տարրերից է, որ թե՛ փաստական և թե՛ իրավական կողմը մեղադրյալին պետք է ներկայացվեն *հանգամանորեն, մանրամասն*¹:

Մեղադրանքի բնույթի և հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելը կախված է գործի առանձնահատկություններից և դժվար է in abstracto նշել, թե կոնկրետ ինչ հանգամանքներ պետք է հստակ տեղ գտնեն մեղադրանքի ձևակերպման մեջ, որպեսզի այն բավարարի «հանգամանորեն տեղեկացվելու» չափանիշին:

Իբրև սկզբունք, սակայն, պետք է ընդունել այն, որ մեղադրյալը պետք է տեղեկացվի **առանցքային, էական հանգամանքների մասին, որոնք նրա մեղադրանքի հիմքում են ընկած, որպեսզի վերջինս կարողանա արդյունավետ կերպով կազմակերպել իր պաշտպանությունը:** Ըստ այդմ՝ այն բոլոր դեպքերում, երբ այդպիսի առանցքային, էական հանգամանքների մասին մեղադրյալը չի տեղեկացվել (կամ պատշաճ չի տեղեկացվել) վերջինս զրկվում է իր պաշտպանությունը արդյունավետ կազմակերպելու (պաշտպանության կազմակերպման ռազմավարությունը մշակելու) հնարավորությունից, որի հետևանքով

¹ Տե՛ս ՄԻԵԴ *Pelissier and Sassi v. France* գործով 1999 թ. մարտի 25-ի վճիռը (գանգատ թիվ 25444/94), § 51, նաև՝ ՄԻԵԴ *Mattochia v. Italy* 2000 թ. հուլիսի 25-ի վճիռը (գանգատ թիվ 23969/94), § 59:

Էլ կասկածի տակ է դրվում (կարող է դրվել) վարույթի ընդհանուր արդարությունը:

Մեղադրանքը «հանգամանորեն ներկայացվելու» չափանիշը, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, պահպանվել է, օրինակ, այն դեպքերում, երբ ներկայացված մեղադրանքում թվարկվել են այն հանցանքները, որոնցում անձը մեղադրվել է և նշվել են ենթադրյալ հանցանքի վայրը, դրա կատարման ամսաթիվը, ինչպես նաև քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածները և տուժողի անունը¹:

ՄԻԵԴ-ը շեշտադրել է, որ քրեական գործերով ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ ամբողջական, մանրամասն տեղեկատվության տրամադրումը և, որպես հետևանք, նաև այդ արարքին դատարանի կողմից տրվելիք իրավական գնահատականի մասին տեղեկության տրամադրումն էական նախապայման է դատավարության արդարությունն ապահովելու համար²:

Միայն մեղադրանքի բնույթի և հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելը *մեղադրանքի մանրամասն փաստական և իրավական կողմին տեղեկացվելն է, որը մեղադրյալին կտա* իր դեմ բերվող հակադիր դիրքորոշման դեմ արտահայտվելու, դրանց արծագանքելու, հակափաստարկ ներկայացնելու, դրանք վիճարկելու իրավունքը իրացնելու (այդ կերպ ապահովելով մրցակցության տարր «գենքերի հավասարությունը») և, մյուս կողմից, իր այլ իրավունքները արդյունավետ կենսագործելու իրական հնարավորություն: Այս առնչությամբ Մոսկվայի պետական համալսարանի դատավարագետներն իրավացիորեն նշում են, որ. «Միայն իմանալով, թե ինչում են իրեն մեղադրում, մեղադրյալը կարող է օգտվել իր ցուցմունք տալու իրավունքից՝ հերքելով ներկայացված մեղադրանքը. նույն նպատակով իրացնել նոր վկային հարցաքննելու միջնորդության իրավունքը և այլն»³:

¹ Տե՛ս ՄԻԵԴ *Brozicek v. Italy* գործով 1989 թ. դեկտեմբերի 19-ի վճիռը (գանգատ թիվ 10964/84), § 42:

² Տե՛ս *Pelissier and Sassi v. France*, նշվ. վճիռի § 52:

³ Տե՛ս *Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. - М.: Статут, 2017, էջ 348:*

Կախված դատավարության փուլից և մեղադրանքի ձևից՝ Օրենսգիրքը, ի ապահովումն մեղադրյալի նշված իրավունքի իրացման, սահմանել է մեղադրյալի քննարկվող իրավունքի ապահովման տարբեր ձևեր: Օրինակ՝ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդում հարուցելու դեպքում Օրենսդիրը համանուն որոշման բովանդակային պահանջների մեջ է ներառել նաև այնպիսի տվյալները, ինչպիսիք են մեղադրանքի փաստական հիմքը՝ մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները (...), ինչպես նաև քրեական օրենսգրքի այն հոդվածը կամ հոդվածի մասը կամ կետը, որով պատասխանատվություն է նախատեսված անձին մեղսագրվող արարքի կատարման համար (արարքի իրավական գնահատականը) (Օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մաս): Բացի այդ, քննիչի վրա դրվել է մեղադրանքը ներկայացնելու պարտականություն՝ սահմանելով, որ քննիչը պետք է մեղադրյալին հանձնի քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը (Օրենսգրքի 190-րդ հոդվածի 4-րդ մաս):

Այդ որոշման բովանդակությանը ծանոթանալով՝ արդեն ինքնին մեղադրյալը կարող է տեղեկություն ստանալ իրեն ներկայացված մեղադրանքի մասին: Սակայն օրենսդիրը միայն նշված որոշման պատճենը հանձնելով չի սահմանափակվել:

Ելնելով մեղադրյալի գրագիտությունից, մասնագիտությունից, տարիքային կամ այլ առանձնահատկություններից՝ այդ որոշման պատճենը ունենալը, որոշումը ընթերցելն ինքնին կարող է չապահովել մեղադրանքին հանգամանորեն ծանոթանալու հնարավորությունը:

Ըստ այդմ՝ օրենսդիրը քննիչի վրա դրել է պարտականություն **պարզաբանելու** մեղադրանքի փաստական հիմքը և իրավական գնահատականը (Օրենսգրքի 190-րդ հոդվածի 4-րդ մաս): Սա նշանակում է, որ քննիչը պարտավոր է *ոչ թե պարզապես ընթերցել քրեական հետապնդում հարուցելու որոշումը, այլ ամբողջական, մեղադրյալի համար հնարավոր մատչելի ձևակերպումներով փորձել բացատրել մեղադրանքի էությունը, ինչ արարքի կատարման մեջ է կասկածվում, այդ արարքը քրեական օրենսգրքի որ հոդված(ներ)ով է նախատեսված,*

բացապրել ոչ միայն հանցակազմի դիսպոզիցիան, այլ նաև սանկցիան, և դատարանի կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող այլ հանգամանքները¹:

Մասնավոր մեղադրանքի գործերով արդեն մեղադրյալի քննարկվող իրավունքի ապահովումը օրենսդիրը կազմակերպել է քրեական հայցին այն բովանդակային պահանջը սահմանելով, ըստ որի քրեական հայցում պետք է նշվի նաև մեղադրանքի բովանդակությունը, այդ թվում՝ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը կամ հոդվածի մասը (451-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ): Մյուս կողմից՝ օրենսդիրն այդ գործերով դատարանի կողմից քրեական վարույթ սկսելու մասին որոշման համար նույնպես սահմանել է որոշակի բովանդակային պահանջներ, որոնք ուղղված են մեղադրյալի այդ իրավունքի պատշաճ իրացման ապահովմանը: Մասնավորապես՝ քրեական վարույթ սկսելու մասին որոշումը պետք է պարունակի տուժողի անունը, ազգանունը, մեղադրանքի փաստական նկարագրությունը, ենթադրյալ հանցանքի իրավական գնահատականը, տուժողի ներկայացրած նյութերը (Օրենսգրքի 453-րդ հոդվածի 1-ին մաս): Բացի այդ Օրենսդիրը նախատեսել է և՛ քրեական հայցը, և՛ քրեական վարույթ սկսելու մասին որոշման պատճենը մեղադրյալին ուղարկելու պահանջ (453-րդ հոդվածի 3-րդ մաս), իսկ դատարանի համար՝ հիմնական դատախոզներում պարտականություն, մասնավոր մեղադրողի կողմից քրեական հայցը ներկայացնելուց հետո, ճշտելու՝ արդո՞ք մեղադրյալին հասկանալի է մեղադրանքը (455-րդ հոդվածի 3-րդ մաս):

Թեև այս հարցում հստակ օրենսդրական կանոնակարգումը բացակայում է, սակայն մեղադրանքը մեղադրյալի համար հասկանալի չլինելու դեպքում, դատարանը, ի ապահովումն մեղադրյալի նշված իրավունքի, պետք է միջոցներ ձեռնարկի մեղադրանքը մեղադրյալին պարզաբանելու ուղղությամբ:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), Մաս 2: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Եր., «Տիգրան Մեծ», 2017, էջ 388:

1.2.1. Մեղադրանքի ձևակերպման հստակությունը, իբրև մեղադրյալի՝ մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացվելու իրավունքի իրացման անհրաժեշտ պայման

Մեղադրյալի ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու իրավունքից ածանցվում է մեղադրանքի հստակ, հնարավորինս կոնկրետ ձևակերպված լինելը, և որ այն չպետք է սահմանափակվի միայն ընդհանրական ձևակերպումներով:

Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը նշել է. «(...) մեղադրանքի ձևակերպմանը բովանդակային առումով ներկայացվող պահանջները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ: Նույն կերպ անընդունելի է, երբ հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարված լինելու դեպքում հանցակիցներին ներկայացվում է միևնույն մեղադրանքը՝ առանց հստակեցնելու նրանցից յուրաքանչյուրի կոնկրետ գործողությունները, հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները

հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայազրկման»¹:

Հիմք ընդունելով նաև վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը՝ մեղադրյալի իրավունքների իրացման համար անհրաժեշտ է, որ մեղադրանքը ձևակերպվի հստակ՝ կոնկրետ նշելով (որքանով դա հնարավոր է) մեղադրյալին վերագրվող արարքը (փաստական կողմը), նրա կողմից այդ արարքի կատարման տեղը, ժամանակահատվածը, պատճառված հնարավոր վնասը, առկայության դեպքում՝ տուժողի մասին տվյալները, մեղադրյալի կատարած արարքի անհատականացնող փաստական կողմի այլ նկարագրությունը, ինչպես նաև արարքին տրվի հստակ քրեաիրավական (նախնական) գնահատական:

Այս առումով իրավակիրառ պրակտիկայում խնդիր է առաջանում առավելապես ոչ թե մեղադրյալի դատավարական կարգավիճակ ստացած անձի, այլ դեռևս այդպիսի կարգավիճակ չստացած փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձի մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացվելու իրավունքի իրացման համար:

Ինչպես արդեն վերը նշվեց, թե՛ Սահմանադրությունը և թե՛ ՄԻԵԿ-ը չեն սահմանում, թե **ինչ կերպ, ինչ ձևով (մեթոդով) անձը** պետք է տեղեկացվի իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքերի մասին: Ընդ որում՝ այս իմաստով առանցքային է մեղադրանքի նյութական և ոչ թե ձևական ընկալումը, ուստի բոլոր այն բացառիկ դեպքերում, երբ դեռ անձին չտալով մեղադրյալի կարգավիճակ (չկայացնելով հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշում)՝ միևնույն ժամանակ նրա նկատմամբ իրականացվում է փաստացի քրեական հետապնդում, ապա պետք է ապահովվի փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձի մեղադրանքի հիմքի և բնույթի մասին պատշաճ տեղեկացվելու իրավունքը:

Գործնականում, սակայն, փաստացի քրեական հետապնդման ենթակա անձին մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացումը տեղ է գտնում **խիստ ընդհանրական ձևակերպումներով**, որոնք,

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 24.08.2012 թ. թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշման 21-րդ կետը:

ըստ էության, ոչնչով չեն տարբերվում սովորական վկայի իրավունքից իմանալու, թե ինչ վարույթով է հրավիրվում (Օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 218-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսպես, օրինակ, քրեական գործերից մեկում քննիչը փաստացի քրեական հետապնդվող անձին իբրև վկա հարցաքննելուց առաջ իբրև ծանուցում նշել է. «Քանի որ վկա Ի.Ի.-ի նկատմամբ փաստացի քրեական հետապնդում է իրականացվում, ուստի վերջինիս այդ մասին հայտնելուց հետո բացատրվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածով նախատեսված մեղադրյալի իրավունքները, որոնցից նա կարող է օգտվել»:

Նման պարզաբանման պայմաններում փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի պաշտպանության իրավունքն ըստ էության անհրաժեշտ է դառնում, քանի որ նրա՝ մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացվելու իրավունքն այսպիսի պարզաբանմամբ որևէ կերպ չի իրացվում:

Մեկ այլ օրինակում քննիչը նշել է.

«Վկա Ա.Մ.-ն տեղեկացվեց, որ ենթադրվում է, որ ինքը հնարավոր է կատարած լինի ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ և 12-րդ կետերով և 297-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք, այն է՝ մի խումբ անձանց կողմից, զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ, խուլիգանական դրդումներով անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը և զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով խուլիգանությունը, ուստի ինքը ունի պաշտպանության իրավունք, այդ թվում՝ լռելու իրավունք և այդ իրավունքից օգտվելը ոչ մի կերպ չի կարող մեկնաբանվել ի վնաս իրենց»:

Ինչպես ակնհայտ է դառնում տեքստից, քննիչի կողմից մեղադրանքի հիմքի և բնույթի մասին այսպիսի «տեղեկացումը» ոչ այլ ինչ է, քան քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածի համարների և փաստակազմի վերատպում: Նման ձևով մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացումը որևէ կերպ չի կարող համարվել փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի (մեղադրյալի) քննարկվող իրավունքի պատշաճ իրացում, քանի որ, ի թիվս այլնի, այդպիսի պարզաբանման մեջ իսպառ բացակայում է մեղադրանքի հիմքի, այն է՝ անձին վերագրվող փաստական կողմի նկարագրությունը:

Այսօրինակ «պարզաբանումները» կամ անգամ մեղադրանքի հիմքի մասին որոշ, սակայն ընդհանրական նկարագրություններով, արարքի անհատական նկարագրությունների բացակայությամբ պարզաբանումները խիստ խնդրահարույց են, իրենցից ներկայացնում են մեղադրյալի քննարկվող իրավունքի իրացման ապահովման միայն իմիտացիա, և ոչ թե իրավունքի իրացման ապահովում, որպես հետևանք՝ փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձի կողմից մեղադրյալին բնորոշ իրավունքներից օգտվելը, դրա արդյունավետությունը գրոյացնելով:

Հետևաբար այդպիսի իրավակիրառ պրակտիկան հրատապ փոփոխության կարիք ունի, իսկ նման եղանակով ստացված ապացույցները պետք է ճանաչվեն անթույլատրելի (Օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մաս), քանի որ տվյալներն անձից ստացվել են նրա սահմանադրական իրավունքների և քրեական դատավարության սկզբունքների խախտմամբ (Օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մաս): Բացի այդ, քննարկվող դեպքերում դրանք ստացվում են քննչական գործողության կատարման ընթացքում մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից նրա դեմ իրականացվող փաստացի քրեական հետապնդման պայմաններում, առանց «քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցումներ»։ նման ծանուցումները, որոնք չեն ապահովում փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի՝ մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացվելու իրավունքը և, ըստ այդմ, անիրական և անարդյունավետ դարձնում

մեղադրյալին բնորոշ այլ իրավունքների իրացումը, չեն կարող դիտարկվել իբրև Օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի իմաստով «քրեական հետապնդման մասին պատշաճ ծանուցումներ»:

1.2.2. Ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին հանգամանորեն տեղեկացվելու իրավունքից ածանցվող մեղադրանքի էական փոփոխությունների մասին տեղեկանալու իրավունքը

Քրեական վարույթը ժամանակի մեջ ձգվող ճանաչողական գործունեություն է, որի ընթացքին զուգահեռ հնարավոր է ի հայտ գան նոր փաստեր, որոնք հանգեցնեն մեղադրյալին ներկայացված (սկզբնական) մեղադրանքի հիմքի (փաստական կողմի) էական փոփոխության և/կամ հիմքի անփոփոխության դեպքում՝ էականորեն փոփոխվի մեղադրանքի բնույթը (նշված փաստերին տրվող քրեաիրավական գնահատականը): Այդպիսի դեպքերում առաջանում է մեղադրյալի քննարկվող իրավունքի պատշաճ իրացման խնդիր:

Մի կողմից՝ ելնելով քրեական վարույթի հենց դինամիկ բնույթից՝ անհնար է արգելել մեղադրանքի թե՛ հիմքի (փաստական կողմի), թե՛ բնույթի (իրավական կողմի) այդ թվում էական փոփոխությունները, մյուս կողմից՝ նման դեպքերում պետք է երաշխավորել մեղադրյալի՝ մեղադրանքին հանգամանորեն ծանոթանալու իրավունքը:

Երկու դեպքում էլ, ելնելով մեղադրյալի՝ մեղադրանքին **հանգամանորեն տեղեկացվելու** իրավունքից, պետք է ապահովվի մեղադրյալի՝ փոփոխված փաստական հիմքին և/կամ իրավական գնահատականին ծանոթանալու հնարավորությունն *այն բոլոր դեպքերում, երբ այդ մեղադրանքի փաստական և/կամ իրավական կողմի փոփոխությունն էական է և երբ նման փոփոխությունը չի կարող գնահատվել իբրև մեղադրյալի համար կանխարեսելի* (ըստ այդմ՝ մեղադրյալը զրկվել է արդյունավետ պաշտպանություն կազմակերպելու հնարավորությունից):

Նախաքննության ընթացքում այդպիսի փոփոխությունների բխվելու դեպքում, մեղադրյալի նշված իրավունքի ապահովման համար անհրաժեշտ է ղեկավարվելով Օրենսգրքի 191-րդ հոդվածի կարգավորմամբ՝ Օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածների պահանջների

ՍԱՀՄԱՆԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՏԵՂԵԿՎԳԻՐ
◆ 2(114)2024

պահպանմամբ կայացնել քրեական հետապնդում հարուցելու մասին նոր որոշում և մեղադրյալին ներկայացնել նոր մեղադրանք:

Եթե նման փոփոխությունների բախվում է դատախազը մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթով, այդ դեպքում՝ նախաքննությունը ավարտված լինելու պայմաններում, դատախազը մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքով հանգում է հետևության, որ մեղադրանքը ենթակա է փոփոխության. ապա նշված դեպքում հնարավոր են հետևյալ իրավիճակները.

1-ին իրավիճակ - մեղադրանքի բնույթի փոփոխություն ի շահ մեղադրյալի

Եթե դատախազը քրեական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ անհրաժեշտ է մեղադրանքից հանել առանձին փաստեր կամ **ի շահ մեղադրյալի փոխել նրան վերագրվող արարքի իրավական գնահատականը՝** առանց սկզբնական փաստերն էապես փոխելու, ապա նման դեպքում դատախազը կայացնում է մեղադրական եզրակացությունը վերակազմելու մասին որոշում (Օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ), իսկ մեղադրյալի՝ մեղադրանքին տեղեկացվելու իրավունքի իրացման ապահովմանն է ուղղված Օրենսգրքի 206-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, ըստ որի՝ վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին հսկող դատախազն անմիջապես գրավոր տեղեկացնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց պատշաճ ձևով ուղարկելով մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները: Ընդ որում, տվյալ դեպքում դատախազը պետք է մեղադրական եզրակացությունը կամ դրա հավելվածները մեղադրյալին (վարույթի մասնավոր մասնակիցներին) ներկայացնի միայն վերջին խմբագրությամբ՝ դրանց կցելով իր համապատասխան որոշման պատճենը:

2-րդ իրավիճակ - մեղադրանքի բնույթի փոփոխություն ի վնաս մեղադրյալի

Եթե դատախազը քրեական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ **անհրաժեշտ է փոխել մեղադրյալին**

վերագրվող արարքի իրավական գնահատականը՝ ի վնաս վերջինիս կամ մեղադրյալին վերագրվող արարքին տալ տարբերվող իրավական գնահատական, որպիսի հարցը, սակայն պատշաճ կերպով մինչ այդ չի քննարկվել մեղադրյալի հետ, ապա դատախազը նման դեպքերում պետք է, ղեկավարվելով Օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, կայացնի վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելու մասին որոշում: Այդ դեպքում արդեն նախաքննության շրջանակներում դատախազը կունենա հնարավորություն Օրենսգրքի 191-րդ հոդվածի գործարկմամբ կայացնելու քրեական հետապնդում հարուցելու մասին նոր որոշում՝ փոփոխելով մեղադրանքին տրված իրավական գնահատականը (մեղադրանքի բնույթը), իսկ քննիչը՝ ի ապահովումն մեղադրյալի՝ մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացվելու իրավունքի, Օրենսգրքի 190-րդ հոդվածի կարգավորումների հիման վրա ներկայացնի նոր մեղադրանքը:

3-րդ իրավիճակ - մեղադրանքի հիմքի փոփոխություն

Նախորդ մեխանիզմը պետք է գործարկվի նաև այն դեպքերում, երբ դատախազը վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզում է, որ անհրաժեշտ է մեղադրյալին ներկայացված մեղադրանքը լրացնել կամ փոփոխել սկզբնականից էապես տարբերվող փաստերով (մեղադրանքի հիմքի փոփոխություն): Այդ դեպքում դատախազը նույնպես նախաքննությունը շարունակելու համար վարույթի նյութերը պետք է վերադարձնի նախաքննության մարմին (Օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մաս):

Առաջին ատյանի դատարանում հիմնական դատախազի ընթացքում մեղադրանքի հիմքի փոփոխությունը

Եթե մեղադրանքի հիմքի (փաստական կողմի) փոփոխության անհրաժեշտությունն առաջանա առաջին ատյանի դատարանում հիմնական դատախազի ընթացքում հետազոտված ապացույցների հիման վրա, ապա այդ դեպքում ևս մեղադրանքը փոփոխող սուբյեկտը

դատախազն է՝ մեղադրողը: Այդ դեպքում մեղադրողը¹ մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար միջնորդում է դատարանին ժամանակ տրամադրել՝ մեղադրյալին ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար, իսկ համապատասխան միջնորդության բավարարման դեպքում՝ կազմում է նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշում, որը փոխարինում է մեղադրական եզրակացությանը և պետք է համապատասխանի մեղադրական եզրակացության բովանդակությանը ներկայացվող պահանջներին (Օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մաս): Ի ապահովումն մեղադրյալի՝ մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացվելու իրավունքի, այդ նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշումը տրվում է մեղադրյալին (դատական վարույթի մասնակիցներին, դատարանին), իսկ դատարանն այդ դեպքում նոր մեղադրանքին ծանոթանալու համար ողջամիտ ժամկետ է տրամադրում մեղադրյալին և նրա պաշտպանին, տուժողին, գույքային պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին (Օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մաս):

Թեև Օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ մինչ վերդիկտ կայացնելու համար առաջին ատյանի դատարանի՝ առանձին սենյակ հեռանալը հանրային մեղադրողն իրավասու է փոխելու մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը, այնուամենայնիվ, մեղադրողի կողմից իրավական գնահատականի փոփոխությունն ըստ էության իրավական հետևանք չի առաջացնում, **քանի որ դատարանը կաշկանդված չէ մեղադրողի կողմից փաստերին տրված իրավական գնահատականով** (Օրենսգրքի 276-րդ հոդվածի 4-րդ մաս):

Ըստ այդմ՝ **մեղադրողի կողմից** փաստերին տրված իրավական գնահատականի փոփոխությունն Առաջին ատյանի դատարանում հիմնական դատալսումների ընթացքում ոչ այլ ինչ է, քան մեղադրող կողմի ոչ պարտադիր, դատաքննության սահմանների վրա չազդող դիրքորոշում:

¹ Եթե հիմնական դատալսումների ընթացքում հետազոտված ապացույցներով հաստատվել են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարույթում, և որոնք ինքնին կամ այլ փաստական հանգամանքների հետ միասին անհրաժեշտ են դարձնում մեղադրյալին նոր մեղադրանք ներկայացնելը (Օրենսգրքի 276-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ինչ վերաբերում է **դատարանի կողմից** մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականի փոփոխությանը, ապա այստեղ արդեն, եթե այդպիսի փոփոխությունը կարող է էական ազդեցություն ունենալ մեղադրյալի պաշտպանության իրավունքի վրա, ապա տարբերվող իրավական գնահատականի փոփոխությունը պետք է գնահատվի իբրև էական և վերջինս պետք է ունենա հնարավորություն դիրքորոշում արտահայտելու մեղադրանքի բնույթի փոփոխության վերաբերությամբ:

Այս առումով մեղադրյալի քննարկվող իրավունքի իրացման երաշխիք է հանդես գալիս օրենսդրական այն դրույթը, ըստ որի վերդիկտ կայացնելիս դատարանը, դուրս չգալով մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակից, կարող է փոխել մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականը, **եթե տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում քննարկել է կողմերի հետ** (Օրենսգրքի 276-րդ հոդվածի 4-րդ մաս):

Ըստ այդմ՝ դատարանը, զերծ մնալով մեղադրանքի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելուց, կարող է մինչ վերդիկտ կայացնելը եզրափակիչ ելույթով հանդես եկած անձանց, այդ թվում՝ մեղադրյալին, հարցեր ուղղել հետազոտված փաստական հանգամանքների կապակցությամբ՝ օրենքի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ (Օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ բոլոր եզրափակիչ ելույթներն ունկնդրելուց հետո դատարանը կարող է օրենքի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ խորհրդակցություն անցկացնել հանրային մեղադրողի, պաշտպանի, իսկ առկայության դեպքում՝ նաև տուժողի լիազոր ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ (Օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մաս): Արարքին տրվող քրեաիրավական գնահատականը որոշելիս, դատարանն իրավասու է անհրաժեշտության դեպքում կողմերի քննարկման առարկա դարձնել օրենքի կիրառման կամ մեկնաբանման որևէ հարց: Այդ դեպքում դատարանը որոշում է կայացնում եզրափակիչ ելույթները վերսկսելու մասին և կողմերին հարցեր ուղղելուց և դրանց վերաբերյալ նրանց կարծիքները լսելուց

հետո հեռանում առանձին սենյակ՝ վերդիկտ կայացնելու: Ընդ որում՝ որպեսզի պաշտպանությունը լինի արդյունավետ, ապա դատարանը նաև այդպիսի հարցերի քննարկման համար պետք է (անհրաժեշտության դեպքում) տրամադրի բավարար ժամանակ ու պայմաններ մեղադրյալին վերագրվող արարքին տարբերվող իրավական գնահատականի վերաբերությամբ պատշաճ պատրաստվելու, դիրքորոշում արտահայտելու համար: Այդպիսով իսկ ապահովվում է մեղադրյալին վերագրվող արարքին տրվող տարբերվող իրավական գնահատականի հնարավոր փոփոխության կապակցությամբ մեղադրյալի դիրքորոշում արտահայտելու իրավունքի իրացումը, ըստ այդմ՝ պաշտպանության արդյունավետ կազմակերպման հնարավորությունը:

1.2.3. Մեղադրանքի հիմքի/բնույթի փոփոխությունների էականությունը

Մեղադրանքի թե՛ հիմքի և թե՛ բնույթի էական փոփոխության մասին կարելի է խոսել, երբ, օրինակ, փոփոխվում են մեղադրյալին վերագրվող փաստերը (մեղադրանքի հիմքը), որի արդյունքում փոփոխվում է այդ փաստերին տրվող քրեաիրավական գնահատականը՝ հանգեցնելով որակման փոփոխության (քրեական օրենսգրքի հոդվածի, հոդվածի մասի կամ կետի փոփոխության):

Մեղադրանքի հիմքի փոփոխությունն էական պետք է գնահատել նաև այն դեպքերում, երբ փոփոխվել են փաստական հանգամանքները, որոնք թեև չեն հանգեցրել որակման փոփոխության (չի փոխվել քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը), սակայն այդ փաստական հանգամանքների փոփոխությունները կապված են, օրինակ, մեղքի այլ տեսակի կամ շարժառիթների հետ, կամ, օրինակ, փոփոխվող փաստական հանգամանքները կապված են միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքի կամ եղանակի հետ և այլն:

Նման դեպքերում փոփոխությունները պետք է դիտարկել իբրև էական, քանի որ այդպիսի փոփոխություններն առանցքային կերպով կարող են ազդել մեղադրյալի պաշտպանության

կազմակերպման մարտավարության և/կամ ռազմավարության պատշաճ կազմակերպման հարցերի վրա, ուստիև, այդպիսի փոփոխություններին զուգահեռ, մեղադրյալը պետք է պատշաճ կերպով և հանգամանորեն տեղեկացվի «նոր» մեղադրանքի «բնույթի և հիմքերի» մասին:

Մյուս կողմից՝ ինչ-ինչ հանգամանքների բերումով, օրինակ, պայմանավորված վարույթն իրականացնող մարմնի փուլային փոփոխությամբ՝ միևնույն փաստական հանգամանքներին կարող է տրվել այլ, տարբերվող քրեաիրավական գնահատական: Նման դեպքում տարբերվող քրեաիրավական գնահատականի փոփոխությունը **էական** կարող է գնահատվել, երբ այն **կանխատեսելի չի** եղել մեղադրյալի համար, **անգամ եթե փաստերի գնահատման նվազ խիստ տարբերակն է ընտրվել:**

Օրինակ, այդպիսի փոփոխությունն էական կլինի, երբ քրեաիրավական գնահատականի փոփոխությունը վերաբերում է **հանցակազմի տարրի վերագնահատմամբ առաջեկող փոփոխությանը և արարքին տրվող նոր իրավական գնահատականը չի հանդիսանում նույն հանցանքի այլ աստիճան, ուստիև չէր կարող կանխատեսելի լինել մեղադրյալի համար:**

Այսպես, Սադակը և այլք ընդդեմ Թուրքիայի (թիվ 1) գործով ՄԻԵԴ-ը քննարկման առարկա է դարձրել այն հարցը, թե արդյոք դիմումատուներին վերագրվող սկզբնական մեղադրանքով հանցանքը՝ պետության ամբողջականությանը սպառնացող դավաճանությունը և հետագայում արդեն դատարանի կողմից արարքին տրված իրավական գնահատականը՝ պետության ամբողջականությանը սպառնացող զինված կազմակերպությանը անդամակցելը, հանդիսանում են միևնույն հանցանքի տարբեր աստիճաններ, և արդյո՞ք դրանք օրգանապես կապված են միմյանց հետ, թե՞ ոչ:

Այս հարցերի պատասխաններն էական նշանակություն ունեն մեղադրանքի փոփոխության **կանխատեսելիության առումով՝ որպես արդյունք նաև առանցքային ազդեցություն**

ունենալով մեղադրյալի արդյունավետ պաշտպանության կազմակերպման վրա:

Եվրոպական դատարանը, անդրադառնալով գործին, նշել է, որ 1994 թ. հունիսին 21-ին դատախազության կողմից ներկայացված մեղադրական եզրակացության մեջ դիմողները մեղադրվում էին միայն պետության ամբողջականությանը սպառնացող դավաճանության մեջ (Թուրքիայի քրեական օրենսգրքի 125-րդ հոդված): Ութեն մեղադրող կողմը վկայակոչել է դիմումատուների կապերը PKK կազմակերպության անդամների հետ, սակայն ՄԻԵԴ-ը շեշտադրել է, որ մինչդատական վարույթի ընթացքում դիմողների այդ կազմակերպության հետ կապերը հետազոտվել են միայն իրենց ի սկզբանե մեղադրանքով ներկայացված հանցանքը (հանցակազմի տարրերը)՝ պետության ամբողջականությանը սպառնացող դավաճանությունը, հիմնավորելու նպատակով:

Կարևոր է շեշտադրել, որ այդ գործով կողմերը չեն վիճարկել այն, որ մինչև Պետական անվտանգության դատարանում նիստերի վերջին օրը ներկայացված մեղադրանքը վերաբերել է բացառապես պետության ամբողջականությանը սպառնացող դավաճանությանը:

Ըստ այդմ՝ ՄԻԵԴ-ը մեղադրյալի իրավունքների խախտման հարցի քննարկման համար փորձել է գնահատել, թե դիմողները հնարավորություն ունեին բավարար չափով կանխատեսել, որ պետության ամբողջականությանը սպառնացող դավաճանության կապակցությամբ ներկայացված սկզբնական մեղադրանքը կարող է փոփոխվել մեկ այլ մեղադրանքով, այն է՝ պետության ամբողջականությանը սպառնացող զինված կազմակերպությանը անդամակցելու մեղադրանքով:

ՄԻԵԴ-ը այդպիսի կանխատեսելիությունը գնահատելու համար հաշվի է առել այն հանգամանքը, որ հանցագործությունների այս երկու տեսակները **տարբերվում**

են միմյանցից թե՛ նյութական իմաստով, և թե՛ նաև գիտակցական (mental) ասպեկտներով:

ՄԻԵԴ-ը, արձանագրելով, որ եթե պետության ամբողջականության դեմ ուղղված հանցագործությունը կարող է իրականացվել միայն բավականաչափ լուրջ և պետության գոյատևման համար իրական սպառնալիք պարունակող գործողություններով, ապա երկրորդ հանցանքի դեպքում արդեն **պարտադիր չէ**, որ անձինք հենց իրենք կատարեն այնպիսի գործողություններ, որոնք կարող են իրական վտանգ ներկայացնել պետության գոյատևման համար: Դատարանը նկատել է, որ երկրորդ հանցանքի՝ պետության ամբողջականությանը սպառնացող զինված կազմակերպությանը անդամակցելու հանցանքի **նյութական տարրն արդեն իսկ քր. օր.-ի 125-րդ հոդվածին հակասող նպատակներ հետապնդող, կարգապահական ռեժիմ և հիերարխիկ կառուցվածք ունեցող զինված կազմակերպությանը պատկանելիությունն է:** Բացի այդ, Դատարանը շեշտադրել է, որ այդ երկրորդ հանցանքի համար անհրաժեշտ է նաև գիտակցական (մենթալ) որոշակի բնույթի հատկանշական տարր, այն է՝ ոչ օրինական կազմակերպությանը պատկանելիության գիտակցումը:

Ըստ այդմ՝ այս տարբերությունները շեշտադրելով՝ ՄԻԵԴ-ը չի համաձայնվել թուրքական կառավարության այն դիտարկումներին, թե սկզբնական մեղադրանքով հանցանքը և հետագայում արդեն փոփոխված հանցանքը **նույն հանցագործության տարբեր աստիճաններ են:**

Արձանագրելով, որ այդ հանցանքները տարբերվում են ինչպես նյութական, այնպես էլ գիտակցական հատկանիշներով և ստուգելու, թե արդյոք այդպիսի տարբերության պայմաններում **տարբերվում է (կարող է տարբեր լինել) նաև մեղադրյալի պաշտպանության մարտավարությունը**, Դատարանը նշել է, որ եթե սկզբնական

մեղադրանքից պաշտպանվելու համար պետք է պատասխան տրվեր այն հարցին, թե արդյոք դիմումատուների գործունեությունն իսկապես սպառնում էր պետության ամբողջականությանը, ապա արդեն անօրինական զինված կազմակերպությանը պատկանելիության մեջ մեղադրվելու դեպքում, դիմումատուներն իրենց պաշտպանությունը պետք է կառուցեին էականորեն տարբերվող հիմքերի վրա, մասնավորապես նրա վրա, թե արդյոք **իրենք անօրինական զինված կազմակերպության հիերարխիկ կառուցվածքի մեջ որևէ պաշտոն ունեցել էին, և հարկադրված էին եղել ենթարկվելու այդ կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, և արդյո՞ք նրանք տեղյակ չեն եղել այս կազմակերպությանն իրենց պատկանելության մասին:**

Ըստ այդմ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ազգային դատարանը թեև ուներ փաստերին տարբերվող իրավական գնահատական տալու լիազորություն, սակայն դա իրականացրել է այն կերպ, որով դիմումատուներին չի տվել հնարավորություն իրենց պաշտպանության իրավունքը գործնականում և արդյունավետորեն իրացնելու (չտրամադրելով բավարար ժամանակ, օրինակ հետաձգելով դատական նիստը՝ պատրաստվելու համար փոփոխված մեղադրանքին պաշտպանվելու համար) համար՝ արձանագրելով դիմումատուների՝ իրենց ներկայացված մեղադրանքի բնույթի և առիթների մասին հանգամանորեն տեղեկացված լինելու և պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ ու պայմաններ ունենալու իրավունքի խախտում¹:

Մեղադրանքի բնույթի (փաստերին տրված իրավական գնահատականի) փոփոխությունը **էական չի լինի**, երբ տարբերվող իրավական գնահատականը **կանխատեսելի է** եղել մեղադրյալի

¹ Տե՛ս *Sadak and Others v. Turkey* գործով 2001 թ. հուլիսի 17-ի վճիռը (գանգատներ թիվ 29900/96 29901/96 29902/96...), § 50-59:

համար, ուստիև վերջինս զրկված չի եղել կանխատեսելի այդպիսի փոփոխությունից արդյունավետ պաշտպանվելու հնարավորությունից: Օրինակ այդպիսի իրավիճակ հնարավոր է, երբ անձը ծանրացնող հանգամանքներով կատարված հանցանքի փոխարեն մեղավոր ճանաչվի հասարակ հանցագործության համար, կամ երբ անձին վերագրվող հանցանքն ընդգրկի այն հանցանքը, որը փոփոխության դեպքում վերագրվելու է անձին:

Համանման դեպքի անդրադարձել է ՄԻԵԴ-ը Սալվադոր Տոռեսն ընդդեմ Իսպանիայի գործով:

Գործի նախնական քննության ընթացքում քննիչ-դատավորի կողմից դիմումատուին, ով երկար տարիներ զբաղեցրել էր Բարսելոնայի հանրային հիվանդանոցի գլխավոր կառավարչի պաշտոնը, մեղսագրվել է պետական միջոցների յուրացում հանցագործությունը: Դիմումատուի արարքին նման քրեաիրավական գնահատականը պահպանվել է նաև հետագայում թե՛ հանրային և թե՛ մասնավոր մեղադրողի կողմից:

Սակայն, որպեսզի իսպանական օրենսդրությանը համահունչ արարքը որակվեր իբրև «պետական միջոցների յուրացում», պետք է որ այդպիսի հանցանքը կատարվեր կամ հանրային ծառայողի (civil servant), կամ պետական հիմնարկի միջոցների կառավարչի կողմից, **և վերջինս հանցանքը կատարելիս պետք է օգտվեր իր կարգավիճակից:** Բացի այդ, յուրացված գումարները պետք է լինեին «պետական միջոցներ»:

Դիմումատուն եղել է Բարսելոնայի հանրային հիվանդանոցի գլխավոր կառավարչի կարգավիճակում և երբևէ գործի քննության ընթացքում չի վիճարկել այն հանգամանքը, որ իր այդ գլխավոր կառավարչի կարգավիճակում ինքն ընկնում էր իրեն մեղսագրվող քր. օր.-ի 394-րդ և 399-րդ հոդվածներով նախատեսված այն անձանց շրջանակի մեջ, ում «վստահված են (...) մարզային

կամ քաղաքային իշխանություններին, ուսումնական հաստատություններին կամ բարեգործական կազմակերպություններին պատկանող միջոցները» կամ ովքեր «պետական մարմնի կողմից ավանդադրված միջոցների կառավարիչներ կամ ավանդապահներ են»:

Իսպանիայի գերագույն դատարանը, գտնելով, որ դիմումատուի արարքում բացակայում է պետական միջոցների յուրացման հանցակազմը, քանի որ թեև գումարները կարելի է դիտարկել իբրև «պետական միջոցներ», այնուամենայնիվ հիվանդանոցը (որի կառավարիչն էր դիմումատուն) **այդ գումարները ստանալու օրինական իրավունք չուներ:**

Այդուհանդերձ Իսպանիայի գերագույն դատարանը, դիմումատուի արարքը որակելով իբրև սովորական յուրացում (simple embezzlement), հանցանքը կատարելիս դիմումատուի՝ Բարսելոնայի հիվանդանոցի գլխավոր կառավարիչ լինելը գնատահատել էր իբրև քր. օր.-ի 10-րդ հոդվածի 10-րդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքի առկայությամբ կատարված, այն է՝ «իր կարգավիճակի հանրային բնույթից ստացված առավելությունից օգտվելով» կատարված յուրացում:

Դիմումատուն ՄԻԵԴ առջև վիճարկում էր, որ իրեն երբևէ այդպիսի մեղադրանք չի առաջադրվել և որ մեղադրանքի իրավական գնահատականի նման փոփոխությունը հանգեցրել է մեղադրանքի «բնույթի» և «հիմքի» մասին հանգամանորեն ծանոթանալու իր իրավունքի խախտման:

Սակայն ՄԻԵԴ-ը, ելնելով այն հանգամանքից, որ դիմումատուին սկզբնապես թե՛ քննիչ դատավորի, թե՛ հանրային և մասնավոր մեղադրողի կողմից մեղադրանքը եղել է **պետական միջոցների յուրացում**, որի բաղադրատարրի մեջ է մտնում արարքը հանրային ծառայողի (civil servant) կամ պետական հիմնարկի միջոցների կառավարչի կողմից կատարումը, այդ արարքը կատարելիս իր կարգավիճակից օգտվելը, **դիմումատուի նշված իրավունքի**

խախտում չարձանագրեց՝ շեշտադրելով, որ դիմումատուի կարգավիճակի հանրային բնույթը պետական միջոցների յուրացման **սկզբնական մեղադրանքին բնորոշ տարր էր,** և, հետևաբար, դիմումատուին հայտնի էր դատավարության հենց սկզբից¹:

1.3.Ներկայացված մեղադրանքի հիմքի և բնույթի մասին հանգամանորեն տեղեկացվելու իրավունքը և ապացույցների մասին տեղեկանալու հնարավորությունները

Մեղադրյալի՝ մեղադրանքի հիմքի և բնույթի մասին **հանգամանորեն** տեղեկացվելու իրավունքն արդյո՞ք ենթադրում է նաև իրավունք տեղեկացվելու մեղադրանքի հիմքը (փաստական կողմը) հիմնավորող ապացույցների, դրանց բովանդակության մասին: Ընդ որում՝ ելնելով այն հանգամանքից, որ խորհրդային (հետխորհրդային) դատավարությունում, որպես կանոն, անձն իրեն ներկայացված մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկանում էր որպես մեղադրյալ ներգրավելու որոշմամբ և դրանում առկա տվյալներով, ապա ստացվում է, որ այդ որոշման մեջ ապացույցների մատնանշման, դրանց բովանդակության բացահայտման հարցերը ուղիղ կապվում են մեղադրյալի այդ իրավունքի հետ:

Հարցը, թե արդյո՞ք անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ անհրաժեշտ է ապացույցներ մատնանշելը և, ըստ այդմ, այդպիսով մեղադրյալին նաև մեղադրանքի փաստական կողմը հիմնավորող ապացույցների, որոշ դեպքերում նաև՝ դրանց բովանդակության մասին տեղեկացնելու անհրաժեշտության հարցը խորհրդային (հետխորհրդային) գիտության մեջ բավական երկար ժամանակ քննարկվել է՝ ձևավորելով հարցի վերաբերյալ երկու տարբեր մոտեցում:

Գիտնականներ, որոնք գտնում են, որ նման որոշման մեջ անհրաժեշտ է ապացույցներ մատնանշել² և այդպիսով մեղադրյալին նաև մեղադրանքի

¹ Տես ՄԻԵԴ՝ *Salvador Torres v. Spain* գործով 1996 թ. հոկտեմբերի 24-ի վճիռը (զանգատ թիվ 21525/93), § 30-33:

² Խորհրդային իրավունքում տես, օրինակ, **Чельцов-Бebutov М.А.** Обвиняемый и его показания в советском уголовном процессе. - М.: Изд-во Министерства юстиции СССР, 1947, էջ 20: Հայկական իրավունքում՝ **Ավագյան Վ.** Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը: Եր., «Օրենք և իրականություն» իրատ., 2006:

փաստական հիմքը հիմնավորող ապացույցների, որոշ դեպքերում նաև՝ դրանց բովանդակության մասին տեղեկացնելը

Այդ խումբ գիտնականները նշում էին, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ պետք է առնվազն գոնե հավաքված գլխավոր ապացույցներին հղումներ լինեն: Իսկ քննիչների դիտարկումներին, թե չի կարելի մեղադրյալի առջև ինքնաբացահայտվել, այսինքն՝ տեղեկացնել նրան իր դեմ եղած տվյալների մասին, դեռևս **1947 թ. լույս տեսած աշխատանքում** դատավարագետ Մ. Չելցովը նշում էր, որ այդպիսի քննիչները մոռանում են, որ «խորհրդային իրավունքը հետախուզական չէ, որում քննիչը պետք է «բռնի» մեղադրյալին՝ տարատեսակ թակարդներ լարելով նրա դեմ, բազմանշանակ ակնարկներով նրան շեղելով, խաբելով, խոստովանություններով և այլն:

Սովետական դատավարությանը օտար են բոլոր այդ հնարքները»¹:

Արդեն ավելի ուշ՝ 1965 թ., նույն միտքն էին արտահայտում ոչ պակաս ականավոր դատավարագետներ Ն. Ժոգինը, Ֆ. Ֆատկուլինը՝ գրելով, որ քննիչը «յուրաքանչյուր գործով պետք է հիմնավորի առաջադրվող մեղադրանքը՝ նշելով դրա հիմքում դրված փաստական տվյալները և փաստարկները (...): Դա նախնական քննության մարմինների ոչ միայն իրավունքն է, այլև պարտականությունը և ունի սկզբունքորեն կարևոր նշանակություն»²: Որոշ հեղինակներ, առավել զարգացնելով այս մոտեցումը և ելնելով մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության արդյունավետությունից, անհրաժեշտ էին համարում, որ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ ոչ միայն պետք է մատնանշվեին ապացույցները, այլ նաև գտնում էին, որ այդ ապացույցները պետք է ներկայացվեին մեղադրյալին նրա առաջին հարցաքննության ժամանակ³:

¹ Տե՛ս **Чельцов-Бebutov M.A.** Նշվ. աշխ., էջ 20:

² Տե՛ս **Жогин Н.В., Фаткуллин Ф.Н.** Предварительное следствие в советском уголовном процессе. - М.: Юрид. лит., 1965, էջ 210:

³ Տե՛ս **Лукашевич В.З.** Установление уголовной ответственности в советском уголовном процессе. - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1985, էջ 138-139, մեջբերումն ըստ՝ Ավագյան Վ. Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը: Եր., «Օրենք և իրականություն» հրատ., 2006, էջ 140:

Ժամանակակից հայ դատավարագետներից ոմանք նույնպես հարում էին ներկայացվող գիտական մոտեցմանը: Օրինակ Վ. Ավագյանը, ելնելով քրեական դատավարության ընթացքում կայացված ցանկացած որոշման հիմնավորված լինելու պահանջից, նշում էր, որ այդ որոշումը «(...) պետք է բովանդակի հղումներ այն փաստական տվյալներին՝ ապացույցներին, որոնք հիմք են ծառայել նշված որոշման կայացման (այսինքն՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու) համար»¹: Հեղինակը, այս համատեքստում արձագանքելով այն մտահոգություններին, թե այդպիսով հնարավոր է, որ մեղադրյալը խոչընդոտի ճշմարտության հետագա բացահայտմանը, որ որոշման մեջ ապացույցների մատնանշումը կարող է հանգեցնել մեղադրյալի հարցաքննության նշանակության կորստին, նշում էր, որ «(...) քննիչն ունի բավարար միջոցներ՝ կանխելու, խափանելու համար մեղադրյալի փորձերը խոչընդոտելու ճշմարտության բացահայտմանը» և որ մեղադրյալը բնավ պարտավոր չէ նախաքննության մարմնին որևէ աջակցություն տալ²:

Գիտնականներ, որոնք գտնում են, որ նման որոշման մեջ անհրաժեշտ չէ ապացույցներ մատնանշել և այդպիսով մեղադրյալին նաև մեղադրանքի փաստական հիմքը հիմնավորող ապացույցների, որոշ դեպքերում նաև՝ դրանց բովանդակության մասին տեղեկացնելը

Գիտնականների մյուս խումբն այն դիրքորոշմանն է, որ քրեական վարույթ մեղադրյալի մուտքն ապահովող որոշման մեջ՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ, անհրաժեշտ չէ ապացույցներ մատնանշել³: Այս խումբ հեղինակները նկատում են, որ նշված որոշման մեջ ապացույցներ մատնանշելը, ինչպես նաև որոշ դեպքերում դրանց բովանդակությանը ծանոթացնելը քննիչի իրավունքն է և ոչ թե պարտականությունը, որը կարող է կատարել քննության օբյեկտիվության և արդյունավետության նպատակներից ելնելով⁴: Ավելին՝ կար կարծիք,

¹ Տես Ավագյան Վ., Նշվ. աշխ., էջ 139:

² Տես Ավագյան Վ., Նշվ. աշխ., էջ 140-141:

³ Տես, օրինակ, **Тарасов-Радионо́в П.И.** Предварительное следствие. - М.: Госюриздат, 1955, էջ 199:

⁴ Տես **Строгович М.С.** Курс советского уголовного процесса. - М.: Изд-во Ак. наук СССР, 1958, էջ 302:

որ ապացույցներին սովորական հղումն այդ որոշման մեջ՝ առանց այդ ապացույցների բովանդակությանը ծանոթացնելու, մեղադրյալին որևէ կերպ չի երաշխավորի իր իրավունքները և հակառակը՝ որոշ դեպքերում անգամ կարող է վերջինիս մոտ թյուրընկալում ձևավորել քննության տիրապետության տակ գտնվող ապացուցողական նյութի վերաբերյալ¹:

Մեր օրերում այս մոտեցումն առավել գերակշռող է դարձել²:

Հայկական դատավարական գրականության մեջ հարցին անդրադառնալով՝ Ա. Ղամբարյանը գրել է. «Որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ ապացույցները վկայակոչելու հարցի բարդությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի կողմից խնդիր է դրված ապահովել նախաքննության գաղտնիքը, մյուս կողմից՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշումը չհիմնավորելը՝ ապացույցների վրա հղումներ չկատարելը, բացասաբար է ազդում մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրականացման վրա (...): Եթե «մեղադրանքի հիմքը» ասելով հասկանանք մեղադրանքի փաստական կողմի հիմքերը (ապացույցները), ապա այս պահանջը, գործող նախաքննության մոդելի պայմաններում, կարող է ապահովվել միայն նախաքննության ավարտին»³:

Մեր համոզմամբ, սակայն, հարցի վերաբերյալ խորհրդային (հետխորհրդային) գիտության մեջ առկա այս վեճը, թեև ուղիղ առնչվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի հետ, սակայն չի առնչվում մեղադրյալի «ներկայացված մեղադրանքի հիմքի և բնույթի մասին» տեղեկացվելու իրավունքին, այլ վերաբերելի է նրա այլ իրավունքին, այն է՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքին:

Ներկայացված մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացվելու իրավունքը ժամանակային առումով շատ ավելի վաղ է իրացվում (ծագում), քան գործի նյութերին ծանոթանալու մեղադրյալի իրավունքը: Վերջինն ամբողջ ծավալով իրացնելու հնարավորություն

¹ Տե՛ս **Строгович М.С.** Նշվ. աշխ., էջ 302:

² Տե՛ս Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. - М.: Статут, 2017, էջ 738:

³ **Ղամբարյան Ա.** Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում (ուսումնական ձեռնարկ): Եր., «Անտարես», 2016 թ., էջ 58-59:

մեղադրյալն ստանում է նախաքննության ավարտման պահին՝ ելնելով նախաքննության արդյունավետության հանրային շահից:

Հետևաբար, իր դեմ առկա, մեղադրանքը հիմնավորող ապացույցներին, դրանց բովանդակությանը ծանոթանալու մեղադրյալի իրավունքը կարող է իրացվել նախաքննության ավարտին և ոչ թե նրա քրեական վարույթ «մուտք» գործելու պահին:

Խորհրդային (հետխորհրդային) իրավունքում, սակայն, մեղադրանքի հիմքը եթե անգամ ամբողջությամբ չի նույնացվել, ապա առնվազն դրա մեջ է ներառվել նաև մեղադրանքը հիմնավորող ապացույցների համակցությունը:

Ինչպես արդեն նշվել է, մեղադրանքի *հիմքը (որին և պետք է հանգամանորեն տեղեկացվի մեղադրյալը) ոչ թե ապացույցների համակցությունն է, այլ մեղադրյալին վերագրվող ենթադրյալ փաստերը, փաստական հանգամանքները, մեղադրանքի փաստական կողմը:*

Խորհրդային իրավունքում մեղադրանքի հիմքի մեջ նաև ապացույցների համակցության ներառման մոտեցումը և ըստ այդմ՝ դրանց մասին մեղադրյալին տեղեկացնելու մոտեցումը, թերևս պայմանավորված է եղել քրեական վարույթ մեղադրյալի «մուտքը» պայմանավորող որոշման *հիմքով:*

Խորհրդային իրավունքում այդ որոշման հիմքը «ապացույցների համակցությունն էր», հետևաբար մեխանիկորեն մեղադրյալի մուտքը պայմանավորող որոշման հիմքը՝ ապացույցների համակցությունը, ներառվել է մեղադրանքի հիմքում:

Գործող Օրենսգրքում հրաժարումը մեղադրյալի «մուտքը» պայմանավորող որոշման՝ «բավարար ապացույցների համակցության» ձևակերպումից և դրա համար «հանցանքի կատարումը վկայող փաստերը» ձևակերպումը սահմանելով՝ ինքնաբերաբար վերանում է նաև մեղադրյալի քրեական վարույթ «մուտքը» պայմանավորող *որոշման հիմքի և մեղադրանքի հիմքի* միջև առկա տարբերությունը: Օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման պայմաններում արդեն, մեղադրանքը հիմնավորող ապացույցներին ծանոթանալու իրավունքը հնարավոր է լինում հեշտությամբ տարանջատել «մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացվելու» իրավունքից:

2(114)2024

ՏԵՂԵԿՎՊԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ասվածի հիման վրա կարելի է եզրահանգել, որ չպետք է մեղադրանքի հիմքի (և բնույթի) մասին տեղեկացվելու մեղադրյալի իրավունքի մեջ ներառվի նաև մեղադրանքի հիմքը (փաստական կողմը) հիմնավորող ապացույցների մասին տեղեկացվելու իրավունքը¹։ Թեև այն մեղադրյալի պաշտպանության իրավունքի կարևորագույն մասն է կազմում, սակայն հանդիսանում է այլ իրավունքի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի բաղադրատարր, որն ամբողջ ծավալով իրացվում է ոչ թե մեղադրյալի մինչդատարական վարույթ «մուտքի» պահից, այլ մինչդատարական վարույթից մեղադրյալի «ելքի» պահին:

1.4. Մեղադրանքի հիմքի և բնույթի մասին իրեն **հասկանալի լեզվով** տեղեկացվելու իրավունքը

Մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացվելու իրավունքը նաև ներառում է **իրեն հասկանալի լեզվով** այդ մասին տեղեկացվելը (Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետ, Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

Ըստ այդմ՝ բոլոր այն դեպքերում, երբ մեղադրյալը մատնանշում է իր՝ հայերեն լեզվին (դատավարության լեզվին) չտիրապետելու կամ ոչ բավարար չափով չտիրապետելու մասին և գործի նյութերով բացակայում են հակառակի մասին վկայող ապացույցներ, ապա քննիչը պարտավոր է ապահովել մեղադրյալին հասկանալի լեզվով մեղադրանքի հիմքի և բնույթի մասին տեղեկացումը:² Այդ դեպքում քննիչը պետք է գործին ներգրավի թարգմանիչ (Օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մաս) և մեղադրանքը ներկայացնի թարգմանչի կողմից մեղադրյալին հասկանալի լեզվով թարգմանությամբ: Բացի այդ, նման դեպքերում քննիչը կրում է քրեական հետապնդման հարուցման որոշման թարգմանված պատճենը մեղադրյալին ներկայացնելու պարտականություն (Օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մաս):

¹ Տես, վերաբերելի մասով, ՄԻԵԴ *Fitt v. UK* 2000 թ. փետրվարի 16-ի վճիռը (զանգատ թիվ 29777/96), § 44, 45: Տես նաև **Weigend, T.** Learning about the charges: The suspect's right to information. In: *Europe in Crisis: Crime, Criminal Justice, and the Way Forward*, Vol. II, 2017, էջ 939-940:

² Տես, վերաբերելի մասով, ՄԻԵԴ *Brozicek v. Italy* գործով 1989 թ. դեկտեմբերի 19-ի վճիռը (զանգատ թիվ 10964/84), § 41:

Եզրահանգումներ

Ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկացվելու մեղադրյալի իրավունքի վերաբերությամբ սույն մեկնաբանությունների իմպլեմենտացիան իրավակիրառ պրակտիկայում թույլ կտա մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը հայկական քրեական դատավարությունում բարձրացնել՝ այդպիսով իսկ ապահովելով մեղադրյալի՝ իբրև քրեական վարույթի սուբյեկտի լիարժեքությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ավագյան Վ.**, Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը: Եր., «Օրենք և իրականություն» հրատ., 2006:
2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Եր., «Տիգրան Մեծ», 2017:
3. **Ղամբարյան Ա.** Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում (ուսումնական ձեռնարկ): Եր., «Անտարես», 2016:
4. ՀՀ Վճռաբեկ դատարանի 24.08.2012 թ. թիվ ԵՇԴ/0002/01/11 որոշում:
5. Brozicek v. Italy գործով 1989 թ. դեկտեմբերի 19-ի վճիռը (գանգատ թիվ 10964/84):
6. Fitt v. UK գործով 2000 թ. փետրվարի 16-ի վճիռը (գանգատ թիվ 29777/96):
7. Mattoccia v. Italy գործով 2000 թ. հուլիսի 25-ի վճիռը (գանգատ թիվ 23969/94):
8. Pelissier and Sassi v. France գործով 1999 թ. մարտի 25-ի վճիռը (գանգատ թիվ 25444/94):
9. Sadak and Others v. Turkey գործով 2001 թ. հուլիսի 17-ի վճիռը

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
◆ 2(114)2024

(գանգատների թիվ 29900/96 29901/96 29902/96...):

10. Salvador Torres v. Spain գործով 1996 թ. հոկտեմբերի 24-ի վճիռը (գանգատ թիվ 21525/93):

11. **Жогин Н.В., Фаткуллин Ф.Н.** Предварительное следствие в советском уголовном процессе. - М.: Юрид. лит., 1965.

12. Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. - М.: Статут, 2017.

13. **Строгович М.С.** Курс советского уголовного процесса. - М.: Изд-во Академии наук СССР, 1958.

14. **Тарасов-Радионов П.И.** Предварительное следствие. - М.: Госюриздат, 1955.

15. **Чельцов-Бebutov М.А.** Обвиняемый и его показания в советском уголовном процессе. - М.: Изд-во Министерства юстиции СССР, 1947.

16. **Weigend, T.** Learning about the charges: The suspect's right to information. In: Europe in Crisis: Crime, Criminal Justice, and the Way Forward, Vol. II, 2017.

ПРАВО ОБВИНЯЕМОГО БЫТЬ ИНФОРМИРОВАННЫМ О ХАРАКТЕРЕ И ОСНОВАНИИ ОБВИНЕНИЯ (НАУЧНЫЕ КОММЕНТАРИИ)

Аннотация

Право быть информированным о характере и основании выдвинутого против него обвинения является одним из ключевых прав обвиняемого. Без этого права реализация других прав обвиняемого либо нереальна, либо крайне неэффективна (например, обвиняемый может эффективно использовать свое право на дачу показаний, если он подробно информирован о том, от чего ему надо защищаться, какие фактические обстоятельства ему вменяются, когда он совершил вменяемое ему деяние и т. д. Без четкого

знания всего этого осуществление обвиняемым права на защиту путем дачи показаний становится иллюзорным, он должен точно знать, в чем его обвиняют, т.е. причину и характер обвинения и т.д.). Таких примеров можно привести множество, поэтому обсуждаемое право обвиняемого действительно можно назвать «королевой» его прав.

Данный научно-практический комментарий направлен на толкование права быть осведомленным о характере и основании обвинения обвиняемого, раскрытие сущности этого права, что также позволяет отличить обсуждаемое право обвиняемого от другого права - права ознакомиться с доказательствами обвинения до суда.

Ключевые слова: обвиняемый, характер обвинения, основание обвинения, доказательства.

**THE RIGHT OF THE ACCUSED
TO BE INFORMED OF THE NATURE AND
CAUSE OF THE ACCUSATION AGAINST HIM
(SCIENTIFIC COMMENTARY)**

Annotation

The right to be informed of the nature and cause of the accusation against him is a key right of the accused. Without this right, the realization of other rights of the accused is either unrealistic or extremely ineffective (for example, the accused can effectively use his right to testify when he is informed in detail about what he has to defend himself against, what factual circumstances he has been attributed against, when he committed the act attributed to him, etc.. Without knowing clearly, the exercise of the accused’s right to defend himself by testifying becomes illusory, the latter must know exactly what he is accused of, i.e. the cause and nature of the accusation, etc.). There are many such examples, so the discussed right of the accused can really be called the “queen” of his rights.

This scientific and practical commentary is aimed at interpreting the right to be informed of the nature and cause of the accusation of the accused, revealing the essence of this right, which also makes it possible to distinguish the discussed right of the accused from another right - the right to learn about the prosecution evidence before trial.

Keywords: accused, character of the accusation, cause of the accusation, evidence.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 27.05.2024 թ., տրվել է գրախոսության 30.05.2024 թ., ընդունվել է տպագրության 01.06.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.2-116



ALEKSANDR HARUTYUNYAN

Lecturer of history of legal and political teachings at the French University in Armenia Foundation, PhD in Law

THE CONSTITUTIONAL CYCLES OF THE REPUBLIC OF ARMENIA

Annotation

In this article the thirty years of Armenian independence shall be analyzed from the point of view of constitutional cycles. Similarities and differences shall be outlined, as well as a general information about what constitutional cycles are shall be provided. The paper will further focus on the current constitutional cycle and outline possible solutions of how to avoid making the mistakes that have been omnipresent in the previous cycles.

Keywords: Armenian constitution, Constitutional cycles, abusive constitution-
alism, rule of the majority, illiberal democracy, rule of the majority.

INTRODUCTION

The analysis of issues related to the Constitution and Constitutionalism have always been a subject of great attention in legal literature and have traditionally been paid great attention to. Nevertheless, as societies evolve and change, constitutions and constitutionalism do not remain stagnant either. In case of Armenia this topics are of utmost importance, given the fact that since the independence of the Republic of Armenia in 1991, the country has had four different constitutional models and two other failed attempts of constitutional reforms since the 2018 Velvet revolution. Moreover, the discussions about constitution-

al reforms or adopting a new constitution in Armenia are constant especially in the last couple of years.

Nevertheless, one topic related to the field of constitutional law that has mostly been omitted from research by both scholars and practitioners in Armenia, but which bears an enormous importance when it comes to constitutional reforms is the theory of constitutional cycles.

CONSTITUTIONAL CYCLES: WHAT ARE THEY?

Constitutional cycles represent an interesting phenomenon in the field of political science, law and governance. These cycles are characterized by a sequence of regularity, repeating patterns of constitutional change and development over time. The present article delves into the complicated peculiarities of constitutional cycles, analyzing their dynamics, establishing and showing common patterns, and discussing their implications for political stability, institutional resilience, and democratic governance, with a strong emphasis on the Republic of Armenia, its constitutional developments and how the above mentioned elements influenced the process of democratization, rule of law, separation of powers and independent Armenian statehood in general.

A cycle is the fact of a series of events being repeated many times, always in the same order¹. The foundation of the concepts of natural cyclicity have developed in ancient times and have reached the modern times. Moreover, not only cyclicity is a stand-out characteristic of the whole western political and legal thought, it can be found in the majority of traditional religions and societies of ancient India and China. The presence of cycles can be found in Indian cosmology, as well as religions such as Buddhism and Hinduism². Thus, cyclicity remains and inalienable part of human development and runs like a red line throughout world history, playing an important role in understanding the rise and fall of civilizations. As societies and states developed and became more complex, so did legal thought: cyclicity can be detected from the Laws of Manu and the Code of Hammurabi all the way to modern legal texts and, of course, Constitutions. It is only natural

¹ <https://www.merriam-webster.com/dictionary/cycle>

² Медушевский А.Н. Теория конституционных циклов. – Москва: Издательский дом ГУ ВШЭ, 2005, р. 11.

that cyclicity is an unalienable part of constitutional development as well. To be able to understand the complex phenomenon of constitutional cycles, it is crucial to first comprehend what are constitutions in general. Constitutions serve as the foundational legal frameworks that govern the relationship between the state and its citizens, establishing rights, powers and responsibilities. Thus, to put it in a simpler wording, a constitution is a social contract which lies in the foundation of the state as per the social contract theory¹. Accordingly, the constitutional biography of the government begins with the birth of the constitution. That biography is formed by the need of the moment that requires a practical solution².

Nevertheless, throughout history, constitutions have not abided to remaining static documents. On the contrary, they have gone through a process of development which was reflected in amendments, reinterpretations, and even replacements. These cycles mirror the evolving needs and values within societies. Constitutional cycles can be conceptualized as a series of phases through which the document advances during time. Such phases are made up of periods of stability, reformation, evolution, crisis and revolution. Depending on the society these periods and their triggers vary as well, for they heavily depend on the underlying values, legal and political thought, perception within the society of the different phenomena such as law, institutions, rights and powers and so on. The triggers that form the foundation of both evolutions and revolutions vary as well and, together with the above mentioned peculiarities, can and, most likely, will be influenced by things like history, social and political context and cultural variations, for these usually form the foundation of perception.

A number of patterns characterize constitutional cycles and bring understanding into the dynamics of governance and political development. Constitutional cycles often feature periods of constitutional transformation where new ideas, principles and institutions emerge in the face of challenges brought forth by time. By examining past cycles, policymakers may identify warning signs of institutional decay, and predict potential points of socio-political contention.

¹ https://web.archive.org/web/20171215154541id_/https://www.ucc.ie/archive/hdsp/Rousseau_contrat-social.pdf, pp. 10-15.

² **Шайо А.** Самоограничение власти: краткий курс конституционализма. - М., 2001, p. 12.

Only based on the analysis of past cycles and thorough understanding of the social, economic and cultural peculiarities of a society may the policymakers devise necessary and working strategies to protect constitutional order. Furthermore, understanding what moves the constitutional change will successfully help to promote democracy, socio-political dialogue within the society and reduce the risk of authoritarian relapse.

THE IMPACT OF THE SOVIET UNION ON CONSTITUTIONAL DEVELOPMENTS OF POST-SOVIET STATES

The collapse of the Soviet Union in 1991 signified a new era of political transformation across the world and Eurasian region in particular. Fifteen independent states emerged and faced the necessity of creating new constitutional frameworks. Ever since, the post-Soviet space has been an environment of a series of constitutional cycles characterized by recurring patterns of constitutional change. In other words, the collapse of the Soviet Union triggered a wave of constitutional reform across the newly independent states of the post-Soviet region, and, over the past thirty years, these countries have gone through cycles of constitutional change, which included periods of reform, consolidation and regression. The peculiarities that lie within the foundation of constitutional reforms and constitutional cycles which we addressed above are precisely the reason why the process of independence and democratization in many post-Soviet states has undergone a more or less similar pattern, despite the differences between societies.

The Soviet political system was a system of centralized control, one-party system, ideological obedience and little hardly any political pluralism. It left a lasting imprint on the political cultures and institutions of the newly independent states. As a result, despite high hopes for democratic reform, the reality of post-Soviet constitutionalism was, and in some cases, still is tested by significant challenges, including corruption, weak rule of law and separation of powers, executive overreach, erosion of democratic institutions. The concentration of power in the hands of dominant political powers often undermined the system

of checks and balances, as a result undermining the possibility for genuine democratization and has often led to personification of power.

In all post-soviet countries, arose a severe need to transition from the existing model of government (the Soviet model) to forms of government that corresponded to the principles of democracy. Such a need came to be due to a number of significant shortcomings of the existing forms, which: a) not only did not meet, but directly contradicted the requirements of democratic governance and b) gradually lost their effectiveness under the conditions of a changing society. In particular, the following negative characteristics were specific to the state management systems of post-Soviet countries:

- A. The absence of separation of powers, as a result of which state power was concentrated in the hands of a small group of people.
- B. The absence of the position of head of state in the Soviet system of government.
- C. The absence of a professional parliament and the convening of 2 sessions per year, each lasting 2-3 days. Under these conditions, there could be no rule of law, because the most important spheres of public relations were regulated not by laws, but, usually, by joint decisions of the Council of Ministers and the central committee of the ruling and only party.
- D. The rigid and unequivocal dependence of the legislative, executive and judicial authorities on the will of the ruling party elite¹.

It is evident that the Soviet form of government could not ensure the realization of the internal component of state sovereignty, the principle of supremacy of state power within the country and a transition had to be made.

However, consecutive and evolutionary development of statehood is not possible in post-totalitarian period. Everything should be done at once. Nevertheless, the strategic direction of civil society formation must be maintained, which, however, is quite difficult².

¹ Հարությունյան Ա., «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», թեկնածուական ատենախոսություն, ԺԲ.00.02, 2016, pp. 93-95.

² Арутюнян А. Конституционализм: проблемы постсоветской реальности. - М., 2013, p. 76.

Thus, two important issues should be addressed in particular in regard to this transition from the Soviet Union to independence. First and foremost, the newly independent states found themselves in a situation where they had to establish a new system of government. And secondly, the states had to establish and create a civil society. The future development of the civil society was a factor that would derive from the choice of government in the country, but, at the same time, the right choice must have been made taking into account the current state of the society.

One of the goals of the transition from the authoritarian system to democracy in post-Soviet countries was the formation of civil society. The redistribution of property through privatization created an opportunity for the emergence of private property, which is one of the important prerequisites for the formation of civil society. However, to form a civil society, the economic foundations (diversity of forms of ownership and equal legal protection of different forms) were not enough, and there also was a strong need for political foundations (first of all, a multi-party political system)¹.

It is of note that in case of post-Soviet states, where the search for more acceptable models of governance is still ongoing, the need for scientific analysis of these issues is more relevant². The scientific analysis of the problems related to this issue, the identification of positive and negative features of different forms of government is not only a theoretical interest, but also hold significant practical importance when it comes down to understanding the cyclicity of state development and constitutional cycles.

Examples of such developments are present in every post-Soviet state. For instance, in 2010, as a result of sharp social conflicts in Kyrgyzstan, a transition was made from the semi-presidential system of government to the parliamentary system. In Georgia, a model of governance was introduced, which has a

¹ Հարությունյան Ա., «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», թեկնածուական ատենախոսություն, ԺԲ.00.02, 2016, pp. 93-95.

² Հարությունյան Ա., «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», թեկնածուական ատենախոսություն, ԺԲ.00.02, 2016, pp. 22.

“hybrid” nature and is difficult to classify as any basic form or variety of modern governance¹.

FOUR MODELS OF THE ARMENIAN CONSTITUTION

The 2015 constitutional amendments in Armenia, which saw the country transitioning from a semi-presidential form of government to a parliamentary one, signify one of the more recent developments in the sphere of constitutional law and constitutionalism in the country and can be seen as one of the latest developments in the constitutional cyclicity of the Republic of Armenia. However, in order to understand where the country stands today in terms of constitutionalism, a thorough and in depth analysis of the constitutional cyclicity of Armenia’s last three decades must be made.

The constitutional cycles of the Republic of Armenia can be broken down into five periods:

1. **Early Independence (1991-1995):**
2. **Adoption of the constitution:**
3. **Constitutional reform of 2005:**
4. **Constitutional reform of 2015:**
5. **Velvet revolution of 2018:**

These first four periods were each based on a certain constitutional model and only the final phase, the Velvet revolution and post-revolution period did not bring a new constitutional model, despite two failed attempts of constitutional reform that never produced a final product.

Thus, during the past three decades, the form of government of the Republic of Armenia has undergone changes four times.

In 1991, on the basis of constitutional laws, a transition was made from the Soviet form of government to a new one, which can be more accurately described as “hybrid”, since it included elements characteristic of both the Soviet and presidential and semi-presidential models of government.

¹ Հարությունյան Ա., «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», թեկնածուական ատենախոսություն, ԺԲ.00.02, 2016, pp. 14-15.

With the adoption of the Constitution of 1995, the strictly president-centered semi-presidential model was formed. It is noteworthy that this model is called “super-presidential” by some authors¹.

However, it should be noted that the discussed model cannot be characterized as super-presidential. In the literature, the following features of super-presidential models are distinguished:

1. They are usually established as a result of military coups, the president obtains his powers in an illegitimate manner (as a leader of a coup or head of a junta),
2. The president is endowed with extensive powers, and, in a situation of extremely weak control by the legislative and judicial authorities,
3. The powers of the president are exercised under a permanent state of emergency, during which the constitutional guarantees of protection of basic human and citizen rights and freedoms are eliminated or significantly limited and mass violence is carried out against the opposition².

The discussed model of semi-presidential governance of the Republic of Armenia was characterized by only one of the mentioned features: the president was endowed with extensive powers with very little control by the legislative and judicial authorities. Therefore, it would be more correct to characterize that model not by the term “super-presidential”, but by the term “president-centric”³.

In the government model of the Republic of Armenia of that period, due to a unique legal nature of presidential power, the President appears at the center of the state power system. The entire system of state power, its structural elements, the basics of the legal status of individual structures of the legislative, executive and judicial branches of power, their specific powers had to be somewhat adapted to the president. The need for such alignment also arose from the function of the President to ensure the normal functioning of the legislative, executive and judicial authorities. It is obvious that in order to ensure the normal operation of the three branches of the government, the President should have had effective legal levers of influence on those three branches.

¹ Арутюнян А. Институт Президента Республики Армения. - Ереван, 1996, p. 109.

² Конституционное право зарубежных стран. - М., 2008, p. 149.

³ Հարությունյան Ա., «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», թեկնածուական ատենախոսություն, ԺԲ.00.02, 2016, p. 149.

At the same time, the maintenance of a certain balance between the three branches of government and the presidential power, as well as the application of optimal restraint mechanisms between the legislative, executive and judicial powers and the presidential power, were the most important issues in this area. The effectiveness of the semi-presidential governance model of the Republic of Armenia and the degree of compliance with the principles of democracy mainly depended on the quality of the implementation of those two tasks.

As a result of the constitutional amendments of 2005, the powers of the President of the Republic of Armenia were significantly limited and the powers of the Parliament and the Government were expanded.

The resulting semi-presidential government model can be defined as a parliamentary-presidential one.

One of the main directions of the amendments of 2005 in Armenia was the improvement of the model established by the 1995 Constitution within the framework of the semi-presidential form of government. Considering the fact that one of the main features of the model operating before the constitutional amendments was the endowment of the President of the Republic with extensive powers, in a reality of extremely weak control by the legislative and judicial powers and that the model was strongly “president-centered” in nature, the main direction of the reform should have been to ensure a balance between the President of the Republic and the three branches of power: legislative, executive and judicial. The government model formed in the Republic of Armenia as a result of the constitutional amendments of 2005 could be ranked among the most balanced ones in the post-Soviet area in terms of legal solutions. However, the insufficient level of establishment of the political party system, the insufficient level of democracy, political and legal culture and custom practically gave the President of the Republic the opportunity to significantly influence the formation, organization and activity of all three branches of power.

Finally, as a result of the constitutional amendments of 2015, a transition to the parliamentary governance model took place.

This model has a number of commonalities with other well-known models and, at the same time, a number of such essential peculiarities that give certain

grounds for evaluating that model as a special “Armenian” model. The central role of the National Assembly made the issue of ensuring a stable majority in that body very relevant. Such stability is a necessary precondition for the effective performance of its functions by the National Assembly. In addition, the stability of the parliament is a necessary prerequisite for ensuring the stability of the entire system of executive power, including the highest body of executive power, the Government. A majority which, on the one hand enables the National Assembly to effectively carry out its functions, and on the other hand, forces the parliamentary majority to take into account the positions of the opposition during the adoption of constitutional laws and the formation of the most important constitutional bodies can be considered more acceptable. Therefore, a majority that is close to, but does not exceed, three-fifths of the total number of deputies should have been made a priority, however, this was not the path taken, and in reality, the Republic of Armenia is living in a reality, where the parliamentary majority has total control and the parliamentary minority does not have a single effective mechanism to influence the decision-making processes in the country¹.

In other words, the National Assembly of the Republic of Armenia is a textbook example of how the rule of the majority operates. The reason of this phenomenon is quite clear: the above mentioned models, so different at first glance, had one thing in common. All were built around a person, resulting in the personification of power. This is the consequence of our historical reality. Having been stateless for centuries, we lacked the opportunity to develop a legal custom and political culture, and after independence we unwittingly adopted the latest system model we were familiar with. Thus, the Soviet pyramid-like authoritarian rule continued in newly independent Armenia under new names. This risk is relevant today, because in parliamentary republics, more than elsewhere, public administration and the state itself are a reflection of the parties and the party system².

¹ Հարությունյան Ա., «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», թեկնածուական ատենախոսություն, ԺԲ.00.02, 2016, pp. 6-8.

² https://168.am/2018/05/08/947788.html?fbclid=IwAR05vLDmrJPFtuDjNVoNQ7X-JE3CncVPGIldmHI54SpjBfstlefBn05bi3zQ_aem_ASJBm6d_vbalpY3PCtLeoksvjYAyVjHEZPkb-Glejdl8vzfK_BNg7Cg0M4laW11IIPeRZPHzJlyl7Y8JSKcmicCpW

CURRENT CONSTITUTIONAL CYCLE: HOW TO ADVANCE?

The current constitutional cycle began in 2018, when events took place which, by some people are referred to as the Velvet, Non-Violent Revolution. Now, a revolution occurs when the social contract, i.e. the Constitution, either does not work, works partially, or is imposed by a dictatorial regime. In this case, the revolutionary government must first make a change of values, because only a legitimate government is able to introduce a unifying positive value system that will contribute to progress. In such situation constitutional reforms must be the number one thing on the to-do list of a revolutionary government. The new government should have fully understood the simple fact that first of all it must start implementing value system changes in society, because without them any norms, including the provisions fixed by the Constitution, will be formal, and as a result the country would have a facade constitution and a legal system that exists on paper but has no practical application¹.

However, it took the “revolutionary government” nearly two years to simply initiate the process of constitutional amendments². Whereas it is yet to be seen what kind of amendments would be initiated, since the initiator’s rhetoric about this process has changed a number of times since 2020 and the initial transparency has slowly become non-existent, it can already be stated with full responsibility that the process of constitutional rot is steadily advancing in the Republic of Armenia. The fact that at the last parliamentary elections in Armenia in 2021 less than 50% of voters participated in the election, is a clear sign of distrust of both government and opposition³. This is an indication that the people of Armenia no longer trust the major political figures in the arena for they do not believe that they have the best interest of people in their mind and will act accordingly. This extends the polarization within the society where people lose trust in their fellow citizens, which bears the risk of further shattering the

¹ https://168.am/2018/12/04/1052026.html?fbclid=IwAR1JXNIU3Aalz_6VFs8MXTJgikhZsoY-h8PNNVxcrVuHxJb2aOdNOCUImi1s_aem_ASI-wBD8aVW18J_1NqKX8O5rdZFDBZG-7G7VbelID10Ybu_oxFaRjsravYdP-4knUzrScU30K401ajnQdnpFxlvdSc

² ՀՀ վարչապետի 2020 թվականի փետրվարի 12-ի N 181-ա որոշում:

³ OSCE/ODIHR Election Observation Mission Final Report on Early Elections to the National Assembly of June 20, 2021, p. 24.

foundations of democracy and paving a way for wealthy donors and influential figures to manipulate politics enhancing tendencies towards oligarchy¹.

Polarization, unaccountable government and political opposition breed overconfidence, bring forth an unhealthy and stagnant political setting thus creating a favorable environment for policy disasters, which further undermine the trust in government and so on².

In the current constitutional cycle of the Republic of Armenia, one of the biggest policy disaster threats remains the risk of abusive constitutionalism. Abusive constitutionalism refers to the misuse or manipulation of constitutional mechanisms and processes to concentrate power, undermine democracy, and violate human rights. In other words, “abusive constitutionalism” refers to the use of mechanisms of constitutional change in order to make a state significantly less democratic than it was before³. Abusive constitutionalism, in its turn comes alongside the risk of bringing dangerous challenges to democracy that come disguised as democratic decisions and reforms. In the work “Anatomy of Post-Communist regimes” the authors provide a very interesting analysis and their classification most accurately characterizes all the features and details of the regimes, which are often called “illiberal democracies”. The terms Patronal democracies and patronal autocracies are used⁴.

Evidently, protecting the constitutional structure against abusive constitutional practices is quite difficult. It is more difficult in countries that lack the necessary legal and political customs and traditions, such as most post-soviet countries. However, if the Republic of Armenia is to emerge differently from the current constitutional cycle, as opposed to the ones preceding it, the country must approach this cycle differently.

In this regard it may prove beneficial to look upon the so-called “unconstitutional-constitutional amendment doctrine”, which holds that a constitutional

¹ **Jack M. Balkin**, The cycles of constitutional time, Oxford university press, 2020, p. 50.

² **Jack M. Balkin**, The cycles of constitutional time, Oxford university press, 2020, p. 50.

³ **David Landau**, Abusive Constitutionalism, 47 U.C. Davis L. Rev. 189 (2013), p. 195.

⁴ **B. Magyar & amp; B. Madlovics**, The Anatomy of post-communist regimes. A Conceptual framework, Central European University Press, (2020).

amendment can itself be substantively unconstitutional under certain conditions¹.

The “unconstitutional-constitutional amendment doctrine” is, of course, one of the most, if not the most extreme of counter-majoritarian acts². However, the above-mentioned and analyzed constitutional cycles of the Republic of Armenia clearly show that if such measures are not taken, it would be impossible to avoid the rule of the majority, especially in the Parliament. The approach of the dogmatic democracy that the rule of the majority should be unlimited, we consider false since it ruins the idea of democracy itself. If this idea is implemented in a society, the idea of democracy, which has always been drawn towards elimination of authoritarianism not only will fail, but it will become the foundation for new authoritarianism through normalization of the system of checks and balances.

CONCLUSION

To avoid the repetition of the previous constitutional cycles in Armenia, we believe that reforms should not be all-encompassing, but should rather start small and bring more targeted solutions. Thus, the adoption of an entirely new constitution or major “surgical” changes to the document would be out of time at the moment. The reforms should be aimed at restraining the possibility of the rule of the majority in parliamentarism. This is where “unconstitutional-constitutional amendment doctrine” may come into place. Limiting the number of seats at the parliament the ruling party or coalition may have, is one step towards this.

Firstly, a fixed number of parliamentary seats should be established by the Constitution.

Secondly, the issue of the stable majority must be considered. For the effective implementation of the functions of the National Assembly, a stable majority should probably consist of three-fifths of the total number of deputies. However, it is important to take into account that the definition of a qualified majority

¹ David Landau, Abusive Constitutionalism, 47 U.C. Davis L. Rev. 189 (2013), p. 231.

² Gary J. Jacobsohn, The permeability of Constitutional Boards, 82 TEX. L. REV. 1763, 1799 (2004).

of votes for the adoption of constitutional laws, as well as for the appointment to certain high positions or the formation of constitutional bodies, is not arbitrary, it is a means of protecting the rights of the parliamentary minority. Therefore, it is more acceptable to have such a majority that, on the one hand, enables the National Assembly to effectively carry out its functions, and on the other hand, forces the parliamentary majority to take into account the positions of the opposition during the adoption of constitutional laws and the formation of the most important constitutional bodies. Therefore, a majority that is close to, but does not exceed three-fifths of the total number of deputies can be considered more acceptable. The greater “stability” of the parliamentary majority may be fraught with the danger of establishing the dictatorship of one party or several parties forming the parliamentary majority (something that has been witnessed in post-soviet states more than once). Thus, establishing a maximum threshold for the most successful political team at the elections may itself seem undemocratic (after all, what if a political team gains for example 80 percent of the votes at the elections, but can have an amount of parliamentary representation that is a little below 60%), however, from the perspective of “unconstitutional-constitutional amendment doctrine” and in the long run, this shall be more beneficial for democracy and legal and political discourse in the country. Want it or not, at some point the political powers will have to engage in political dialogues and form a consensus regarding different major issues, such as the election of the Ombudsman, Prosecutor General and so on.

The above-mentioned example is just one of many that can be considered in the path of Armenia’s true democratization; however, it is strong enough to show how it will change the overall political climate and prepare the necessary environment for the next step in the current constitutional cycle.

Bibliography

1. ՀՀ վարչապետի 2020 թվականի փետրվարի 12-ի N 181-ա որոշում (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141788>)
2. **Հարությունյան Ա.**, «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», ԺԲ.00.02, 2016, 268 pages.
3. **B. Magyar & amp; Madlovics B.** The Anatomy of post-communist regimes. A Conceptual framework, Central European University Press, (2020).
4. **David Landau**, Abusive Constitutionalism, 47 U.C. Davis L. Rev. 189 (2013), pp. 191-258.
5. **Gary J. Jacobsohn**, The permeability of Constitutional Borders, 82 TEX. L. REV. 1763, 1799 (2004).
6. **Jack M. Balkin**, The cycles of constitutional time, Oxford university press, 2020, 246 pages.
7. **Арутюнян А.** Институт Президента Республики Армения. - Ереван, 1996. - 311 с.
8. **Арутюнян А.** Конституционализм: проблемы постсоветской реальности. - М., 2013. - 160 с.
9. Конституционное право зарубежных стран / Под общ. ред. М.В. Баглая, Ю.И. Лейбо, Л.М. Энтина. - М., 2008. – 1056 с.
10. **Медушевский А.Н.** Теория конституционных циклов. - Москва, Издательский дом ГУ ВШЭ, 2005. - 574 с.
11. **Шайо А.** Самоограничение власти: краткий курс конституционализма. - М., 2001. - 292 с.
12. <https://www.merriam-webster.com/dictionary/cycle>
13. https://web.archive.org/web/20171215154541id_/https://www.ucc.ie/archive/hdsp/Rousseau_contrat-social.pdf
14. OSCE/ODIHR Election Observation Mission Final Report on Early Elections to the National Assembly of June 20, 2021, p. 24
15. https://168.am/2018/05/08/947788.html?fbclid=IwAR05vLDmrJPFtuD-JnVoNQ7XJE3CncVPGIIdmHI54SpjBfstlefBn05bi3zQ_aem_ASJBm6d_vbal-

pY3PCtLeoksvJYAyVjHEZPkbGleJdL8vzfK_BNg7Cg0M4laW11IIPeRZPHzJI-yI7Y8JSKcmIcCpW

16. https://168.am/2018/12/04/1052026.html?fbclid=IwAR1JXNI-U3Aalz_6VFs8MXTJgikhZsoYh8PNNVxcrVuHxJb2aOdNOCUImi1s_aem_ASI-wBD8aVW18J_1NqKX8O5rdZFDBZG7G7VbeID10Ybu_oxFaRjsravY-dP-4knUzrScU3OK401ajnQdnpFxlvdSc

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՑԻԿԼԵՐԸ

Ամփոփագիր

Այս հոդվածում սահմանադրական ցիկլերի տեսանկյունից վերլուծվում են Հայաստանի անկախության երեսուն տարիները: Ընդգծվում են նմանություններն ու տարբերությունները, ինչպես նաև ընդհանուր տեղեկություններ են տրամադրվում այն մասին, թե ինչ են սահմանադրական ցիկլերը: Հոդվածի մնացած մասը կկենտրոնանա ներկայիս սահմանադրական ցիկլի վրա և կնախանջի հնարավոր լուծումները՝ խուսափելու այն ծուղակներից, որոնք առկա էին նախորդ ցիկլերում:

Հիմնաբառեր. Հայաստանի Սահմանադրություն, սահմանադրական ցիկլեր, չարաշահող սահմանադրականություն, մեծամասնության կանոն, ոչ լիբերալ ժողովրդավարություն:

КОНСТИТУЦИОННЫЕ ЦИКЛЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Аннотация

В данной статье анализируется тридцать лет независимости Армении с точки зрения конституционных циклов. Выделены сходства и различия, а также представлены общие сведения о том, что они из себя представляют.

Далее в статье основное внимание уделено текущему конституционному циклу и изложены возможные решения, чтобы избежать ошибок, имеющих в предыдущих циклах.

Ключевые слова: Конституция Армении, конституционные циклы, абьюзивный конституционализм, правило большинства, нелиберальная демократия.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 08.04.2024 թ., տրվել է գրախոսության 09.04.2024 թ., ընդունվել է տպագրության 15.04.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.2-133



ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության
Փաստաբանների պալատի
ՀՊԳ մոնիտորինգի պատասխանատու,
Երևանի «Գլաժոր» համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ
ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻՉՄԻ ԿԱՅԱՅՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ**

Ամփոփագիր

Հոդվածում հանգամանորեն վերլուծվում է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսության ամբողջական ձևավորումն ու սահմանադրական սկզբունքի ի հայտ գալը կապված են 17-18-րդ դարերում Անգլիայում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում ծավալված քաղաքական իրադարձությունների հետ:

Առանձնացնելով պետական իշխանության երեք ճյուղեր՝ օրենսդիր, գործադիր և ֆեդերատիվ, այդպիսի բաժանման հիմքում, ի տարբերություն անտիկ շրջանի մտածողների, դնելով իշխանության գործառույթների բաժանումը պետական իշխանության տարբեր մարմինների միջև, որտեղ օրենքներ ընդունելու գործառույթը վերապահվեց օրենսդիր իշխանությանը (պառլամենտին), օրենքները կատարելու և պատժելու գործառույթը՝ գործադիր իշխանությանը (թագավորին), իսկ դաշինքներ կազմելու և գործարքներ կնքելու գործառույթը՝ ֆեդերատիվ իշխանությանը, Ջ. Լոքը հայեցակարգային առումով ամբողջացրեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսությունը: Այն ժամանակակից ընկալմամբ թեև ամբողջական չէր ու տարբեր տեսանկյուններից քննադատվեցին նրա գաղափարները, սակայն, դրանով հանդերձ, Ջ. Լոքի առաջ քաշած տեսության

2(114)2024
ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

իրավաքաղաքական նշանակությունը բարձր է գնահատվում, քանզի դրանք չէին սահմանափակվում միայն իշխանության մեխանիկական բաժանման սահմանմամբ:

Հոդվածում ներկայացվում է նաև, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի զարգացման գործում առանցքային դերակատարություն ունեցավ Շ. Մոնտեսքյոն, որն ի տարբերություն Ջ.Լոքի, դատական իշխանությունն առանձնացրեց գործադիր իշխանությունից:

Անդրադարձ է կատարվել հայրենական իրավագիտության մեջ իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսությանն առնչվող հիմնահարցերին նույնպես:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ հոդվածի հեղինակի կարծիքով՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իմաստը հենց այն է, որ հնարավոր լինի խուսափել դրանց հակամարտությունից, վերին աստիճանը բարձրանալու նրանց ձգտումից ու բախումներից, որպեսզի բացառվի մեկ մարմնի կամ անձի ձեռքում պետական իշխանության գործառույթների կենտրոնացումը:

Հիմնաբառեր. Սահմանադրություն, օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների բաժանում և հավասարակշռում, անցումային ժամանակաշրջան, կիսանախագահական մոդել, ՀՀ Գերագույն խորհուրդ, խորհրդարանական կառավարում, զսպումների և հակակշիռների կառուցակարգեր:

ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածում ամրագրված՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի գիտակցման գաղափարներն ունեն պատմական խորը արմատներ, որոնք ժամանակի ընթացքում պետական իշխանության կազմակերպման առջև ծառայած խնդիրների լուծման հրամայականով պայմանավորված՝ աստիճանաբար զարգանալով վերափոխվել են: Սակայն մշտապես նույնն է մնացել հարցադրումը, ըստ որի պետական իշխանության գործառույթները բոլոր դեպքերում չպետք է կենտրոնանան պետական իշխանութ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՄՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
◆ 2(114)2024

յան մեկ մարմնի կամ առավել ևս՝ մեկ անձի ձեռքում: Պատմական բուրբ ժամանակաշրջաններում էլ քննարկվող սկզբունքի զարգացումը պայմանավորված է եղել ոչ թե որևէ տեսական հայեցակարգ կյանքի կոչելու ցանկությամբ, այլ օբյեկտիվ հանգամանքներով, ինչն իր հերթին պայմանավորված է եղել տվյալ ժամանակաշրջանում պետական իշխանության կազմակերպման առջև ծառայած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Պատմական համառոտ ակնարկ կատարելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ձևավորման ու զարգացման արմատներին՝ նշենք, որ պետական իշխանության կազմակերպման վերաբերյալ հարցերը քննարկման առարկա են եղել դեռևս հույն և հռոմեացի մտածողների կողմից, որոնք պետական կառավարումը բաժանում էին «**ճիշտ**» և «**սխալ**» ձևերի:

Այսպես՝ Պլատոնը կառավարման ճիշտ ձև էր համարում թագավորի օրինական իշխանությունը, օրինական ազնվապետությունը և օրինական ժողովրդավարությունը, իսկ սխալ ձևեր՝ բռնատիրությունը, օլիգարխիան և անօրինական ժողովրդավարությունը¹: Արիստոտելը կառավարման ճիշտ ձև ունեցող պետությունում առանձնացնում էր երեք մարմին՝ խորհրդակցական, մագիստրատուրա և դատական, ինչն ըստ էության սաղմնային վիճակում արտացոլում է ժամանակակից իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի եռաթև բաժանման հայեցակարգը²: Պլատոնի և Արիստոտելի գաղափարների վերաբերյալ բավականին դիպուկ է արտահայտվել ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը, նշելով, որ նրանք հիմնական շեշտը դրել են ոչ թե աշխատանքի կազմակերպման ձևերի, այլ դրանց կրողների՝ սոցիալական շերտերի վրա, և տարբեր շերտերի միջև աշխատանքի արդար բաժանման հիման վրա իշխանության կազմակերպման մեջ էին տեսնում օրինականության ռեժիմի հնարավորությունը³: Պետական կառավարման խնդիրն

¹ Տե՛ս «The dialogues of Plato». Translated by B. Jowett, "Oxford University Press", 1982, էջ 72:

² Տե՛ս **Հարությունյան Ա.**, Եվրոպական միության իրավունքի հիմունքները: Եր., 2011, էջ 370:

³ Տե՛ս **Нерсесянц В.С.** Платон. - М.: «Юрид. лит», 1984, էջ 71:

անդրադարձել է նաև Պոլիբիուսը, որն առանձնացրել է կառավարման երեք պարզ ձևեր՝ միապետություն, արիստոկրատիա և դեմոկրատիա՝ դրա հիմքում դնելով կառավարում իրականացնող մարմինների քանակը, համաձայն որի՝ միապետությունում կառավարում է մեկ անձ՝ միապետը, արիստոկրատական կառավարման դեպքում՝ մի խումբ՝ արիստոկրատները, իսկ դեմոկրատիայի դեպքում՝ շատերը (ժողովուրդը)¹: Ըստ Պոլիբիուսի՝ կառավարման այս երեք ձևերը ժամանակի ընթացքում այլասերվել են, որի հետևանքով միապետությունը դարձել է բռնապետություն, արիստոկրատիան՝ օլիգարխիա, դեմոկրատիան՝ ամբոխավարություն, որոնք պատմական զարգացման ընթացքում հաջորդել են միմյանց:

Անտիկ շրջանի մտածողների առաջադրած մտքերը գաղափարական հիմք հանդիսացան Հին Հունաստանի և Հռոմի կառավարման գործընթացում: Մասնավորապես՝ Աթենքի կառավարման համակարգում մենք արդեն տեսնում ենք իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի տարրեր. հինգհարյուրի խորհուրդը լայն առումով կատարում էր գործադիր, ժողովրդական ժողովը՝ օրենսդիր, իսկ արեոպագը՝ բարձրագույն դատական իշխանության գործառույթ: Պետական կառավարման զարգացած համակարգ էր ձևավորվել նաև Հին Հռոմում, որտեղ կառավարումն իրականացնում էին թագավորը, ժողովրդական ժողովը, սենատը և մագիստրատուրան²:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսության ամբողջական ձևավորումն ու սահմանադրական սկզբունքի ի հայտ գալն անմիջականորեն կապված են եղել 17-18-դարերում Անգլիայում, Ֆրանսիայում և ԱՄՆ-ում ծավալված քաղաքական իրադարձությունների հետ:

XVII դարում Անգլիայում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների արդյունքում սկնհայտ դարձավ, որ կառավարման գործող մոդելն անարդյունավետ է, իսկ նոր հայեցակարգային մոտեցումների ամրագրումը՝ ժամանակի պահանջ: Այդպիսին հանդիսացավ թագավորական անսահմանափակ իշխանությունը բաժանման միջոցով

¹ Տե՛ս **Walbank, F.W.** Polybius, “University of California Press”, 1990, էջ 135-137:

² Առավել մանրամասն տե՛ս **Սաֆարյան Գ., Եսայան Ա.**, Հռոմեական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Եր., 2011, էջ 35:

սահմանափակելու Ջ. Լոքի հայեցակարգը, որը փորձում էր հաշտեցնել գործող կառավարման խառը մոդելը իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայեցակարգի հետ: Առանձնացնելով պետական իշխանության երեք ճյուղեր՝ օրենսդիր, գործադիր և ֆեդերատիվ, այդպիսի բաժանման հիմքում, ի տարբերություն անտիկ շրջանի մտածողների, Ջ. Լոքը դրեց ոչ թե դասային ներկայացուցչության ապահովումը, այլ պետական իշխանության գործառույթների բաժանումը պետական իշխանության տարբեր մարմինների միջև, որտեղ օրենքներ ընդունելու գործառույթը վերապահվեց օրենսդիր իշխանությանը (պառլամենտին), օրենքները կատարելու և պատժելու գործառույթը՝ գործադիր իշխանությանը (թագավորին), իսկ դաշինքներ կազմելու և գործարքներ կնքելու գործառույթը՝ ֆեդերատիվ իշխանությանը: Ընդ որում, Ջ. Լոքը գործառութային առումով օրենսդիր իշխանությունը համարում էր պետական իշխանության բարձրագույն և բացառիկ ճյուղը, նշելով, որ ոչ ոք, օրենսդիր իշխանությունից բացի, չի կարող ընդունել օրենքներ, իսկ վերջինս իրավունք չունի օրենքներ ընդունելու լիազորությունը փոխանցելու այլ մարմնի¹:

Թեպետ Ջ. Լոքը հայեցակարգային առումով ամբողջացրեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսությունը, այդուհանդերձ այն ժամանակակից ընկալմամբ դեռևս ամբողջական չէր: Դրանով պայմանավորված՝ գրականության մեջ տարբեր տեսանկյուններից քննադատվեցին նրա գաղափարները: Այսպես, Յ. Կրասնովը նշում է, որ Ջ. Լոքը պետական իշխանությունը բաժանեց երեք ճյուղերի, սակայն չնշեց, որ դրանք պետք է լինեն առանձին ձեռքերում, ինչպես նաև դատական իշխանությունը չառանձնացրեց գործադիր իշխանությունից²: Մ. Բոդեն նշում է, որ Ջ. Լոքը իշխանության երեք ճյուղերը չի համարում հավասար և չի նշում դրանց անկախության մասին³: Սակայն մյուս կողմից, ի հակադրություն նշված տեսակետների՝ մի շարք հեղի-

¹ Տե՛ս **Locke, J.** Two Treatises of Government. “Cambridge University Press”, 1988, էջ 176:

² Տե՛ս **Краснов Ю.К.** Принцип разделения властей в России: теория и практика // Право и управление. XXI век. 2005. № 1, էջ 2:

³ Տե՛ս **Bode, M.** Political philosophy of John Locke. “GRIN Verlag”, 2008, էջ 9:

նակներ, այդ թվում Մ. Վայլը, բարձր են գնահատում Ջ. Լոքի առաջ քաշած տեսության իրավաքաղաքական նշանակությունը՝ նշելով, որ նրա գաղափարները չեն սահմանափակվում միայն իշխանության մեխանիկական բաժանման սահմանմամբ¹:

Պետական իշխանության կազմակերպման գործող կառուցակարգերը քաղաքական ճգնաժամ էին հասունացրել նաև Ֆրանսիայում: 1789 թվականին սահմանադիր ժողովն ընդունեց «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» հռչակագիրը, որի 16-րդ հոդվածում նշված էր՝ «**այն պետությունում, որտեղ չկա իշխանությունների բաժանման սկզբունք, չկա ազատություն**»²: Ֆրանսիայում թագավորական իշխանության սահմանափակման և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի զարգացման գործում առանցքային դերակատարություն ունեցավ Շ. Մոնտեսքյուն, որը «Օրենքների ոգին» աշխատությունում ոչ միայն ամբողջական կերպով զարգացրեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման դասական տեսությունը³, այլև, ի տարբերություն Ջ. Լոքի, դատական իշխանությունն առանձնացրեց գործադիր իշխանությունից: Բարձր գնահատելով Շ. Մոնտեսքյոյի դերակատարությունը իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսության զարգացման գործում՝ Մ. Վայլը նշում է, որ վերջինս ճանապարհ հարթեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի համար, որը տարբեր կերպ զարգացավ Անգլիայում, իսկ եվրոպական այլ պետություններում և ԱՄՆ-ում այն երկար չմնաց որպես անգլիական տեսություն և շուտով դարձավ սահմանադրական կառավարման համընդհանուր սկզբունք⁴, իսկ Հեգելը Մոնտեսքյոյի հիշյալ աշխատությունն անվանեց հավերժական ստեղծագործություն⁵:

¹ Տե՛ս **Vile, M.** Constitutionalism and the Separation of Powers. Oxford. “Oxford University press”, 2nd ed, 1998, էջ 64:

² National Assembly of France, “Declaration of the Rights of Man and Citizen”. 1789, Article 16.

³ Տե՛ս **Montesquieu.** “The Spirit of Laws” translated by Thomas Nugent 1752, “Kitchener”, 2001, էջ 178:

⁴ Տե՛ս **Vile, M.** Եզվ. աշխ., էջ 105:

⁵ Տե՛ս **Нерсесянц В.С.** Философия права Гегеля. - М., “Юрист”, 1998, էջ 22:

Իշխանությունների բաժանման գաղափարն ուսումնասիրել են նաև Կանտը, Հեգելը և այլ մտածողներ: Այսպես, Ի.Կանտը իշխանությունների բաժանումը սահմանում է որպես մաքուր գիտակցված պահանջ և պետության հիմնարար սկզբունք: Պետությունը, նշում է նա, ներառում է երեք իշխանություններ, որոնք արտացոլում են մեկ եռյակի մեջ միավորված կամքը՝ գերագույն իշխանություն (ինքնիշխանություն) ի դեմս օրենսդրի՝ ժողովրդի, գործադիր իշխանություն՝ ի դեմս պետության ղեկավարի, և դատական իշխանություն, որը նշանակվում է պետության ղեկավարի կամ ընտրվում է ժողովրդի կողմից: Կանտը գտնում էր, որ ազատություն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի այդ իշխանությունները տարանջատված լինեն: Սակայն, տարանջատված լինելով հանդերձ, դրանք չպետք է զրկված լինեն փոխադարձ կապի հնարավորությունից, քանզի հենց դրանց փոխազդեցության մեջ է երկրի բարօրությունը: Հեգելը գտնում էր, որ իշխանությունների բաժանումը «հանրային ազատության երաշխիք է»: Այդ երաշխիքն այն է, որ մի ճյուղը մյուսի նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավունք ունի¹:

Հարկ է նշել, որ ոչ միայն արտասահմանյան, այլև հայրենական իրավագիտության մեջ նույնպես ուսումնասիրության առարկա են եղել իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսությանն առնչվող հիմնահարցերի տարբեր կողմերը: Չնայած դրան՝ այսօր էլ մեզանում դեռևս վիճելի (վիճարկելի) են սահմանադրաիրավական, այդ թվում՝ քննարկվող սկզբունքին վերաբերող մի շարք հարցեր:

Իշխանությունների բաժանման համակարգի արմատները պետք է փնտրել հենց Աստվածաշնչում, գրում է Ռ. Պապայանը: Նա հանգում է այն եզրակացության, որ «...Հայր-Աստված, Որդի-Աստված և Սուրբ Հոգի-Աստված երրորդությունում նախանշված են երկնային իշխանության երեք ճյուղերը, որոնք օրենսդիր, դատական և գործադիր իշխանությունների երկնային համարժեքներն են»²:

¹ Տե՛ս **Гегель**. Философия права. - М., 1990, էջ 67:

² Տե՛ս **Պապայան Ռ.Ա.**, Ժամանակակից իրավունքի քրիստոնեական արմատները: Մ., «Նորմա», 2002, էջ 218:

Պրոֆեսոր Ռ. Պետրոսյանը, հենվելով իրավաբանական գրականության մեջ առկա հիմնավորումների և հենց իրենց՝ Աստվածաշնչյան նորմերի վրա, ցույց է տվել, որ Հին Կտակարանից են սկիզբ առել իշխանության տարբեր ճյուղերի միջև հակակշիռներ և զսպումներ ստեղծելու գաղափարները, և որ իրավու նքն ու նրա հիմնարար ճյուղերը, դատարանն ու արդարադատությունն աստվածային ծագում ու բովանդակություն ունեն¹: Ըստ այդմ, ռուսական և եվրոպական իրավաբանական դպրոցի ներկայացուցիչների լայնածավալ քննարկումների արդյունքում ձևավորված գաղափարներն ու եզրահանգումները եկան ժխտելու ինչպես խորհրդային դավանությունը, ըստ որի՝ իշխանությունների բաժանումը և դատական անկախ իշխանության առաջացումը որակվում էր որպես բուրժուական իրավաքաղաքական ուսմունք (դոկտրին), այնպես էլ համաշխարհային իրավագիտության մեջ տիրապետող այն կանխադրույթը, որին համապատասխան դրանք ամբողջովին հանգեցվում էին զուտ աշխարհիկ ուսմունքի: Ընդ որում, ռուս հայտնի իրավագետները զուգահեռներ են անցկացրել Աստվածաշնչի և օրենսդիր ու գործադիր իշխանություններին հակակշռող, զսպող անկախ դատական իշխանության վերաբերյալ Կոնֆուցիուսի՝ չինական քաղաքակրթության 2600-ամյա բարոյաքաղաքական ուսմունքի միջև և դրանց մեկնությունների գիտական վերլուծության միջոցով հիմնավորել են Աստվածաշնչի՝ մարդկության պատմության մեջ առաջին Սահմանադրությունը լինելու, դատարանի և արդարադատության անկախության աստվածաշնչյան արմատների առկայության, ավելի քան 3000 տարի առաջ իշխանությունների բաժանման փաստերը: **Առաջ է քաշվել այն հետաքրքիր դրույթը, որ իրավունքը և դատական իշխանությունն առաջնային են (առաջացել են ավելի վաղ), քան աշխարհիկ (օրենսդիր և գործադիր) իշխանությունները:**

Պրոֆեսոր Գ. Հարությունյանն իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը բնութագրում է հետևյալ հատկանիշներով.

¹ Տես **Պետրոսյան Ռ.Գ.**, Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները: Եր., «Ոսկան Երևանցի», 2008, էջեր 3-11, 14-36, 48-49, 54-56:

իշխանության ճյուղերի հարաբերական անկախություն, անհրաժեշտ սահմանադրական ինստիտուտների առկայություն, իշխանության ճյուղերի լիազորությունների ամբողջականություն, պետական իշխանության հավասարակշռված գործունեության անընդհատություն¹:

Ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը գտնում է, որ պետական իշխանության տարանջատումը երեք ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական, լիովին համահունչ է պետական իշխանության բնույթին, դրանք կարող են լինել հենց երեքը և ոչ ավելին²:

Զխորանալով իշխանությունների բաժանման վերաբերյալ առաջ քաշված տեսությունների (տեսակետների) վերլուծությունների մեջ՝ միանգամից նշենք, որ անցնելով մարդկության (հասարակության) պատմության միջով, դրանք իրենց ուղղակի արտացոլումն են ստացել առաջին հերթին ԱՄՆ-ի 1787 թվականի Սահմանադրությունում, որը թեև իշխանությունների բաժանման մասին ուղղակի նորմ չի պարունակում, ինչպես ասենք՝ արել է այսօրվա Հայաստանը, բայց օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջոցով պետական իշխանության իրականացումը սահմանել է հստակորեն, ու դա գործնականում կիրառվում է: ԱՄՆ-ի Սահմանադրության հայրերը, թեև քաջաձանոթ էին Շ. Մոնտեսքյոյի և Ջ. Լոքի տեսություններին, այնուամենայնիվ իշխանությունների բաժանման հարցում առաջնորդվեցին Հին Կտակարանով, այսինքն՝ ստեղծեցին իրար ոչ ենթակա, այլ փոխկապակցված, մեկը մյուսին հակակշռող և զսպող օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններ, սահմանեցին գործադիր իշխանության ղեկավարի՝ նախագահի պաշտոնակալության երդում ԱՄՆ-ի Գերագույն դատարանի նախագահի առջև՝ Աստվածաշնչի վրա: Քննարկելով ԱՄՆ-ում գործող իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելը՝ Մ. Վայլն այն բնութագրում է երկու հատկանիշներով՝ իշխանության ճյուղերի բաժանման և զսպումների ու հավասարակշռման կառուցակարգերի առկայություն³, իսկ Լ. Ֆիշերը նշում է, որ հիմնադիր հայրերը հասկանում

¹ Տե՛ս **Հարությունյան Գ.Գ.**, Սահմանադրությունից սահմանադրականություն: Եր., «Նժար», 2004, էջ 25-26:

² Տե՛ս **Нерсесяиц В.С.** Общая теория права и государства. - М., 1999, էջ 45:

³ Տե՛ս **Vile M.** Politics in the USA. New York: Manchester University Press, 1999, էջ 6:

էին իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության անհրաժեշտությունը և այն, որ իշխանության ճյուղերի մեխանիկական բաժանումը կհանգեցնի իշխանության մեկ ճյուղի կողմից մյուսի լիազորությունների զավթման¹:

Իշխանությունների բաժանման սկզբունքի քննարկմամբ պայմանավորված՝ անդրադարձ կատարելով բուն պետական իշխանությանը՝ նկատենք, որ պետության և իրավունքի տեսաբաններն առաջին հերթին առանձնացնում են դրա կարգավորիչ, կազմակերպչական, պահպանական կամ պահպանիչ գործառույթները²: Նախ՝ պետական իշխանությունը ինքնիշխան (սուվերեն) բնույթ ունի, այսինքն՝ նա իր գործառույթներն իրականացնելիս ինքնուրույն է և անկախ ամեն մի այլ իշխանությունից ինչպես երկրի ներսում, այնպես էլ այլ պետությունների հետ հարաբերություններում:

Երկրորդ՝ «Պետական իշխանություն» կատեգորիան միասնական է, ուստի հարց է առաջանում՝ ինչպե՞ս հասկանալ «իշխանությունների բաժանում» հասկացությունը և չկամ արդյոք հակասականություն: **Անհրաժեշտ է նշել, որ պետական իշխանությունը բաժան-բաժան չի արվում, չի տրոհվում,** քանզի եթե իշխանության աղբյուրը և կրողը ժողովուրդն է, ապա ժողովրդին պատկանող իշխանությունը միակն է, միասնական, ժողովրդի կամքը չի կարելի մասնատել, ուստի խոսքը գործառույթների և իշխանության կառուցվածքների լիազորությունների խստիվ սահմանազատման մասին է, որպեսզի ապահովվի իշխանություններից յուրաքանչյուրի անկախության բարձր աստիճանը, հակակշիռների և զսպումների համակարգի ստեղծումը՝ բացառելով այդ իշխանություններից որևէ մեկի կողմից ամբողջ իշխանության բռնատիրումը: Սա է իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսության (սկզբունքի) գլխավոր իմաստը: Նույն կարծիքին էր նաև մինչհեղափոխական շրջանի հայտնի իրավագետ Շերշենևիչը, որը գտնում էր, որ «Իրենց ուժով հավասար երեք իշխանու-

¹ Տե՛ս **Dresen, F.J. and Pomeranz, W.E.** Separation of Powers in Russia and Ukraine: a comparative perspective. Conference proceedings, Washington, Woodrow Wilson international Center for Scholars, 2011, էջ 9:

² Տե՛ս **Խաչատրյան Հ.Ն.**, Իշխանությունների տարանջատում և պառլամենտարիզմ: Եր., «Արեգ», 1994, էջ 5-25:

յուններ գոյություն ունենալ չեն կարող: Օրենսդրությունը, գործադրումը (կառավարումը) և դատարանը ոչ թե երեք իշխանություններ են, այլ ամբողջական, միասնական, անբաժանելի պետական իշխանության երեք ձևերն են կամ, ինչպես ասում են, իշխանության երեք գործառույթները»¹:

Ըստ հողվածի հեղինակի² իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իմաստը հենց այն է, որ հնարավոր լինի խուսափել դրանց հակամարտությունից, վերին աստիճանը բարձրանալու նրանց ձգտումից ու բախումներից, որպեսզի բացառվի մեկ մարմնի կամ անձի ձեռքում պետական իշխանության գործառույթների կենտրոնացումը:

Ժամանակի ընթացքում նշված սկզբունքի վերաբերյալ ձևավորված տեսակետների հիման վրա զարգացել են իշխանությունների բաժանման և հավասարակշռման «կոշտ» և «ճկուն» նմուշօրինակները:

«Կոշտ» նմուշօրինակը հատուկ է նախագահական կառավարման ձև ունեցող պետություններին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ մոդելի զարգացումը կապված է ԱՄՆ-ի սահմանադրության հետ, այն անվանվում է նաև ամերիկյան նմուշօրինակ:

«Ճկուն» նմուշօրինակը հատուկ է խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրա ծագումը կապված է Մեծ Բրիտանիայի հետ, այն անվանվում է նաև բրիտանական նմուշօրինակ, որի հիմքում ընկած են Զ. Լոքի գաղափարները:

Տեսական գրականության մեջ առկա են մի շարք աշխատություններ, որոնք վերլուծության առարկա են դարձրել իշխանությունների բաժանման և հավասարակշռման տարբեր նմուշօրինակների դրական և բացասական կողմերը, այդուհանդերձ, դրա արդյունքում չի հաջողվել ձևավորել որևէ նմուշօրինակի ակնհայտ առավելությունն ընդգծող միանշանակ ընդունելի հայեցակարգ: ՄԻԵԴ-ը՝ նույնպես նշում է, որ գոյություն չունեն իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի վերաբերյալ միասնական մոտեցումներ: Մասնավորապես

¹ Տե՛ս **Шершеневич Г.Ф.** Общее учение о праве и государстве. - М., 1911, էջ 34: Մանրամասն տե՛ս նաև **Козбаненко В.** Правовые основы государственного управления. Общая часть. Учебное и научно-практическое пособие. - М., 2003:

Քլեյնը և մյուսներն ընդդեմ Նիդերլանդների գործով նշվում է, որ «ո՛չ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածը և ո՛չ էլ որևէ այլ դրույթ չի պահանջում պետություններից համապատասխանեցնել իշխանության ճյուղերի փոխազդեցության թույլատրելի սահմանների հետ կապված որևէ տեսական հայեցակարգ»¹: Ուստի կարող ենք փաստել, որ տեսական գրականությունում և միջազգային իրավական ակտերում առկա չէ իշխանությունների բաժանման և հավասարակշռման նմուշօրինակներից որևէ մեկի ակնհայտ առավելությունը հիմնավորող որևէ հայեցակարգ, որի պարագայում յուրաքանչյուր պետություն ազատ է ընտրելու իշխանությունների բաժանման և հավասարակշռման նախընտրելի տեսակ:

Մեր համոզմամբ՝ դեռևս Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում ամրագրված էին դրույթներ, որոնք, առնչվելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին, բավականին առաջադիմական էին: Այս Սահմանադրության 364-րդ հոդվածի համաձայն նախարարները, ավագները, հայրապետը և մյուս բարձր պաշտոնյաներն իրավունք չունեին դուրս գալ եկեղեցու և ավագների խորհրդի կողմից սահմանված իրենց իրավասությունների շրջանակներից: Մի շարք հեղինակներ, բարձր գնահատելով հիշյալ աշխատության իրավաքաղաքական նշանակությունը, նշում են, որ այն տարանջատում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները²:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի որոշ տարրեր ընկած էին նաև Հայաստանի առաջին Հանրապետության պետական կառավարման հիմքում³: Սակայն այն իր կարճատև գոյության ընթացքում չհասցրեց ձևավորել պետական իշխանության կազմակերպման գործուն համակարգ և 1920 թվականին խորհրդայնացվեց՝

¹ Տե՛ս *Kleyn and Others v. the Netherlands*. GG, Applications No. 39343/98-39651/98-43147/98-4664/99, 2003 May 6, point 193:

² Տե՛ս **Թեյլունց Մ.**, Իշխանությունների բաժանումը և հայ իրավաքաղաքական միտքը (18-րդ դարի երկրորդ կես): «Պատմա-բանասիրական հանդես», 2001, թիվ 3, էջ 183: Տե՛ս նաև **Թանանյան Գ.** «Որոգայթ փառաց» (հրատարակման 230-ամյակի առթիվ): «Պատմա-բանասիրական հանդես», էջ 146-147:

³ Առավել մանրամասն տե՛ս **Ղազինյան Գ., Վաղարշյան Ա.**, Հայոց իրավունքի պատմության հիմնահարցեր: Հին շրջանից մինչև մեր օրեր: ԵՊՀ հրատ., Եր., 2014, էջ 149-150:

դառնալով խորհրդային իրավամտաճողության կրողը: Մի շարք սահմանդրագետներ, այդ թվում՝ Մ. Բագլայը և Բ. Գափրաշիճեն, խորհրդային Միությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը չկիրառելը պայմանավորում էին կառավարող կուսակցության գերիշխանության հանգամանքով¹: Սահմանադրագետ Մ. Սպերանսկին դեռևս 20-րդ դարի սկզբին պնդում էր, որ միասնական «պետական իշխանությունը պետք է դրսևորվի երեք իշխանություններում՝ օրենսդիր, գործադիր և դատական: Անընդունելի է, երբ մեկ իշխանությունը և՛ ընդունում է օրենքը, և՛ կատարում է այն: Այստեղից հետևություն՝ անհրաժեշտ է նրա բաժանումը»²: Այս տեսությունը ձևական ուշադրության է արժանացել նաև խորհրդային տարիներին, երբ իրականում իշխանության բաժանումը մերժված գաղափարախոսություն էր³: Նման պայմաններում արդյունավետ չէր գործում նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի բաղկացուցիչ տարր համարվող զսպումների ու հակակշիռների կառուցակարգը, որի արդյունքում իշխանության ճյուղերի միջև ապահովված չէր բավարար հավասարակշռությունը:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանության կազմակերպման հիմքում դրվեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որը, մեր կարծիքով, սահմանադրական զարգացումներով պայմանավորված՝ անցել է զարգացման մի քանի հաջորդական փուլեր:

Այսպես՝ ա) 1990-1991 թթ. գործող խորհրդային կառավարումն ավելի շատ հարում էր խորհրդարանական կառավարման ձևին, բ) 1991-1995 թթ. գործող «հիբրիդային կառավարման» նմուշօրինակը ներառում էր խորհրդային, նախագահական և կառավարման այլ ձևերի տարրեր, գ) 1995-2005 թթ. գործում էր կիսանախագահական կառավարման խորհր-

¹ Տե՛ս **Баглай М.** Конституционное право Российской Федерации. - М.: “Инфра-Кодекс”, 1996, էջ 302:

² Տե՛ս **Сперанский М.М.** План государственного преобразования графа М.М. Сперанского. - М., 1905, էջ 22-26:

³ Տե՛ս **Тихомиров Ю.А.** Разделение властей или разделение труда. “Советское государство и право”, 1967, № 1. **Тихомиров Ю.А.** Власть и управление в социалистическом обществе. - М., 1998, էջ 84-89:

դարանական ձև, դ) 2005-2018 թթ.՝ կիսանախագահական կառավարման խորհրդարանական-նախագահական ձև, ե) 2018 թվականից՝ խորհրդարանական կառավարման ձև:

Հաջորդական փոփոխությունների արդյունքում ՀՀ-ում «փորձարկվել են» իշխանությունների բաժանման և հավասարակշռման գրեթե բոլոր հիմնական ձևերը: Օբյեկտիվ հարց է առաջանում. իշխանությունների բաժանման և հավասարակշռման այդպիսի հաճախականությամբ փոփոխությունը նպաստե՞լ է արդյոք նշված սկզբունքի արդյունավետ կիրառմանը:

Նշված հարցադրման շրջանակներում հարկ է նշել, որ յուրաքանչյուր պետությունում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ ապահովման տեսանկյունից առանցքային կարևորություն ունեն սահմանադրական կայունության ապահովման միջոցով ձևավորված, այդ թվում՝ քննարկվող սկզբունքին վերաբերող սահմանադրական արժեքների պահպանումը և զարգացումը: Այս պնդումը հիմնավորվում է նաև միջազգային փորձի վերլուծությամբ, օրինակ՝ Անգլիայում և ԱՄՆ-ում, որտեղ համապատասխանաբար արդյունավետ գործում են իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական և նախագահական ձևեր, որոնք հիշյալ պետություններում դարերի ընթացքում արմատավորվել և կայունության երաշխավորման շնորհիվ դարձել են պետական կառավարման մշակույթի անբաժան տարրեր:

Սահմանադրական կայունությունը պետության սահմանադրականության ամրապնդման և զարգացման նախապայման է, որը ենթադրում է ձևավորված արժեքների շարունակական զարգացման միջոցով սահմանադրության կայունության ամրապնդում: Սակայն չենք կարող չընդունել նաև, որ սահմանադրությունը, լինելով «կենդանի փաստաթուղթ», հասարակական զարգացումներին համընթաց «վերափոխման», «ժամանակակից դառնալու» անհրաժեշտություն է ձեռք բերում: Մի շարք պետություններում, որտեղ գոյություն ունի սահմանադրական մշակույթի զարգացման բարձր մակարդակ, ինչպես նաև առկա է կայացած սահմանադրական արդարադատության ինստիտուտ, սահմանադրու-

յունն առավելապես զարգանում է սահմանադրական նորմերի շարունակական մեկնաբանման միջոցով: Այս առումով թերևս հիշատակության արժանի է Լ. Ֆրիդմենի այն դիտարկումը, համաձայն որի՝ ԱՄՆ-ի Գերագույն դատարանը պարզապես չի մեկնաբանում սահմանադրության տեքստը, այսինքն՝ միայն չի հետազոտում, թե ինչ են սահմանադրության դրույթներում նկատի ունեցել գրողները, այլ անում է ավելին՝ մշակում և ընդլայնում է սահմանադրական դոկտրինը¹: Հենց այս հանգամանքով է պայմանավորված այն, որ ԱՄՆ-ի Սահմանադրության տեքստում մինչ օրս քիչ թվով փոփոխություններ են կատարվել, իսկ կատարվածներն էլ այսպես կոչված «հիմնարար» բնույթ չեն կրել, այսինքն՝ կառավարման ձևի փոփոխություն չեն առաջացրել:

Արձանագրելով, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսակների «հաճախակի» փոփոխությունը չի նպաստում նշված սկզբունքի պատշաճ կիրառման համար անհրաժեշտ սահմանադրական արժեքների պահպանմանն ու ամրապնդմանը՝ հարկ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետությունում այս սկզբունքը բնութագրող ներկայիս մարտահրավերները կարող են առավել ամբողջական բացահայտվել այն դեպքում, երբ համալիր կերպով ուսումնասիրվեն մինչև 2015 թվականի ՀՀ Սահմանադրության փոփոխությունը Հայաստանի Հանրապետությունում ամրագրված իշխանությունների բաժանման և հավասարակշռման տեսակներից յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունները՝ վերջնականորեն հասկանալու համար, թե ինչ գործոններ են ազդել իշխանությունների բաժանման և հավասարակշռման այսպես կոչված հայաստանյան մոդելի ձևավորման ու զարգացման վրա:

Մինչև 2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում ամրագրված իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելները բնութագրող հիմնական հատկանիշները հեղինակն անհրաժեշտ է համարում դիտարկել հետևյալ հարցերի համատեքստում՝ ա) որքանով էր ապահովված պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի ինստիտուցիո-

¹ Տե՛ս **Фридмен Л.** Введение в американское право. - М.: “Прогресс”, 1988, էջ 286:

նալ բաժանումը, բ) որքանով էր ապահովված պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի հստակ բաժանումը, գ) որքանով էր ապահովված պետական իշխանության ճյուղերի անձնակազմերի առանձնացումը, դ) պետական իշխանության ճյուղերի միջև գործում էին արդյոք զսպումների և հավասարակշռման այնպիսի կառուցակարգեր, որոնց միջոցով հնարավոր կլիներ իշխանության ճյուղերի միջև ապահովել սահմանադրական հավասարակշռվածություն, ե) գործում էր արդյոք իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման արդյունավետ համակարգ:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքն առաջին անգամ նորմատիվ-իրավական ամրագրում ստացավ 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագրում¹, որի 9-րդ կետում, ի թիվս այլ սկզբունքների, նշվում էր նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքը: 1991 թվականի սեպտեմբերի 25-ին ընդունվեց «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» օրենքը, որի 3-րդ հոդվածում ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը: Օրենսդիր իշխանությունը վերապահվեց ՀՀ Գերագույն խորհրդին, գործադիր իշխանությունը՝ Հանրապետության նախագահին, իսկ դատական իշխանության մասով հստակ ամրագրում տրված չէր, միայն նշվում էր, որ ՀՀ դատական իշխանությունների համակարգը, իրավասությունների շրջանակը և փոխհարաբերությունների հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ (4-6-րդ հոդվածներ):

1990-1995 թվականների գործող իրավակարգավորումների պայմաններում պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգը հստակեցված չէր: «Գերագույն խորհրդի մասին» օրենքի 10-րդ

¹ Անկախության հռչակագրի հիման վրա իրավական բարեփոխումների հիմնական ուղղությունների մասին առավել մանրամասն տես **Վաղարշյան Ա.**, Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասարակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը 1990-1991 թթ.: «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» գիտական հանդես, 2015, թիվ 3 (18), էջ 3-15:

հողվածի համաձայն՝ ՀՀ Գերագույն խորհուրդը սահմանում էր պետական իշխանության, պետական կառավարման և դատական իշխանության մարմինների իրավասությունը, կազմակերպման և գործունեության կարգը: Մեր կարծիքով՝ նշված նորմը խնդրահարույց էր այն տեսանկյունից, որ միմյանցից առանձնացնում էր «պետական իշխանության», «պետական կառավարման» և «դատական իշխանության» մարմիններ հասկացությունները: Ավելին, այսպիսի մոտեցումը չէր բխում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքից, քանզի դատական իշխանությունը պետական իշխանության բաղկացուցիչ է, հետևաբար և՛ այն պետք է դիտարկվեր պետական իշխանության մարմինների համակարգում:

«Հայաստանի անկախության մասին» հռչակագրի ընդունումից հետո մինչև «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» ՀՀ օրենքի ընդունումն (01.08.1991 թ.) ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում պետական իշխանության բարձրագույն մարմինը ՀՀ Գերագույն խորհուրդն էր, որի ձեռքում կենտրոնացված էին պետական իշխանության հիմնական գործառույթները: «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» օրենքի ընդունումից հետո պետական իշխանության մարմինների համակարգում իր գործառույթների ծավալով առանցքային դերակատարություն ստանձնեց Հանրապետության Նախագահը, իսկ ՀՀ Գերագույն խորհրդի գործառույթները և լիազորությունները խիստ նվազեցին: Այդ պարագայում Հանրապետության Նախագահը ձեռք բերեց լայն լիազորություններ և քաղաքական դերակատարություն: Մինևույն ժամանակ, ՀՀ Գերագույն խորհրդին չվերապահվեցին այնպիսի լիազորություններ, որոնց միջոցով հնարավոր կլիներ զսպել և հավասարակշռել Հանրապետության Նախագահին:

Այսպիսով, 1990-1995 թվականները կարելի է դիտարկել որպես անցումային ժամանակաշրջան, որի ընթացքում առաջ քաշվեցին պետական իշխանության կազմակերպման հիմնադրույթները: Այդ համատեքստում ուրվագծվեց նաև այն մոտեցումը, որ պետական իշխանության կազմակերպման հիմքում պետք է ընկած լինի իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը:

Քննարկվող սկզբունքի ապահովման տեսանկյունից առանցքային կարևորություն ունեցավ 1995 թվականի ՀՀ Սահմանադրությունը, որով նախատեսվեց կիսանախագահական կառավարման՝ նախագահական-խորհրդարանական մոդել: Պետական իշխանության կազմակերպման հիմքում դրվեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որն ամրագրվեց Սահմանադրության 5-րդ հոդվածում: Ինչ խոսք, սահմանադրական մակարդակով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ամրագրումն իրապես ձեռքբերում էր: Սակայն Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված դրույթը, մեր կարծիքով, հակասական էր: Խնդիրն այն է, որ Սահմանադրության նշված հոդվածում նշվում էր, որ մի կողմից պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ մյուս կողմից՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել այնպիսի գործողություններ որոնց համար լիազորված են օրենսդրությամբ: «Օրենսդրությամբ» հասկացությունը խնդրահարույց էր, քանի որ այդ պայմաններում պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց լիազորություններ կարող են վերապահվել նաև օրենսդրության մաս հանդիսացող ենթաօրենսդրական ակտերով, ինչը, մեր կարծիքով, չէր բխում Սահմանադրության 5-րդ հոդվածի դրույթից, ըստ որի՝ պետական իշխանությունը պետք է իրականացվեր Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

1995 թվականի Սահմանադրության՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հետ կապված առանցքային դրույթներից մեկն էլ թերևս այն էր, որ դրա 49-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրեց, որ Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հանրապետության նախագահին լայն սահմանադրական լիազորությունների տրամադրումն ինքնին հանգեցրեց պետական իշխանության մյուս ճյուղերի հետ հարաբերություններում գործադիր իշխանության՝ ի դեմս Հանրապետության նախագահի, գերիշխանության: Հետևաբար, այդ պարագայում բավակա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴՄՏՄՐԱՆ ՏԵՂԵԿՎԳԻՐ 2(114)2024

նին դժվար էր խոսել Հանրապետության Նախագահի կողմից պետական իշխանության ճյուղերի բնականոն գործունեության և դրանց միջև հավասարակշռության ապահովման մասին:

1995 թվականի Սահմանադրությամբ հստակեցված չէր գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգը: Սահմանադրության 85-րդ հոդվածում նշվում էր, որ գործադիր իշխանությունն իրականացնում է Կառավարությունը: Սահմանադրության 86-րդ հոդվածում արդեն նշված էր, որ Կառավարության նիստերը հրավիրում և վարում է Հանրապետության նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետը: Փաստորեն, մի կողմից Սահմանադրությունն ամրագրում էր, որ գործադիր իշխանությունն իրականացնում է Կառավարությունը, բայց և նշում էր, որ Կառավարության նիստերը ղեկավարում է Հանրապետության նախագահը: Այս պայմաններում անորոշ էր մնում գործադիր իշխանության ոլորտում Հանրապետության Նախագահի իրավական կարգավիճակը:

1995 թվականի Սահմանադրությամբ կառավարության գործունեության կազմակերպման ոլորտում առանցքային դերակատարությունը Հանրապետության Նախագահինն էր: Կառավարությունը միանձնյա ձևավորվում էր նրա կողմից, հետևաբար և՛ քաղաքական պատասխանատվություն էր կրում Հանրապետության Նախագահի առջև, իսկ Ազգային ժողովն այդ հարցում լիազորություն չունէր:

Սահմանադրության 1995 թ. տեքստում երաշխավորված չէր նաև Ազգային ժողովի գործունեության կայունությունը: Հանրապետության նախագահը Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում իր հայեցողությամբ ցանկացած ժամանակ կարող էր արձակել Ազգային ժողովը, ինչը խաթարում էր իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև սահմանադրական հաշվեկշռվածությունը՝ հոգուտ գործադիր իշխանության:

Սահմանադրությամբ հստակեցված չէր նաև իշխանության ճյուղերի գործառության բաժանումը: Այդ տեսանկյունից խնդրահարույց էր Սահմանադրության 56-րդ հոդվածը, համաձայն որի՝ Հանրապետության նախագահը հրապարակում էր հրամանագրեր և կարգադրություն-

ներ, որոնք չէին կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին: Նշված դրույթը Հանրապետության նախագահին հնարավորություն էր տալիս հրապարակելու ակտեր, որոնք իրականում չէին հակասում Սահմանադրությանը և օրենքներին, սակայն կարգավորում էին այնպիսի իրավահարաբերություններ, որոնց կարգավորումը Հանրապետության նախագահի սահմանադրական լիազորությունների շրջանակից դուրս էր: Բացի այդ, Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված էր օրենսդրության պատվիրակման (դելեգավորման) ինստիտուտը, որի պայմաններում կառավարությունը կարող էր ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, ինչն ինքնին չէր դիտարկվում որպես իշխանության ճյուղերի գործառության թափանցանք:

Այսպիսով՝ Սահմանադրության 1995 թ. տեքստում գործող իշխանությունների բաժանման և հավասարակշռման մոդելը բնութագրվում էր հետևյալ հատկանիշներով.

ա) իշխանությունների գործառության ինստիտուցիոնալ բաժանումը հստակ չէր.

բ) օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի միջև խախտված էր հավասարակշռվածությունը, քանի որ գործում էր հզոր լիազորություններով օժտված Հանրապետության նախագահ, ինչը հանգեցրել էր բավականին սահմանափակ լիազորություններ և քաղաքական դերակատարություն ունեցող Ազգային ժողովի առկայության.

գ) Ազգային ժողովի գործունեության կայունությունը երաշխավորված չէր, քանի որ այն ցանկացած պահի կարող էր արձակվել Հանրապետության նախագահի կողմից.

դ) Հանրապետության նախագահը միանձնյա կերպով արտախորհրդարանական ճանապարհով ձևավորում էր կառավարություն և կարող էր ցանկացած ժամանակ իր հայեցողությամբ պաշտոնանկ անել վարչապետին.

ե) բավականին թույլ էին դատական իշխանության անկախության երաշխիքները, որի արդյունքում դատական իշխանությունն ըստ էության սերտաճած էր գործադիր իշխանության հետ: Դրա վառ ապացույցը բոլոր դատավորներին ՀՀ նախագահի կողմից նշանակելը, ինչպես նաև

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

նրանց կարգապահական տույժերի ենթարկելու մասին իրավակարգավորումներն էին:

2005 թվականին Հայաստանի Հանրապետությունում կատարվեցին սահմանադրական փոփոխություններ, որոնց արդյունքում անցում կատարվեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական-նախագահական մոդելի: Այս մոդելին անցնելով՝ օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի ոլորտներում Հանրապետության նախագահի լիազորությունները որոշ չափով նվազեցին. ընդլայնվեց Ազգային ժողովի լիազորությունների շրջանակը: Հանրապետության նախագահը մասամբ զրկվեց «միանձնյա» կառավարություն ձևավորելու լիազորությունից՝ լիազորությունը կիսելով Ազգային ժողովի հետ: Բացի այդ, նա զրկվեց իր հայեցողությամբ վարչապետին պաշտոնանկ անելու լիազորությունից, այդ լիազորությունը փոխանցվեց Ազգային ժողովին: Սահմանադրությամբ ամրագրվեցին Ազգային ժողովի արձակման հիմքերը և կարգը, ուստի Հանրապետության նախագահը զրկվեց նաև Ազգային ժողովն արձակելու հայեցողական իր լիազորությունից:

Չնայած վերը կատարված փոփոխություններին՝ կիսանախագահական մոդելի առկայությամբ նույնպես գործադիր իշխանությունը շարունակում էր երկատված բնույթ ունենալ, թեկուզև գործադիր իշխանության ոլորտում նախագահ - կառավարություն փոխհարաբերություններում առաջինիս դերակատարությունը նվազեց:

Թեև Սահմանադրության 2005 թ. տեքստում Հանրապետության նախագահի լիազորությունները նվազեցին, այդուհանդերձ իրականում նրա դերակատարության ծավալը կախված էր Նախագահ - Ազգային ժողով փոխհարաբերությունների բնույթից: Մասնավորապես այն դեպքում, երբ Հանրապետության նախագահը չուներ խորհրդարանական մեծամասնության աջակցությունը, վարչապետը կարող էր Հանրապետության նախագահից ձեռք բերել գործունեության ինքնուրույնություն, եթե վայելում էր խորհրդարանական մեծամասնության աջակցությունը: Մյուս կողմից, եթե Հանրապետության նախագահն ուներ խորհրդարանական մեծամասնության աջակցությունը, ապա վարչապետը դառնում էր նրա քաղաքական ծրագրերն իրականացնողը:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ընդլայնվեցին Ազգային ժողովի լիազորությունները, ինչը պայմանավորված էր հետևյալ գործոններով. ա) Ազգային ժողովն այլևս չէր գտնվում արձակման մշտական սպառնալիքի տակ, բ) ընդլայնվեցին Ազգային ժողովի լիազորությունները կառավարության ձևավորման հարցում, գ) վերացվեց օրենսդրական պատվիրակման ինստիտուտը, դ) սահմանադրական մակարդակով հստակեցվեց միջազգային պայմանագրերի այն շրջանակը, որ պետք է վավերացվեր Ազգային ժողովի կողմից:

2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում նույնպես չհաջողվեց պետական իշխանության ճյուղերի միջև ապահովել բավարար սահմանադրական հավասարակշռվածություն: Առկա էր քաղաքական գերկենտրոնացման և սահմանադրական ճգնաժամերի առաջացման իրական հնարավորություն¹: Այն դեպքերում, երբ Հանրապետության նախագահի և խորհրդարանական մեծամասնության քաղաքական հայացքները տարբերվում էին, կարող էր առաջանալ սահմանադրական ճգնաժամ:

Եզրակացությունն այն է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիշյալ մոդելների դեպքում Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ ու գործառության ինստիտուցիոնալ հստակության և իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության ապահովման տեսանկյունից միշտ էլ եղել են խնդիրներ: 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված իրավակարգավորումների պայմաններում ձևավորվել էր պետական իշխանության գործառույթների և լիազորությունների չհավասարակշռված գերկենտրոնացում Հանրապետության նախագահի ձեռքում, ինչն անմիջականորեն հանգեցրել էր պետական իշխանության օրենսդիր և դատական իշխանության ճյուղերի նկատմամբ գործադիր իշխանության գերիշխանության: 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական մակարդակում Հանրապետության նախագահի գործառույթների և լիազոր-

¹ Առավել մանրամասն տես «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»: Եր., «Տիգրան Մեծ», 2014, էջ 18-21:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՄՏԱՐԱՆ 2(114)2024

րությունների շրջանակը որոշ չափով սահմանափակվեց, սակայն դրանից Հանրապետության նախագահի քաղաքական դերակատարությունը և գերիշխող դիրքը չնվազեցին:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ անցում կատարվեց խորհրդարանական կառավարման ձևի, ինչը հանգեցրեց նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի անցման: Իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական ճկուն մոդելը բավականին արդյունավետ կիրառվում է խորհրդարանական կառավարման ձև ունեցող եվրոպական մի շարք առաջատար պետություններում, սակայն դա դեռ բավարար երաշխիք չէ հուսալու, որ այն կարող է արդյունավետ գործել նաև Հայաստանի Հանրապետությունում: Թերևս այդ մտայնությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման մոդելին անցնելուց հետո էլ հասարակական-քաղաքական շրջանակներում շարունակվում են քննարկումներն առ այն, թե արդյոք խորհրդարանական մոդելին անցումը լուծում է քաղաքական համակարգի գերկենտրոնացվածության, գործադիր իշխանության համակարգում գործառույթների հստակ սահմանազատման, Ազգային ժողովի քաղաքական դերակատարության բարձրացման, արդարադատության համակարգի անկախության երաշխավորման և նմանատիպ առանցքային հարցերը, որոնք վեր են հանվել դեռևս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում¹:

Արձանագրենք, որ վերը նշված մտահոգությունը գոյության իրավունք ունի և հիմնավոր է թվում այն համատեքստում, որ Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների իրականացման առանցքային հարցերի շրջանակը նույնպես շոշափվում էր վերը նշված խնդիրների լուծման հետ: Սակայն, ինչպես ցույց տվեց իրականությունը՝ նշված խնդիրները 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում չհաջողվեց լուծել և համեմատաբար կարճ ժամկետում (10 տարում) այդ խնդիր-

¹ Այս մասին առավել մանրամասն տես «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի» 10-րդ էջը:

ների լուծման նպատակով սահմանադրական նոր փոփոխությունների իրականացման անհրաժեշտություն առաջացավ:

Կարծում ենք, որ գործող խմբագրությամբ Սահմանադրությամբ իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելին անցումն ինքնին դեռևս բավարար երաշխիք չէ զարգացնելու այն պնդումը, որ Հայաստանի Հանրապետությունում լուծվել են պետական իշխանության առջև ծառայած խնդիրները: Սակայն խորհրդարանական մոդելին անցումը բոլոր դեպքերում կարող է իշխանության կազմակերպման հիմքում այնպիսի մոտեցումներ ներդնելու նոր խթան հանդիսանալ, որոնք հիմնավորապես երաշխիք կդառնան Սահմանադրությամբ ամրագրված կառուցակարգերի արդյունավետ կիրառումն ապահովելու համար: Գտնում ենք, որ այսօր էլ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելին անցումն ինքնին բարդ գործընթաց է՝ պայմանավորված կատարվելիք փոփոխությունների համալիր բնույթով և առանձնահատկություններով: Իսկ խորհրդարանական մոդելին սահուն, առանց սահմանադրական ճգնաժամերի անցումը չապահովելը, ապանակ իշխանության ճյուղերի միջև զսպումների, հավասարակշռման և փոխլրացումների գործուն մեխանիզմների անլիարժեքությունն անխուսափելիորեն կհանգեցնեն գործառույթ-ինստիտուտ-լիազորություն սահմանադրական շղթայի խաթարմանը՝ իր բացասական հետևանքներով: Նշվածից խուսափելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունների հիմքում դնել այնպիսի մոտեցումներ, որոնք խարսխված կլինեն խորհրդարանական մոդելին բնորոշ առանձնահատկությունների ընկալման և գործնականում դրանց կիրառումն ապահովելու վրա: Ըստ այդմ, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելը բնութագրող հիմնական հատկանիշները և առկա հիմնախնդիրների վերհանումը անհրաժեշտ ենք համարում դիտարկել հետևյալ շրջանակներում՝ ա) հստակեցված է արդյոք պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգը, բ) ինչպիսի՞ ինստիտուցիոնալ և գործառույթային

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՄՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ 2(114)2024

կարգավիճակ է ձեռք բերել Հանրապետության նախագահը, գ) Հանրապետության նախագահին վերապահվել են բավարար լիազորություններ խորհրդարանական մոդելի պարագայում իր գործառույթները պատշաճ իրականացնելու համար, դ) խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում ինչպիսի՞ գործառույթային դերակատարություն է ստանձնել օրենսդիր իշխանությունը՝ ի դեմս Ազգային ժողովի, ե) նախատեսվել են օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ և գործուն վերահսկողության իրականացման բավարար երաշխիքներ, զ) ապահովվել է դատական իշխանության անկախությունը, է) խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում ինչպիսի՞ գործառույթային դերակատարություն են ստանձնել կառավարությունը և վարչապետը:

Մեր կարծիքով, թվարկված հարցերից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության և մշակման կարիք ունի, որոնց կանդիդատները հաջորդ հոդվածներում:

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. **Հարությունյան Ա.**, Եվրոպական միության իրավունքի հիմունքները: Եր., 2011:
2. **Սաֆարյան Գ., Եսայան Ա.**, Հռոմեական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Եր., 2011, էջ 35:
3. **Պապայան Ռ.Ա.**, Ժամանակակից իրավունքի քրիստոնեական արմատները: Մ., «Նորմա», 2002:
4. **Պետրոսյան Ռ.Գ.**, Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները: Եր., «Ոսկան Երևանցի», 2008:
5. **Հարությունյան Գ.Գ.**, Սահմանադրությունից սահմանադրականություն: Եր., «Նժար», 2004:

6. **Խաչատրյան Հ.Ն.**, Իշխանությունների տարանջատում և պառլամենտարիզմ: Եր., «Արեգ» 1994:

7. **Թելունց Մ.**, Իշխանությունների բաժանումը և հայ իրավաքաղաքական միտքը (18-րդ դարի երկրորդ կես): «Պատմաբանասիրական հանդես», 2001, թիվ 3: **Թանանյան Գ.** «Որոգայթ փառաց» (հրատարակման 230-ամյակի առթիվ): «Պատմաբանասիրական հանդես»:

8. **Ղազինյան Գ., Վաղարշյան Ա.**, Հայոց իրավունքի պատմության հիմնահարցեր: Հին շրջանից մինչև մեր օրեր: Եր., ԵՊՀ հրատ., 2014:

9. **Վաղարշյան Ա.**, Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասարակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը 1990-1991 թթ.: «Բանբեր Երևանի համալսարանի, Իրավագիտություն» գիտական հանդես, 2015, թիվ 3 (18):

10. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»: Եր., «Տիգրան Մեծ»:

11. National Assembly of France, “Declaration of the Rights of Man and Citizen”. 1789, Article 16.

12. **Kleyn and Others v. the Netherlands.** GG, Applications No. 39343/98-39651/98-43147/98-4664/99, 2003 May 6, point 193.

13. “The dialogues of Plato”. Translated by B. Jowett, “Oxford University Press”, 1982.

14. **Vile, M.** Politics in the USA, New York: Manchester University Press, 1999.

15. **Dresen, F.J. and Pomeranz, W.E.** Separation of Powers in Russia and Ukraine: a comparative perspective. Conference proceedings, Washington, Woodrow Wilson international Center for Scholars, 2011.

16. **Walbank, F.W.** Polybius. “University of California Press”, 1990.

17. **Locke, J.** Two Treatises of Government, “Cambridge University Press”, 1988.

18. **Bode, M.** Political philosophy of John Locke, “GRIN Verlag”, 2008.

19. **Vile, M.** Constitutionalism and the Separation of Powers. Oxford. “Oxford University press”, 2nd ed, 1998.

20. **Montesquieu**. “The Spirit of Laws”. translated by Thomas Nugent, 1752, “Kitchener”, 2001.

21. **Краснов Ю.К.** Принцип разделения властей в России: теория и практика // Право и управление. XXI. век, 2005. № 1.

22. **Нерсисянц В.С.** Платон. - М.: “Юрид. Лит”, 1984.

23. **Нерсисянц В.С.** Философия права Гегеля. - М.: “Юрист”, 1998.

24. **Гегель**. Философия права. - М.: 1990.

25. **Нерсисянц В.С.** Общая теория права и государства. - М., 1999.

26. **Шершеневич Г.Ф.** Общее учение о праве и государстве. - М., 1911.

27. **Козбаненко В.** Правовые основы государственного управления, общая часть: Учебное и научно-практическое пособие. - М., 2003.

28. **Баглай М.** Конституционное право Российской Федерации. - М.: “Инфра-Кодекс”, 1996.

29. **Сперанский М.М.** План государственного преобразования графа М.М. Сперанского. - М., 1905.

30. **Тихомиров Ю.А.** Разделение властей или разделение труда // “Советское государство и право”, 1967, № 1.

31. **Тихомиров Ю.А.** Власть и управление в социалистическом обществе. - М., 1998.

32. **Фридмен Л.** Введение в американское право. - М., “Прогресс”, 1988.

РАЗДЕЛЕНИЕ ВЛАСТИ КАК НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ ДЛЯ СТАНОВЛЕНИЯ ПАРЛАМЕНТАРИЗМА

Аннотация

В статье подробно анализируется связь полного формирования разделения властей и теории балансирования, а также возникновения конституционного принципа с политическими событиями Англии, Франции и США в XVII-XVIII веках.

Выделяя три ветви государственной власти: законодательную, исполнительную и федеральную (в основу такого разделения, в отличие от мыслителей античного периода, полагавших разделение государственных функций между различными органами государственной власти, где функция принятия законов принадлежала законодательной власти (парламенту), функция исполнения законов и наказания – исполнительной власти (королю), а функция формирования союзов и заключения сделок – федеральной власти), концептуально Дж. Локк завершил теорию разделения и баланса властей. Она, по современному пониманию, и не была полной, и его идеи подвергались критике с разных точек зрения, тем не менее юридическое и политическое значение выдвинутой им теории высоко оценивалось, потому что она не ограничивалась определением механической силы.

В статье также показано, что в развитии принципа разделения и балансирования властей ключевую роль имел Ш. Монтескье, который, в отличие от Дж. Локка, отделил судебную власть от исполнительной власти.

Была сделана ссылка также на основные вопросы, связанные с теорией разделения и балансирования властей в отечественной юридической практике.

Принимая во внимание все вышеизложенное, по мнению автора статьи, смыслом принципа разделения и балансирования властей является возможность избежания их конфликта, их желания подняться на высший уровень, чтобы исключить концентрацию функций государственной власти в руках одного органа или лица.

Ключевые слова: Конституция, законодательный, исполнительный, судебный, разделение власти и баланс, переходный период, полу-президентская модель, Верховный Совет РА, парламентское правление, структуры ограничений и балансов.

**POWER SHARING
AS A NECESSARY CONDITION
FOR THE FORMATION OF PARLIAMENTARISM**

Annotation

The article analyzes in detail that the full formation of the separation of powers and the theory of balancing, as well as the emergence of the constitutional principle, is associated with political events developing in England, France and the USA in the 17th and 18th centuries.

Distinguishing three branches of government: legislative, executive and federal, the basis of such a division, in contrast to the thinkers of the ancient period, who believed the division of state functions between various government bodies, where the function of passing laws was on the legislative branch (parliament), the function of executing laws and punishment was on the executive branch (king), and the function of forming alliances and concluding deals is to federal power, conceptually J. Locke completed the theory of separation and balance of powers. According to modern understanding, it was not complete and his ideas were criticized from different points of view, however, at the same time, the legal and political significance of the theory he put forward was highly appreciated, because they were not limited to the definition of mechanical force. The article also shows that S. Montesquieu played a key role in the development of the principle of separation and balancing of powers, which unlike J. Locke, separated the judicial power from the executive power.

Reference was also made to the main issues related to the theory of separation and balancing of powers in domestic legal practice.

Taking into account all of the above, in the opinion of the author of the article, the meaning of the principle of power of separation and balancing of powers is that it is possible to avoid their conflict, their desire to rise to the highest level, in order to exclude the concentration of functions of state power in the hands of one body or person.

Keywords: Constitution, legislative, executive, judicial, separation of powers and balance, transition period, semi-presidential model, Supreme Council of the Republic of Armenia, parliamentary government, structures of limits and balances.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 29.04.2024 թ., տրվել է գրախոսության 03.05.2024 թ., ընդունվել է տպագրության 07.05.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.2-163



ԴԱՎԻԹ ՀԱԿՈՐՅԱՆ

«Սահմանադրական դատարանի նախագահի օգնական»

**ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամփոփագիր

Հոդվածում հեղինակի կողմից ներկայացվում են չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվում ազգերի ինքնորոշման իրավունքին, այդ իրավունքի իրացման խնդրին, նշանակությանը, դերին ու բովանդակությանը: Առանձին վերլուծության են ենթարկվել չճանաչված պետություններին ներկայացվող չափանիշների վերաբերյալ առանձին հեղինակների տեսակետներն ու մոտեցումները, ինչպես նաև գոյություն ունեցող միջազգային փորձն ու պրակտիկան: Փորձ է արվել չճանաչված պետությունների հիմնախնդրի ուսումնասիրությունն իրականացնել նաև տարածքային զինված հակամարտությունների համատեքստում, որոնց արդյունքում առաջացել են այդ պետությունները:

Առանձին անդրադարձ է կատարվել նորաստեղծ կամ նորանկախ պետությունների սահմանների խնդրին և այդ հարցով ՄԱԿ-ի Միջազգային դատարանի (Մալիի Հանրապետության և Բուրկինա Ֆասոյի միջև վեճով) 1986 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմանը և uti possidetis սկզբունքի վերաբերյալ հայտնած դիրքորոշմանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Հիմնաբառեր. չճանաչված պետություն, ազգերի ինքնորոշում, հակամարտություն, սահմաններ, ճանաչում, մասնակի ճանաչում, կարգավիճակ, իրավական բնութագրիչ:

1. Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի քննարկումը օրինաչափությունները

Ազգերի ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից է: Այն որպես նորմ ամրագրված է Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) կանոնադրության 1-ին հոդվածում և իր հետագա ամրագրումն է ստացել նաև տարբեր միջազգային փաստաթղթերում¹: ՄԱԿ-ի պատմությունը վկայում է, որ կազմակերպությունը ներգրավված է եղել պետությունների ինքնորոշման գործընթացում: Մինչև 1979 թվականի սկիզբը, այսինքն ՄԱԿ-ի կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո, հայտնի է ինքնորոշման իրավունքի իրացմամբ անկախ պետականության ստեղծման 70 դեպք, որոնք վերաբերում են տարածքներին: Առնվազն երկու դեպքում ինքնորոշումը տեղի է ունեցել այլ պետության հետ միավորմամբ, իսկ երկու դեպքում՝ անկախ պետության հետ ազատ ասոցիացիայի եղանակով²: Այսօր էլ միջազգային պրակտիկայում չճանաչված պետությունների հարցը պատմաքաղաքական և էթնիկ աշխարհագրական բարդ գործընթացներում մնում է արդիական: Հարկ է նկատել, որ չճանաչված պետությունն իր բնույթով հանդիսանում է պետականության որոշակի անցումային փուլ և այդ անցումային փուլը կարող է երկար պահպանվել, ինչպես Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության պարագայում, կամ դառնալ լիարժեք անկախ պետություն, ինչպես Էրիթրեայի դեպքում: Առանձին դեպքերում նման պետությունները կարող են այսպես կոչված կլանվել այն պետության կողմից, որից փորձել են անկախանալ, ինչպես օրինակ Սաարի դեպքը Գերմանիայում: Գոյություն ունեցող մի շարք չճանաչված պետություններ առաջացել են դեռևս 1980 թվականից առաջ (օրինակ, Թայվանը՝ 1949 թ., Պաղեստինը՝

¹ Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախության տրամադրման մասին (1960 թ.) և Միջազգային իրավունքի սկզբունքների մասին (1970 թ.) հռչակագրեր:

² United Nations Juridical Yearbook 1980, էջ 182-183:

ՍԱՀՄԱՆԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ 2(114)2024

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1947 թվականին ՄԱԿ-ը հաստատեց Բաժանման նախագիծը Պաղեստինի համար, Սահարայի Արաբական Ժողովրդավարական Հանրապետությունը՝ 1976 թ.) և այլն:

Հետագայում արդեն չճանաչված պետությունների կազմավորման փուլ հանդիսացան 1990-ական թվականները, երբ պետություններն առաջացան էթնիկ տարածքային կոնֆլիկտի արդյունքում: Նման պետություններ են Աբխազիան, Հարավային Օսեթիան, Մերձդնեստրը և Լեռնային Ղարաբաղը: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ տարածքային առումով չճանաչված պետություններից ամենամեծ տարածքն ունեն Սահարայի Արաբական Ժողովրդավարական Հանրապետությունը և Թայվանը: Այս համատեքստում անդրադառնալով ժողովուրդների ու ազգերի ինքնորոշման իրավունքին և դրա իրացման խնդրին՝ կարևոր ենք համարում իրավագիտության պրոֆեսոր Կ.Ա. Բեկյաշևայի կարծիքը: Ըստ նրա՝ այդ սկզբունքի նորմատիվային կենսագործումը պետք է ընթանա 2 ուղղությամբ՝ կամ այդ սկզբունքը պետք է լրացնել նոր բովանդակությամբ՝ հաշվի առնելով ժամանակի պահանջները, կամ բացառել այն հիմնական սկզբունքների ցանկից՝ որպես իր նպատակին ծառայած սկզբունքի:

Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ չճանաչված պետությունն այն տարածքների ընդհանուր անվանումն է, որոնք իրենց հոչակել են ինքնիշխան պետություն և կրում են պետականության այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք պետության պաշտոնական անվանումն է, պետական խորհրդանիշների, բնակչության, տարածքի նկատմամբ իշխանության իրականացման, կառավարման համակարգի՝ ներառյալ զինված ուժերի, իրավունքի (սահմանադրության և այլ իրավական ակտերի) առկայությունը: Դրա հետ մեկտեղ նշված, պետությունները չունեն դիվանագիտական ճանաչում ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից, իսկ այդ տարածքը որպես կանոն հանդիսանում է ՄԱԿ-ի անդամ պետություններից մեկի կամ մի քանիսի ինքնիշխան տարածք:

Դրա հետ մեկտեղ, չճանաչված կարող են լինել աշխարհաքաղաքական միավորները, որոնք զրկված են լրիվ կամ մասնակի միջազգային դիվանագիտական ճանաչումից, բայց տիրապետում են պետականության

մյուս բոլոր հատկանիշներին (բնակչություն, տարածքի նկատմամբ վերահսկողություն, իրավունքի և կառավարման համակարգ, փաստացի ինքնիշխանություն): Ըստ Լանքասթերի համալսարանի պրոֆեսոր Ն. Կասպերսենի՝ ավելի մանրամասն վերլուծության դեպքում չճանաչված պետությունները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին.

1/ նրանք ձեռք են բերել դե ֆակտո անկախություն, ներառյալ տարածքի նկատմամբ վերահսկողությունը, և կարողացել են պահպանել այն առնվազն երկու տարի,

2/ նրանք չեն հասել միջազգային ճանաչման կամ ճանաչվել են առավելագույնը մի քանի պետությունների կողմից,

3/ նրանք դրսևորել են լիակատար (դե յուրե) անկախության ձգտում՝ ձևական անկախության հռչակման կամ անկախության հարցով հանրաքվեի անցկացման միջոցով: Սա տարբերում է նրանց միջազգային համակարգում առկա այլ անոմալ երևույթներից, ինչպիսիք են չկառավարվող տարածքները և պետությունները՝ պետությունների ներսում:

Այս առումով պրոֆեսոր Ս. Չերնիչենկոն իրավացիորեն նշել է պետության օբյեկտիվ բնույթի որոշակի չափանիշների համապատասխանությունը, երբ առկա է պետության՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի պետության ճանաչման խնդիր: Ըստ նրա, պետությունը պետք է ներկայացնի որոշակի հասարակություն, որին ղեկավարում է, կառավարում որպես ինքնուրույն հասարակական օրգանիզմ, դրա հետ մեկտեղ ունենա իր ժողովուրդը, իշխանություն, տարածք, որը գտնվում է այդ իշխանության ներքո: Միաժամանակ հեղինակը գտնում է, որ պետության առաջացման փաստն ինքնին բավարար չէ այն միջազգային իրավունքի սուբյեկտ դիտարկելու համար: Ըստ նրա՝ պետության առաջացումը չպետք է հակասի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին, պայմանագրերին, որոնք գործնականում արտահայտում են միջազգային հանրության ամբողջական կարծիքը, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերին: Նա նաև ընդգծել է, որ չճանաչման հարցերը կարգավորող որոշակի միասնական, ընդհանուր միջազգային իրավական նորմերի սահմանումը չի նպաստի խնդրի լուծմանը, քանի որ յուրաքանչյուր

կոնկրետ դեպք մանրակրկիտ վերլուծություն է պահանջում՝ հաշվի առնելով փոխազդեցության բոլոր գործոնները: Միաժամանակ որոշակի միջազգային իրավական մեխանիզմների սահմանումը կարող է ելակետ հանդիսանալ ընթացիկ խնդիրների լուծման ուղիների որոնման համար¹:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ «չճանաչված պետություն» հասկացությունը բավականին պայմանական է և ինչպես նշել է Ջ. Սիլանան, չճանաչված պետությունը քաղաքական տարածքային կազմավորում է, որը շատ դեպքերում կրում է պետականության խորհրդանիշներ և, առաջին հերթին, միջազգայնորեն ճանաչման բացակայության պայմաններում հիմնական տարածքի նկատմամբ իրականացնում ներքին լեգիտիմ վերահսկողություն, առանց որի չեն կարող այլ պետությունների հետ մտնել լիիրավ հարաբերությունների մեջ²: Նշվածի համատեքստում գտնում ենք, որ միջազգային հանրության կողմից պետության չճանաչված լինելը հանդիսանում է պետության կարգավիճակի իրավական բնութագրիչ: Այս համատեքստում նմանատիպ պետությունները զրկված են ակտիվ տնտեսական գործունեություն իրականացնելու, ներառյալ շահավետ տնտեսական պայմանագրեր կնքելու, համատեղ ներդրումային և ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր կյանքի կոչելու հնարավորությունից: Թեև նման ձևակերպումը մյուս կողմից նաև վիճելի է, և, ինչպես ցույց է տալիս փորձը, երբեմն չճանաչված պետություններն ունակ են իրականացնելու արտաքին տնտեսական և առևտրային գործունեություն: Միջազգային հանրության հետաքրքրությունը նմանատիպ պետությունների հանդեպ պայմանավորված է տարբեր գործոններով, օրինակ՝ գյուղատնտեսություն, տուրիզմ և այլն: Այդ պետությունների շարքին են դասվում Թայվանը, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը, Աբխազիան:

¹ Տե՛ս **Камышевский В.И.** Обзор круглого стола “Проблема непризнания государств” (г. Москва, июнь 2009 г.) // Евразийский юридический журнал. 2009. № 10 (17), URL: http://www.eurasialaw.ru/index.php?Itemid=156&catid=70:-10-17-2009&id=425:-10-17-2009&option=com_content&view=article

² Տե՛ս **Силаева З.В.** Признание независимости спорных государств в современной мировой политике // Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики. 2011. № 7 (13). - С. 135:

2. Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները

Չճանաչված պետությունների խնդիրը ժամանակակից միջազգային հարաբերություններում մնում է որպես մարտահրավեր: Անդրադառնալով չճանաչված պետությունների հիմնական տարբերակիչ հատկանիշներին՝ կարող ենք նշել, որ դրանցից առաջնային է հանդիսանում պետականության հատկանիշների առկայությունը, «մայր» պետության և անկախ պետության ձևով ինքնորոշման ձգտող ժողովրդի միջև կոնֆլիկտի առկայությունը:

20-րդ դարավերջի և 21-րդ դարակզբի միջազգային հարաբերությունների առանձնահատկությունը պայմանավորված է նաև չճանաչված պետությունների առկայությամբ: Հատկանշական է, որ միջազգային պրակտիկայում չճանաչված պետությունների հիմնախնդիրը գոյություն է ունեցել նաև նախկինում, ինչպես օրինակ արևմտյան մի շարք երկրներ երկար ժամանակ չեն ճանաչել Խորհրդային Միությունը: Եթե նախքան երկրորդ համաշխարհային պատերազմը արևմտյան երկրներն այն չէին ճանաչում, ապա պատերազմից հետո՝ 1940-ական թվականների վերջին, Խորհրդային Միությունը դիվանագիտական հարաբերություններ ուներ գրեթե բոլոր երկրների հետ¹: «Չճանաչված պետություն» հասկացությունն ինքնին պայմանական է և գիտական առումով կարող է օգտագործվել որոշակի վերապահումներով, թերևս նաև այն պատճառով, որ որոշ հետազոտողներ նմանօրինակ պետությունների շարքին են դասում նաև մասնակի ճանաչված և մասնակի չճանաչված պետություններին: Մասնակի ճանաչված պետությունների թվին են դասվում այն պետությունները, որոնք ճանաչված են մեկ կամ մի քանի պետությունների կողմից: Առաջարկվող տարբերակումը կարող է օգտակար լինել, սակայն պարզության

¹ Տե՛ս https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%8D%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%AB%D5%BD%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%84%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

ՍԱՀՄԱՆԱՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
◆ 2(114)2024

համար օգտագործվում է «չճանաչված պետություններ» եզրույթը: Ա.Գ. Բոլշակովի կարծիքով չճանաչված կարող է անվանվել այն պետական կազմավորումը, որը զրկված է միջազգային իրավասություններից, սակայն ունի պետականության մյուս բոլոր հատկանիշները: Այս դեպքում «չճանաչված պետություն» հասկացությունն ավելի հստակ է, քան ավելի լայն օգտագործվող «չճանաչված տարածքներ», «ինքնահռչակ պետություններ», «ինքնահռչակ հանրապետություններ»¹ հասկացություններն են: Վ.Գ. Վելյամինովի կարծիքով չճանաչված պետությունները երբեմն անփութորեն անվանում են ինքնահռչակ, մինչդեռ ցանկացած երկիր ի սկզբանե ինքնահռչակ պետական միավոր է²: Տեղին է նշել, որ որոշ հետազոտողներ օգտագործում են «քվադրպետություն» տերմինը, սակայն, ինչպես նշում է Ս. Օսիպովան, քվադրպետություն տերմինը ներդրվել է պետականակերպ միավորներին միջազգային իրավունքի հատուկ սուբյեկտի կարգավիճակ տալու համար, որոնք կրում են պետության որոշակի հատկանիշներ, սակայն ընդհանուր ընկալման մեջ որպես այդպիսին չեն հանդիսանում: Քվադրպետությունների շարքին են դասվում, առաջին հերթին, այսպես կոչված «ազատ քաղաքները» (օրինակ՝ Դանցիգը)³: Այսպիսով, հետազոտողների մոտ առկա չէ չճանաչված պետությունների միասնական բնորոշում և յուրաքանչյուր հետազոտող իր մոտեցումն ունի այդ հասկացության մեկնաբանության վերաբերյալ: Նրանցից մեծ մասի կարծիքով այս առումով նպատակահարմար են «չճանաչված պետություն» և «մասնակի ճանաչված պետություն» տերմինները:

«Չճանաչված պետություն» հասկացության խորքային բացահայտման համար անհրաժեշտ է առանձնացնել դրա տարբերակիչ հատկանիշները: Ս. Մարկեդոնովը, օրինակ, առանձնացնում է չճանաչված պետության

¹ Տե՛ս **Большаков А.Г.** Непризнанные государства европейской периферии и пограничья // Международные процессы. Т. 5, “Интеграция и национальный интерес”. 2007. №3 (15):

² Տե՛ս **Вельяминов В.Г.** Признание “непризнанных” и международное право // Россия в глобальной политике. № 1. 2007. - С. 127:

³ Տե՛ս **Осипова С.А.** Непризнанные государства как политико-правовой феномен: теоретико-методологический аспект // Вестник СевНТУ. 2011. - Севастополь. - С. 125:

հետևյալ տարբերակիչ հատկանիշները: Ըստ նրա՝ առաջին հերթին անհրաժեշտ է առանձնացնել նման պետությունների հոշակագրային բնույթը, քանի որ նման պետությունները հոշակում են իրենց փաստացի ինքնիշխանությունը և տիրապետում են պետության մի քանի կարևոր խորհրդանիշների, ինչպիսիք են՝ տարածքը, կառավարությունը, զինված ուժերը, առանձին դեպքերում՝ սեփական դրամական միավորը: Երկրորդ՝ վերջիններիս ինքնիշխանությունը սովորաբար չունի արտաքին լեգիտիմություն, քանի որ չի ճանաչվում ՄԱԿ-ի և նրա անդամ պետությունների կողմից: Հետևաբար, որպես հետևանք տվյալ պետությունները հնարավորություն չունեն մասնակցելու միջազգային քաղաքականությանը և արտաքին տնտեսական գործունեություն չեն իրականացնում: Երրորդ՝ չճանաչված պետությունները սովորաբար տեղակայված են այնպիսի տարածքում, որը միջազգային հանրության կողմից ճանաչվում է որպես գոյություն ունեցող, ճանաչված և ինքնիշխան պետության տարածք կամ դրա մի մաս: Այդպիսի պետությունը կոչվում է «ծնողական» կամ «մայրական» (parent state): Եվ չորրորդ՝ այդպիսի պետությունների վերջնական կարգավիճակի հարցը երկար տարիներ մնում է անորոշ¹:

Չճանաչված պետությունները փաստացի ունեն այն բոլոր հատկանիշները, որոնք ամրագրված են Մոնտեվիդեոյի Պետությունների իրավունքների ու պարտականությունների մասին 1933 թվականի կոնվենցիայով, իսկ ավելի կոնկրետ՝ հետևյալ չորս հատկանիշները, այն է՝ մշտական բնակչություն, որոշակի տարածք, կառավարություն և այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու հնարավորություն: Չճանաչված պետությունն իրականացնում է արդյունավետ հսկողություն իր տարածքի և բնակչության նկատմամբ: Մինչդեռ այստեղ հարց է առաջանում վերջին չափանիշի հետ կապված, քանի որ պետությունները մեծամասամբ չեն ցանկանում միջազգային հարաբերությունների մեջ մտնել չճանաչված պետությունների հետ: Այդ հանգամանքը մեծ ազդեցություն է ունենում չճանաչված պետության

¹ Տե՛ս **Маркедонов С.** Де-факто образования постсоветского пространства: двадцать лет государственного строительства. – Ереван: Институт Кавказа, 2012. - С. 31:

միջազգային իրավասությունները վրա: Հետևաբար, միջազգային ճանաչման բացակայությունը հանդիսանում է չճանաչված պետության ևս մեկ հատկանիշ: Պետության փաստացի հատկանիշների առկայությունն ինքնին, այլ պետությունների կողմից ճանաչված չլինելու պարագայում, հնարավորություն չի տալիս համագործակցել տարբեր ոլորտներում:

Չճանաչված պետություններն ի հայտ են գալիս տարածքային կոնֆլիկտի արդյունքում, որն առաջանում է ինքնորոշման եղանակով սեփական ինքնիշխան պետություն ստեղծելուն ձգտող ժողովրդի և «մետրոպոլ» պետության միջև: Առանձնացման իրավական հիմնավորում, որպես կանոն դիտարկվում է ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը: Մինչդեռ, «մետրոպոլ» պետությունը զինված կոնֆլիկտի ժամանակ հղում է կատարում պետության տարածքային ամբողջականության պաշտպանությանը: Ուստի, այստեղ առաջանում է տվյալ սկզբունքների բախում, այնինչ պետք է նկատել, որ այդ սկզբունքների միջև հակասություն որպես այդպիսին առկա չէ:

Չճանաչված պետությունների ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել տարածքային հակամարտությունների համատեքստում, որոնց արդյունքում առաջացել են այդ պետությունները: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս վեր հանել միջազգային ասպարեզում նոր պետության առաջացման յուրաքանչյուր կոնկրետ դեպք: Զինված հակամարտությունների քննարկման ժամանակ պետք է վերլուծել ինքնորոշման յուրաքանչյուր դեպքի իրավաչափությունը միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների տեսանկյունից, ինչպես նաև հետևել չճանաչված պետության կարգավիճակի փոփոխություններին: Չճանաչված պետությունների սահմանները շարունակում են մնալ չորոշված և «մետրոպոլ» պետությունը չի ճանաչում իր տարածքային կարգավիճակի փոփոխությունը: Չճանաչված պետությունների տարածքները դիտարկվում են որպես այն պետության տարածքի անբաժանելի մաս, որից վերջիններս առանձնանում են: Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հարավսլավիայի և ԽՍՀՄ-ի դեպքում, նոր առաջացող պետությունների սահմանների որոշման համար կիրառվել է *uti possidetis* սկզբունքը:

Հարավսլավիայի հարցով ստեղծված արբիտրաժային հանձնաժողովը, որը պետք է զբաղվեր հարավսլավական ֆեդերացիայի փլուզման արդյունքում առաջացած վիճելի իրավական հարցերով, բախվել է միջպետական սահմանների որոշման խնդրին: Հանձնաժողովի առջև դրված էր հետևյալ հարցը. արդյո՞ք Խորվաթիայի և Սերբիայի, ինչպես նաև Բոսնիայի, Հերցեգովինայի ու Սերբիայի միջև գոյություն ունեցող ներքին սահմանները կարող են համարվել այդպիսին միջազգային հանրային իրավունքի տեսանկյունից: Հանձնաժողովը եկել է այն հետևության, որ դաշնության փլուզման պահից սկսած նորանկախ պետությունների միջև գոյություն ունեցող սահմանները, համաձայն *uti possidetis* սկզբունքի՝ համարվում են միջազգային սահմաններ: Թիվ 2 եզրակացության մեջ Հանձնաժողովը, քննարկելով ներքին սահմանների հարցը, ընդգծել է, որ անկախ որևէ հանգամանքից, ինքնորոշման իրավունքը պետության կողմից անկախություն ստանալու դեպքում չպետք է իր մեջ ներառի արդեն իսկ գոյություն ունեցող սահմանների փոփոխություն, բացառությամբ այն դեպքի, երբ պետությունն ինքն է համաձայնվել սահմանների նման փոփոխության¹:

Ավելին, ՄԱԿ-ի Միջազգային դատարանը Մալիի Հանրապետության և Բուրկինա Ֆասոյի միջև վեճով 1986 թվականի դեկտեմբերի 22-ի իր որոշմամբ դիրքորոշում է հայտնել *uti possidetis* սկզբունքի վերաբերյալ: Դատարանն արձանագրել է. «Այս սկզբունքն ունի գործածության լայն շրջանակ և տրամաբանորեն կապված է անկախության ձեռքբերման հետ, որտեղ էլ որ այն տեղի ունենա: Այս սկզբունքի նպատակը նոր ձևավորվող պետությունների կայունությանը և անկախությանը սպառնացող վտանգի կանխումն է, հրահրված սահմանների վիճարկումով տվյալ տարածքները կառավարող իշխանության հեռանալուց հետո, որը հանգեցնում է եղբայրասպան պատերազմի /.../»: Նշված սկզբունքն այդ տարածքների իրական տիրապետողին տալիս է անկախության իրագործման իրավական, օրինական առավելություն:

¹ Տե՛ս **Сквозников А.Н.** Феномен непризнанных и частично признанных государств и особенности их правосубъектности // Вестник Самарской гуманитарной академии. Серия “Право”. 2011. №2(10). - С. 7:

Դրա հիմնական նպատակը անկախության ձեռքբերման պահին տարածքային սահմանների նկատմամբ հարգանքի ապահովումն է: Այն ժամանակ, երբ սահմանները միևնույն ինքնիշխան իշխանությանը ամբողջությամբ ենթարկվող տարբեր վարչական բաժանումների կամ գաղութների սահմանազատման միջոցի դեր էին խաղում, այս սկզբունքի կիրառումը հանգեցրեց դրանց միջպետական սահմանների վերածելուն. ճիշտ այդպես տեղի ունեցավ հիշատակված գործի մասնակից պետությունների հետ, որոնք երկուսն էլ ձևավորվել են նախկին ֆրանսիական Արևմտյան Աֆրիկայի տարածքներում:

Ապագաղութացման ժամանակ նման սահմաններն արդեն ունեին միջպետական սահմանների կարգավիճակ և նախկինում գոյություն ունեցող սահմանները հարգելու պարտավորությունը բխում է պետության շարունակականության վերաբերյալ միջազգային իրավունքի ընդհանուր կանոնից:¹

Այս սկզբունքի կիրառումը սակայն չկարողացավ կանխել նորաստեղծ պետությունների միջև տարածքային հակամարտությունները:

Այսպիսով, չճանաչված պետությունների տարբերակիչ հիմնական առանձնահատկություններն են պետականության հատկանիշների փաստացի առկայությունը, «մետրոպոլ» պետության և ինքնորոշման միջոցով անկախ պետություն ստեղծելուն ձգտող ժողովրդի միջև կոնֆլիկտի առկայությունը, ինչպես նաև բոլոր պետությունների կամ պետությունների մեծ մասի կողմից ճանաչման բացակայությունը (համապատասխանաբար չճանաչված կամ մասնակի ճանաչված պետություններ), ինչն էլ իր հերթին դժվարացնում է չճանաչված պետության մասնակցությունը միջազգային հարաբերություններին: Միաժամանակ, չճանաչված պետությունը չի կարող միջազգային հանրությունից մեկուսի գոյություն ունենալ: Տնտեսության և հասարակական կյանքի մյուս ոլորտներում համագործակցության իրականացման նպատակով այն պետք է գոնե մեկ պետության կողմից ճանաչվի: Որպես կանոն, ճանաչումը պետք է տեղի ունենա այնպիսի

¹ Տե՛ս Краткое изложение решений, консультативных заключений и постановлений Международного суда ООН. 1948-1991. Нью-Йорк. 1991. - С. 214, URL: http://www.icj-cij.org/homepage/ru/files/sum_1948-1991.pdf

պետության կողմից, որը միջազգային ասպարեզում ունի խոշոր խաղացողի դերակատարում և քաղաքական առումով աջակցում է նորաստեղծ պետությանը, ցուցաբերում է օգնություն և կնքում միջազգային երկկողմ պայմանագրեր: Այդպիսի պետությունների թվին են դասվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական հինգ անդամները՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Չինաստանը և Ռուսաստանի Դաշնությունը: Որպես օրինակ, Ռուսաստանը ճանաչել է Հյուսիսային Օսեթիայի անկախությունը և վերջինիս հետ կնքել մի շարք երկկողմ համաձայնագրեր:

Չճանաչված պետությունն իր բնույթով հանդիսանում է իրավաբանորեն լիարժեք ճանաչման գործընթացի յուրահատուկ անցումային փուլ: Նոր պետություններն առաջանում են տարածքների անջատման (Կոսովո) կամ իրրեդենտիզմի (Քուրդիստան), պետությունների (ինչպես Հարավսլավիայի և ԽՍՀՄ-ի դեպքում) կամ գաղութային կայսրությունների (Օսմանյան կայսրություն) փլուզման արդյունքում:

Չճանաչված պետությունները կարող են դառնալ լիարժեք ինքնիշխան պետություն, ինչպես օրինակ Էրիթրեան առանձնացավ Եթովպիայից: Նրանք կարող են կլանվել այն պետության կողմից, որից փաստացի փորձել են առանձնանալ (օր. Աջարիան Վրաստանի դեպքում) կամ էլ բավականին երկար ժամանակ պահպանել իրենց անցումային կարգավիճակը, ինչպես դա եղավ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության դեպքում:

Չճանաչված պետությունները կարող են դասակարգվել տարբեր չափանիշներով: Այդ չափանիշներից է սեփական տարածքների նկատմամբ հսկողությունը: Ըստ այս չափանիշի բաժանվում են չճանաչված պետություններ, որոնք լիարժեք հսկողություն են իրականացնում իրենց տարածքների նկատմամբ (Մերձդնեստր, Հյուսիսային Կիպրոս), իրենց տարածքների նկատմամբ մասնակի հսկողություն իրականացնող պետություններ (Պաղեստին, Արևմտյան Սահարա) և միջազգային պրոտեկտորատի ներքո գտնվող պետություններ (Կոսովո):

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
◆ 2(114)2024

Ըստ ինքնիշխանության ճանաչման չափանիշի կարող ենք առանձնացնել չճանաչված և մասնակի ճանաչված պետություններ: Չճանաչված պետությունների շարքին են դասվում Լեռնային Ղարաբաղը, Մերձդնեստրը, Թամիլ-Իլամը, Վազիրիստանը, Շան պետությունը: Մասնակի ճանաչված պետությունների շարքին են դասվում Աբխազիան, Հարավային Օսեթիան, Կոսովոն, Պաղեստինը, Արևմտյան Սահարան և այլն:

Պետք է նկատել, որ ճանաչված պետությունից տարածքի ինքնորոշման միջազգային-իրավական մեխանիզմ ներկայումս բացակայում է: Միջազգային իրավունքում գոյություն չունի այնպիսի մարմին, որը պետությանը կարող է օժտել միջազգային իրավասուբյեկտայնությամբ: Նորաստեղծ պետության ճանաչումը ճանաչված պետությունների իրավասու մարմինների ինքնիշխան որոշումն է: Առանց համաձայնության ընդգծված կամ կոնկյուդենտ գործողություններով չենք կարող փաստել, որ ճանաչումը տեղի է ունեցել:¹

Պրոֆեսոր Չերնիչենկոն իրավագիտորեն առաջ է քաշել պետության այնպիսի օբյեկտիվ չափանիշներ, որոնց պետք է բավարարի պետությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Նրա կարծիքով՝ պետությունը պետք է իրենից ներկայացնի որոշակի հասարակություն, որին կառավարում և ղեկավարում է որպես ինքնուրույն սոցիալական օրգանիզմ՝ ունենալով իր ժողովուրդը, իր իշխանությունը, տարածքը, որը գտնվում է իր իշխանության ներքո: Չերնիչենկոն գտնում է, որ պետության գոյության փաստն ինքնին բավարար չէ վերջինիս որպես միջազգային իրավունքի սուբյեկտ դիտարկելու համար: Նման պետության ի հայտ գալը չպետք է հակասի միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին, պայմանագրերին, որոնք գործնականում արտահայտում են ամբողջ միջազգային հանրության կարծիքը, ինչպես նաև չպետք է հակասի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերին²:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ներկա իրականությունում գոյություն ունեն չճանաչված պետություններ, որոնց կարգավիճակը հստակեցված չէ: Իսկ պրակտիկան ցույց է տալիս, որ գոյություն ունեցող կարգավիճակը չի խանգարում վերջիններիս գոյությանը: Եվ, ինչպես նշում են առանձին

փորձագետներ, նմանատիպ պետությունները հանդիսանում են լիովին կայացած պետություններ, որոնք ունեն արդյունավետ կառավարման ապարատ, որը վայելում է տվյալ պետության բնակչության վստահությունը: Ընդգծենք նաև, որ միջազգային հանրությունը դեռևս չի մշակել նոր կազմավորվող պետությունների միջազգային-իրավական ճանաչման միասնական մեխանիզմ:

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախության տրամադրման մասին (1960 թ.), Միջազգային իրավունքի սկզբունքների մասին (1970 թ.) հռչակագրեր:

2. United Nations Juridical Yearbook 1980.

3. **Камышевский В.И.** Обзор круглого стола “Проблема непризнания государств” (г. Москва, июнь 2009 г.) // Евразийский юридический журнал. 2009. № 10 (17), URL: http://www.eurasialaw.ru/index.php?Itemid=156&catid=70:-10-17-2009&id=425:-10-17-2009&option=com_content&view=article

4. **Силаева З.В.** Признание независимости спорных государств в современной мировой политике // Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики. 2011. № 7 (13).

5. https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%8D%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%AB%D5%BD%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%84%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

6. **Большаков А.Г.** Непризнанные государства европейской периферии и пограничья // Международные процессы. Т. 5, “Интеграция и национальный интерес”. 2007. №3 (15).

7. **Вельяминов В.Г.** Признание “непризнанных” и международное право // Россия в глобальной политике. №1. 2007.

8. **Осипова С.А.** Непризнанные государства как политико-правовой феномен: теоретико-методологический аспект // Вестник СевНТУ. 2011. Севастополь.

9. **Маркедонов С.** Де-факто образования постсоветского пространства: двадцать лет государственного строительства. – Ереван: Институт Кавказа, 2012.

10. **Сквозников А.Н.** Феномен непризнанных и частично-признанных государств и особенности их правосубъектности // Вестник Самарской гуманитарной академии. Серия “Право”. 2011. №2(10).

11. Краткое изложение решений, консультативных заключений и постановлений Международного суда ООН. 1948-1991. Нью-Йорк. 1991, URL: http://www.icj-cij.org/homepage/ru/files/sum_1948-1991.pdf

12. Обзор круглого стола “Проблема признания государств”, URL: http://www.eurasialaw.ru/index.php?catid=70:-10-17-2009&id=425:-10-17-2009&Itemid=156&option=com_content&view=article

13. **Allain Pellet.** The Opinions of the Badinter Arbitration Committee: A Second Breath for the Self-Determination of Peoples European Journal of International Law. — 1992. — № 3 (1), URL: <http://www.ejil.org/pdfs/3/1/1175.pdf> (վերջին փոփոխությունը՝ 29.05.2018 թ.):

ОБЩИЕ ЗАКОНОМЕРНОСТИ И ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО СТАТУСА НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ

Аннотация

В статье автором раскрыты общие закономерности и особенности правового статуса непризнанных государств, рассмотрены право наций

на самоопределение, проблема, значение, роль и содержание реализации этого права. Проанализированы взгляды и подходы отдельных авторов к критериям, предъявляемым непризнанным государствам, а также существующий международный опыт и практика. Предпринята попытка изучить проблему непризнанных государств также в контексте территориальных вооруженных конфликтов, в результате которых возникли эти государства.

Отдельно был затронут вопрос границ новосозданных или новых независимых государств, а также решение Международного суда Организации Объединенных Наций по этому вопросу (в споре между Республикой Мали и Буркина-Фасо) от 22 декабря 1986 года и позиция, выраженная в отношении принципа *uti possidetis*.

Ключевые слова: непризнанное государство, самоопределение наций, конфликт, границы, признание, частичное признание, статус, правовая характеристика.

GENERAL PATTERNS AND FEATURES OF THE LEGAL STATUS OF UNRECOGNIZED STATES

Annotation

In the article, the author presents general patterns and features of the legal status of unrecognized states. The right of nations to self-determination, the problem, significance, role and content of the realization of this right were touched upon. The views and approaches of individual authors to the criteria imposed on unrecognized states, as well as existing international experience and practice, are analyzed separately. An attempt was made to study the problem of unrecognized States also in the context of territorial armed conflicts, as a result of which these States arose.

The issue of the borders of newly created or newly independent States was

touched upon separately, as well as the decision of the International Court of Justice of the United Nations on this issue (in the dispute between the Republic of Mali and Burkina Faso) of December 22, 1986 and the position expressed regarding the principle of uti possidetis.

Keywords: unrecognized state, self-determination of nations, conflict, borders, recognition, partial recognition, status, legal characteristics.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 30.04.2024 թ., տրվել է գրախոսության 03.05.2024 թ., ընդունվել է տպագրության 13.05.2024 թ.:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ



DOI: 10.59560/18291155-2024.2-180

ՇՈՂԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության
ծառայության կազմակերպման
վարչության հրահանգիչ,
Հայ-ռուսական համալսարանի
քաղաքագիտության ամբիոնի հայցորդ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՓԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ամփոփագիր

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական անվտանգությունն առանցքային դեր է խաղում պետությունների կայունության և անվտանգության պահպանման գործում: Վերջին տարիներին, միջազգային ասպարեզում ընթացող գործընթացներով պայմանավորված՝ պետություններն ավելի մեծ և առաջնային ուշադրություն են դարձնում տեղեկատվական անվտանգության ապահովմանը, ինչպես նաև ոլորտում հնարավոր սպառնալիքների և մարտահրավերների հակազդմանը:

Սույն հոդվածում ուսումնասիրվում է տեղեկատվական անվտանգության հայեցակարգը՝ շեշտը դնելով դրա քաղաքական ասպեկտի վրա, որը կարևոր է ազգային ինքնիշխանության և պետական կայունության պահպանման համար: Տեղեկատվական անվտանգությունն այս համատեքստում ներառում է տեղեկատվական տարածքի պաշտպանությունը արտաքին և ներքին սպառնալիքներից, ինչպիսիք են ապատեղեկատվությունը, քարոզչությունը և հիբրիդային պատերազմը: Գլոբալիզացիայի և տեխնոլոգիաների արագ զարգացման համատեքստում տեղեկատվությունը դառնում է կարևոր

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ռազմավարական ռեսուրս, և դրա պաշտպանությունը անհրաժեշտ պայման է ազգային անվտանգության ապահովման համար:

Հոդվածում ընդգծվում է, որ տեղեկատվական անվտանգությունը քաղաքական համատեքստում պահանջում է ինտեգրված մոտեցում, որը համատեղում է տեխնոլոգիական, իրավական, կրթական և միջազգային միջոցառումները: Միայն բոլոր մակարդակներում ջանքերի համակարգման միջոցով է հնարավոր արդյունավետ հակազդել ժամանակակից տեղեկատվական սպառնալիքներին և ապահովել տեղեկատվական հասարակության երկարաժամկետ կայունությունն ու անվտանգությունը:

Հիմնաբառեր. տեղեկատվական անվտանգություն, մարտահրավերներ, սպառնալիքներ, հիբրիդային պատերազմներ, ապատեղեկատվություն, ռազմավարություն, քաղաքական կայունություն:

1. Տեղեկատվական անվտանգության հայեցակարգը

Անվտանգության հայեցակարգը, չնայած իր թվացյալ պարզությանը, ընդգրկում է հասարակության և անհատի կյանքի տարբեր ասպեկտներ: Գրականության մեջ կարելի է գտնել այս հասկացության տարբեր մեկնաբանություններ և սահմանումներ: Օրինակ, հաճախ կարելի է գտնել հետևյալ սահմանումը. «Ազգային անվտանգությունն ազգի ընդունակությունն է՝ պահպանելով իր հիմնարար արժեքները հնարավորինս նվազագույն կորուստներով՝ բավարարել այն պահանջները, որոնք անհրաժեշտ են ինքնապաշտպանության, ինքնավերարտադրման և ինքնակատարելագործման համար»: Չնայած այս սահմանումը բավականին ընդգրկուն է, սակայն ամբողջությամբ չի արտացոլում շրջակա միջավայրի փոփոխականությունը: Ուստի արժեքավոր է անդրադառնալ Առնոլդ Թոյնբիի տեսակետներին, ով նշանակալի ներդրում է ունեցել անվտանգության փիլիսոփայության զարգացման գործում:

Ըստ Թոյնբիի դասական հայացքների՝ քաղաքակրթությունների, պետությունների, հասարակությունների և անգամ անհատների անվտանգությունն ապահովվում է նրանց՝ մարտահրավերների և

դրանց տրվող պատասխանների բարդ համակարգում գործելու ունակությամբ: Թոյնբին ընդգծել է, որ մարտահրավերներին համարժեք չպատասխանելը աղետալի է քաղաքակրթությունների համար: Կարևոր է հիշել, որ մարտահրավերները կարող են հնարավորությունների աղբյուր լինել, քանի որ դրանք ստուգում, փորձաքննում են անվտանգության համակարգի հուսալիությունը և, մարտահրավերներին արժանիորեն դիմագրավելու նպատակով, մոբիլիզացնում են հանրության հոգևոր, մտավոր, ռազմական, քաղաքական ու նյութական ռեսուրսները¹:

Թոյնբիի դատողությունները կիրառություն են գտնում նաև տեղեկատվական անվտանգության ոլորտում: Վերջինիս շրջանակները երբեմն նեղացվում են, թեև այն ներառում է բազմաթիվ ասպեկտներ, ինչպիսիք են.

- ազգի, պետության, հասարակության և անհատի հոգևոր, հոգեբանական, մտավոր, ճանաչողական և կրթական ոլորտների արդյունավետ զարգացման, կառավարման և անվտանգության ապահովումը.
- պետության, հասարակության և անհատների մակարդակով տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի արդյունավետ զարգացման և անվտանգության ապահովումը:

Այս և այլ մոտեցումների հիման վրա մասնագիտական գրականության մեջ առաջարկվել են տեղեկատվական անվտանգության բազմաթիվ սահմանումներ:

Օրինակ՝ «Տեղեկատվական անվտանգությունը տեղեկատվության և այն ապահովող ենթակառուցվածքների պաշտպանվածությունն է պատահական կամ միտումնավոր ազդեցություններից», «Ներազդող սպառնալիքների և դրանց արդյունավետ հակազդելու գործընթացների միջև հավասարակշռության պահպանման գործընթաց է»² և այլն:

¹ Տե՛ս **Тойнби А.Дж.** Цивилизация перед судом истории. Сборник. - М.: Айрис Пресс, 2003. - 592 с.:

² Տե՛ս **Հարությունյան Գ.Ա.**, Տեղեկատվական անվտանգություն: Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2017, 320 էջ:

Տարբեր է հասկացության բովանդակությունը նաև անգլալեզու, ռուսալեզու և հայալեզու գրականության մեջ, ինչպես նաև հայեցակարգային փաստաթղթերում: Այսպես՝ անգլալեզու գրականության մեջ «տեղեկատվական անվտանգություն» (information security) հասկացությունը սահմանվում է որպես տեղեկատվության և աջակցող ենթակառուցվածքների պաշտպանվածություն բնական կամ արհեստական բնույթի պատահական կամ կանխամտածված ազդեցություններից, որոնք տեղեկատվական հարաբերությունների սուբյեկտներին, այդ թվում՝ տեղեկատվությունը տիրապետողին ու օգտագործողին, ինչպես նաև աջակցող ենթակառուցվածքին կարող են անուղղակի վնաս հասցնել: Հասկացության մեկ այլ սահմանմամբ՝ «տեղեկատվական անվտանգությունը տեղեկույթի և տեղեկատվական համակարգերի չարտոնված մուտքից, օգտագործումից, հրապարակումից, փոփոխումից կամ ոչնչացումից պաշտպանությունն է, որպեսզի ապահովված լինեն գաղտնիությունը, ամբողջականությունը և մատչելիությունը»: Այս իմաստով տեղեկատվական անվտանգության հոմանիշներն են «կիբեռանվտանգությունը» (Cybersecurity) և «համակարգային անվտանգությունը» (Computer security)¹:

Բուսալեզու գրականության մեջ տեղեկատվական անվտանգության ժամանակակից խնդիրների սահմանման համար հիմք են հանդիսացել Ի.Ա. Լազարևի, Վ.Ն. Լոպատինի, Յու.Ս. Ուֆիմցևի, Ե.Ա. Երոֆեևի համակարգային հետազոտությունները: Այսպես՝ Վ.Ն. Լոպատինն առանձնացնում է տեղեկատվական–հոգեբանական անվտանգությունը և այն սահմանում որպես վնասակար տեղեկատվության ազդեցությունից անհատի, հասարակության և պետության կենսական կարևոր շահերի պաշտպանության իրավիճակ²:

¹ Տե՛ս Analysis of information security issues in corporate computer networks (Վերջին մուտքը՝ 15.05.2024 թ.),

URL: <https://iopscience.iop.org/article/10.1088/1757-899X/1047/1/012117/meta#:~:text=Information%20security%20is%20understood%20as,or%20users%20of%20information%20resources>

² Տե՛ս **Лопатин В.Н.** Информационное право: Учебник. – СПб., 2005 – 474 с.:

Ա.Դ. Ուրսուլը տեղեկատվական անվտանգությունը սահմանում է որպես տեղեկատվական վտանգավոր ազդեցություններից կենսագործունեության հիմնական բնագավառների պաշտպանության վիճակ¹: Տ. Ա. Պոլյակովան տեղեկատվական անվտանգությունը դիտում է որպես ազգային շահերի պաշտպանության վիճակ և դա համարում անհատի, հասարակության ու պետության հավասարակշռված շահերի ամբողջություն:

Ինչ վերաբերում է հայալեզու գրականությանը, նշենք, որ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի՝ արևմտյան ու ռուսաստանյան պաշտպանական-անվտանգային տերմինաբանական-հասկացության համակարգերի համադրմամբ կազմված եռալեզու բացատրական բառարանում տեղեկատվական անվտանգությունը բացատրվում է որպես «սուբյեկտի (անհատի, հասարակության) այն վիճակը, որի դեպքում տեղեկույթի և սուբյեկտի փոխազդեցության հետևանքով սուբյեկտի մեջ առաջացած փոփոխությունը սպառնալիք չի հարուցում նրա ֆիզիկական ու հոգեկան առողջության, ինչպես նաև հասարակության ու պետության համար»²:

Ընդհանրացնելով և շեշտելով անվտանգության խնդիրներում գիտակրթական-տեխնոլոգիական ռեսուրսների ու հանրության ընդհանրական հմտությունների որոշիչ կարևորությունը՝ տեղեկատվական անվտանգությունը կարելի է սահմանել նաև հետևյալ կերպ. «Տեղեկատվական անվտանգությունը պետության և հասարակության գիտելիքային-տեխնոլոգիական անհրաժեշտ ռեսուրսների ստեղծման միջոցով հանրության անվտանգությունը և զարգացումն ապահովելու ունակությունն է տեղեկատվական մարտահրավերներ-պատասխաններ գործընթացում»³:

¹ Տե՛ս **Урсул А.Д.** Информатизация общества и безопасность развития цивилизации // “Социально политические науки”, 1990, № 10:

² Տե՛ս **Զիլինգարյան Դ.Ս., Երզնկյան Ե.Լ.**, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Եր., 2015:

³ Տե՛ս **Հարությունյան Գ.Ա.**, Տեղեկատվական անվտանգություն: Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2017:

2. Տեղեկատվական անվտանգության ժամանակակից մարտահրավերները

Այսօր տեղեկատվական անվտանգության մարտահրավերները բխում են ինչպես արագ տեխնոլոգիական փոփոխություններից, այնպես էլ սոցիալական, տնտեսական և քաղաքական գործոններից:

Ժամանակակից տեղեկատվական անվտանգության մարտահրավերները բազմազան են և բազմակողմանի: Հիմնականներից մեկը հիբրիդային պատերազմների երևույթն է, որտեղ տեղեկատվությունը օգտագործվում է որպես քաղաքական և տնտեսական համակարգերը ապակայունացնելու գործիք: Սա ներառում է ապատեղեկատվության և կեղծ լուրերի տարածում, որոնք ուղղված են պետական կառույցների նկատմամբ վստահությունը խաթարելուն և սոցիալական հակամարտությունների սրմանը: Նման տեղեկատվական հարձակումները կարող են երկարաժամկետ ազդեցություն ունենալ հասարակական կարծիքի և քաղաքական կայունության վրա¹:

Տեղեկատվական պատերազմն ինֆոգեն սպառնալիքների գործնական իրագործումն է, որում որպես թիրախ հատկապես կարևորվում է քաղաքական որոշումների ընդունման համակարգը: Հաճախ քարոզչությունն ու ապատեղեկատվությունն օգտագործում են հասարակական կարծիք ձևավորելու, քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահությունը խաթարելու և քաղաքական իրավիճակն ապակայունացնելու համար²: Օրինակները ներառում են.

- Քարոզչությունը. միակողմանի կամ կեղծ տեղեկատվության համակարգված տարածումն է՝ հասարակական կարծիքը շահարկելու նպատակով: Պետությունները կարող են քարոզչությունն օգտագործել իրենց քաղաքական դիրքորոշումները պաշտպանելու և հակառակորդներին վարկաբեկելու համար: Պատմականորեն դա դրսևորվել է տպագիր և հեռուստատեսային լրատվամիջոցների միջոցով, սակայն վերջին տարիներին սոցիալական մեդիան դարձել է հիմնական քարոզչական գործիք:

¹ Տե՛ս Гибридное оружие войны, URL: <https://www.gazeta.ru/army/2016/08/10/10112729.shtml> (Վերջին մուտքը՝ 15. 05. 2024 թ.):

² Տե՛ս Հարությունյան Գ.Ա., Տեղեկատվական անվտանգություն: Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2017:

- Ապատեղեկատվությունը. բնակչությանը կամ պետական մարմիններին մոլորեցնելու նպատակով դիտավորյալ կեղծ տեղեկատվության տարածումն է: Ապատեղեկատվությունը կարող է ներառել կեղծ լուրեր, կեղծ փաստաթղթեր և խեղաթյուրված փաստեր: Այն հաճախ օգտագործվում է քաոս ստեղծելու, հասարակության վստահությունը խաթարելու և ընտրությունների վրա ազդելու համար:

Տեղեկատվական անվտանգության ժամանակակից մարտահրավերներից են քաղաքական լրտեսությունը և տվյալների արտահոսքը:

Քաղաքական լրտեսությունը ներառում է հետախուզական ծառայությունների և այլ գործակալների գործունեությունը, որն ուղղված է գաղտնի տեղեկատվության հասանելիությանը:

Ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս հեռակա կարգով լրտեսություն իրականացնել կիբեռնոստրատեգիայի միջոցով, ինչը մեծացնում է տվյալների արտահոսքի վտանգը և պահանջում ուժեղացված անվտանգության միջոցներ:

Տվյալների արտահոսք կարող է առաջանալ նպատակաուղղված հարձակումների արդյունքում, աշխատակիցների կողմից անփութության կամ չարաշահումների հետևանքով: Արտահոսքերը կարող են հանգեցնել գաղտնի փաստաթղթերի բացահայտմանը, ինչը կարող է զգալի վնաս հասցնել ազգային անվտանգությանը և միջազգային հարաբերություններին:

Ժամանակակից տեխնոլոգիաները և լրատվամիջոցները հնարավորություն են տալիս աննախադեպ մակարդակով շահարկել հասարակական կարծիքը: Սոցցանցերի և այլ թվային հարթակների օգտագործումը քարոզչություն և ապատեղեկատվություն տարածելու համար դարձել է քաղաքական գործընթացների վրա ազդելու կարևորագույն գործիք:

Համացանցի և սոցիալական ցանցերի միջոցով տարածվող կեղծ կամ խեղաթյուրված լուրերը կարող են լուրջ ազդեցություն ունենալ իրադարձությունների ընկալման և հասարակական կարծիքի ձևավորման վրա: Կեղծ լուրերի դեմ պայքարը պահանջում է և՛ տեխնոլոգիական լուծումներ (օրինակ՝ անարժանահավատ տեղեկատվությունը

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
◆ 2(114)2024

բացահայտելու ալգորիթմներ), և օրենսդրական կարգավորումներ, և բնակչության մեղիա գրագիտության բարձրացում:

Միևնույն ժամանակ, տեղեկատվական անվտանգության հիմնական մարտահրավերներից մեկը անվտանգության ապահովման և խոսքի ազատության պաշտպանության միջև հավասարակշռություն գտնելն է: Մի կողմից՝ անհրաժեշտ է սահմանափակել ապատեղեկատվության և քարոզչության տարածումը, մյուս կողմից՝ կարևոր է պահպանել քաղաքացիների կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը:

Նմանօրինակ իրավիճակներում, հաղորդակցման ուղիները վերահսկելու և վնասակար տեղեկատվության տարածումը կանխարգելելու համար պետությունները կարիք ունեն մշակելու նոր կանոնակարգեր և ռազմավարություններ:

3. Տեղեկատվական անվտանգության ապահովման ռազմավարությունները

Տեղեկատվական անվտանգությունն ապահովելու համար պետությունները մշակում և իրականացնում են համապարփակ ռազմավարություններ: Սա ներառում է օրենսդրական կարգավորում՝ ուղղված տեղեկատվական տարածքի պաշտպանությանը և ապատեղեկատվությանը հակազդելուն, ինստիտուցիոնալ պաշտպանություն մասնագիտացված մարմինների և ստորաբաժանումների ստեղծման միջոցով, կրթական ծրագրեր՝ ուղղված տեղեկատվական գրագիտության մակարդակի բարձրացմանը, և միջազգային համագործակցություն՝ արդյունավետորեն պայքարելու անդրազգային տեղեկատվական սպառնալիքների դեմ:

Տեղեկատվական անվտանգության հստակ քաղաքականության և չափորոշիչների մշակումը գերակա առաջնահերթություն է պետական կառույցների և քաղաքական հաստատությունների համար: Այս քաղաքականությունը պետք է սահմանի տեղեկատվության մշակման, պահպանման և փոխանցման կանոններն ու ընթացակարգերը, ինչպես նաև սպառնալիքներից և հարձակումներից պաշտպանվելու միջոցները: Կարևոր է, որ նման քաղաքականությունը հաշվի առնի

քաղաքական ոլորտի հատուկ կարիքները, ներառյալ ընտրությունների, դիվանագիտական հարաբերությունների և ռազմավարական որոշումների հետ կապված տեղեկատվության պաշտպանությունը:

Տեղեկատվական անվտանգության ռազմավարության կարևոր բաղադրիչներից է տեղեկատվական անվտանգության առաջադեմ տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը: Սա ներառում է գաղտնագրման, վիրուսների և չարամիտ ծրագրերի պաշտպանության, ներխուժման հայտնաբերման համակարգերի և նույնականացման մեխանիզմների օգտագործումը:

Մյուս կարևոր բաղադրիչը միջազգային համագործակցությունն է: Տեղեկատվական սպառնալիքների գլոբալացման համատեքստում միջազգային համագործակցությունը գնալով ավելի է կարևորվում: Պետությունները պետք է ակտիվորեն համագործակցեն տեղեկատվական անվտանգության ոլորտում, համատեղ մշակեն պաշտպանական միջոցներ և համակարգեն գործողությունները կիբեռնոստրատեգիաների կամ տեղեկատվական արշավների դեպքում: Սա նաև ներառում է համագործակցություն միջադեպերի հետաքննության և տեղեկատվական անվտանգության լավագույն փորձի փոխանակման համար:

Ռազմավարության կարևոր կողմն է համարվում իրավական պաշտպանությունը: Արդյունավետ քաղաքականության իրականացումը, իր հերթին, պայմանավորված է ինչպես համապատասխան իրավական փաստաթղթերի մշակմամբ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում ոլորտում առկա խնդիրների շարունակական լուծմանն ուղղված թիրախային միջոցառումների իրականացմամբ, դրանց ղեկավարման, մոնիտորինգի արդյունավետ ընթացակարգերի կենսագործմամբ:

4. Եզրակացություն

Տեղեկատվական անվտանգության ժամանակակից մարտահրավերները պետություններից պահանջում են ինտեգրված մոտեցում, ներառյալ տեխնիկական, կազմակերպչական և իրավական միջոցներ՝ քաղաքականապես զգայուն տեղեկատվության պաշտպանության համար: Գլոբալիզացիայի և թվայնացման համատեքստում տեղեկատվական անվտանգության ապահովումը

դառնում է պետական ռազմավարության անբաժանելի մասը, որը նպաստում է կայուն զարգացմանը և հասարակության շահերի պաշտպանությանը:

Այսպիսով, միայն ինտեգրված և համակարգված մոտեցումը կարող է ապահովել տեղեկատվության հուսալի պաշտպանությունը ժամանակակից սպառնալիքներից, նպաստել քաղաքական կայունության և պետական անվտանգության ամրապնդմանը համաշխարհային տեղեկատվական տարածքում: Տեխնոլոգիաների շարունակական զարգացման և մշակված տեղեկատվության ծավալների մեծացման պայմաններում տեղեկատվական անվտանգության ապահովումը դառնում է պետական գերատեսչությունների առանցքային խնդիրներից մեկը՝ ուղղված ազգի ինքնիշխանության և անվտանգության պահպանմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Հարությունյան Գ.Ա.**, Տեղեկատվական անվտանգություն: Եր., «Նորավանք» ԳԿԸ, 2017, 320 էջ:
2. **Զիլինգարյան Դ.Ս., Երզնկյան Ե.Լ.**, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Եր., 2015:
3. **Лопатин В.Н.** Информационное право: Учебник. - СПб., 2005. - 474 с.
4. **Тойнби А.Дж.** Цивилизация перед судом истории. Сборник. - М.: Айрис Пресс, 2003. - 592 с.
5. **Урсул А.Д.** Информатизация общества и безопасность развития цивилизации // “Социально политические науки”, 1990, № 10.
6. Гибридное оружие войны, URL: <https://www.gazeta.ru/army/2016/08/10/10112729.shtml> (Վերջին մուտքը՝ 15.05.2024թ.).
7. Analysis of information security issues in corporate computer networks (Վերջին մուտքը՝ 15.05.2024թ.), URL:<https://iopscience.iop.org/>

[article/10.1088/1757-899X/1047/1/012117/meta#:~:text=Information%20security%20is%20understood%20as,or%20users%20of%20information%20resources](https://www.sciencedirect.com/science/article/10.1088/1757-899X/1047/1/012117/meta#:~:text=Information%20security%20is%20understood%20as,or%20users%20of%20information%20resources)

ПОНЯТИЕ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ВЫЗОВОВ

Аннотация

В современном мире информационная безопасность играет ключевую роль в поддержании стабильности и безопасности государств. В последние годы в связи с процессами, происходящими на международной арене, государства уделяют все больше приоритетного внимания обеспечению информационной безопасности, а также противодействию возможным угрозам и вызовам в этой сфере.

В данной статье рассматривается понятие информационной безопасности, подчеркивается ее политический аспект, который важен для поддержания национального суверенитета и государственной стабильности. Информационная безопасность в этом контексте включает защиту информационной сферы от внешних и внутренних угроз, таких как дезинформация, пропаганда и гибридная война. В условиях глобализации и стремительного развития технологий информация становится важным стратегическим ресурсом, а ее защита – необходимым условием обеспечения национальной безопасности.

В статье подчеркивается, что информационная безопасность в политическом контексте требует комплексного подхода, сочетающего в себе технологические, правовые, образовательные и международные меры. Только благодаря координации усилий на всех уровнях можно эффективно противостоять современным информационным угрозам и обеспечить долгосрочную стабильность и безопасность информационного общества.

Ключевые слова: информационная безопасность, вызовы, угрозы, гибридные войны, дезинформация, стратегия, политическая стабильность.

THE CONCEPT OF INFORMATION SECURITY IN THE CONTEXT OF MODERN CHALLENGES

Annotation

In the modern world, information security plays a key role in maintaining the stability and security of states. In recent years, due to the processes taking place in the international arena, states pay more and more priority attention to ensuring information security, as well as countering possible threats and challenges in the field.

This article examines the concept of information security, emphasizing its political aspect, which is important for maintaining national sovereignty and state stability. Information security in this context includes protecting the information sphere from external and internal threats such as disinformation, propaganda and hybrid warfare. In the context of globalization and the rapid development of technology, information is becoming an important strategic resource, and its protection is a necessary condition for ensuring national security.

The article emphasizes that information security in a political context requires an integrated approach that combines technological, legal, educational and international measures. Only through coordination of efforts at all levels can we effectively counter modern information threats and ensure long-term stability and security of the information society.

Keywords: information security, challenges, threats, hybrid wars, disinformation, strategy, political stability.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 19.05.2024 թ., տրվել է գրախոսության 20.05.2024 թ., ընդունվել է տպագրության 21.05.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.2-192



TIGRAN SIMONYAN

*Chief specialist at the Public Affairs and
Protocol Division of the
Constitutional Court of the Republic of Armenia,
Master's student at the
American University of Armenia*

POLITICAL AND LEGAL ANALYSIS OF UN PEACEKEEPERS' MANDATE IN THE CENTRAL AFRICAN REPUBLIC

Annotation

This article explores the evolving role and effectiveness of United Nations (UN) peacekeeping missions, focusing on the case study of the Central African Republic (CAR). It begins by contextualizing the historical background of the CAR conflict and the establishment of the UN Multidimensional Integrated Stabilization Mission in CAR (MINUSCA) in 2014. Using a multidisciplinary approach drawing from international relations, peace and conflict studies, and political science, the article employs theoretical frameworks such as Liberal Peace Theory, Realism, Neorealism, Constructivism, and Conflict Transformation Theory to analyze MINUSCA's mandate evolution and activities. The examination highlights MINUSCA's shift from traditional peacekeeping tasks to broader responsibilities, including fostering national dialogue, supporting electoral processes, and aiding in institution-building. It examines how MINUSCA's mandate expansion reflects changing international norms and identifies motivations behind external actors' involvement in CAR, such as France and the UN. Additionally, the article evaluates MINUSCA's effectiveness in contributing to peace and stability in CAR, considering factors like resource constraints and geopolitical dynamics. By synthesizing theoretical

insights, historical analysis, and evaluative frameworks, the article also provides a nuanced understanding of UN peacekeeping missions' evolution, challenges, and implications for international peace and security. It contributes to ongoing discussions on the role of international organizations in conflict resolution and peacebuilding efforts, offering insights into the complexities of modern peacekeeping operations and their impact on conflict-affected regions like the Central African Republic.

Keywords: United Nations, Peacekeeping missions, Central African Republic (CAR), MINUSCA, mandate evolution, Resolution 2149 (2014), Resolution 2196 (2015), Resolution 2217 (2015), disarmament, demobilization, and reintegration (DDR) program.

Introduction

At the end of the Second World War, the United Nations started to play a pivotal role in maintaining international peace and stability, and one of its primary tools to achieve this aim was the deployment of peacekeeping missions in different parts of the world where conflicts erupted. One of such scenes where the UN peacekeeping mission is still evolving is the Central African Republic. Taking into consideration the evolving nature of the civil war that erupted in 2012, the mandate of the UN peacekeepers, which was initially aimed to guarantee the protection of civilians, changed over time and encompassed more broad and essential tasks such as helping to foster national dialogue between confronting parties to achieve final peace. Therefore, this article aims to explain how have the evolving mandates of UN peacekeeping missions, exemplified by MINUSCA's activities in the Central African Republic, impacted the effectiveness of international peacekeeping efforts in achieving long-term peace and stability in conflict-affected regions?

Methodology

The article identifies several theoretical frameworks and concepts from the fields of international relations, peace and conflict studies, and political science that are

relevant to the examination. These frameworks include Liberal Peace Theory, Realism (Jervis' concept), Neorealism, Constructivism, Conflict Transformation Theory, and Critical Security Studies. Each selected theoretical framework is applied to specific aspects of the study. For example, Liberal Peace Theory is applied to analyze the Multidimensional Integrated Stabilization Mission in the Central African Republic's (hereinafter referred to as MINUSCA) efforts in supporting electoral processes and fostering national dialogue as pathways to promoting democratic governance and peace. Realism and Neorealism are used to examine the motivations behind external actors' involvement in conflict in CAR, while Constructivism is employed to understand how changing norms and identities influence peacekeeping mandates' evolution. The methodology involves a conceptual analysis of MINUSCA's mandate evolution and activities in CAR within the context of the selected theoretical frameworks. This analysis aims to provide insights into UN peacekeeping missions' motivations, goals, and implications in conflict zones like CAR. The methodology includes a historical contextualization of the conflict in CAR and UN involvement, highlighting key events, resolutions, and developments that shaped MINUSCA's mandate over time. This historical perspective helps to understand the evolution of peacekeeping efforts and the challenges faced in addressing complex conflicts. The methodology evaluates MINUSCA's mandate evolution, role expansion, and effectiveness in contributing to peace and stability in CAR. This evaluation is interpreted through the lens of the selected theoretical frameworks to provide a nuanced understanding of the peacekeeping mission's impact and outcomes. The methodology concludes by synthesizing the findings from the theoretical analysis, historical context, and evaluation of MINUSCA's mandate. It highlights the implications of the examination for understanding UN peacekeeping missions' evolution, effectiveness, and ongoing challenges in conflict resolution and peacebuilding efforts. Overall, the methodology employed in the article combines theoretical insights, historical analysis, and evaluative frameworks to comprehensively examine the UN peacekeeping mission in CAR and its broader implications for international peace and security.

Theoretical frameworks

To analyze and deepen the understanding of the evolution and effectiveness of UN peacekeeping missions, particularly in the context of the Central African Republic (CAR) as described in the article, several theoretical frameworks and concepts from the fields of international relations, peace and conflict studies, and political science could be applied. The liberal peace theory of John Oneal suggests that democracies are less likely to go to war, particularly with each other, and that the promotion of democratic governance, the rule of law, human rights, and economic interdependence can lead to more stable and peaceful international relations¹. In the context of MINUSCA's efforts to support electoral processes and foster national dialogue in CAR, this theory could offer insights into the long-term goals of peacekeeping missions to promote democratic governance as a path to peace.

Jervis' concept of realism, emphasizing the anarchic international system and the pursuit of national interest through power, could provide a lens to examine the motivations behind the involvement of external actors in CAR, including the UN and France². Neorealism, focusing on the structure of the international system, could further help analyze how the balance of power and the interests of major states influence the scope and effectiveness of peacekeeping missions. Meanwhile, Constructivism could be applied to understand how changing norms and identities influence the evolution of peacekeeping mandates. This theory emphasizes the role of ideas, beliefs, and social constructs in international relations³. The evolving mandate of MINUSCA - from solely focusing on ceasefire and protection of civilians to fostering national dialogue and

¹ Oneal, J.R., Oneal, F.H., Maoz, Z. & Russett, B. (1996). The Liberal Peace: Interdependence, Democracy, and International Conflict, 1950-85. *Journal of Peace Research*, 33(1), 11-28. <http://www.jstor.org/stable/425131>

² Jervis, R. (1998). Realism in the Study of World Politics. *International Organization*, 52(4), 971-991. <http://www.jstor.org/stable/2601364>

³ Checkel, J.T. (1998). The Constructivist Turn in International Relations Theory [Review of National Interests in International Society; The Culture of National Security: Norms and Identity in World Politics; Norms in International Relations: The Struggle against Apartheid, by M. Finnemore, P. Katzenstein, & A. Klotz]. *World Politics*, 50(2), 324-348. <http://www.jstor.org/stable/25054040>

supporting electoral processes - reflects a shift in international norms regarding peacekeeping and state-building.

Last, conflict transformation theory looks beyond resolving immediate issues to address the underlying causes of conflict, aiming for deep-rooted change in relationships, attitudes, and socio-political structures¹. Analyzing MINUSCA's efforts in fostering national dialogue and supporting electoral processes through this lens could offer insights into the mission's potential for contributing to a transformative peace in CAR.

Historical Context

In order to understand how the UN mandate has changed over time, it is necessary to refer back to the history of the civil war in CAR. The political instability, ethnic conflicts, and the humanitarian crisis became primary problems in CAR almost immediately after the ignition of hostilities. However, UN involvement in the conflict took place two years later in 2014, when the risk of the humanitarian crisis reached its apogee². In order to address all the challenges, as per Resolution 2149 (2014), the UN Security Council established the United Nations Multidimensional Integrated Stabilization Mission in the Central African Republic (MINUSCA) until April 30, 2015³. At the same time, a request was sent to the Secretary-General to subsume the Integrated Peacebuilding Office on the Central African Republic (BINUCA), which was further smoothly transferred to MINUSCA⁴. MINUSCA initially had a primary task of securing the rights of the civilian population in areas where hostilities could erupt again.

The UN mandate power of the UN from a legal perspective

The United Nations has significant legal power and authority, although it is important to note that its powers are limited by the provisions of its charter and the willingness of member states to comply with its decisions. It is also

¹ Doucet, I. (1997). Conflict Transformation. *Medicine, Conflict and Survival*, 13(3), 175-194. <http://www.jstor.org/stable/45354930>

² United Nations, (2023). About: MINUSCA. Retrieved from: <https://minusca.unmissions.org/en/about>

³ Ibid.

⁴ Ibid.

necessary to take into consideration how resolutions that allow the UN to conduct certain types of operations would limit their capabilities in the crisis zones. Before turning into a specific example of the political and legal power of UN resolutions, the legal power of the UN should be understood in several key areas.

The UN Security Council has primary responsibility for maintaining international peace and security. It can authorize peacekeeping missions, impose sanctions, and even authorize the use of force in certain circumstances, such as in cases of self-defense or when there is a threat to international peace¹. From a legal perspective, resolutions issued by the UN give consent to nations to act in problematic places and not violate international law. This issue was present during the US invasion of Iraq, when, without consent, the US launched a military campaign against Iraq to overthrow the regime of Saddam Hussein. The UN plays a crucial role in developing and enforcing international law. It provides a forum for member states to negotiate treaties and agreements, and it works to promote adherence to these legal instruments². The UN provides a platform for member states to negotiate and draft international treaties and conventions on various subjects such as human rights, environmental protection, disarmament, trade, and more. These treaties are often developed under the auspices of specialized UN agencies, such as the International Labour Organization (ILO), the World Health Organization (WHO), or the United Nations Framework Convention on Climate Change (UNFCCC). As it would be presented below, UN disarmament efforts played a pivotal role in the Central African Republic.

From another perspective, the UN is a central actor in the promotion and protection of human rights globally. Bodies such as the UN Human Rights Council and the Office of the High Commissioner for Human Rights monitor human rights situations, investigate violations, and make recommendations for action. Through agencies like the United Nations Development Programme

¹ Gross, L. (1965). The United Nations and the Role of Law. *International Organization*, 19(3), 537-561. <http://www.jstor.org/stable/2705869>

² Schachter, O. (1994). United Nations Law. *The American Journal of International Law*, 88(1), 1-23. <https://doi.org/10.2307/2204020>

(UNDP), the UN engages in development efforts worldwide, addressing issues such as poverty, health, education, and sustainable development¹. The UN supports international criminal justice mechanisms such as the International Criminal Court (ICC), which investigates and prosecutes individuals accused of genocide, war crimes, crimes against humanity, and aggression. However, it's important to recognize that the effectiveness of the UN's legal power can vary. For example: The UN relies heavily on member states to implement its decisions and enforce international law. When there is a lack of consensus among major powers or when states choose not to comply, the UN's ability to enforce its mandates can be. The UN operates in a complex political environment where geopolitical interests, power dynamics, and diplomatic considerations influence decision-making². This can sometimes result in compromises or delays in taking action on specific issues. Resource constraints can also affect its effectiveness, including financial limitations and logistical challenges in deploying peacekeeping missions or humanitarian operations. Overall, while the UN possesses significant legal authority and plays a crucial role in global governance, its ability to address complex international challenges depends on various factors, including political will, cooperation among member states, and the support of the international community.

Evaluation of MINUSCA's mandate

In 2014, MINUSCA's mandate encompassed responsibilities of maintaining security and civilian protections, but their role has evolved since its inception. Initially, according to Resolution 2149 (2014), MINUSCA was assigned a task for the parties to obey the ceasefire³. However, over time, the scope of responsibilities evolved, and after 2014, it started to include the support of the transitional government in achieving political stability, as from 2014 until the elections of 2020, the state was basically partitioned between government

¹ Schachter, O. (1994). United Nations Law. The American Journal of International Law, 88(1), 1–23. <https://doi.org/10.2307/2204020>

² Hurd, I. (2014). The UN Security Council and the International Rule of Law. The Chinese Journal of International Politics, 7(3), 361–379. <https://www.jstor.org/stable/48615915>

³ Security Council Report, (2023.) UN Documents for Central African Republic: Security Council Resolutions. Retrieved from: https://www.securitycouncilreport.org/un_documents_type/security-council-resolutions/page/2?ctype=Central+African+Republic&cbtype=central-african-republic#038:cbtype=central-african-republic

and rebels, that is why the Resolution prescribed the deployment of 10,000 peacekeepers watchdogs of security¹. Similarly, their role could be compared to the first generation of UN peacekeepers mentioned by Ramsbotham, Woodhouse, and Miall, whose sole mission was to ensure that a ceasefire in the conflict zones should not be violated².

The evolution of the mandate and role of peacekeepers started to change with Resolution 2196 (2015,) which extended the period of MINUSCA's staying in CAR until 2016, and Resolution 2217 (2015,) which not only extended the staying period until 2016 but also gave a favor of the UN to cooperate with international actors (such as France) in conflict resolution process³. Since 2015, MINUSCA has received additional authority to enlarge its scope of powers by being engaged in the political landscape of post-war CAR. In addition to security operations, which now included safeguarding the infrastructure and strategic objects that were under the control of peacekeepers, the new responsibilities prescribed fostering national dialogue between confronting parties as well as helping the authorities to build national institutions for the state functioning (this program was implemented alongside African Union and European Union)⁴. At the same time, MINUSCA helped facilitate the electoral processes in CAR by supporting the organization of presidential and legislative elections⁵. This was entrusted to MINUSCA by Resolution 2217 (2015) about Integrated Electoral Assistance. With the help of the UN, in December 2015, presidential and legislative elections were organized in the state, which was followed by the second round in February and March of 2016⁶.

Mediation of the political conflict between rebels and the government was

¹ **Gorur, A.** (2020.) Case Study 4: The Political Strategy of the UN Peacekeeping Mission in the Central African Republic. Retrieved from: <https://i.unu.edu/media/cpr.unu.edu/attachment/4414/CAR.pdf>

² **Ramsbotham, Woodhouse & Miall** (2016.) Chapter SIX: Containing Violent Conflict: Peacekeeping. P.p. 173-198.

³ United Nations, (2023.) Electoral Assistance. Retrieved from: <https://minusca.unmissions.org/en/electoral-assistance-0>

⁴ Ibid.

⁵ Ibid.

⁶ **Gorur, A.** (2020.) Case Study 4: The Political Strategy of the UN Peacekeeping Mission in the Central African Republic. Retrieved from: <https://i.unu.edu/media/cpr.unu.edu/attachment/4414/CAR.pdf>

also included in the post-2015 mandate and was actively used by MINUSCA to settle the conflict once and for all. The first attempt was made in May 2015, when the transitional government organized the Bangui Forum with the help of MINUSCA¹. It had to serve as a platform for national political dialogue with an objective and had to establish a new social contract for the citizens of Central Africa through the examination of sustainable resolutions to the ongoing conflict². Interventions of such (political) type demonstrate an understanding that the attainment of peace and stability in the Central African Republic cannot be solely accomplished through security measures. The evolution of the mandate of MINUSCA allowed UN peacekeepers to address the most complex challenges, one of which was their contribution to stabilizing the security situation. MINUSCA has intensely worked since 2015 to implement the disarmament, demobilization, and reintegration (DDR) program and give an opportunity to the members of armed groups to return to normal life, in case foreign nationalities were spotted at the place of hostilities, DDR helped them to repatriate³.

Conclusion

Overall, MINUSCA is a good representation of how the peacekeeping mission and mandate prescribed to the UN has evolved over time, from personnel who were prescribed with an obligation to secure the ceasefire regime to a developed institution with capabilities to help states rebuild and even modernize their institutions and political systems according to international standards. Its expansion beyond traditional security measures in CAR was seen in its efforts to help foster national dialogue, reorganize electoral processes, and mediate between conflicting parties to reach peace. The situation in the Central African Republic is an example of how UN peacekeeping missions continue to develop and play a vital part in attempting to maintain peace and stability.

¹ Ibid.

² Ibid.

³ United Nations, (2023). DISARMAMENT DEMOBILIZATION REINTEGRATION. Retrieved from: https://minusca.unmissions.org/en/DDR_En

Bibliography

1. **Oneal, J.R., Oneal, F.H., Maoz, Z. & Russett, B.** (1996). The Liberal Peace: Interdependence, Democracy, and International Conflict, 1950-85. *Journal of Peace Research*, 33(1), 11–28. <http://www.jstor.org/stable/425131>
2. **Jervis, R.** (1998). Realism in the Study of World Politics. *International Organization*, 52(4), 971–991. <http://www.jstor.org/stable/2601364>
3. **Checkel, J.T.** (1998). The Constructivist Turn in International Relations Theory [Review of National Interests in International Society; The Culture of National Security: Norms and Identity in World Politics; Norms in International Relations: The Struggle against Apartheid, by M. Finnemore, P. Katzenstein, & A. Klotz]. *World Politics*, 50(2), 324–348. <http://www.jstor.org/stable/25054040>
4. **Doucet, I.** (1997). Conflict Transformation. *Medicine, Conflict and Survival*, 13(3), 175–194. <http://www.jstor.org/stable/45354930>
5. United Nations, (2023). About: MINUSCA. Retrieved from: <https://minusca.unmissions.org/en/about>
6. **Gross, L.** (1965). The United Nations and the Role of Law. *International Organization*, 19(3), 537–561. <http://www.jstor.org/stable/2705869>
7. **Schachter, O.** (1994). United Nations Law. *The American Journal of International Law*, 88(1), 1–23. <https://doi.org/10.2307/2204020>
8. **Hurd, I.** (2014). The UN Security Council and the International Rule of Law. *The Chinese Journal of International Politics*, 7(3), 361–379. <https://www.jstor.org/stable/48615915>
9. Security Council Report, (2023). UN Documents for Central African Republic: Security Council Resolutions. Retrieved from:
10. https://www.securitycouncilreport.org/un_documents_type/security-council-resolutions/page/2?ctype=Central+African+Republic&cbtype=central-african-republic#038;cbtype=central-african-republic
11. **Gorur, A.** (2020). Case Study 4: The Political Strategy of the UN Peacekeeping Mission in the Central African Republic. Retrieved from: <https://i.unu.edu/media/cpr.unu.edu/attachment/4414/CAR.pdf>
12. **Ramsbotham, Woodhouse & Miall** (2016). Chapter SIX: Containing Violent Conflict: Peacekeeping. P.p. 173-198.
13. United Nations, (2023). Electoral Assistance. Retrieved from: <https://minusca.unmissions.org/en/electoral-assistance-0>

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՖՐԻԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱԿ-Ի ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻ ՄԱՆԴԱՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր

Սույն հոդվածն ուսումնասիրում է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) խաղաղապահ առաքելությունների զարգացող դերն ու արդյունավետությունը՝ կենտրոնանալով Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության (CAR) դեպքի ուսումնասիրության վրա: Այն սկսվում է ԱՊՀ կոնֆլիկտի պատմական նախադրյալների համատեքստում և 2014 թվականին ԱՄԿ-ում ՄԱԿ-ի բազմաչափ ինտեգրված կայունացման առաքելության (MINUSCA) ստեղծմամբ: Օգտագործելով բազմամասնագիտական մոտեցում՝ հիմնված միջազգային հարաբերությունների, խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրությունների և քաղաքագիտության վրա, հոդվածն օգտագործում է տեսական շրջանակներ, ինչպիսիք են Լիբերալ խաղաղության տեսությունը, ռեալիզմը, նեոռեալիզմը, կոնստրուկտիվիզմը և հակամարտությունների փոխակերպման տեսությունը՝ MINUSCA-ի մանդատի էվոլյուցիան և գործունեությունը վերլուծելու համար: Քննությունն ընդգծում է MINUSCA-ի անցումն ավանդական խաղաղապահ խնդիրներից դեպի ավելի լայն պարտականություններ՝ ներառյալ ազգային երկխոսության խթանումը, ընտրական գործընթացներին աջակցելը և ինստիտուտների կայացմանն օժանդակելը: Այն ուսումնասիրում է, թե ինչպես է MINUSCA-ի մանդատի ընդլայնումն արտացոլում փոփոխվող միջազգային նորմերը և բացահայտում է արտաքին դերակատարների ներգրավվածության դրդապատճառները CAR-ում, ինչպիսիք են Ֆրանսիան և ՄԱԿ-ը: Բացի այդ, հոդվածը գնահատում է MINUSCA-ի արդյունավետությունը ԱՊՀ-ում խաղաղությանն ու կայունությանը նպաստելու գործում՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են ռեսուրսների սահմանափակումները և աշխարհաքաղաքական դինամիկան: Սինթեզելով տեսական պատկերացումները, պատմական վերլուծությունները և գնահատողական շրջանակները՝ հոդվածը նաև տալիս է ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունների էվոլյուցիայի,

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 2(114)2024

մարտահրավերների և միջազգային խաղաղության և անվտանգության վրա ազդեցությունների պատկերացում: Այն նպաստում է հակամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատման ջանքերում միջազգային կազմակերպությունների դերի վերաբերյալ շարունակական քննարկումներին՝ առաջարկելով պատկերացումներ ժամանակակից խաղաղապահ գործողությունների բարդությունների և դրանց ազդեցության վերաբերյալ հակամարտությունից տուժած տարածաշրջանների վրա, ինչպիսին է Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը:

Հիմնաբառեր. ՄԱԿ, Խաղաղապահ առաքելություններ, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն (CAR), MINUSCA, մանդատի էվոլյուցիա, Բանաձև 2149 (2014), Բանաձև 2196 (2015), Բանաձև 2217 (2015), զինաթափում, զորացրում և վերաինտեգրում (DDR) ծրագիր:

ПОЛИТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ МАНДАТА МИРОТВОРЦЕВ ООН В ЦЕНТРАЛЬНОАФРИКАНСКОЙ РЕСПУБЛИКЕ

Аннотация

В настоящей статье исследуется меняющаяся роль и эффективность миротворческих миссий Организации Объединенных Наций (ООН), уделяя особое внимание примеру Центральноафриканской Республики (ЦАР). Статья начинается с контекстуализации исторической подоплеки конфликта в ЦАР и создания Многомерной комплексной миссии ООН по стабилизации в ЦАР (МИНУСКА) в 2014 году. Используя междисциплинарный подход, основанный на международных отношениях, исследованиях мира и конфликтов, а также политологии, в статье для анализа эволюции мандата и деятельности МИНУСКА используются теоретические основы, такие как либеральная теория мира, реализм, неореализм, конструктивизм и теория трансформации конфликтов. В исследовании подчеркивается переход МИНУСКА от традиционных миротворческих задач к более широким

обязанностям, включая содействие национальному диалогу, поддержку избирательных процессов и помощь в институциональном строительстве. В нем рассматривается, как расширение мандата МИНУСКА отражает изменение международных норм, и определяются мотивы участия внешних игроков в ЦАР, таких как Франция и ООН. Кроме того, в статье оценивается эффективность МИНУСКА в содействии миру и стабильности в ЦАР, учитывая такие факторы, как ограниченность ресурсов и геополитическая динамика. Объединив теоретические идеи, исторический анализ и оценочные основы, статья дает детальное понимание эволюции, проблем и последствий миротворческих миссий ООН для международного мира и безопасности. Данные миссии способствуют постоянным дискуссиям о роли международных организаций в разрешении конфликтов и их усилиях по миростроительству, предлагая понимание сложностей современных миротворческих операций и их влияния на пострадавшие от конфликтов регионы, такие как Центральноафриканская Республика.

Ключевые слова: Организация Объединенных Наций, миротворческие миссии, Центральноафриканская Республика (ЦАР), МИНУСКА, эволюция мандата, Резолюция 2149 (2014), Резолюция 2196 (2015), Резолюция 2217 (2015), программа разоружения, демобилизации и реинтеграции (РДР).

Հոդվածը հանձնված է խմբագրություն 03.04.2024 թ., փրվել է գրախոսության 04.04.2024 թ., ընդունվել է փաշարության 10.04.2024 թ.:

DOI: 10.59560/18291155-2024.2-205



ՆԱՐԵԿ ԲԱԼՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի
Իրավունքի և քաղաքականության
ինստիտուտի իրավունքի տեսության
և սահմանադրական իրավունքի ամբիոնի
2-րդ կուրսի ուսանող*

**ՊԵՏԱԻՇԽԱՆԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄԸ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.
ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ամփոփագիր

20-րդ դարի վերջից աշխարհում տարածում է գտել պետական կառավարման մարմինների լիազորությունների «մասնավորեցման» պրակտիկան: Հաշվի առնելով ինստիտուտի ոչ այդքան մեծ ճանապարհ անցած լինելը, ինչպես նաև հայեցակարգային մոտեցումների բացակայությունը՝ պետությունները սահմանադրական և օրենսդրական լուրջ խնդիրների առաջ են կանգնած ոչ պետական կազմակերպություններին պետախիշխանական լիազորությունների պատվիրակման գործընթացում: Սույն զեկույցով անդրադարձ է կատարվում պետախիշխանական լիազորությունների պատվիրակմանը ազատականության գաղափարախոսության համատեքստում: Վերջինս ժամանակի ընթացքում վերածվել է ծայրահեղականության, ըստ որի՝ պետությունը, պատվիրակելով իր լիազորությունը մասնավորին, խուսափում է այդ լիազորության ոչ արդյունավետ և ոչ իրավաչափ իրականացման հետևանքով առաջացող պատասխանատվությունից: Զեկույցում փորձ է արվում հիմնավորել այն մոտեցումը, համաձայն որի՝ պետախիշխանական լիազորությունների պատվիրակման հիմքում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

անհրաժեշտ է ունենալ ամուր կառուցակարգերի ամբողջություն, որոնք կապահովեն պետական լիազորությունների իրականացման արդյունավետության և ժողովրդավարական սկզբունքների, մարդու իրավունքների սահմանափակումների պատշաճ հավասարակշռումը: Անդրադարձ է կատարվում նաև ՀՀ-ում ընթացող սահմանադրական բարեփոխումների շրջանակում քննարկման առարկա դարձած «իշխանության պատվիրակման» գաղափարին, որի արդյունքում ներդրվելու են մասնավոր սեկտորին իշխանական լիազորությունների պատվիրակումը թույլատրող նորմեր:

Հիմնաբառեր. պետաիշխանական լիազորությունների պատվիրակում, պետության պատասխանատվության սկզբունք, մասնավորեցում, պետական վերահսկողություն, սահմանադրական բարեփոխումներ:

1. Ներածություն

Վերջին ժամանակահատվածում աշխարհում տարածված պրակտիկա է ոչ պետական կազմակերպությունների ներգրավվածությունը պետական կառավարմանը: Առավելապես գերակշռում է այն մոտեցումը, համաձայն որի՝ լիազորությունների փոխանցումը, որպես պետական կառավարման մեթոդներից մեկը, իրականացվում է գործադիր իշխանության մարմինների կողմից: Օրենսդիր և դատական իշխանության լիազորությունների բնույթը բացառում է ներկա պայմաններում մասնավոր կազմակերպություններին այդպիսի իշխանական լիազորություններով օժտելու հնարավորությունը, որն իր արտացոլումն է ստացել Ամերիկայի Միացյալ Նահանգներում (այսուհետ՝ նաև ԱՄՆ) ձևավորված «չպատվիրակման» դոկտրինում: Իհարկե, մեզ հայտնի են պատվիրակված օրենսդրության և միջնորդ դատարանների (արբիտրաժների) ինստիտուտները, սակայն վերջիններս չեն դիտարկվում ոչ պետական կազմակերպություններին պետաիշխանական լիազորությունների պատվիրակման համատեքստում: Պետաիշխանական լիազորությունների պատվիրակման գործընթացում պետությունը բախվում է լրջագույն խնդիրների, քանի որ ոլորտը կարգավորող

ՍԱՀՄԱՆԱՆՈՒՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

օրենսդրական ակտերի թերությունները և տեսական, հայեցակարգային մոտեցումների սուղ պաշարը հնարավորություն չեն ընձեռում որոշելու նման կազմակերպությունների կազմակերպահրավական կարգավիճակը, պետաիշխանական լիազորությունների (այսուհետ՝ նաև լիազորություններ) պատվիրակման թույլատրելի սահմանները և վերջինս գնահատելու անհրաժեշտ կառուցակարգերը:

2. Վերլուծություն

2.1. Լիազորությունների պատվիրակման հիմքերը և նախադրյալները

Լիազորությունների պատվիրակման գաղափարը որոշ չափով առաջ է բերվել ազատականության գաղափարախոսության հետևորդների կողմից: Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկը, ուսումնասիրելով պետական գործառույթները, եկել է այն եզրահանգմանը, որ դրանցից որոշները կարող են իրականացվել մասնավոր սեկտորի կողմից: Ըստ հեղինակի՝ «պետությունն ազատ հասարակության մեջ բազմաթիվ կազմակերպություններից մեկն է, որի անհրաժեշտությունն առկա է միայն արտաքին շրջանակներն ապահովելու համար, ինչի ներսում առաջանում և գոյություն է ունենում ինքնակարգավորում»¹: Ավգուստ ֆոն Հայեկը պետության գոյությունը կապում է մեծամասամբ արտաքին հարաբերությունների կարգավորման գործառույթի հետ՝ համարելով, որ երկրի ներսում մասնավոր սուբյեկտների միջոցներով տեղի է ունենում ինքնակարգավորում: Մարտին վան Կրեվելը, զարգացնելով ազատականության ուսմունքի հետևորդների մոտեցումները, պնդում է, որ պետությունը պետք է «նահանջի» հասարակական հարաբերությունների միակ կարգավորողի իր դիրքից²: Ազատականության գաղափարախոսության առանցքային մոտեցումը նրանում է, որ պետությունը պետք է զիջի

¹ Hayek, F.A. Law, Legislation and Liberty: A New Statement of the Liberal Principles of Justice and Political Economy. Routledge, 2012. 584 p. Романовская О.В. Делегирование государственно-властных полномочий в системе публично-правового регулирования // Вестник Пермского университета. Юридические науки. 2017. Вып. 36. - С. 145.

² Creveld van M. The Rise and Decline of the State. Cambridge University Press. 1999. 436 p., Романовская О.В. Делегирование государственно-властных полномочий в системе публично-правового регулирования // Вестник Пермского университета. Юридические науки. 2017. Вып. 36. - С. 145.

իր՝ հասարակական հարաբերությունները կարգավորողի մենաշնորհ դիրքը ի օգուտ ոչ պետական կազմակերպությունների:

Իհարկե, այս ուսմունքը գոյության իրավունք ունի և որոշ չափով պետության «նահանջը» անհրաժեշտություն է, սակայն վերջինիս ներազգային դերի նման արժեզրկումը կարող է հանգեցնել հենց ուսմունքի հետևորդների կողմից առաջ բերած տեսակետի, պետության՝ միայն արտաքին շրջանակն ապահովողի միջազգային դերի թուլացմանը: Այս գաղափարախոսությունը ռիսկային է նաև այն տեսանկյունից, որ կարող է գործնականում բերել ծայրահեղականության: Պետությունը կարող է չարաշահել մասնավոր կազմակերպություններին իր դիրքը զիջելու հնարավորությունը, որպեսզի ազատվի որոշ գործառույթներից բխող հսկայական բեռից: Սակայն պատվիրակման ինստիտուտը չպետք է դիտարկվի բացառապես ազատականության ուսմունքի ծայրահեղական գաղափարախոսության համատեքստում, քանի որ պետության՝ հասարակական հարաբերությունների միակ կարգավորողի դերը դեռևս սպառված չէ: Դա է փաստում *պեյրության պատասխանավության գաղափարը* իշխանական լիազորությունների պատվիրակման գործընթացում:

2.2. Լիազորությունների պատվիրակման միջազգային փորձը

Լիազորությունների պատվիրակումն արևմտյան երկրներում, որտեղ, համեմատած արևելյան երկրների, առավել մեծ դեր և նշանակություն ունի, ստացել է «մասնավորեցում» (privatization) անվանումը: Որոշ երկրներում, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Լիտվան, Մոլդովան և այլ եվրոպական երկրները, երկմոդել լիազորությունների պատվիրակում է նախատեսվում.

1) պետությունը որևէ պետական մարմնում որոշ ծառայությունների մատուցման (շինությամբ ապահովելը, մարդկային ռեսուրսները, սնունդ պատրաստելը, վարչատնտեսական բլոկի կառավարումը և այլն) իրավասությունը փոխանցում է մասնավոր կազմակերպությանը՝ չվերապահելով վերջինիս իշխանական լիազորություն.

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

2) պետությունը որևէ պետական մարմնի լիազորություն փոխանցում է մասնավոր կազմակերպությանը՝ վերապահելով վերջինիս իշխանության իրականացման հնարավորություն:

ԱՄՆ-ում վերոնշյալ երկու մոդելները տեղ են գտել քրեակատարողական հիմնարկների ձևավորման գործընթացում: Առաջինի դեպքում քրեակատարողական հիմնարկում ծառայությունները մատուցում է մասնավոր կազմակերպությունը, իսկ բանտային ռեժիմի սահմանումը պետության լիազորությունն է: Սակայն երկրորդ մոդելով՝ բանտային ռեժիմի սահմանումը նույնպես իրականացնում է մասնավոր կազմակերպությունը, որն ուղեկցվում է պետության կողմից յուրաքանչյուր բանտարկյալի դիմաց որոշ չափի ֆինանսավորմամբ՝ մինչև նույն ժամանակ ազատելով իրեն առավել մեծ ֆինանսատնտեսական ջանքեր պահանջող գործառույթների իրականացումից¹:

Հարկ է նշել նաև, որ գերմանական վարչական իրավունքում առանձնացվում է լիազորությունների պատվիրակման հավելյալ երկու եղանակ: Արդեն իսկ գործող մասնավոր կազմակերպություններին իշխանական լիազորությունների պատվիրակման դեպքում այն կոչվում է «*ֆունկցիոնալ մասնավորեցում*», իսկ պետության կողմից ստեղծված իրավաբանական անձանց իշխանական լիազորություններով օժտելու դեպքում՝ «*կազմակերպական մասնավորեցում*»²:

Առաջին հայացքից որևէ ակնառու խնդիր չկա, պետությունը կարող է իր միջոցներն ուղղել առավել կարևոր հարցերի լուծմանը, սակայն վերոնշյալ դեպքում առաջանում են անվտանգային խնդիրներ: Քրեակատարողական հիմնարկ-մասնավոր կազմակերպությունը՝ լինելով «ուժային կառույց», բացասական ազդեցություն կարող է ունենալ պետական կառավարման համակարգի վրա՝ սեփական շահերից ելնելով: Պետությունը, որպեսզի զերծ մնա մասնավոր կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների անհարկի սահմանափակումներից,

¹ Bryant, S. The Business Model of Private Prisons. 2022.

² Ястребов О.А. Делегирование государственных полномочий и функций негосударственным организациям // Вестн. моск. ун-та. Сер. 11. Право. 2016. № 5. - С. 36.

ժողովրդավարական սկզբունքների ոտնահարումներից և անվտանգային խնդիրներից, պարտավոր է պատշաճ կերպով վերահսկել իր կողմից փոխանցված լիազորությունների իրականացումը:

Երկմոդել պատվիրակում է նախատեսվում նաև եվրոպական մի շարք երկրներում (Լիտվա, Մոլդովա և այլն) դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ձևավորման գործընթացում: Ինչպես քրեակատարողական հիմնարկում, այնպես էլ այս ոլորտում, ծառայություններից զատ կազմակերպությանը փոխանցվում են իշխանական լիազորություններ, ներառյալ՝ անձանց գույքի վրա բռնագանձում տարածելը¹:

2.3. Լիազորությունների պատվիրակումը և պետության պատասխանատվությունը

Ժողովրդի կողմից իշխանության իրականացման մանդատ ստանում է պետությունը, այլ ոչ թե մասնավոր կազմակերպությունը: Հետևաբար՝ ցանկացած պարագայում, երբ պետությունը գտնում է, որ իր որևէ լիազորություն կարող է վերապահվել մասնավորին, պարտավոր է մինչ այդ գործընթացի սկիզբն ուսումնասիրել կանխատեսելի ռիսկերը, դրա դրական և բացասական ազդեցությունը հասարակական հարաբերությունների կարգավորման վրա: Պատվիրակման ինստիտուտն ինքնին բացասական երևույթ չէ, այլ հակառակը, որոշ դեպքերում ապահովում է կառավարման արդյունավետությունը և պետությանն ազատում է նվազ կարևորություն ունեցող և մեծ ֆինանսատնտեսական ջանքեր պահանջող գործառույթների իրականացման բեռից, սակայն դա պետք է մնա ժողովրդաիշխանության տիրույթում, որը կարող ենք բնորոշել որպես *միջնորդավորված ժողովրդաիշխանության իրականացում*: Մասնավոր կազմակերպությանը պետաիշխանական լիազորություններ փոխանցելու և դրանք իրականացնելու դեպքում, կարելի է համարել *քվազի-պետական մարմին*, որի դերը պատվիրակման գործընթացում պետություն-մարդ փոխհարաբերության արդյունավետությունն

¹ Տե՛ս «Հարկադիր կատարողների մասին» Մոլդովայի և «Հարկադիր կատարողների մասին» Լիտվայի օրենքները:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

ապահովելն է: Լիազորությունների պատվիրակումը պետք է ուղեկցվի այնպիսի կառուցակարգերով և ընթացակարգերով, որոնք կերաշխավորեն պետության պատասխանատվության սկզբունքը և լիազորությունների արդյունավետ իրականացումը:

Իշխանական լիազորությունների պատվիրակումն ինքնանպատակ չէ: Այն հետապնդում է լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակ, հակառակ դեպքում երևույթը կդիտվի որպես պետության կողմից պատասխանատվությունից և հնարավոր ռիսկերից խուսափելու միջոց: Այս հարցում ելակետային դիրքորոշումներ են հայտնել միջազգային դատարանները և միջազգային կազմակերպությունները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) իրավական դիրքորոշումների փոխկապակցվածության արդյունքում հանգել է այն եզրակացությանը, որ պետությունը ենթակա է պատասխանատվության, եթե խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում ամրագրված իրավունքներից և ազատություններից որևէ մեկը, եթե անձի տվյալ իրավունքների և ազատությունների պաշտպանությունը համարվում է պետության պարտականություն, որը կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ¹: Հավելելով՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ պետությունը չի կարող իրեն ազատել պատասխանատվությունից՝ պատվիրակելով իր լիազորությունները մասնավոր կազմակերպություններին կամ անհատներին (*ratione personae*)²: Միավորված ազգերի կազմակերպության միջազգային իրավունքի հանձնաժողովը 2001 թ. ընդունած միջազգային հակաիրավական արարքների համար պետությունների պատասխանատվության մասին հոդվածների նախագծերում նույնպես սահմանել է այն իրավիճակը, երբ մասնավոր սուբյեկտի գործողությունները կարող են ուղղակիորեն վերագրվել պետությանը: Ըստ դրա՝ պետությունը ենթակա է պատասխանատվության այն մասնավոր իրավաբանական անձի գործողությունների համար,

¹ *Castello-Roberts v. United Kingdom*. 247-C Eur. Ct. H. R. (Ser. A) 1993.

² *Mutatis mutandis*, the *Van der Musselle v. Belgium*. Judgment of 23 November 1983, Series A no. 70, pp. 14-15, paras. 28-30.

որը տվյալ պետության օրենսդրության համաձայն իրականացնում է պետաիշխանական լիազորություններ՝ պայմանով, որ տվյալ դեպքում այդ կազմակերպությունը գործում է որպես այդպիսին¹:

Պատվիրակման գործընթացում պետությունը չի կտրվում դրանից բխող հետևանքներից և հնարավոր ռիսկերից: Թեև պետությունը կարող է պատվիրակել իշխանական լիազորությունները մասնավոր կազմակերպություններին, այն պատասխանատվություն է կրում այդ լիազորությունների ոչ իրավաչափ և ոչ արդյունավետ իրականացման համար:

Պետության պատասխանատվության վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ նաև ՀՀ) Սահմանադրական դատարանը (այսուհետ՝ նաև ՍԴ): ՍԴՈ-1271 որոշմամբ ՍԴ-ն անդրադարձել է նոտարների գործունեության հետևանքով պատճառված վնասի համար գույքային պատասխանատվությանը՝ արձանագրելով, որ «*օրենսդիրը հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառույթների իրականացումը պատվիրակել է նույնպես ՍԴ դիրքորոշման համաձայն՝ «նույնը չի կարող պարզապես համարվել իր ռիսկով գործող անհատ ձեռնարկատեր»*, ինչպես նաև սահմանադրական դատարանը կարևորում է այնպիսի իրավակարգավորումների անհրաժեշտությունը, որոնց շրջանակներում «*որոշ վարչական լիազորություններ մասնավոր անձանց փոխանցելու միջոցով պետությունը չի կարող հրաժարվել այդ լիազորությունների ոչ արդյունավետ իրականացման համար պատասխանատվությունից*»²:

Պետության պատասխանատվության սկզբունքը բխում է լիազորությունների բնույթի պատկանելիության գաղափարից: Վերջինս բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունի, որը թույլ կտա որոշել լիազորությունների ոչ իրավաչափ իրականացման դեպքում համապատասխան մարմնի պատասխանատվության հարցը: Պետության կողմից պատվիրակված լիազորություններն իրականացվում են մասնավոր կազմակերպության կողմից, սակայն

¹ UN, Responsibility of States for Internationally Wrongful Acts. 2001.

² Տես ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1271 որոշումը, ՀՀՊՏ 2016.05.23/39(1219) Հոդ. 415:

իրենց բնույթով մնում են պետական լիազորություններ: Պետությունն իր լիազորությունների ոչ իրավաչափ և ոչ արդյունավետ իրականացման համար պարտավորվում է պատասխանատվություն կրել, որը բացի գույքային պատասխանատվությունից ներառում է նաև դրանց իրականացման պատշաճ ֆինանսավորումը և վերահսկողությունը:

Պետության պատասխանատվության լայն շրջանակի վերաբերյալ ՄԻԵԴ-ը՝ մեկ այլ դիրքորոշմամբ (Սթորքն ընդդեմ Գերմանիայի գործով) կարևորել է պետական լիազորությունների պատվիրակման դեպքում դրանց պատշաճ իրականացման նկատմամբ *վերահսկողություն* իրականացնելու անհրաժեշտությունը¹:

2.4. Լիազորությունների պատվիրակումը ՀՀ-ում

Լիազորությունների պատվիրակման դեպքում պատշաճ ֆինանսավորման և վերահսկողության ենթասկզբունքները սահմանադրաիրավական մակարդակով ամրագրված են նաև ՀՀ-ում: Ներկայումս ՀՀ-ում պետական լիազորությունների պատվիրակում նախատեսված է միայն տեղական ինքնակառավարման մարմիններին²: Այս պարագայում ևս պետությունն անմասն չի մնում պատվիրակած լիազորությունների իրականացման գործընթացից: Սահմանադրությունը կանխորոշել է, որ պատվիրակված լիազորությունների իրականացումը պետք է ուղեկցվի պետության կողմից պարտադիր ֆինանսավորմամբ և պատշաճ վերահսկողությամբ: Վերջինս կարող է ապահովվել իրավասու պետական մարմնի կողմից *իրավական, մասնագիտական և ֆինանսական* հսկողության գործիքակազմի միջոցով: Ստացվում է, որ պետությունը, պատվիրակելով մասնավոր կազմակերպությանն իր լիազորությունների մի մասը, պահպանում է իր վերահսկողական գործառույթը, չի հրաժարվում պատասխանատվություն ստանձնել այդ լիազորությունների արդյունավետ իրականացման համար: Այս

¹ *Storck v. Germany*. 2005-V Eur. Application no. 61603/00, § 103.

² Տես ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 182, 186 և 188-րդ հոդվածները:

պարագայում կարելի է եզրակացնել, որ ժողովրդաիշխանության միջնորդավորված իրականացման համատեքստում պետությունը փաստացի մնում է ժողովրդից փոխանցված իշխանության իրականացման պատասխանատուն, լիազորությունների փոխանցմամբ չի խաթարում ժողովրդավարական սկզբունքների սահուն ընթացքը՝ կշեռքի նժարներին հավասարակշռելով լիազորությունների արդյունավետ իրականացումը և մարդու իրավունքների հնարավոր սահմանափակումներն ու ժողովրդավարական սկզբունքները:

ՀՀ-ում ընթացող սահմանադրական բարեփոխումների շրջանակում քննարկման առարկա դարձած «իշխանության պատվիրակման» գաղափարն անհրաժեշտ է դիտարկել վերոնշյալ վերլուծության համատեքստում: Սույնով նախատեսվում է սահմանադրաիրավական նորմեր ստեղծել՝ պատվիրակման ինստիտուտը ՀՀ-ում ներդնելու համար: Չնայած այն հանգամանքին, որ որոշ հայրենական իրավաբաններ կարծում են, որ իշխանական լիազորությունների պատվիրակումն անթույլատրելի է ներկայիս Սահմանադրության համատեքստում, սակայն այն չի արգելվում Սահմանադրությամբ, և նման նորմերի սահմանումը կարող է միտված լինել բացառապես պատվիրակման իրավական հիմքերի ամրապնդմանը: Այսպիսի մոտեցումը ռիսկային է այն տեսանկյունից, որ կասկածի տակ կարող է դնել այնպիսի կառույցների գոյության իրավաչափությունը, ինչպիսին է Փաստաբանների պալատը: Վերջինիս իրավական կարգավիճակի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանն (թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում) արձանագրել է, որ Փաստաբանների պալատի և փաստաբանի միջև ծագող իրավահարաբերությունը փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքում, հանրային իրավունքի բնագավառում է: Ըստ դատարանի՝ «(...) հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք»¹:

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քաղաքացիական գործ թիվ ԵԴ/38635/02/19 մասին:

ՀՀ-ում մասնավորին լիազորությունների պատվիրակման թույլատրելիության մասին խոսելիս անհրաժեշտ է նշել նաև, որ նման սահմանադրաիրավական նորմերի նախատեսումը կարող է պայմանավորված լինել պատվիրակման հիմքերի ամրապնդման գաղափարով: Կարևոր է սկզբունքորեն ամրագրել պատշաճ կառուցակարգերը և պատվիրակման սահմանները, հակառակ դեպքում այն կհանգեցնի պետության կողմից լիազորությունների փոխանցման անհարկի չարաշահումների: Պետության պատասխանատվության սկզբունքը, ինչպես նաև վերահսկողության և ֆինանսավորման ենթասկզբունքներն առաջնային նշանակություն ունեն պատվիրակման գործընթացում: ՀՀ սահմանադրական բարեփոխումների ընթացքում լիազորությունների պատվիրակումը թույլատրող նորմերի հիմքում անհրաժեշտ է ունենալ նաև պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության որոշման սահմանները, այսինքն՝ լիազորությունների պատվիրակումն արդյունավետության տեսանկյունից արդյո՞ք նպատակահարմար է, անհրաժեշտ է լիազորության փոխանցումը նպատակին հասնելու համար, թե՞ ոչ և արդյո՞ք ընտրված միջոցը մարդու հիմնական իրավունքների սահմանափակման տեսանկյունից համարժեք է դրանց նշանակությանը, թե՞ ոչ:

3. Եզրակացություն

Այսպիսով՝ սահմանադրաիրավական ամրագրում ստացած նպատակների իրագործման, գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով թույլատրելի է լիազորությունների պատվիրակումը ոչ պետական կազմակերպություններին՝ նախապես նվազեցնելով հնարավոր ռիսկերը¹: Սահմանադրաիրավական նորմերի մշակման գործընթացը պետք է ուղեկցվի պատշաճ կառուցակարգերի (պետության պատասխանատվություն, վերահսկողություն, ֆինանսավորում) ամրագրումներով, ինչպես նաև առաջարկում

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և սահմանադրական մարմինները: Ա. Ղամբարյան: Եր., Հեղ. իրատ., 2023, էջ 27:

ենք կիրառել *համաչափության սահմանադրական սկզբունքը* այս ոլորտում, որոնք կբացառեն մարդու իրավունքների անհարկի սահմանափակումները և ժողովրդախիշխանության իրականացման համար արգելք հանդիսացող երևույթները: ՀՀ-ում պետախիշխանական լիազորությունների պատվիրակումը մասնավորին կարող է արդարացված լինել միայն մարդու իրավունքների սահմանափակումների, ժողովրդավարական սկզբունքների և լիազորությունների իրականացման արդյունավետության հավասարակշռման դեպքում:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականություն ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով): ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118:
URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>
2. ՍԴՈ-1271: ՀՀՊՏ 2016.05.23/39(1219), Հոդ. 415:
3. «Հարկադիր կատարողների մասին» Մոլդովայի օրենքը: Law nr. 113 from 17.06.2010: URL: <https://www.lawyer-moldova.com/2012/09/law-on-bailiffs.html>
4. «Հարկադիր կատարողների մասին» Լիտվայի օրենքը: revised version of 14 November 2008 No X-1837, acting since 1 April 2009. URL: <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.343401?jfwid=11dyhevu2f>
5. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քաղաքացիական գործ թիվ ԵԴ/38635/02/19 մասին: Միասնական կայք, 2022.06.13-2022.06.26: Պաշտոնական հրապարակման օրը՝ 21.06.2022:
6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և սահմանադրական մարմինները: **Ա. Ղամբարյան:** Եր.: Հեղ. հրատ, 2023, 60 էջ:
7. **Hayek, F.A.** Law, Legislation and Liberty: A New Statement of the Liberal Principles of Justice and Political Economy. Routledge, 2012.
8. **Романовская О.В.** Делегирование государственно-властных

полномочий в системе публично-правового регулирования // Вестник Пермского университета. Юридические науки. 2017. Вып. 36.

9. **Crevelde van M.** The Rise and Decline of the State. Cambridge University Press. 1999.

10. **S. Bryant.** The Business Model of Private Prisons. 2022, URL: <https://www.investopedia.com/articles/investing/062215/business-model-private-prisons.asp#:~:text=Private%20prisons%20are%20contracted%20by,to%20unjust%20conditions%20and%20corruption>

11. **Ястребов О.А.** Делегирование государственных полномочий и функций негосударственным организациям // Вестн. моск. ун-та. Сер. 11. Право. 2016. № 5.

12. *Castello-Roberts v. United Kingdom.* 247-C Eur. Ct. H. R. (Ser. A) 1993.

13. Mutatis mutandis, the *Van der Mussele v. Belgium.* Judgment of 23 November 1983, Series A no. 70, pp. 14-15, paras. 28-30.

14. UN, Responsibility of States for Internationally Wrongful Acts. 2001. URL: https://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft_articles/9_6_2001.pdf

15. *Storck v. Germany.* 2005-V Eur. Application no. 61603/00, § 103.

ДЕЛЕГИРОВАНИЕ ГОСУДАРСТВЕННО-ВЛАСТНЫХ ПОЛНОМОЧИЙ ЧАСТНЫМ ОРГАНИЗАЦИЯМ: ЮРИДИЧЕСКИЕ ВОЗМОЖНОСТИ

Аннотация

С конца 20 века во всем мире получила распространение практика «приватизации» полномочий органов государственного управления. Учитывая не такой уж большой путь, пройденный институтом PUT, а также отсутствие концептуальных подходов, государства сталкиваются с серьезными конституционными и законодательными проблемами в процессе делегирования государственных полномочий негосударственным

организациям. В настоящем докладе рассматривается делегирование государственно-властных полномочий в контексте идеологии либерализма. Последнее со временем переросло в экстремизм, согласно которому государство, делегируя свои полномочия частному лицу, избегает ответственности, возникающей в результате неэффективного и неправомерного осуществления этих полномочий. В докладе делается попытка обосновать подход, согласно которому в основе делегирования полномочий государственной власти должен лежать набор прочных структур, которые обеспечат надлежащий баланс между эффективностью осуществления государственных полномочий и демократическими принципами, ограничениями в области прав человека. Затрагивается также идея «делегирования власти», ставшая предметом обсуждения в рамках проводимых в Армении конституционных реформ, в результате чего будут внедрены нормы, разрешающие делегирование властных полномочий частному сектору.

Ключевые слова: делегирование государственно-властных полномочий, принцип ответственности государства, приватизация, государственный контроль, конституционные реформы.

DELEGATION OF STATE POWERS TO PRIVATE ORGANIZATIONS: LEGAL POSSIBILITIES

Annotation

Since the end of the 20th century, the practice of “*privatization*” of the powers of public administration has become widespread throughout the world. Given the not-so-long path traveled by the institute, as well as the lack of conceptual approaches, States face serious constitutional and legislative problems in the process of delegating state powers to non-governmental organizations. This report examines the delegation of state authority in the context of the ideology

of liberalism. The latter eventually turned into extremism, according to which the state, by delegating its powers to a private person, avoids responsibility arising from the ineffective and unlawful exercise of these powers. The report attempts to substantiate the approach according to which the delegation of powers to State power should be based on a set of strong structures that will ensure an appropriate balance between the effectiveness of the exercise of State powers and democratic principles and restrictions in the field of human rights. The idea of “delegation of power” is also touched upon, which has become the subject of discussion within the framework of the constitutional reforms being carried out in Armenia, as a result of which norms allowing the delegation of power to the private sector will be introduced.

Keywords: delegation of state authority, the principle of state responsibility, privatization, state control, constitutional reforms.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 28.04.2024 թ., տրվել է գրախոսության 03.05.2024 թ., ընդունվել է տպագրության 07.05.2024 թ.:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

РЕЦЕНЗИЯ

НА МОНОГРАФИЮ ИЛЮХИНОЙ В.А.

**«ПРИНЦИПЫ ПРАВА В НАЦИОНАЛЬНЫХ ПРАВОВЫХ СИСТЕМАХ
РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ И РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
(СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ)»**

ПОД РЕД. А.А. ДЕМИЧЕВА. - М.: ДИРЕКТ-МЕДИА, 2024. - 408 С.

В современной юридической науке принципам права уделяется достаточно большое внимание. Делается это либо на абстрактно-теоретическом уровне с претензией на универсальность, либо на уровне правовых систем конкретных государств, либо на узкоотраслевом уровне. При этом до недавнего времени отсутствовали исследования компаративистского характера, в которых бы проводилось комплексное сравнение принципов права Армении и России. Рецензируемая монография армяно-российского ученого Веры Александровны Илюхиной вполне удачно восполнила этот пробел¹.

¹ **Илюхина В.А.** Принципы права в национальных правовых системах Российской Федерации и Республики Армения (сравнительно-правовое исследование): монография / Под ред. А.А. Демичева. - М.: Директ-Медиа, 2024. - 408 с.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄ ԴԱՏԱՐԱՆ ԾԵՂԵԿԱԳԻՐ 2(114)2024

Представленная на рецензирование монография посвящена актуальной в теоретическом и практическом аспектах проблеме – сравнительному анализу принципов права в национальных правовых системах Российской Федерации и Республики Армения. Актуальность темы убедительно обоснована автором во введении работы.

Автор грамотно сформулировал цель своего исследования, которая заключается в выявлении общего и особенного в понимании, механизме закрепления и практическом значении принципов позитивного права и доктринальных принципов права в национальных правовых системах Российской Федерации и Республики Армения на основе компаративистского анализа законодательства и правоприменительной практики указанных государств (с. 11). Судя по тексту монографии, сделанным выводам и обобщениям, указанная цель была успешно достигнута.

В условиях методологически-когнитивного коллапса в сфере изучения принципов права В.А. Илюхиной удалось сформулировать оригинальную концепцию принципов права, одним из основополагающих элементов которой является четкое отграничение по разным параметрам принципов права от доктринальных принципов. Представленная в исследовании концепция принципов права исходит из позитивистского правопонимания и критического подхода к восприятию принципов права в естественно-правовом, либертарном и интегративном правопонимании, опирается на компаративистский анализ законодательства и правоприменительной практики Российской Федерации и Республики Армения, а также многочисленные научные работы.

Позитивистское правопонимание позволило автору применить функциональный подход к исследованию принципов права и, следовательно, решить не только ряд проблем теоретико-методологического характера, но и привело к созданию оригинальной универсальной модели закрепления принципов права в кодифицированных правовых актах (с. 334-336), которая вполне может быть реализована в Армении, России, да и любом государстве, входящем в континентальную правовую семью.

Рецензируемая монография, несомненно, обладает научной новизной. Особо отметим авторское многоаспектное определение принципов права, исходящее из позитивистского правопонимания, определение и классификацию доктринальных принципов права, выявление основных путей трансформация доктринальных идей в принципы права и др.

По мнению В.А. Илюхиной, принципы права (принципы позитивного права) в континентальной правовой семье – это (в совокупности):

- 1) исходные (базовые, определяющие, основополагающие и т.п.) идеи, лежащие в основе всего правового регулирования, совокупности отраслей права или отдельной отрасли права в конкретном государстве;
- 2) прямо закрепленные в тексте нормативных правовых актов;
- 3) четко маркированные законодателем в качестве принципов (основных положений, основных начал);
- 4) являющиеся разновидностью правовых норм и выступающие непосредственным правовым регулятором общественных отношений;
- 5) обладающие императивностью для правоприменителя и прочих субъектов права;
- 6) служащие критерием и ориентиром для законодателя при принятии новых и совершенствовании действующих нормативных правовых актов;
- 7) отражающие исторически эволюционировавшую к моменту их нормативного закрепления систему ценностей и приоритетов и выражающие сущность права в конкретно-исторический период;
- 8) обладающие динамичностью в правовой системе как в плане введения/упразднения, так и наполнения содержания (с. 61-62).

В отличие от принципов права, доктринальные принципы права, по мнению В.А. Илюхиной - это социально значимые идеи, сформулированные учеными, практиками, политиками в научных работах и иных текстах (включая судебные акты), а также в публичных выступлениях и не нашедшие нормативного закрепления.

Автор монографии выделяет ряд сущностных различий между принципами права и доктринальными принципами права:

– принципы права закреплены в нормативных правовых актах, а доктринальные принципы сформулированы в текстах (научных работ, судебных актов, иных текстах) или могут не иметь текстуального выражения. Если принципами позитивного права являются только нормативно закрепленные основополагающие идеи, то доктринальными принципами могут быть абсолютно любые идеи, независимо от того, имеют ли они связь с реальностью или же они есть плод воображения исключительно их авторов;

– принципов права много, но их количество ограничено механизмами правотворчества и юридической техникой действующих нормативных правовых актов, а доктринальных принципов может быть сколько угодно, поскольку они без каких-то специальных механизмов могут формулироваться в любое время и в любом количестве;

– принципы права обладают императивностью, а доктринальные принципы формально не имеют юридического значения, поскольку представляют собой разновидность идей, не имеющих нормативного закрепления;

– доктринальные принципы могут противоречить действующему законодательству, а позитивные принципы – это часть законодательства;

– принципы права понятны для правоприменителя и имеется реальная возможность их реализации в правоотношениях, а доктринальные принципы могут быть сформулированы как угодно, реализация их на практике возможна далеко не всегда;

– принципы права – это разновидность правовых норм, элемент системы права и правовой системы, они могут использоваться в качестве инструмента ликвидации пробелов в законодательстве и пробелов в праве, а доктринальные принципы не являются элементом системы права, но представляют собой важный элемент правовой системы, играют определенную роль в правотворчестве и в судебной практике, некоторые из них могут использоваться в качестве регулятора общественных отношений;

– принципы права характеризуются стабильностью, а доктринальные принципы – реактивностью (с. 326).

Если принципы права являются разновидностью норм права, то доктринальные принципы к праву не относятся, поскольку являются элементом правосознания. Тем не менее, проанализировав не только законодательство России и Армении, но и обширную судебную практику, В.А. Илюхина пришла к убедительному выводу, что и принципы права, и отдельные, но далеко не все, доктринальные принципы права активно используются судами обоих государств при аргументации судебных актов. Это означает, что доктринальные принципы права также в некоторых случаях являются регулятором общественных отношений.

Структура исследования является продуманной, включает в себя введение, три раздела по две главы в каждом (в главах также выделяются параграфы), заключение, список основных сокращений и список источников и литературы. Впечатляет объем рецензируемой работы, составляющий более 30 авторских листов, а также широкая источниковая база исследования, включающая более 950 действующих и уже утративших юридическую силу нормативных правовых актов Республики Армения и Российской Федерации, материалов судебной практики, других источников, широкого круга научной литературы на армянском, русском и английском языках. Конечно, этот круг может быть расширен (как и историография любого научного исследования), но подавляющее большинство работ по соответствующей тематике не просто отражено, но и реально использовано в монографии В.А. Илюхиной. Обратим внимание, что каждый нормативный акт, судебный акт, иной документ, каждая книга, статья, диссертация или автореферат диссертации действительно используются автором в своем исследовании, о чем свидетельствуют многочисленные постраничные ссылки.

Следует отметить, что непосредственно в тексте монографии имеется 12 составленных автором таблиц сравнительного характера, которые сами по себе имеют научную ценность.

В.А. Илюхина уделяет основное внимание таким актуальным вопросам, связанным с изучением принципов права, как понятие и сущность

принципов права в различных концепциях правопонимания (глава 1), теоретические и практические проблемы классификации принципов права Армении и России (глава 2), понятие и классификация доктринальных принципов права, их роль в правотворчестве (глава 3) и правоприменении (глава 4), сравнительный анализ юридической техники закрепления принципов права в законодательстве России и Армении (глава 5), генезис, эволюция, роль общеправовых принципов в национальных правовых системах России и Армении (глава 6).

Мы отметили только несколько концептуальных, принципиально новых в научном плане моментов в рецензируемой работе. Кроме этого, в ней имеется еще много интересного и оригинального. Например, впервые в юридической науке предлагаются классификации доктринальных принципов по различным основаниям, прослеживаются генезис и эволюция общеправовых и иных конституционных принципов права в РСФСР и АрмССР, анализируются проблемные аспекты выделения конституционных принципов права в действующем законодательстве России и Армении, исследуется реальная роль принципов права и отдельных доктринальных принципов права в национальных правовых системах Армении и России и пр.

Можно спорить с отдельными положениями, выдвигаемыми В.А. Илюхиной, с некоторыми ее выводами. Не исключаем, что у кого-то сама концепция принципов права, строящаяся на позитивистском правопонимании и отграничении принципов права от доктринальных принципов права, вызовет неприятие. Однако полагаем, что теоретико-методологическое компаративистское исследование принципов права Армении и России состоялось.

Завершая рецензию, сделаем вывод, что монография В.А. Илюхиной «Принципы права в национальных правовых системах Российской Федерации и Республики Армения (сравнительно-правовое исследование)» является ярким и интересным исследованием, вносящим существенный вклад в развитие теории права и сравнительного правоведения, поскольку в ней имеются не только ценные и интересные теоретические выводы и

практические рекомендации (сформулирована оригинальная концепция принципов права, предложена универсальная модель закрепления принципов права в кодифицированных правовых актах и др.), но и закладывается новое направление в современной юридической науке – компаративистское исследование принципов права в различных правовых системах. Это направление может успешно развиваться армянскими, российскими учеными, а также исследователями из других государств. Полагаем, что книга В.А. Илюхиной будет интересна не только специалистам в области теории и истории государства и права, представителям отраслевых юридических наук, но и широкому кругу читателей.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ԱՆՈՒԴՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
11-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 մարտի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2239-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվա քաղաքում՝ «Եվրասիական տնտեսական միության

անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության (այսուհետ՝ 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրություն) մեջ փոփոխություններ կատարելու նպատակով:

2. Արձանագրությունը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի, Բելառուսի Հանրապետության հարկերի և գանձումների նախարարության, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության և առընթեր պետական հարկային ծառայության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության միջև:

3. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

4. Արտաքին գործերի նախարարության՝ Արձանագրության վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին եզրակացության և Արձանագրությունը ստորագրած կողմերի՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ «2023 թվականի հոկտեմբերի 18-ի դրությամբ Արձանագրությունն ուժի մեջ չի մտել: 2023 թվականի հոկտեմբերի 18-ի դրությամբ Արձանագրությունը ստորագրած կողմերից որևէ մեկը չի ավարտել Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

Արձանագրությամբ կատարվող փոփոխությունները ենթադրում են ԵԱՏՄ անդամ պետությունների հարկային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման պարբերականության կրճատում՝ տեղեկատվության ստացման և մշակման օպերատիվությունը բարձրացնելու նպատակով: Միաժամանակ, նախատեսվում է 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությունը լրացնել Հավելված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

3-ով, որը սահմանում է փոխանակվող տեղեկատվության կազմին և կառուցվածքին ներկայացվող պահանջները: Նախատեսվում են նաև տեխնիկական և խմբագրական բնույթի մի շարք փոփոխություններ:

Ընդհանուր առմամբ, նախատեսվող փոփոխությունների նպատակն է ԵԱՏՄ անդամ պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման հետ կապված իրավահարաբերությունների կատարելագործումը և անուղղակի հարկերի մուտքերի նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացումը»:

5. Արձանագրության համաձայն՝ Արձանագրության Հավելվածում սահմանված կարգով փոփոխություններ են կատարվում 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ, մասնավորապես՝ 2-րդ Հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ պարբերությունները շարադրվում են այլ խմբագրությամբ, 2-րդ Հոդվածի 9-րդ և 10-րդ պարբերություններից հետո լրացվում են նոր պարբերություններ, նշված արձանագրությունը լրացվում է թիվ 3 Հավելվածով (այն, իր հերթին, ունի 16 հավելվածներ), որը ներառում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների (այսուհետ՝ հարկային մարմիններ) միջև՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) բյուջեներ վճարված անուղղակի հարկերի գումարների վերաբերյալ տեղեկատվության փոխանցման նիշքերի ձևաչափերի կազմի և կառուցվածքի նկարագրությունը:

6. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա՝ ի լրումն 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ ստանձնած պարտավորությունների կամ դրանց փոխարեն, ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- հայտերի ռեեստրների, հարցումների ռեեստրների և ծանուցումների ռեեստրների փոխանակումն իրականացնել յուրաքանչյուր շաբաթ՝ շաբաթվա առաջին աշխատանքային օրը (Հավելված, կետ 1, ենթակետ «բ»).

- ապահովել, որ ձևաչափատրամաբանական հսկողության (այսուհետ նաև՝ ՁՏՀ) հաղորդակարգի մեջ այն կազմելու ժամանակ առաջացած

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԾՆՆԵԿԱԳԻՐ 2(114)2024

սխալների առկայության դեպքում հայտերի ռեեստրն ստացող ՀՀ հարկային մարմինը վերացնի հաղորդակարգը կազմելու սխալները, կրկին կազմի ձևաչափատրամաբանական հսկողության հաղորդակարգ և, նախքան հայտերի ռեեստրների հերթական փոխանակումն իրականացնելը, այն ուղարկի հայտերի ռեեստրի ուղարկող հարկային մարմին (Հավելված, կետ 1, ենթակետ «դ»).

- ապահովել, որ ՀՀ հարկային մարմինը մյուս կողմերի հարկային մարմինների հետ էլեկտրոնային ձևով փոխանակվի բյուջե վճարված անուղղակի հարկերի գումարների մասին տեղեկատվությամբ (Հավելված 3, կետ 1.1).

- ապահովել, որ հարկային մարմինների միջև հայտերի ռեեստրների նիշքերի ձևով հայտերով, հարցումների ռեեստրի ձևով հարցումներով, ծանուցումների ռեեստրի ձևով հարցումներին պատասխաններով տեղեկատվության փոխադարձ փոխանակումն իրականացվի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ սահմանված կարգով և ժամկետներում (Հավելված 3, կետ 1.3).

- ապահովել, որ ՀՀ հարկային մարմինը մյուս կողմերի հարկային մարմինների հետ տեղեկատվության փոխադարձ փոխանակումն իրականացնի արձանագրության 3-րդ Հավելվածի պահանջներին և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվության փոխանակման կարգը կանոնակարգող այլ ակտերին համապատասխան, ինչպես նաև հայտերի ռեեստրի նիշքն ստանալիս կատարի ստացված տվյալների ձևաչափատրամաբանական հսկողություն՝ արձանագրության թիվ 15 հավելվածի համաձայն, և ձևավորի ՁՏՀ հաղորդակարգ, որի ձևաչափի նկարագրությունը բերված է Արձանագրության 6-րդ բաժնում (Հավելված 3, կետ 1.4, պարբերություններ 1, 2).

- ապահովել, որ ՁՏՀ հաղորդակարգեր ստանալուց և նույնականացնելուց հետո ուղարկող ՀՀ հարկային մարմինը միջոցներ ձեռնարկի սխալները վերացնելու ուղղությամբ և ուղղված տեղեկատվությունն ուղարկի ստացող հարկային մարմին՝ 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությամբ սահմանված կարգով և ժամկետներում (Հավելված 3, կետ 1.5).

- ապահովել, որ հարկային մարմինների միջև էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխադարձ փոխանակման դեպքում օգտագործվեն արձանագրության 3-րդ հավելվածի 1.6-րդ կետում շարադրված միասնական դասակարգիչները և տեղեկագրքերը, իսկ տեղեկագրքի մեջ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

փոփոխություններ կատարելու դեպքում փոփոխությունները կատարելու օրվանից 10 օրից ոչ ուշ այն փոխանցի ամբողջական թարմացված տեղեկագրքի ձևով (Հավելված 3, կետ 1.6, պարբերություններ 1 և 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

5 մարտի 2024 թվականի
ՍԴՈ-1717

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(114)2024

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՆՈՒՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՐԾԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐԾԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1717 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի մարտի 5-ի ՍԴՈ-1717 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի մարտի 5-ի ՍԴՈ-1717 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

ԲԱԺԻՆ I

Հայաստանի Հանրապետությունը միացել է «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությանը, որը հաստատվել է 2015 թվականի փետրվարի 27-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆՀ-221-Ն հրամանագրով:

Վերոնշյալ արձանագրությունում 2019 թվականի նոյեմբերի 6-ին ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային տարբերակով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին»

արձանագրությամբ կատարվել է փոփոխություն, որը հաստատվել է 2020 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆՀ-103-Ն հրամանագրով:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2239-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան, իսկ Սահմանադրական դատարանը 2024 թվականի մարտի 5-ի ՍԴՈ-1717 որոշմամբ այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող:

Վերոնշյալից հետևում է, որ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությանը միանալը և 2019 թվականի նոյեմբերի 6-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային տարբերակով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ կատարված փոփոխությունը հաստատվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով: Մինչդեռ քննարկվող դեպքում Կառավարությունը, 2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը, դիտարկելով որպես վավերացման ենթակա միջազգային պայմանագիր, դիմել է Սահմանադրական դատարան՝ դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

համապատասխանությունը որոշելու նպատակով: Փաստորեն, բացառապես սույն գործով քննարկման առարկա արձանագրությունն է ներկայացվել սահմանադրական նախնական վերահսկողության, իսկ դրա հիմք հանդիսացող հիմնական արձանագրությունը և դրանում փոփոխություն կատարելու մասին արձանագրությունն անմիջապես ներկայացվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հաստատմանը:

Իմ գնահատմամբ՝ 2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար նախևառաջ պետք է պարզվեր այն հանգամանքը, թե արդյո՞ք քննարկման առարկա արձանագրության հիմք հանդիսացող հիմնական արձանագրության, այնուհետև՝ դրանում փոփոխություն կատարելու մասին արձանագրության նախկինում սահմանադրական նախնական վերահսկողության չենթարկվելու պարագայում Սահմանադրական դատարանն իրավասու էր քննարկման առարկա դարձնել սույն գործով քննության առարկա արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Այսպես՝ Սահմանադրությունը Սահմանադրական դատարանին օժտել է այնպիսի լիազորությամբ, ինչպիսին է՝ մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը՝ դրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը ստուգելը¹: Նշված լիազորության առկայությունը սահմանադրական նախնական վերահսկողության մոդելի դրսևորումն է²:

Իսկ միզազգային պայմանագրերի առնչությամբ սահմանադրական կարգավորումները հանգում են հետևյալին. Սահմանադրությամբ³ նախատեսվում է Ազգային ժողովի կողմից բացառապես այն միջազգային պայմանագրերի վավերացում, կասեցում կամ չեղյալ հայտարարում՝

¹ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:

² Այս լիազորությունն առավել մանրամասն կարգավորված է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 74-րդ հոդվածում:

³ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մաս:

1) որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին.

2) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ.

3) որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը.

4) որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ.

5) որոնց կիրառումը նախատեսում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում, կամ որոնք պարունակում են օրենքին հակասող նորմեր.

6) որոնք ուղղակիորեն նախատեսում են վավերացում.

7) որոնք պարունակում են օրենքի կարգավորմանը ենթակա հարցեր: Բացի վերոնշյալից, Սահմանադրությամբ արտաքին քաղաքականության բնագավառում Հանրապետության նախագահի լիազորությունների շարքում ներառվել է Կառավարության առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով այն միջազգային պայմանագրերի հաստատում, կասեցում կամ չեղյալ հայտարարում, որոնք վավերացում չեն պահանջում⁴:

Իր հերթին օրենսդիրը «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով կարգավորել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման, հաստատման, ուժի մեջ մտնելու, կատարման, փոփոխման, չեղյալ հայտարարման, գործողության երկարաձգման և կասեցման և դրանց հետ կապված այլ հարաբերությունները:

Մասնավորապես՝ նշված օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ստորագրած կամ միանալու ենթակա միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր իրավաբանական ուժ է ստանում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվելու կամ Հանրապետության նախագահի կողմից հաստատվելու միջոցով⁵:

Ըստ այդմ՝ վերոնշյալ օրենքի «Միջազգային պայմանագրի վավերացումը և հաստատումը» վերտառությամբ դրույթով նույնությամբ ամրագրվել են Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն նախապայմանները, որոնց առկայության դեպքում միջազգային պայմանագիրը ենթակա է վավերացման Ազգային ժողովի

⁴ Սահմանադրության 132-րդ հոդվածի 2-րդ մաս:

⁵ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մաս:

կողմից, իսկ Հանրապետության նախագահի լիազորությունների տիրույթում է թողնվել այն միջազգային պայմանագրերի հաստատումը, որոնք, Սահմանադրության և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի համաձայն, ենթակա չեն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը⁶: Միաժամանակ նշվել է, որ նախքան միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնելը Կառավարությունը, Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, դիմում է Սահմանադրական դատարան՝ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով⁷: Փաստորեն, թե՛ սահմանադրի և թե՛ օրենսդրի կողմից նախատեսվել է սահմանադրական նախնական վերահսկողության պարտադիր ընթացակարգ բացառապես վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի դեպքում:

Միջազգային պայմանագրերի առնչությամբ նախկին սահմանադրական կարգավորումները հանգում են հետևյալին.

2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանվել է, որ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո⁸՝ համապատասխանաբար որպես իրավասու սուբյեկտներ նախատեսելով Ազգային ժողովին և Հանրապետության Նախագահին: Ըստ այդմ՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությունը ևս սահմանել է այն նախապայմանները, որոնց առկայության պարագայում միջազգային պայմանագրերը ենթակա են վավերացման Ազգային ժողովի կողմից. դրանք այն միջազգային պայմանագրերն են⁹.

ա) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ կամ նախատեսում են պետական սահմանի փոփոխություն,

բ) որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին,

գ) որոնք ֆինանսական պարտավորություններ են նախատեսում Հայաստանի Հանրապետության համար,

⁶ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր:

⁷ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մաս:

⁸ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ պարբերություն:

⁹ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ պարբերություն:

դ) որոնց կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր, ե) որոնցով նախատեսված է վավերացում,

զ) օրենքով սահմանված այլ դեպքերում:

Միաժամանակ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ ևս նշվել է, որ Սահմանադրական դատարանը մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Հանրապետության Նախագահի լիազորությունների շարքում ներառվել է վերջինիս կողմից վավերացում չպահանջող միջազգային պայմանագրեր հաստատելու, կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու լիազորությունը¹⁰:

Իսկ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությանը Հայաստանի Հանրապետության միանալու դրությամբ (այն է՝ 2015 թվականի փետրվարի 27) գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով ևս սահմանվում էր, որ Հայաստանի Հանրապետության ստորագրած միջազգային պայմանագիրը վավերացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, իսկ հաստատում՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը¹¹: Բացի այդ, հստակորեն առանձնացվել են այն դեպքերը, որոնց առկայության պարագայում միջազգային պայմանագիրը ենթակա է պարտադիր վավերացման¹². դա այն միջազգային պայմանագիրն է՝

1) որը վերաբերում է մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին.

2) որը ֆինանսական պարտավորություններ է նախատեսում Հայաստանի Հանրապետության համար.

3) որի կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր.

4) որը վերաբերում է վերոնշյալ օրենքով սահմանված կարգով վավերացված միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ

¹⁰ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ և 100-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

¹¹ 2015 թվականի փետրվարի 27-ի դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 23-րդ հոդված:

¹² 2015 թվականի փետրվարի 27-ի դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մաս:

լրացումներ կատարելուն, բացառությամբ այդ օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի.

5) որով նախատեսված է վավերացում:

Միաժամանակ նշվել է, որ վերը նշած դեպքերը չպարունակող միջազգային պայմանագրերը ենթակա են հաստատման¹³:

Ամփոփելով վերոնշյալ իրավակարգավորումները՝ հարկ է նշել, որ միջազգային պայմանագիրն իր պարտադիրությունը դրսևորում է ուժի մեջ մտնելու պահից¹⁴, իսկ թե՛ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ, թե՛ գործող Սահմանադրությամբ նախատեսվել է դրա ուժի մեջ մտնելու երկու ընթացակարգ, այն է՝ վավերացում և հաստատում: Ընդ որում, թե՛ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ և թե՛ գործող Սահմանադրությամբ վավերացման և հաստատման ընթացակարգերը ևս նույնանում են, մասնավորապես՝ միջազգային պայմանագրերի վավերացումը ներառվել է Ազգային ժողովի լիազորությունների շարքում: Հատկանշական է, որ վավերացում պահանջող միջազգային պայմանագրերի առնչությամբ նախատեսվել է առանձնահատկություն, մասնավորապես՝ թե՛ 2005 թվականի փոփոխություններով և թե՛ գործող Սահմանադրությամբ, և համապատասխանաբար թե՛ 2015 թվականի փետրվարի 27-ի դրությամբ գործող և թե՛ ներկա դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով սահմանվել են կոնկրետ նախապայմաններ, որոնց առկայության պարագայում միայն միջազգային պայմանագրերը պետք է անցնեն վավերացման ընթացակարգով: Ավելին՝ նշված միջազգային պայմանագրերի առնչությամբ սահմանվել է պարտադիր փուլ՝ սահմանադրական նախնական վերահսկողության կառուցակարգի տեսքով: Ըստ այդմ՝ վերոնշյալ նախապայմանները չպարունակող միջազգային պայմանագրերը պետք է անցնեն հաստատման ընթացակարգով, որն էլ հանդիսանում է Հանրապետության Նախագահի լիազորությունը:

Հատկանշական է նաև այն, որ օրենսդիրը սահմանել է առանձին փուլ նախքան միջազգային պայմանագրերը Ազգային ժողովի վավերացմանը կամ Հանրապետության Նախագահի հաստատմանը ներկայացնելը, մասնավորապես՝ նախատեսվել է այն իրավասու մարմինների

¹³ 2015 թվականի փետրվարի 27-ի դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մաս:

¹⁴ 2015 թվականի փետրվարի 27-ի դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մաս և ներկա դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մաս:

շրջանակը, որոնք միջազգային պայմանագրի վավերացումից կամ հաստատումից առաջ համապատասխան հարցում ստանալով՝ պետք է ներկայացնեն եզրակացություն օրենքով նախատեսված հարցի առնչությամբ, օրինակ՝ Արտաքին գործերի նախարարությունը, ի թիվս այլնի, ներկայացնում է եզրակացություն՝ միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին, Արդարադատության նախարարությունը՝ միջազգային պայմանագրում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմերի, ինչպես նաև միջազգային պայմանագիրը վավերացման ենթակա դարձնող հիմքերի առկայության մասին, ֆինանսների նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին և այլն¹⁵: Որոշակի տարբերությամբ համանման կարգավորում նախատեսվել է նաև 2015 թվականի փետրվարի 27-ի դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով¹⁶:

Այսպիսով, վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ ինչպես սահմանադրի, այնպես էլ օրենսդրի կողմից միջազգային պայմանագրերի հաստատման և վավերացման վերաբերյալ սահմանված նախկին և ներկա կարգավորումները հիմնականում նույնանում են:

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով քննության առարկա գործով միջազգային պայմանագրին՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործով դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավասու մարմինների կողմից համապատասխան հարցերի վերաբերյալ ներկայացված եզրակացություններով առավելապես հերքվել են նշված հոդվածով պահանջվող տեղեկությունները, օրինակ՝ Ֆինանսների նախարարի տեղակալը հայտնել է, որ արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող՝ եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման հանգեցնող դրույթներ առկա չեն: Մինչդեռ Արտաքին գործերի նախարարի տեղակալը հայտնել է ոչ միանշանակ կարծիք, մասնավորապես նշել է, որ նպատակահարմար է արձանագրության

¹⁵ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մաս:

¹⁶ 2015 թվականի փետրվարի 27-ի դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մաս:

վավերացումը կամ հաստատումը: Իսկ Արդարադատության նախարարությունը, ելնելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջից, այն է՝ «Պետական մարմինների տնօրինության տակ գտնվող անձնական տվյալները կարող են փոխանցվել օտարերկրյա պետական մարմիններին միայն վավերացված միջազգային պայմանագրերի շրջանակներում (...)", նշել է, որ արձանագրությունը ենթակա է վավերացման:

Վերոնշյալից հետևում է, որ երկու իրավասու մարմին եկել են այն եզրահանգման, որ քննարկման առարկա միջազգային պայմանագիրը ենթակա է վավերացման, ընդ որում, դրանցից մեկն այդ եզրահանգմանը եկել է ոչ միանշանակ կերպով, իսկ մյուսը՝ կատեգորիկ կերպով: Նշված հանգամանքի առնչությամբ հարկ եմ համարում նշել հետևյալը.

Ինչպես արդեն վերը նշվեց Ա 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ, Ա գործող Սահմանադրությամբ, ըստ այդմ էլ Ա 2015 թվականի փետրվարի 27-ի դրությամբ գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով, Ա գործող «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով նախատեսվել են հստակ նախապայմաններ, որոնց առկայության պարագայում միջազգային պայմանագրերը ենթակա են վավերացման Ազգային ժողովի կողմից: Դրանցում, ի թիվս այլնի, նախատեսվել է նաև այն դեպքը, երբ միջազգային պայմանագիրը վերաբերում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին: Այսինքն՝ սահմանադիրն ուղղակիորեն նախատեսել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային պայմանագրերի դեպքում բացառապես վավերացման ընթացակարգի կանոնների կիրառում:

Նշված կարգավորման համատեքստում անդրադառնալով Արդարադատության նախարարության եզրակացության բովանդակությանը՝ հարկ եմ համարում նշել, որ սահմանադիրը Սահմանադրության 2-րդ գլխում որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունք ամրագրել է անձնական տվյալների պաշտպանության իրավունքը¹⁷: Միաժամանակ օրենսդիրը, ելնելով Սահմանադրության այն կարգավորումից, որ անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող մանրամասները սահմանվում են օրենքով, «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսել է կարգավորում առ այն, որ «Առանց լիազոր մարմնի թույլտվության անձնական տվյալները կարող են փոխանցվել այլ պետություն, եթե այդ պետությունում

¹⁷ Սահմանադրության 34-րդ հոդված:

ապահովված է անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակ: Անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակը համարվում է ապահովված, եթե անձնական տվյալները փոխանցվում են միջազգային պայմանագրերին համապատասխան»:

Վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է ստացել սահմանադրական մակարդակում՝ դասվելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների շարքին: Ավելին՝ նշված իրավունքն իր ամրագրումը ստացել էր դեռևս 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ¹⁸: Ուստի նման իրավակարգավորման պայմաններում անձնական տվյալների պաշտպանության իրավունքին վերաբերելով միջազգային պայմանագրերն ինքնին ենթադրում են ուղղակի առնչություն մարդու հիմնական իրավունքին, ինչն էլ հիմք է հանդիսանում նշված միջազգային պայմանագրերի նկատմամբ ուժի մեջ մտնելու համար նախատեսված վավերացման ընթացակարգ կիրառելու համար:

Ելնելով վերոնշյալ իրավակարգավորումներից և դրանց վերլուծությունից՝ կարող ենք արձանագրել, որ ինչպես սույն գործով քննարկման առարկա արձանագրության, այնպես էլ դրա հիմք հանդիսացող հիմնական արձանագրության, այնուհետև՝ դրանում փոփոխություն կատարելու մասին արձանագրության նկատմամբ պետք է կիրառվեն ուժի մեջ մտնելու համար նախատեսված միևնույն ընթացակարգը, այն է՝ կամ վավերացում, կամ հաստատում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ թե՛ սահմանադրական և թե՛ օրենսդրական մակարդակում նշված հարցին վերաբերող իրավակարգավորումները նույնանում են: Բացի այդ, դրանք միմյանց հետ փոխկապակցված են, մասնավորապես՝ սույն գործով քննարկման առարկա արձանագրությունը ենթադրում է սուկ վերոնշյալ հիմնական արձանագրության փոփոխություններ, որոնք չեն պարունակում էական շեղում հիմնական արձանագրությունից, ուստի նման պայմաններում վերջինիս ուժի մեջ մտնելու գործընթացը պետք է հանդիսանա արդեն իսկ ուժի մեջ մտած հիմնական արձանագրության տրամաբանական շղթան: Հետևաբար իմ գնահատմամբ՝ Սահմանադրական դատարանը նախքան սույն գործով քննության առարկա միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելը պետք է բացահայտեր այն կարևոր հանգամանքը, թե արդյոք սույն գործով քննարկման առարկա արձանագրության հիմք հանդիսացող հիմնական արձանագրության

¹⁸ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 23-րդ հոդված:

նկատմամբ ուժի մեջ մտնելու հաստատման ընթացակարգ կիրառված լինելը բավարար է դրանում փոփոխություն կատարելու մասին արձանագրության(սույն գործով քննարկման առարկա արձանագրության) ուժի մեջ մտնելու համար նախատեսված վավերացման ընթացակարգ կիրառելու համար, թե նման պայմաններում քննարկման առարկա արձանագրության հիմք հանդիսացող հիմնական արձանագրությունը ևս պետք է անցնի վավերացման ընթացակարգով:

Տվյալ դեպքում նկատի ունենալով այն, որ Սահմանադրությունը հռչակել է Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրերի վավերացում այն դեպքում, երբ այն առնչվում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին, ինչպես նաև այն, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը թե՛ գործող Սահմանադրությամբ, և թե՛ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ դասվում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների շարքին՝ կարծում եմ, որ ինչպես սույն գործով քննարկման առարկա արձանագրությունը, այնպես էլ դրա հիմք հանդիսացող հիմնական արձանագրությունը, այնուհետև՝ դրանում փոփոխություն կատարելու մասին արձանագրությունը պետք է ուժի մեջ մտնեն վավերացման ընթացակարգով:

Բացի այդ, սույն գործով քննության առարկա դիմումով և դրան կից ներկայացված փաստաթղթերով չի ներկայացվել որևէ հիմնավորում առ այն, թե ինչով է պայմանավորված քննարկման առարկա միջազգային պայմանագրի նկատմամբ ուժի մեջ մտնելու համար նախատեսված վավերացման ընթացակարգի կիրառման անհրաժեշտությունը՝ ի տարբերություն դրա հիմք հանդիսացող հիմնական միջազգային պայմանագրի հաստատման ընթացակարգով ուժի մեջ մտած լինելուն:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ չի բացառվում նաև այնպիսի իրավիճակի առկայություն, երբ վավերացման ենթակա միջազգային պայմանագրի հիմք հանդիսացող միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտած լինելու հաստատման ընթացակարգով, սակայն դրանում փոփոխություն նախատեսող միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելը պահանջի վավերացման ընթացակարգ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրինակ՝ ի տարբերություն հիմք հանդիսացող հիմնական միջազգային պայմանագրի՝ դրանում փոփոխություն կատարելու մասին պայմանագրում նախատեսվող փոփոխությունն իրենից ենթադրի առնչություն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին, որն էլ ինքնին փոփոխություն նախատեսող միջազգային պայմանագրի նկատմամբ ուժի մեջ մտնելու վավերացման ընթացակարգի կիրառման հիմք կհանդիսանա: Ուստի յուրաքանչյուր նման իրավիճակում դիմողը պետք է հիմնավորի տվյալ միջազգային պայմանագրի նկատմամբ ուժի մեջ մտնելու համար նախատեսված

ՍԱՀՄԱՆԱՐԿՄԱՆ ԴԱՏՈՐԱՆ 2(114)2024

վավերացման ընթացակարգի կիրառման անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, քննարկվող դիմումի շրջանակում առաջացած հարցը նշված իրավիճակին համահունչ չէ, քանի որ սույն գործով քննարկման առարկա արձանագրությամբ նախատեսվող փոփոխությունները չեն պարունակում էական շեղում հիմնական արձանագրությունից:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը՝ գտնում եմ, որ նախքան 2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելը Սահմանադրական դատարանը նախևառաջ պետք է անդրադառնար այն հարցին, թե արդյո՞ք քննարկման առարկա միջազգային պայմանագրի հիմք հանդիսացող հիմնական պայմանագիրն ուժ է ստացել Սահմանադրության իրավակարգավորումներին համապատասխան, թե՛ ոչ, և նման պայմաններում արդյո՞ք քննարկման առարկա միջազգային պայմանագիրը կարող էր ուժ ստանալ հիմնական պայմանագրից տարբերվող ընթացակարգով, որպիսի խնդրի հաղթահարման պարագայում Սահմանադրական դատարանը կկարողանար կիրառել Սահմանադրական նախնական վերահսկողություն իրականացնելու իր լիազորությունը: Մինչդեռ Սահմանադրական դատարանը առանց վերոնշյալ հարցը քննարկման առարկա դարձնելու անմիջապես անդրադարձել է միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցին:

ԲԱԺԻՆ II

2. Միաժամանակ հարկ եմ համարում անդրադառնալ սույն գործի հարուցման հիմք հանդիսացած դիմումի պատշաճ ներկայացված չլինելու հանգամանքին:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով

սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի մարտի 5-ի ՍԴՈ-1717 որոշմամբ 2023 թվականի օգոստոսի 22-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև անուղղակի հարկերի վճարված գումարների վերաբերյալ էլեկտրոնային ձևով տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ են համարում ընդգծել, որ Սահմանադրական դատարանի որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է նաև թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված:

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների:

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«12» մարտի 2024 թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024
250



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 մարտի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի,
Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-
րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-
րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի
նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության
և Ասիական զարգացման բանկի միջև «Երևանի քաղաքային
զարգացման ներդրումային ծրագիր» վարկային համաձայնագրում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հունվարի 18-ի N 58-Ա որոշմամբ հավանություն է տվել 2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի փետրվարի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

1. «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի նոյեմբերի 27-ին՝ քաղաքային շարժունակությունն ու քաղաքային կառավարումը մեծացնելու և նախագիծը բարելավելու նպատակով:

2. Վարկային համաձայնագրով սահմանված կարգով և բովանդակությամբ փոփոխություններ են կատարվում Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ)՝ 2022 թվականի հունվարի 1-ով թվագրված Ընթացիկ գործառնությունների մասով Վարկային կանոնակարգերում:

ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել վաթսույն միլիոն իննսուն հազար եվրոյի (€60,090,000) չափով վարկ, ընդ որում, նշված գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ Վարկային համաձայնագրի 2.06-րդ կետի դրույթներին համապատասխան: Վարկի փակման ամսաթիվ է համարվում 2028 թվականի մարտի 31-ը կամ այն ամսաթիվը, որը ժամանակ առ ժամանակ կարող է համաձայնեցվել Հայաստանի Հանրապետության և ԱԶԲ-ի միջև: Ծրագրի ակնկալվող ավարտը 2027 թվականի սեպտեմբերի 30-ն է:

Վարկն ունի մայր գումարի 17 տարի մարման ժամկետ և վարկի արտոնյալ ժամանակահատված, որը մայր գումարի առաջին մարման ամսաթվին՝ 2034 թվականի հունվարի 15-ին, նախորդող ժամանակահատվածն է:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. սկսած 2034 թվականի հունվարի 15-ից մինչև 2050 թվականի հուլիսի 15-ը՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին ԱԶԲ-ին վճարել տոկոսագումար վարկի՝ ժամանակ առ ժամանակ առհանված և դեռևս չվճարված մայր գումարի նկատմամբ՝ յուրաքանչյուր Տոկոսագումարի վճարման ժամանակահատվածի համար հետևյալ հանրագումարի չափով՝ Euribor/Եվրոպական միջբանկային առաջարկի տոկոսադրույքի, 0.60%-ի, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.02-րդ կետով՝ հանած 0.10%, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.03-րդ կետով, և մարման հավելավճարի (maturity premium) 0.30%-ի չափով, ինչպես նախատեսվում է Վարկային կանոնակարգերի 3.03-րդ կետով (հոդված II, կետեր 2.02, 2.04 և ժամանակացույց 2, պարբերություն 1),

3.2. վճարել տարեկան 0.15%-ի չափով պարտավորավճար, որը հաշվեգրվում է վարկի ամբողջական գումարի նկատմամբ (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները)՝ սկսած Վարկային համաձայնագրի ամսաթվին հաջորդող 60-րդ օրվանից հետո (հոդված II, կետ 2.03),

3.3. սկսած 2034 թվականի հունվարի 15-ից մինչև 2050 թվականի հունվարի 15-ը՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին վերադարձնել Վարկային հաշվից առհանված Վարկի մայր գումարը՝ 2.941176 մասնաբաժնով, իսկ 2050 թվականի հուլիսի 15-ին՝ 2.941192 մասնաբաժնով (հոդված II, կետեր 2.04, 2.05 և ժամանակացույց 2, պարբերություն 1),

3.4. Վարկային միջոցները տրամադրել Ծրագիրն իրականացնող մարմնին (ԾԻՄ)՝ ԱԶԲ-ի համար ընդունելի պայմաններով, և ապահովել, որ ԾԻՄ-ն այդ միջոցներն օգտագործի Ծրագրի ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ Վարկային համաձայնագրի և Ծրագրի մասին համաձայնագրի դրույթներին համապատասխան (հոդված III, կետ 3.01),

3.5. բացառությամբ ԱԶԲ-ի համաձայնության այլ դեպքերի՝ գնել կամ ապահովել, որ գնվեն ծախսերի հոդվածները, որոնք ֆինանսավորվելու

են Վարկային միջոցներից՝ Վարկային համաձայնագրի ժամանակացույց 4-ի դրույթներին համապատասխան (հոդված III, կետ 3.03),

3.6. Ծրագիրը և Ծրագրի օբյեկտների շահագործումն իրականացնելիս կատարել Վարկային համաձայնագրի ժամանակացույց 4-ում և Ծրագրի մասին համաձայնագրում նախատեսված բոլոր պարտավորությունները կամ ապահովել դրանց կատարումը (հոդված IV, կետ 4.01),

3.7. հնարավորություն տալ ԱԶԲ-ի ներկայացուցիչներին իրականացնելու Ծրագրի, Ապրանքների, Աշխատանքների և Ծառայությունների, ինչպես նաև ցանկացած համապատասխան գրառման ու փաստաթղթերի ստուգումներ (հոդված IV, կետ 4.02),

3.8. ձեռնարկել բոլոր գործողությունները, որոնք Հայաստանի Հանրապետության մասով անհրաժեշտ են, Ծրագրի մասին համաձայնագրի համաձայն, ԾԻՄ-ին իր պարտավորությունները կատարելու հնարավորություն տալու համար, և չձեռնարկել կամ չթույլատրել որևէ գործողություն, որը կարող է խոչընդոտել այդ պարտավորությունների կատարումը (հոդված IV, կետ 4.03),

3.9. նշանակել ԾԻՄ-ին որպես Հայաստանի Հանրապետության գործակալ՝ Վարկային համաձայնագրի 3.02, 3.03 և 3.04-րդ կետերի և Վարկային կանոնակարգերի 6.01, 6.02, 6.03 և 6.04-րդ կետերի համաձայն պահանջվող կամ թույլատրված ցանկացած գործողություն ձեռնարկելու կամ համաձայնագրի կնքելու նպատակներով (հոդված VI, կետ 6.01),

3.10. Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չլինելու դեպքում վերադարձնել այդ օրվա դրությամբ առհանված և չվճարված գումարը՝ Վարկային համաձայնագրի ժամանակացույց 2-ի 1-ին պարբերությունում նախատեսված կարգով (ժամանակացույց 2, պարբերություն 2, կետ «ա»),

3.11. այն պարագայում, երբ Մայր գումարի առաջին մարման ամսաթվի դրությամբ Վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, Մայր գումարի առաջին մարման ամսաթվից հետո կատարված ցանկացած առհանման դեպքում վերադարձնել այդ գումարները նման առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի յուրաքանչյուր մարման ամսաթվին՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանված գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը Վարկային համաձայնագրի ժամանակացույց 2-ի 1-ին պարբերության աղյուսակում սահմանված՝ Մայր գումարի տվյալ մարման ամսաթվի դրությամբ սկզբնական Վճարման մասնաբաժինն է (Սկզբնական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ ամսաթվին կամ դրանից հետո ընկած ժամանակահատվածի համար Մայր գումարի մարման մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարը (Ժամանակացույց 2, պարբերություն 2, կետ «բ»),

3.12. բացառապես Մայր գումարի ցանկացած մարման ամսաթվի դրությամբ վճարվելիք Մայր գումարները հաշվարկելու նպատակներով Մայր գումարի մարման որևէ ամսաթվին նախորդող երկու օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները դիտարկել որպես առհանված և չվճարված՝ առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվի դրությամբ, և վճարել առհանման ամսաթվին հաջորդող՝ Մայր գումարի երկրորդ մարման ամսաթվից սկսած՝ Մայր գումարի մարման յուրաքանչյուր ամսաթվին (Ժամանակացույց 2, պարբերություն 3),

3.13. ապահովել կամ այնպես անել, որ Երևանն ապահովի, որ Ծրագիրն իրականացվի ԾԿԶ-ում (Ծրագրի կառավարման ձեռնարկ) սահմանված մանրամասն մեխանիզմներին համապատասխան (Ժամանակացույց 4, պարբերություն 1),

3.14. ապահովել կամ այնպես անել, որ Երևանն ապահովի, որ Ապրանքների, Աշխատանքների և Ծառայությունների գնումները կատարվեն Գնումների քաղաքականությանը և Գնումների կանոնակարգերին համապատասխան, Ապրանքները, Աշխատանքները և Ծառայությունները գնվեն Գնումների պլանում նախատեսված մանրամասն մեխանիզմների հիման վրա, ներառյալ՝ գնումների և ընտրության մեթոդները, մրցութային փաստաթղթերի տեսակը և ԱԶԲ-ի վերանայման պահանջները և բոլոր գնվող Ապրանքներն ու Աշխատանքները և ձեռք բերված ծառայությունները (ներառյալ՝ ամբողջ համակարգչային տեխնիկան, ծրագրերը և համակարգերը, անկախ այն հանգամանքից՝ առանձին են գնվել, թե ներառված են գնված այլ ապրանքների և ծառայությունների մեջ) չխախտեն կամ չտոնահարեն որևէ արտադրական սեփականության կամ մտավոր սեփականության իրավունք կամ որևէ երրորդ կողմի պահանջ, և Ապրանքների, Աշխատանքների և Ծառայությունների գնման բոլոր պայմանագրերը պարունակեն կապալառուի, մատակարարի, խորհրդատուի կամ ծառայություն մատուցողի կողմից համապատասխան ներկայացուցչություն, երաշխիքներ և անհրաժեշտության դեպքում փոխհատուցումներ (ինդեմնիտետ)՝ Վարկային համաձայնագրի Ժամանակացույց 4-ի, 2-րդ պարբերության «գ» ենթապարբերությամբ նախատեսված հարցերի առնչությամբ (Ժամանակացույց 4, պարբերություն 2),

3.15. չկնքել Աշխատանքների կամ Ոչ խորհրդատվական ծառայությունների պայմանագրեր մինչև Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոնակարգերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան բնապահպանական մարմնի կողմից չտրամադրվի ՇՄՆՈՒ-ի (շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն) կամ այլ կիրառելի բնապահպանական փաստաթղթերի վերջնական հաստատումը և ԾԻՄ-ը ձեռք չբերի ԱԶԲ-ի կողմից ՇՄՆՈՒ-ի հաստատումը՝ վերջնական նախագծի հիման վրա և ԾԻՄ-ը չներառի ԲԿՊ-ի (բնապահպանական կառավարման պլան) համապատասխան դրույթներն Աշխատանքների և Ոչ խորհրդատվական ծառայությունների պայմանագրում (Ժամանակացույց 4, պարբերություն 3),

3.16. չկնքել հարկադիր տարաբնակեցման ազդեցություններ ներառող Աշխատանքների և Ոչ խորհրդատվական ծառայությունների որևէ պայմանագիր՝ մինչև չնախապատրաստվի և ԱԶԲ-ին չներկայացվի Ծրագրի մանրամասն նախագծի վրա հիմնված վերջնական ՀՁՏՊ-ն (հողի ձեռքբերման և տարաբնակեցման պլան) և չստանա նման ՏՊ-ի մասով ԱԶԲ-ի հաստատումը (Ժամանակացույց 4, պարբերություն 4),

3.17. ապահովել, որ Ծրագրի և Ծրագրի բոլոր օբյեկտների նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, շահագործումը և շահագործումից հանումը համապատասխանեն Հայաստանի Հանրապետության՝ շրջակա միջավայրին, առողջապահությանը և անվտանգությանը վերաբերող բոլոր կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին, Բնապահպանական երաշխիքներին, և ՇՄՆՈՒ-ում, ԲԿՊ-ում (բնապահպանական կառավարման պլան) սահմանված բոլոր միջոցառումներին և պահանջներին, և Երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությունում սահմանված ուղղիչ կամ կանխարգելիչ գործողություններին (Ժամանակացույց 4, պարբերություն 5),

3.18. ապահովել, որ Ծրագրի համար պահանջվող բոլոր հողերը և ճանապարհի բոլոր իրավունքները տրվեն Աշխատանքների կապալառուին՝ Աշխատանքների կատարման պայմանագրի շրջանակներում համաձայնեցված Ժամանակացույցին համապատասխան, և որ հողերի ձեռքբերման և տարաբնակեցման բոլոր գործողություններն իրականացվեն Հայաստանի Հանրապետության՝ հողերի ձեռքբերման և հարկադիր տարաբնակեցմանը վերաբերող բոլոր կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին, Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներին և ՀՁՏՊ-ում սահմանված բոլոր միջոցառումներին ու պահանջներին և Երաշխիքների մոնիթորինգի հաշվետվությամբ նախատեսված բոլոր

ուղղիչ կամ կանխարգելիչ գործողություններին համապատասխան (ժամանակացույց 4, պարբերություն 6),

3.19. առանց սահմանափակելու Հարկադիր տարաբնակեցման երաշխիքները կամ ՏՊ-ն՝ ապահովել, որ տեղի չունենա Ծրագրի հետ կապված որևէ ֆիզիկական կամ տնտեսական տեղահանում մինչև ՀՁՏՊ-ի համաձայն՝ ազդեցության ենթակա անձանց չտրամադրվեն փոխհատուցում և այլ իրավունքներ և ՀՁՏՊ-ի համաձայն՝ չստեղծվի եկամուտների և կենսաապահովման վերականգնման համապարփակ ծրագիր (ժամանակացույց 4, պարբերություն 7),

3.20. ապահովել, որ Ծրագիրը չունենա բնիկ ժողովուրդների վրա որևէ ազդեցություն՝ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի իմաստով, իսկ այն դեպքում, երբ Ծրագիրն ունենում է որևէ այդպիսի ազդեցություն, ձեռնարկել բոլոր այն քայլերը, որոնք պահանջվում են Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներին ու կանոնակարգերին և Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթին Ծրագրի համապատասխանությունն ապահովելու համար (ժամանակացույց 4, պարբերություն 8),

3.21. տրամադրել անհրաժեշտ բյուջետային և մարդկային ռեսուրսները՝ ԲԿՊ-ն և ՀՁՏՊ-ն լիարժեքորեն իրականացնելու նպատակով (ժամանակացույց 4, պարբերություն 9),

3.22. ապահովել, որ բոլոր մրցութային փաստաթղթերը և Աշխատանքների կատարման պայմանագրերը պարունակեն Վարկային համաձայնագրի ժամանակացույց 4-ի 10-րդ պարբերությամբ ամրագրված դրույթները (ժամանակացույց 4, պարբերություն 10),

3.23. իրականացնել կամ ապահովել ԾԻՄ-ի կողմից՝ Վարկային համաձայնագրի ժամանակացույց 4-ի 11-րդ պարբերությունում շարադրված գործողությունները (ժամանակացույց 4, պարբերություն 11),

3.24. ապահովել, որ Վարկի միջոցները չօգտագործվեն Անվտանգության մեխանիզմների քաղաքականության փաստաթղթի 5-րդ հավելվածով նախատեսված՝ արգելված ներդրումային գործողությունների ցանկում ներառված որևէ գործողություն ֆինանսավորելու համար (ժամանակացույց 4, պարբերություն 12),

3.25. ապահովել, որ Ծրագրի իրականացման ընթացքում պահպանվեն հիմնական աշխատանքային նորմատիվները և Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներն ու կանոնակարգերը, ինչպես նաև մրցութային փաստաթղթերում և Ծրագրի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող պայմանագրերում ներառել առանձին դրույթներ, որոնցով պահանջվում է, որ կապալառուները, ի թիվս

այլնի, պահպանեն Հայաստանի Հանրապետության կիրառելի աշխատանքային օրենքներն ու կանոնակարգերը և կիրառեն աշխատատեղերում աշխատանքային անվտանգության նորմերը, չօգտագործեն երեխաների աշխատանքը, խտրականություն չդնեն աշխատողների միջև՝ զբաղվածության և մասնագիտական զբաղմունքի հարցում, չօգտագործեն հարկադիր աշխատանքը, թույլատրեն միավորումների ազատությունը և արդյունավետորեն ճանաչեն կոլեկտիվ բանակցությունների իրավունքը, և տարածեն կամ ներգրավեն համապատասխան ծառայություններ մատուցողների, որպեսզի նրանք տարածեն տեղեկատվություն սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ռիսկերի մասին՝ Ծրագրի շրջանակներում ներգրավված կապալառուների աշխատողների և Ծրագրի տարածքը շրջապատող՝ տեղի համայնքների անդամների, մասնավորապես՝ կանանց շրջանում, ինչպես նաև խստորեն մոնիթորինգի ենթարկել Վարկային համաձայնագրի ժամանակացույց 4-ի 13-րդ պարբերությունում սահմանված պահանջների կատարումը և ԱԶԲ-ին տրամադրել պարբերական հաշվետվություններ (ժամանակացույց 4, պարբերություն 13),

3.26. ապահովել, որ ԳԳՊ-ն (գենդերային գործողությունների պլան) իրականացվի իր պայմաններին համապատասխան, մրցութային փաստաթղթերը և պայմանագրերը ներառեն կապալառուների համար՝ ԳԳՊ-ով սահմանված միջոցառումների կատարման վերաբերյալ համապատասխան դրույթներ, հատկացվեն համապատասխան միջոցներ ԳԳՊ-ի իրականացման համար, ԳԳՊ-ի իրականացման ընթացքը, ներառյալ՝ հիմնական գենդերային վերջնարդյունքների և միջանկյալ արդյունքի թիրախների ձեռքբերման ուղղությամբ առաջընթացը պարբերաբար ենթարկվեն մոնիթորինգի և զեկուցվեն ԱԶԲ-ին և գենդերային հարցերով վերջնարդյունքի և միջանկյալ արդյունքների հիմնական թիրախները ներառեն, բայց չսահմանափակվեն նրանով, որ Ծրագրի հետ կապված խորհրդակցությունների ու հանդիպումների և Երևան քաղաքի մակարդակով քաղաքաշինական նախագծերի և պայմանավորվածությունների մասով Ֆոկուս խմբերի և քննարկումների մասնակիցների առնվազն 30%-ը կանայք են, քաղաքային զարգացմանն առնչվող վերապատրաստման դասընթացների մասնակիցների առնվազն 30%-ը կանայք են (ժամանակացույց 4, պարբերություն 14),

3.27. ի լրումն Վարկի միջոցների՝ հասանելի դարձնել գործընկերների համապատասխան ֆինանսական միջոցները և այլ ռեսուրսներ և գործընկերների նման ֆինանսական միջոցները և ռեսուրսներ ժամանակին դուրս բերել Ծրագրի հաջող իրականացման համար, և ի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

լրումն նշվածի՝ ապահովել, որ ԾԻՄ-ն ունենա բավարար ֆինանսական միջոցներ՝ Աշխատանքների, Ապրանքների և (կամ) Ծառայությունների պայմանագրից ծագող իր պարտավորությունները բավարարելու նպատակով (Ժամանակացույց 4, պարբերություն 15),

3.28. ապահովել, որ կատարվեն համապատասխան բյուջետային և մարդկային ռեսուրսների հատկացումներ Ծրագրի օբյեկտների շարունակական ՇԱՍ-ի (շահագործում և սպասարկում) համար՝ դրանք շահագործման մեջ դնելուց հետո (Ժամանակացույց 4, պարբերություն 16),

3.29. ԾԻՄ-ի հետ միասին համապատասխանել ԱԶԲ-ի Հակակոռուպցիոն քաղաքականությանը (1998 թվական, առ այսօր կատարված փոփոխություններով) և ընդունել, որ ԱԶԲ-ն իրեն իրավունք է վերապահում ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով քննություն իրականացնելու Ծրագրի հետ կապված որևէ առերևույթ կոռուպցիոն, խարդախության, դավադրական կամ հարկադրանքի գործելակերպի առնչությամբ, ինչպես նաև համագործակցել ցանկացած նման քննության և ցուցաբերել ողջ անհրաժեշտ աջակցությունը՝ այդ քննության հաջող ավարտի համար (Ժամանակացույց 4, պարբերություն 17),

3.30. ԾԻՄ-ի հետ միասին ապահովել, որ բոլոր մրցութային փաստաթղթերում և պայմանագրերում ներառվեն ԱԶԲ-ի համար ընդունելի հակակոռուպցիոն դրույթներ, ներառյալ՝ կատարող և իրականացնող մարմինների և բոլոր կապալառուների, մատակարարների, խորհրդատուների և այլ ծառայություն մատուցողների գրառումները և հաշիվներն աուդիտի ենթարկելու և ուսումնասիրելու ԱԶԲ-ի իրավունքը սահմանող դրույթները՝ այնքանով, որքանով դրանք առնչվում են Ծրագրին (Ժամանակացույց 4, պարբերություն 18),

3.31. ԾԻՄ-ի հետ միասին իրենց կայքերում տրամադրել Ծրագրի մասին թարմացված տեղեկատվություն, ներառյալ՝ Ծրագրի կատարողականի, բիզնես հնարավորությունների, մրցութային գործընթացի և ուղենիշների, մրցույթների արդյունքների մասին տեղեկատվությունը և ընթացքի մասին ամփոփ հաշվետվությունները (Ժամանակացույց 4, պարբերություն 19):

4. Համաձայն Վարկային համաձայնագրի VI հոդվածի 6.02-րդ կետի՝ Վարկային համաձայնագրի 6.01 կետով վերապահված լիազորության համաձայն՝ ԾԻՄ-ի կողմից ձեռնարկված ցանկացած գործողություն կամ կնքված ցանկացած համաձայնագիր ամբողջությամբ պարտադիր է Հայաստանի Հանրապետության համար և ունի այն նույն ուժը և ազդեցությունը, որը կունենար Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվելու դեպքում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

12 մարտի 2024 թվականի
ՍԴՈ-1718

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ԻՆ
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1718 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1718 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1718 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1718 որոշմամբ 2023 թվականի նոյեմբերի 27- ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՆԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի

(«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տրվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տրվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շարժելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«12» մարտի 2024 թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ
ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ»
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 մարտի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի,
Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հ. Վարդանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-
րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-
րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023
թվականի նոյեմբերի 29-ին ստորագրված «Հայաստանի
Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև
«Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսա-
կան պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի հունվարի 18-ի N 62-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի նոյեմբերի 29-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հունվարի 31-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Հ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2023 թվականի նոյեմբերի 29-ին:

1.1. Պայմանագրով նախատեսված՝ Երևանի կայուն էներգաարդյունավետության բարելավմանն աջակցելու նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նպատակն է նվազեցնել Երևան համայնքի հասարակական շենքերի (պոլիկլինիկաներ և մանկապարտեզներ) էներգիայի սպառումը և աջակցել էներգաարդյունավետության ու վերականգնվող էներգիայի միջոցառումներին: Նախագծի իրականացման արդյունքում հնարավոր կլինի նվազեցնել 38 հասարակական շենքի (6 պոլիկլինիկա և 32 մանկապարտեզ) էներգիայի սպառումը:

Նախագիծն իրականացվելու է Եվրոպական հանձնաժողովի «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. 2020 թվականից հետո Արևելյան գործընկերության (ԱԳ) առաջնահերթությունների» համատեքստում՝ Հայաստանի համար Եվրոպական միության տնտեսական և ներդրումային պլանի 5-րդ՝ «Ներդրումներ Երևանում. խելացի և կանաչ Երևան» ուղենիշի ներքո:

1.2. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է, որ Երևանի քաղաքապետարանը (Իրականացնող մարմին) ձեռնարկել է կայուն էներգաարդյունավետության բարելավմանն աջակցելու նախագիծ, որի թիրախում Երևանում տեղակայված ընտրված հանրային շենքերն են (մանկապարտեզներ և պոլիկլինիկաներ) (յուրաքանչյուրը՝ ենթանախագիծ):

Նախագծի ընդհանուր արժեքը, ինչպես գնահատվել է Եվրոպական ներդրումային Բանկի կողմից (այսուհետ՝ ԵՆԲ կամ Բանկ), կազմում է 37,100,000 (երեսուներեք միլիոն հարյուր հազար) եվրո, և Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է, որ մտադիր է ֆինանսավորել Նախագիծը հետևյալ կերպ՝ Իրականացնող մարմնի ֆինանսական միջոցները՝ 2 մլն եվրո, Բանկի կողմից վարկը՝ 25 մլն եվրո, Հարևանության ներդրումային հարթակի կողմից ներդրումային դրամաշնորհը՝ 10.1 մլն եվրո:

Պայմանագրով ֆինանսավորումը տրամադրվում է Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամին (ԿԶԵՀ+) համապատասխան, որն ինտեգրված ֆինանսական փաթեթ է, ապահովում է ֆինանսավորման ներուժ՝ դրամաշնորհների, բյուջետային երաշխիքների և ֆինանսական գործիքների տեսքով՝ ամբողջ աշխարհում, և մասնավորապես՝ սուվերեն գործընկերների և ոչ առևտրային ենթասուվերեն գործընկերների հետ գործառնությունների բացառիկ ներդրումային պատուհանի շրջանակներում՝ համաձայն ՀԶՄՀԳ-ԳԵ (Հարևանության, զարգացման և միջազգային համագործակցության գործիքը՝ Գլոբալ Եվրոպա) կանոնակարգի 36.1-ին հոդվածի (ԿԶԵՀ+ՀՆՊ1)¹: ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի 36.8-րդ հոդվածի համաձայն՝ 2022 թվականի ապրիլի 22-ին Բանկը և Եվրոպական միությունը, ի դեմս Եվրոպական հանձնաժողովի, կնքել են ԿԶԵՀ+ երաշխիքային համաձայնագիրը (ԿԶԵՀ+ՀՆՊ1 երաշխիքային համաձայնագիր), որով Եվրոպական միությունը Բանկին տրամադրել է համապարփակ երաշխիք՝ Բանկի ֆինանսավորման թույլատրելի գործառնությունների համար՝ ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի (ԿԶԵՀ+ՀՆՊ1 երաշխիք) 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված աշխարհագրական տարածքներում գտնվող երկրներում իրականացվող նախագծերի առնչությամբ: Հայաստանի Հանրապետությունն իրավասու երկիր է՝ համաձայն ՀԶՄՀԳ-ԳԵ կանոնակարգի:

2008 թվականի փետրվարի 29-ին Հայաստանի Հանրապետությունը և Բանկը կնքել են Հայաստանի Հանրապետությունում Բանկի գործունեությունը կարգավորող շրջանակային համաձայնագիր (Շրջանակային համաձայնագիր)², որով Հայաստանի Հանրապետությունը տվել է իր պաշտոնական համաձայնությունը Շրջանակային

¹ «ԿԶԵՀ+ՀՆՊ1»-ն ունի Նախաբանի «գ» կետում դրան տրված իմաստը:

² Պայմանագրում հղում է կատարվում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2008 թվականի փետրվարի 12-ին Լյուքսեմբուրգում և 2008 թվականի փետրվարի 29-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական ներդրումային բանկի գործունեության կառավարման համար» շրջանակային համաձայնագրին, որը վավերացվել է Ազգային ժողովի Ն-099-4 որոշմամբ (ՍԴՈ-759):

համաձայնագրի գործողության շրջանակներում Պայմանագրով տրամադրման ենթակա փոխառության ֆինանսավորմանը: Պայմանագրի Նախաբանի «բ» կետում նշված ֆինանսավորման պլանի իրագործման նպատակով Հայաստանի Հանրապետությունը Բանկից պահանջել է 25,000,000 (քսանհինգ միլիոն) եվրոյի չափով վարկ:

Բանկը որոշել է կատարել Հայաստանի Հանրապետության պահանջը՝ տրամադրելով վարկ մինչև 25,000,000 (քսանհինգ միլիոն) եվրո Պայմանագրով՝ պայմանով, որ Բանկի փոխառության գումարը ոչ մի դեպքում չի գերազանցում Նախաբանի «բ» կետում նշված՝ Նախագծի ընդհանուր արժեքի 75%-ը (յոթանասունհինգ տոկոսը):

Բանկը հատկացնում է Վարկ մինչև 20 (քսան) Տրանշով: Յուրաքանչյուր Տրանշի գումար կազմում է նվազագույնը 1,000,000 (մեկ միլիոն) եվրո կամ (եթե ավելի քիչ) Վարկի չօգտագործված ամբողջ մնացորդը:

1.3. Իրականացնող մարմինը և Բանկը կնքելու են Նախագծի իրականացման համաձայնագիր: Բանկի փոխառությամբ ֆինանսավորվելու են էներգաարդյունավետության ոլորտի չափորոշիչներին համապատասխանող ներդրումները, այդ թվում՝ էներգաարդյունավետության համակարգերի ամբողջական վերանորոգում՝ ջերմային վերանորոգում, իսկ ավելի կոնկրետ՝ շենքերի երեսպատման վերանորոգում՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով՝ տանիքներն ու նկուղները, դռների և պատուհանների փոխարինում նորերով, արդիականացում կամ օդափոխության նոր համակարգեր, Լուսավորության համակարգերի վերանորոգում՝ նոր լուսավորության համակարգեր, ջեռուցման/դրա բաշխման համակարգերի արդիականացում, այդ թվում՝ կաթսաների փոխարինում, արևային ջրատաքացում. արևային ֆոտովոլտային էներգիայի արտադրություն, ջերմային պոմպեր և այլն, ինչպես նաև տեխնիկական և/կամ հեղինակային հսկողության և նախագծման արժեքը: Բացի էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներից, համալիր վերանորոգումը կներառի նաև շենքերի ընդհանուր տեխնիկական վիճակի բարելավմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքներ, մասնավորապես՝ սեյսմիկ անվտանգությանը և հաշմանդամների համար մատչելիությանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ (Հավելված Ա, մաս 1.1, պարբերություն 4):

2. Սահմանադրական դատարան է ներկայացվել Պայմանագրի՝ անգլերեն լեզվով ստորագրված և ԱԳՆ միջազգային պայմանագրերի պահոցում պահվող բնօրինակի նույնական պատճենը, ինչպես նաև հայերեն պաշտոնական թարգմանված տեքստը:

Պայմանագրի պաշտոնական հայերեն թարգմանության և դրա բնօրինակ տեքստերի միջև առկա են մի շարք թարգմանչական անհամապատասխանություններ ու անճշտություններ, ինչպիսիք են, օրինակ՝ Նախաբանի «ա» կետում նշված «0» հավելվածը անգլերեն տեքստում սահմանված է որպես «A.1», 6.1-ին հոդվածում նշված «դրա» բառը պետք է թարգմանված լիներ «իր», 6.5-րդ հոդվածի «դ» կետից հետո համարակալումը սխալ է կատարվել, և հաջորդ կետերը «ե» և «զ» տառերով համարակալվելու փոխարեն համարակալվել են «բ» և «գ» տառերով, 6.8(ա)iii հոդվածում անգլերեն բնօրինակում «և» տառը բացակայում է, 6.8-րդ հոդվածի «դ» կետում առկա է սխալ համարակալում, անգլերեն բնօրինակում «դ» կետի ենթակետերը նշված են «i» և «ii» տառերով, իսկ հայերեն տարբերակում՝ «ա» և «բ» տառերով, 6.11-րդ հոդվածում առկա են կետերի համարակալման սխալներ, 8.2-րդ հոդվածի «ա» կետի «i» ենթակետում պարբերությունները 1 և 2 թվերով համարակալվելու փոխարեն համարակալվել են 4 և 5 թվերով, 10.1.Ա հոդվածում ևս առկա է սխալ համարակալում, և այլն:

Պայմանագրի 11.9-րդ հոդվածի համաձայն՝ կողմերի համար իրավաբանական ուժ ունեն Պայմանագրի ստորագրված անգլերեն բնօրինակները, և բոլոր օրինակները միասին կազմում են նույն փաստաթուղթը: Բացի դրանից, Պայմանագրի եզրափակիչ մասում կողմերը պայմանավորվել են, որ Պայմանագիրը կատարվի անգլերեն բնօրինակներով: Միաժամանակ, Պայմանագրի 12.2-րդ հոդվածը սահմանում է, որ Պայմանագրի համաձայն կատարված կամ դրա հետ առնչություն ունեցող ցանկացած ծանուցում կամ հաղորդակցություն պետք է լինի անգլերենով, իսկ Պայմանագրով նախատեսված կամ դրա հետ առնչություն ունեցող մյուս բոլոր փաստաթղթերը պետք է լինեն անգլերենով կամ «անգլերենով չլինելու և Բանկի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում ուղեկցվեն վավերացված անգլերեն թարգմանությամբ, և այդ դեպքում անգլերեն թարգմանությունը կգերակայի»:

Այսպիսով, թարգմանչական անհամապատասխանություններն ու անճշտությունները թեև բովանդակային առումով խնդիր չեն հարուցում Պայմանագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության բացահայտման տեսանկյունից, այդուհանդերձ, կարող են որոշակի խնդիրներ առաջացնել Պայմանագրի մեկնաբանման և կիրառման ներպետական գործընթացներում:

3. Պայմանագիրը կառուցված է Նախաբանից, 12 հոդվածից և հինգ Հավելվածից: Պայմանագրին կից ներկայացված է նաև «Ստորագրող կողմի լիազորությունը» վերտառությամբ Առդիր 1 փաստաթուղթը:

3.1. Պայմանագրի Նախաբանում ներառված են համաձայնագրի կնքման իրավապայմանագրային նախադրյալները, Պայմանագրի մեկնաբանման կանոնները, դրանցում օգտագործվող մի շարք հասկացությունների սահմանումները:

3.2. Պայմանագրի հավելվածներն են՝ **Հավելված Ա** «Նախագծի մասնագրերը և հաշվետվություններ ներկայացնելը», **Հավելված Բ** «Համապատասխան միջբանկային դրույքաչափերի սահմանումները», **Հավելված Գ** «Հատկացման առաջարկի/ընդունման ձևանմուշը (Հոդվածներ 1.2.Բ և 1.2.Գ)», **Հավելված Դ** «Տոկոսի դրույքաչափի վերանայումը և փոխարկումը», **Հավելված Ե** «Վարկառուի կողմից տրամադրվելիք հավաստագրերը»:

Հավելվածները սահմանում են Վարկառուի ներկայացրած նախագծերի մասնագրերի ու հաշվետվությունների ներկայացման կարգը, միջբանկային դրույքաչափերի որոշման կարգը, հատկացման առաջարկի/ընդունման ձևանմուշը, տոկոսի դրույքաչափի վերանայման ու փոխարկման կարգը և հետևանքները, Վարկառուի կողմից Բանկին տրամադրվելիք հավաստագրերի ձևը:

3.3. Պայմանագրի 1-ին (Վարկը և հատկացումները) և 2-րդ (Փոխառությունը) հոդվածները սահմանում են վարկի գումարը և արժույթը, դրա հատկացման տրանշների պայմանները և ընթացակարգերը, հատկացման հետաձգման հիմքերը և կարգը, չհատկացված վարկի չեղարկման և կասեցման հիմքերը, դրանց դեպքում փոխհատուցման իրավունքը, փոխառության տրամադրման և վերատրամադրման կարգը, փոխառության շրջանակներում հատկացումների ամորտիզացման աղյուսակը, որոնց շրջանակներում Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ էական պարտավորությունները.

1) ձեռնարկել անհրաժեշտ միջոցները՝ Պայմանագրով նախատեսված մայր գումարի, տոկոսների և այլ գումարների բոլոր վճարումները հարկումից ազատելու և այդ բոլոր գումարների վճարումը թույլատրելու համար՝ առանց եկամուտների ընդհանուր գումարից գանձվող հարկի նվազեցման (հոդված 1.4.Բ(1.2)ժբ),

2) Բանկին վճարել Ընդունված տրանշի գումարի վրա հաշվարկված Հետաձգման վճար, եթե Բանկը կասեցնում է Ընդունված տրանշը փոխհատուցման ենթակա Կանխավճարի դեպքի կամ Պարտավորությունների չկատարման դեպքի կամ այնպիսի դեպքի կամ հանգամանքի առկայության դեպքում, որը (Ժամանակի ընթացքում կամ Պայմանագրով նախատեսված ծանուցման կամ որևէ որոշման կայացման հետևանքով) կազմում է Փոխհատուցման ենթակա կանխավճարի դեպք կամ Պարտավորությունների չկատարման դեպք (հոդված 1.6.Գ(1)),

3) Լիազորել Բանկին առաջին Տրանշից պահել գնահատման վճար՝ 50 000 (հիսուն հազար) եվրոյի չափով, իսկ եթե ոչ մի հատկացում չի կատարվում, ապա Հասանելիության վերջնական ամսաթվին Բանկին վճարել գնահատման վճարը. Վարկը 1.6-րդ հոդվածի համաձայն՝ մինչև Հասանելիության վերջնական ամսաթիվն ամբողջությամբ չեղարման դեպքում՝ գնահատման վճարը Բանկին վճարել այդ չեղարկման ամսաթվին (հոդված 1.8),

4) Բանկի կողմից հատկացված Տրանշի հասույթն օգտագործել միայն այնպիսի Ենթանախագծերի ֆինանսավորման համար, որոնք նախապես հաստատվել են Բանկի կողմից տրամադրման համար, և որոնց վերաբերյալ Բանկին բավարարող ձևով ժամանակին ներկայացվել են Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ գնումների պլանը, բոլոր անհրաժեշտ բնապահպանական և շինարարական թույլտվությունների պատճենները, և Հայաստանի օրենսդրության համաձայն՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ) պահանջող Ենթանախագծերի դեպքում՝ ՇՄԱԳ-ի ոչ տեխնիկական ամփոփ նկարագրի հանրային տարբերակին արված հղումը (հոդված 1.10.Ա(գ)),

5) փոխառության ցանկացած մասի վերատրամադրման անհնարինության կամ Պայմանագրի 1.11.Ա(ա) հոդվածում նշված ժամկետում միայն մասամբ հնարավոր լինելու դեպքում՝ անմիջապես Բանկին կանխավճարի տեսքով վճարել Փոխառության այն մասը, որը հատկացվել է Բանկի կողմից, որը ենթակա է սկզբնական Տրամադրման՝ կանխավճարի տեսքով վճարված գումարի նկատմամբ, առկայության դեպքում՝ հաշվեգրված տոկոսների և փոխհատուցման հետ միասին՝ Պայմանագրի 4.2-րդ հոդվածին համապատասխան (հոդված 1.11.Ա(գ)),

6) յուրաքանչյուր Տրանշի մասով տոկոսներ, մայր գումար և վճարման ենթակա այլ վճարներ վճարել այն արժույթով, որով հատկացվել է այդ Տրանշը, իսկ մյուս վճարումները՝ առկայության դեպքում, կատարել Բանկի կողմից սահմանված արժույթով՝ հաշվի առնելով այդ վճարման միջոցով փոխհատուցման ենթակա ծախսերի արժույթը (հոդված 2.2):

3.4. Պայմանագրի 3-րդ հոդվածը (Տոկոսներ) սահմանում է վարկի տոկոսադրույքները: Պայմանագրի 3-րդ հոդվածի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ էական պարտավորությունները.

1) յուրաքանչյուր Ֆիքսված դրույքաչափով տրանշի չմարված մնացորդի նկատմամբ վճարել տոկոսներ Ֆիքսված դրույքաչափով յուրաքանչյուր կիսամյակ՝ ապառքներով, համապատասխան Վճարման ամսաթվերին, ինչպես նշված է Հատկացման առաջարկում, որն սկսվում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

է Տրանշի Հատկացման ամսաթվին հաջորդող առաջին այդպիսի Վճարման ամսաթվին. տոկոսը հաշվարկել Պայմանագրի 5.1(ա) հոդվածի հիման վրա (հոդված 3.1.Ա),

2) յուրաքանչյուր Լողացող դրույքաչափով տրանշի չմարված մնացորդի նկատմամբ վճարել տոկոսներ Լողացող դրույքաչափով, յուրաքանչյուր կիսամյակ՝ ապառքներով, համապատասխան Վճարման ամսաթվերին, ինչպես նշված է Հատկացման առաջարկում (հոդված 3.1.Բ, պարբերություն 1),

3) Տրանշի տոկոսադրույքի բազայի վերանայման կամ փոխարկման տարբերակն իրացնելու դեպքում՝ տոկոսի վերանայումը/փոխարկումն ուժի մեջ մտնելու ամսաթվից (Պայմանագրի «Դ» հավելվածում սահմանված կարգին համապատասխան) վճարել տոկոս՝ Պայմանագրի «Դ» հավելվածում նախատեսված դրույթներին համապատասխան սահմանված դրույքաչափով (հոդված 3.1.Գ),

4) Ժամկետանց գումարների նկատմամբ տոկոսի հաշվեգրումն իրականացնել Պայմանագրի 3.2-րդ հոդվածով սահմանված կարգով և վճարել Բանկի պահանջին համապատասխան (հոդված 3.2):

3.5. Պայմանագրի 4-րդ հոդվածը (Հետվճարումը) կարգավորում է փոխառության հետվճարման հարաբերությունները, մասնավորապես՝ հետվճարման բնականոն ընթացակարգը, կամավոր կանխավճարների իրականացման կարգը, պարտադիր կանխավճարների դեպքերը, կանխավճարների կատարման մեխանիզմները, վերափոխառության տրամադրման բացառումը՝ ամրագրելով այդ հոդվածի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները:

3.6. Պայմանագրի 5-րդ հոդվածը (Վճարումները) կարգավորում է փոխառության տոկոսների հաշվարկման բազաները՝ ֆիքսված և լողացող դրույքաչափերով տրանշների դեպքերում, վճարման ժամանակը և վայրը: Պայմանագրի 5-րդ հոդվածի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ էական պարտավորությունը. Պայմանագրում կամ Բանկի պահանջով այլ բան սահմանված չլինելու դեպքում, տոկոսագումարներից, փոխհատուցման և մայր գումարից բացի բոլոր մյուս գումարները վճարել Բանկի պահանջն ստացվելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում (հոդված 5.2(ա)):

3.7. Պայմանագրի 6-րդ հոդվածը (Վարկառուի պարտավորություններն ու հավաստիացումները) բաղկացած է Ա և Բ մասերից:

Ա մասում ամրագրված են Պայմանագրից բխող Նախագծերի մասով պարտավորությունները, մասնավորապես՝ փոխառության նպատակային օգտագործման և ֆինանսական միջոցների հասանելիության կանոնները,

Նախագծերի ավարտման և դրանց հետ կապված լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման հարաբերությունները, գնումների ընթացակարգի, ինչպես նաև Նախագծերի մասով շարունակվող պարտավորությունները:

Բ մասում ամրագրված են Պայմանագրից բխող ընդհանուր պարտավորությունները, մասնավորապես՝ Նախագծերի իրականացման ընթացքի օրենքներին համապատասխանությունը, պատշաճ հաշվապահական մատյանների ու գրառումների կատարման Վարկառուի և Իրականացնող մարմնի պարտականությունները, Վարկառուի և Իրականացնող մարմնի բարեվարքության կանոնները, վերջիններիս հավաստիացումներն ու երաշխիքները:

3.8. Պայմանագրի 7-րդ հոդվածը (Ապահովումը) սահմանում է, որ Վարկառուն ապահովում է հետևյալ պարտավորությունները.

1) իր Պայմանագրի դասակարգմամբ սահմանված վճարման պարտավորությունները դասակարգվում են և կդասակարգվեն ոչ պակաս, քան *pari passu*³ վճարման իրավունքի նկատմամբ՝ ՀՀ արտաքին պարտքային գործիքներից որևէ մեկով սահմանված բոլոր այլ ընթացիկ և հետագա չապահովված և չստորադասված պարտավորությունների հետ, մասնավորապես՝ Պայմանագրի 7.1-ին հոդվածում շարադրված դեպքերում (հոդված 7.1),

2) որևէ այլ ֆինանսական վարկատուի հետ ֆինանսավորման համաձայնագիր կնքելու դեպքում, որը ներառում է վարկանիշի կորստի մասին դրույթ կամ դրա ֆինանսական ցուցանիշի վերաբերյալ այլ դրույթ, ըստ կիրառելիության, որը Պայմանագրով նախատեսված չէ կամ ավելի բարենպաստ է համապատասխան ֆինանսական վարկատուի համար, քան Պայմանագրի որևէ համարժեք դրույթ՝ Բանկի համար, ապա Բանկին անհապաղ տեղեկացնել և Բանկին տրամադրել առավել բարենպաստ դրույթի օրինակ (հոդված 7.3):

3.9. Պայմանագրի 8-րդ հոդվածը (Տեղեկատվությունը և այցելությունները) կարգավորում է Վարկառուի կողմից ապահովված և Իրականացնող մարմնի կողմից Նախագծերի վերաբերյալ տեղեկությունների շրջանակը և դրանց տրամադրման կարգը, տեղեկությունների հրապարակման ու տեսանելիության ապահովման կարգերը, որոնց շրջանակներում Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ էական պարտավորությունները.

1) ապահովել, որ Իրականացնող մարմինը (կիրառելիության դեպքում)՝ Բանկին տրամադրի Պայմանագրի 8.1-ին և 8.2-րդ հոդվածներով սահմանված տեղեկությունները (հոդված 8.1 և 8.2),

³ Հավասար մասնաբաժիններով

2) թույլ տալ և ապահովել, որ Իրականացնող մարմինը թույլ տա, որ Բանկը, և երբ դա պահանջվում է ԵՄ օրենսդրության համապատասխան պարտադիր դրույթներով կամ համաձայն ՀՀՄՀԳ-ԳԵ կանոնակարգի կամ Ֆինանսական կանոնակարգի, եթե կիրառելի է, Աուդիտորների Եվրոպական դատարանը, Եվրոպական հանձնաժողովը, Խարդախության դեմ պայքարի Եվրոպական գրասենյակը և Եվրոպական դատախազությունը, ինչպես նաև վերը նշված անձանց կողմից նշանակված անձինք այցելեն Նախագծի բաղկացուցիչ մաս կազմող աշխատանքների իրականացման վայրեր, շինություններ, գրուցեն ՀՀ և (կամ) Իրականացնող մարմնի ներկայացուցիչների հետ և չխոչընդոտեն Նախագծում ընդգրկված կամ Նախագծի հետ առնչություն ունեցող որևէ այլ անձի հետ շփումներին և ըստ իրենց հայեցողության՝ անցկացնեն քննություններ, զննություններ, տեղում իրականացվող աուդիտ և ստուգումներ և ստուգեն ՀՀ և (կամ) Իրականացնող մարմնի՝ Փոխառության, Պայմանագրի և Նախագծի իրականացման վերաբերյալ վարվող մատյաններն ու արձանագրությունները և հնարավորություն ունենան պատճենել համապատասխան փաստաթղթերը, որքանով օրենքն է թույլատրում (հոդված 8.3(ա)),

3) Բանկին և ցանկացած Համապատասխան կողմի տրամադրել կամ ապահովել, որ Բանկին և Համապատասխան կողմերին տրամադրվի հասանելիություն տեղեկությունների, շինությունների և փաստաթղթերի նկատմամբ, ինչպես նաև Պայմանագրի 8.3-րդ հոդվածում նկարագրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ամբողջական աջակցություն (հոդված 8.3(բ)),

4) Եվրոպական հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակությանը թույլ տալ մասնակցել Պայմանագրի, Փոխառության կամ Նախագծի առնչությամբ Բանկի կողմից կազմակերպվող մոնիթորինգային ցանկացած առաքելության (հոդված 8.3(գ)),

5) Փոխառության և (կամ) Նախագծի մասով Արգելված վարքագծի վերաբերյալ իրական ենթադրության, բողոքի կամ տեղեկությունների դեպքում Բանկի հետ բարեխղճորեն խորհրդակցել համապատասխան գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ (հոդված 8.3(դ)),

6) ընդունել և համաձայնել, որ Բանկը կարող է ստիպված լինել Հայաստանի Հանրապետության, Փոխառության, Պայմանագրի և (կամ) Նախագծի վերաբերյալ տեղեկություններ և նյութեր փոխանցել Եվրոպական միության ցանկացած հաստատության կամ մարմնի, այդ թվում՝ Աուդիտորների Եվրոպական դատարանին, Եվրոպական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

հանձնաժողովին, ԵՄ ցանկացած համապատասխան պատվիրակության, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակին և Եվրոպական դատախազությանը, եթե դա նրանց անհրաժեշտ է իրենց առաջադրված խնդիրները ԵՄ օրենսդրությանը (այդ թվում՝ ՀՁՄՀԳ կանոնակարգին և Ֆինանսական կանոնակարգին) համապատասխան կատարելու համար (հոդված 8.4(ա)i):

3.10. Պայմանագրի 9-րդ հոդվածը (Գանձումները և ծախսերը) կարգավորում է Պայմանագրի կատարումից առաջացող հարկերի, տուրքերի և վճարների, այլ գանձումների, լրացուցիչ ծախսերի, փոխհատուցումների ու հաշվանցումների հետ կապված հարաբերությունները, որոնց շրջանակում Վարկառուն իր վրա է վերցնում հետևյալ պարտավորությունները.

1) վճարել Պայմանագրի կամ դրա հետ կապված որևէ փաստաթղթի կատարումից կամ իրականացումից առաջացող և Փոխառության համար տրամադրված ցանկացած Ապահովման ստեղծման, կատարելագործման, գրանցման կամ կատարման հետ կապված բոլոր հարկերը, տուրքերը, վճարները և ցանկացած տեսակի այլ վճարումներ, այդ թվում՝ դրոշմանիշային վճարը և գրանցման վճարները, որքանով դա կիրառելի է (հոդված 9.1, պարբերություն 1),

2) վճարել Պայմանագրով նախատեսված ամբողջ մայր գումարը, տոկոսները, փոխհատուցումներն ու օրենքով կամ պետական կամ այլ մարմինների հետ կնքված համաձայնագրի համաձայն պահանջվող այլ գումարներ՝ առանց որևէ պահումների կամ ազգային կամ տեղական ցանկացած տեսակի այլ վճարումներից նվազեցումների: Որևէ այդպիսի պահումներ կամ նվազեցումներ կատարելու պարտավորվածության դեպքում մեծացնել Բանկին կատարվող վճարումն այնպես, որ այդ պահումներից կամ նվազեցումներից հետո Բանկի կողմից ստացվող գուտ գումարը հավասար լինի նախատեսված գումարին (հոդված 9.1, պարբերություն 2),

3) Հայաստանի Հանրապետության վրա վերցնել բոլոր գանձումներն ու ծախսերը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ արտարժույթի փոխարկման հետ կապված ծախսերը, որոնք կարող են առաջանալ՝ կապված Պայմանագրի կամ դրա հետ կապված որևէ փաստաթղթի պատրաստման, կատարման, իրականացման, կատարումն ապահովելու և գործողության դադարեցման, Պայմանագրում կամ դրա հետ կապված ցանկացած փաստաթղթում կատարվող փոփոխության, լրացման կամ չեղարկման, ինչպես նաև Փոխառության համար տրամադրված ցանկացած ապահովման փոփոխության, ստեղծման, կառավարման, հարկադիր կատարման և իրականացման հետ (հոդված 9.2),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՄ 2(114)2024

4) Բանկին վճարել ցանկացած ծախք կամ ծախս, որը Բանկի համար առաջացել է, կամ որը Բանկը կրել է որևէ օրենքի կամ կանոնակարգի ընդունման կամ դրանում որևէ փոփոխություն կատարելու (կամ մեկնաբանման, դրա նորմերի կիրառման կամ դրա կիրառման) կամ ցանկացած օրենքի կամ կանոնակարգի հետ համապատասխանությունն ապահովելու հետևանքով, ինչի անհրաժեշտություն առաջացել է Պայմանագիրը ստորագրելու ամսաթվից հետո, որի համաձայն կամ որի արդյունքում (i) Բանկը պարտավոր է կրել լրացուցիչ ծախքեր՝ Պայմանագրով նախատեսված ֆինանսավորումն ապահովելու կամ իր պարտականությունները կատարելու համար, կամ (ii) Պայմանագրով Բանկին հասանելիք ցանկացած գումար կամ Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը Վարկ կամ Փոխառություն տրամադրելու արդյունքում առաջացած ֆինանսական եկամուտը նվազեցվում է կամ վերացվում (հոդված 9.3(ա)),

5) չսահմանափակելով Բանկի՝ Պայմանագրով կամ ցանկացած կիրառելի օրենքով նախատեսված այլ **իրավունքներով**⁴ փոխհատուցել Բանկին և թույլ չտալ, որ վերջինս կրի կորուստներ, որոնք առաջանում են ցանկացած ամբողջական կամ մասնակի մարման արդյունքում, որը կատարվում է Պայմանագրով հստակ սահմանված ձևից տարբերվող այլ ձևով (հոդված 9.3(բ)):

3.11. Պայմանագրի 10-րդ հոդվածը կարգավորում է Պայմանագրով պարտավորությունների չկատարման հարաբերությունները, որոնց շրջանակում Վարկառուն իր վրա է վերցնում հետևյալ էական պարտավորությունները.

1) անմիջապես վճարել Չմարված փոխառության ամբողջ գումարը կամ դրա մի մասը (ինչպես պահանջում է Բանկը) հաշվեգրված տոկոսների և Պայմանագրով նախատեսված բոլոր այլ հաշվեգրված կամ չմարված գումարների հետ միասին՝ Բանկի կողմից Պայմանագրի 10.1.Ա և 10.1.Բ հոդվածների դրույթների համաձայն ներկայացված գրավոր պահանջի դեպքում (հոդված 10.1),

2) ֆիքսված դրույքաչափով որևէ տրանշի նկատմամբ Պայմանագրի 10.1-ին հոդվածով սահմանված պահանջ ներկայացվելու դեպքում Բանկին վճարել պահանջված գումարը որպես կանխավճար, վճարման ենթակա մայր գումարի ցանկացած չափի համար փոխհատուցման հետ միասին և այդպիսի փոխհատուցումը (i) հաշվանցել Բանկի՝ պահանջի մասին ծանուցման մեջ նշված վճարման ժամկետից և հաշվարկել այն հիմքով, որ կանխավճարը կատարվում է նշված օրը, և (ii) Բանկի կողմից

⁴ Պայմանագրի հայերեն տեքստում վերը նշված՝ «իրավունքներով» բառը պետք է թարգմանված լիներ «իրավունքները»:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

փոխանցված գումարի համար է՝ որպես Պայմանագրի 10.3.Ա հոդվածում նշված ավելցուկի գործող արժեք (հաշվարկված կանխավճարը կատարելու օրվա դրությամբ), եթե այդպիսիք կան՝ ինչպես սահմանված է Պայմանագրի 10.3.Ա հոդվածի (ա) և (բ) կետերում, ինչպես նաև տվյալ գործող արժեքը հաշվարկել կիրառելի Տրանշի Վճարման յուրաքանչյուր համապատասխան ամսաթվի դրությամբ կիրառվող Վերաբաշխման դրույքաչափին հավասար գեղջման դրույքաչափով (հոդված 10.3.Ա),

3) լողացող դրույքաչափով որևէ տրանշի վերաբերյալ Պայմանագրի 10.1-ին հոդվածով սահմանված պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջված գումարը տարեկան 0,19% (տասնինը բազիսային կետ) գործող արժեքին հավասար գումարի հետ միասին, որը հաշվարկվում և հաշվանցվում է որպես կանխավճար վճարման ենթակա մայր գումարի չափով՝ նույն ձևով, ինչպես որ հաշվարկված և հաշվանցված կլինեին տոկոսները, եթե այդ գումարը մնար չմարված՝ համաձայն Տրանշի մարման համար կիրառելի ժամանակացույցի՝ մինչև Տոկոսի վերանայման/փոխարկման օրը կամ Մարման օրը, եթե այդպիսիք կան. արժեքը հաշվարկվում է Վճարման յուրաքանչյուր համապատասխան ամսաթվի դրությամբ կիրառվող Վերաբաշխման դրույքաչափին հավասար գեղջման դրույքաչափով (հոդված 10.3.Բ),

4) ընդունել, որ Բանկի կողմից Պայմանագրով սահմանված իր իրավունքներից կամ իրավական պաշտպանության միջոցներից որևէ մեկը չիրացնելը կամ ուշացմամբ կամ մասնակիորեն իրացնելը չի համարվում այդ իրավունքից կա իրավական պաշտպանության միջոցից հրաժարում (հոդված 10.4.):

3.12. Պայմանագրի 11-րդ հոդվածը (Օրենք և իրավագործություն, այլ դրույթներ) կարգավորում է Պայմանագրից և դրանից ծագող կամ դրա հետ կապված ոչ պայմանագրային պարտավորության կարգավորման օրենսդրությունը, ինչպես նաև դատական իրավագործության, իրավագործության անձեռնմխելիությունից հրաժարվելու, Պայմանագրի դրույթների անվավերության հետևանքների, Պայմանագրում փոփոխություններ կատարելու ընթացակարգերի հարաբերությունները, որոնց շրջանակներում Վարկառուն իր վրա է վերցնում հետևյալ էական պարտավորությունները.

1) Պայմանագիրը և դրանից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն կարգավորվում է Լյուքսեմբուրգի օրենսդրությամբ (հոդված 11.1),

2) Պայմանագրի հետ կապված բոլոր վեճերը ներկայացնել Եվրոպական Միության Արդարադատության դատարանի (Դատարան) իրավագործությանը (հոդված 11.2(ա)),

3) հրաժարվել Դատարանի իրավազորության նկատմամբ ցանկացած անձեռնմխելիությունից, որը Հայաստանի Հանրապետությունը կարող է ունենալ, կամ Դատարանի իրավազորության դեմ առարկելու իրավունքից (հոդված 11.2(բ)),

4) հրաժարվել ամբողջ անձեռնմխելիությունից, որը Հայաստանի Հանրապետությունը կամ նրա ակտիվները կամ եկամուտներն այլ կերպ կարող են ունենալ ցանկացած իրավազորության ներքո, ներառյալ՝ անձեռնմխելիությունը հետևյալի նկատմամբ. ա) դատարանի որոշման կամ հրահանգի միջոցով որևէ բավարարում տալը՝ պարտավորություններն իրապես կատարելու կամ ակտիվները կամ եկամուտները վերականգնելու համար և բ) դատարանի որոշումը կատարելու համար կամ գույքային հայցով իր ցանկացած ակտիվի և եկամուտի նկատմամբ արգելանք, կալանք դնելու կամ դրանց վաճառքի համար իր ակտիվների կամ եկամուտների նկատմամբ ցանկացած գործընթացի խնդիրը (հոդված 11.3):

3.13. Պայմանագրի 12-րդ հոդվածը (Եզրափակիչ դրույթներ) կարգավորում է ծանուցումների կատարման ձևի, կողմերի հասցեների և կոնտակտային տվյալների, Պայմանագրի ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունները, ամրագրում է, որ Պայմանագրի մաս են կազմում՝ Նախաբանը, 12.4-րդ հոդվածում թվարկված Հավելվածները, Պայմանագրին կից ստորագրող կողմի լիազորությունը հաստատող Առդիր 1 փաստաթուղթը:

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա 12.3-րդ՝ «Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը», հոդվածով սահմանված հետևյալ կարգով. «(...) սույն Պայմանագիրն ուժի մեջ կմտնի Բանկի կողմից Վարկառուին ուղղված նամակում նշված ամսաթվից (Ուժի մեջ մտնելու ամսաթիվ), որով հաստատվում է, որ Բանկը ստացել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ իրավական եզրակացությունը և ապացույց, որ անհրաժեշտ պաշտոնական և գերատեսչական բոլոր հաստատումները, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացումները և այդ նամակը համոզիչ ապացույց են առ այն, որ սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտել»:

Եթե Ուժի մեջ մտնելու ամսաթիվը սույն Պայմանագիրը կնքելու ամսաթվից հետո 12-րդ (տասներկուերորդ) ամսում կամ դրանից առաջ ընկած ամսաթիվը չէ, ապա սույն Պայմանագիրն ուժի մեջ չի մտնում, և հետագա գործողությունների անհրաժեշտություն կամ պահանջ չի լինում»:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին, ինչպես նաև Սահմանադրության 12-րդ հոդվածով ամրագրված՝ շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման հաստատմանը, բնական պաշարների ողջամիտ օգտագործմանն ուղղված նպատակին և կնպաստեն կայուն էներգաարդյունավետության բարելավմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի նոյեմբերի 29-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

12 մարտի 2024 թվականի
ՍԴՈ-1719

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ
ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ
ՓՈՒԼ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1719
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի նոյեմբերի 29-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1719 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի նոյեմբերի 29-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1719 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի մարտի 12-ի ՍԴՈ-1719 որոշմամբ 2023 թվականի նոյեմբերի 29-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՆԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարանի ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրության ըհամապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԻ ԴԱՏՈՐԱՆ ԴՏԵՆԵԿԱԳԻՐ 2(114)2024

են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.
- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«12» մարտի 2024 թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱ-
ՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 մարտի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի,
Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի
տեղակալ Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-
րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի
հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված՝
«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության
գործակալության միջև փոխգործակցության մասին» համաձայնա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

գրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի մարտի 7-ի N 308-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև փոխգործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև փոխգործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին՝ անդրազգային հանցավորության դեմ պայքարում՝ մասնավորապես՝ թմրանյութերի ապօրինի շրջանառության, միգրանտների մաքսանենգության, կիբերհանցավորության, ակտիվների վերականգնման, փողերի լվացման, մարդկանց թրաֆիքինգի և այլ ոլորտներում համագործակցության ընդլայնման նպատակով:

2. Արտաքին գործերի նախարարության՝ Համաձայնագրի հաստատման կամ վավերացման արտաքին քաղաքական նպատակահարմարության եզրակացության և ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Համաձայնագրի վավերացումը/ հաստատումը հնարավորություն կընձեռի ընդլայնել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության ու անդամ պետությունների պատկան մարմինների միջև համագործակցության շրջանակը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում, ինչը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

3. Համաձայնագրով հնարավորություն է ստեղծվում Եվրապոլում ունենալ կապի սպա՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև համագործակցային հարաբերությունների ստեղծմանն ուղղված՝ 2021 թվականի սեպտեմբերի 16-ի և 28-ի աշխատանքային համաձայնագիրը (այսուհետ՝ Աշխատանքային համաձայնագիր) և, մասնավորապես, վերջինիս 9-րդ հոդվածը:

Աշխատանքային համաձայնագրով պահանջվում է Կողմերի միջև համագործակցության համար կապի սպայի նշանակում:

Համաձայնագրով Կողմերը համաձայնում են մեկ կամ ավելի կապի սպայի (այսուհետ՝ կապի սպա) նշանակման միջոցով ընդլայնել Աշխատանքային համաձայնագրով սահմանված համագործակցությունը: Կապի սպաների թիվը համաձայնեցվում է Կողմերի միջև:

4. Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ կապի սպայի առաջադրանքն է աջակցել և նպաստել Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների, Եվրապոլի և Եվրոպական միության անդամ պետությունների միջև համագործակցությանը՝ Աշխատանքային համաձայնագրին համապատասխան: Կապի սպան, մասնավորապես, պատասխանատու է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների, Եվրապոլի և Եվրոպական միության անդամ պետությունների միջև կապերի հարցում աջակցության և տեղեկատվության փոխանակմանը նպաստելու համար:

5. Համաձայնագրի 3-րդ հոդվածին համապատասխան՝ կապի սպան համարվում է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների պաշտոնական ներկայացուցիչը Եվրապոլին առնչվող հարցերում, իր առաջադրանքները կատարում է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների անունից, և վերջինիս նշանակմամբ Եվրապոլի հետ որևէ աշխատանքային հարաբերություն չի հաստատվում:

Կապի սպան նաև Աշխատանքային համաձայնագրի մեջ սահմանված քրեական իրավախախտումների կանխարգելման և դրանց դեմ պայքարի համար պատասխանատու մարմինների ներկայացուցիչն է:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է,

- ապահովել, որ Եվրապոլի և կապի սպայի միջև տեղեկատվության ցանկացած փոխանակում տեղի ունենա միայն Աշխատանքային համաձայնագրի դրույթներին համապատասխան, իսկ Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների և Եվրոպական միության անդամ պետությունների՝ Եվրապոլի ազգային ստորաբաժանումների

կամ երրորդ կողմերի համակարգողների միջև տեղեկատվության ցանկացած փոխանակում տեղի ունենա համապատասխան կիրառելի օրենսդրության համաձայն (հոդված 4, մաս 1)։

- երաշխավորել, որ Ներքին գործերի նախարարությունն ապահովի, որ կապի սպան հասանելիություն ունենա գաղտնի տեղեկատվությանն առնվազն «CONFIDENTIEL UE/EU CONFIDENTIAL» կամ համարժեք մակարդակում և ապահովել, որ գաղտնի տեղեկատվության հասանելիություն ունենալու վկայականը կապի սպային տրամադրվի ազգային անվտանգության իրավասու մարմնի կողմից և ներկայացվի Եվրապոլին՝ դրանում հստակորեն նշելով գաղտնի տեղեկատվությանը հասանելիություն ունեցող կապի սպային, գաղտնի տեղեկատվության հասանելիության աստիճանը և դրա վավերականության ժամկետը (հոդված 5, մաս 1)։

- երաշխավորել, որ կապի սպան պահպանի Եվրապոլի տեղեկատվության և գործունեության հետ կապված հայեցողությունը և գաղտնիությունը, ինչպես նաև ստորագրի դրա վերաբերյալ հայտարարություն (հոդված 5, մաս 2)։

- երաշխավորել, որ Ներքին գործերի նախարարությունն ապահովի, որ իր նշանակած կապի սպան ունենա արագ և, տեխնիկապես իրագործելի լինելու դեպքում, ուղիղ հասանելիություն դեպի ազգային տվյալների բազաներ, որոնք անհրաժեշտ են կապի սպայի առաջադրանքների կատարման համար (հոդված 6, մաս 3)։

- ապահովել, որ պարտականությունները կատարելիս կապի սպան պահպանի Եվրապոլի ներքին կանոնները՝ միաժամանակ ենթարկվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, մասնավորապես՝ գործի Եվրապոլի վարքագծի կանոնների սկզբունքներին համապատասխան և պահպանի Եվրապոլի շենքերի ապահովության և անվտանգության վերաբերյալ կիրառելի Եվրապոլի կանոնները, այդ թվում՝ Եվրապոլի անվտանգության կանոնները և հրդեհային անվտանգության ու տարհանման ընթացակարգերի վերաբերյալ կանոնները (հոդված 6, մաս 4)։

- ապահովել, որ կապի սպան մշակի անձնական տվյալները՝ տվյալների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կամ ինստիտուցիոնալ օրենսդրությանը, ինչպես նաև կիրառելիության դեպքում Եվրապոլի՝ տվյալների պաշտպանության կանոններին համապատասխան (հոդված 6, մաս 5)։

- երաշխավորել, որ կապի սպան արտակարգ իրավիճակների դեպքում Եվրապոլին տեղեկացնի իր աշխատանքային ժամերի և կոնտակտային

տվյալների մասին, ինչպես նաև Եվրապոլին տեղեկացնի ցանկացած երկարաձգվող անհասանելիության մասին, որը խոչընդոտում է իր առաջադրանքների կատարումը (հոդված 6, մաս 6).

- նշանակել համակարգող՝ Համաձայնագիրը գործնականում իրականացնելու հետ կապված ցանկացած հարցի համար (հոդված 7).

- երաշխավորել, որ Ներքին գործերի նախարարությունը պատասխանատվություն կրի Եվրապոլի գույքին կապի սպայի կողմից պատճառված ցանկացած վնասի համար, ինչպես նաև ցանկացած այդպիսի վնաս անհապաղ փոխհատուցվի Ներքին գործերի նախարարության կողմից՝ Եվրապոլի կողմից պատշաճ հիմնավորված պահանջի հիման վրա (հոդված 8, մաս 1):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024 ՏԵՂԵԿԱԳԻՐ

1. 2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

22 մարտի 2024 թվականի
ՍԴՈ-1720

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1720 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի մարտի 22-ի ՍԴՈ-1720 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի մարտի 22-ի ՍԴՈ-1720 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

ՍԱՀՄԱՆԱՐԴՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի մարտի 22-ի ՍԴՈ-1720 որոշմամբ 2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության

և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ են համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեն համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարանի ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանի միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՏԵԿՎԱԳԻՐ 2(114)2024

փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«22» մարտի 2024 թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՈԼՈՐՏՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԱՆՎՏԱՆԳ ԿԱՊՈՒՂՈՒ ՄԱՍԻՆ» ՓՈԽԸՄԲՈՒՄԱՆ
ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 մարտի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի,
Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի
տեղակալ Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-
րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվա-
կանի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված
«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի մարտի 7-ի N 307-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագիրը վավերացնելու մասին» Օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով փոխըմբռնման հուշագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1.«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) ստորագրվել է 2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին՝ տեղեկությունների փոխանակման համար անվտանգ կապուղու ստեղծման, իրականացման, շահագործման, փոխարինման և ապամոնտաժման կարգավորման նպատակով:

2. Հուշագրով սահմանվում է տեղեկությունների փոխանակման համար անվտանգ կապուղու ստեղծումը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև համագործակցային հարաբերությունների ստեղծմանն ուղղված՝ 2021 թվականի սեպտեմբերի 16-ի և 28-ի աշխատանքային համաձայնագիրը (այսուհետ՝ Աշխատանքային համաձայնագիր):

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 2(114)2024

3. Հուշագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. նշանակել համակարգող, Հուշագրի՝ տեխնիկական մասով իրականացմանն առնչվող ցանկացած հարցի համար (հոդված 3),

3.2. իրականացնել «Եվրապոլի տեղեկատվական համակարգերի հետ կապակցման կանոնադրով» (այսուհետ՝ ԿԿ) սահմանված՝ անվտանգության նկատմամբ նվազագույն հսկողությունը (հոդված 4, կետ 1),

3.3. ցանկացած այլ ցանցի հետ փոխկապակցում ապահովելու դեպքում, այդ կապակցումը ենթարկել համաձայնության՝ ձեռքբերման այն սկզբունքները և պահանջները հարգելու մասով, որոնք համարժեք են ԿԿ-ով սահմանվածներին (հոդված 4, կետ 3),

3.4. միջամտություն չունենալ մյուս Կողմի ՏՀՏ սարքավորումների նկատմամբ՝ բացառությամբ մյուս Կողմի կողմից հատուկ գրավոր հանձնարարականի կամ արտակարգ իրավիճակների դեպքերի (հոդված 4, կետ 4),

3.5. անվտանգության հետ կապված լուրջ միջադեպի դեպքում անհապաղ այդ մասին տեղեկացնել մյուս Կողմին և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պաշտպանելու փոխանակվող տեղեկատվության և համակարգի գաղտնիությունն ու ամբողջականությունը՝ հաշվի առնելով նաև մյուս Կողմի համակարգից անջատվելու հարցը՝ ցանկացած վտանգի հետագա տարածումը կանխելու համար (հոդված 4, կետ 5),

3.6. նախքան ցանցի վրա ազդող փոխկապակցումների կամ համակարգերի հետ կապված փոփոխություններ կատարելը մյուս Կողմի համակարգողին գրավոր տրամադրել համապատասխան տեղեկությունները և նախապես ներկայացնել պատշաճ ծանուցում (հոդված 4, կետ 6),

3.7. փոխկապակցված համակարգերն օգտագործել միայն Աշխատանքային համաձայնագրի նպատակներով և Հուշագրի դրույթներին համապատասխան (հոդված 5, կետ 1),

3.8. կրել պատասխանատվություն ՀՀ սեփական համակարգերի անվտանգության համար՝ պատասխանատվության բաշխման կետից սկսած (հոդված 5, կետ 2),

3.9. չկատարել որևէ տեսակի փորձարկում, խոցելիության սկանավորում կամ մյուս Կողմի համակարգ ներխուժելու փորձեր՝ առանց մյուս Կողմի նախնական գրավոր թույլտվության (հոդված 5, կետ 3),

3.10. չհակասելով Հուշագրի 4-րդ հոդվածի 5-րդ կետին՝ կիսվել այն սպառնալիքների և խոցելիության վերաբերյալ տեղեկություններով, որոնք կարող են վտանգի տակ դնել միմյանց համակարգերը (հոդված 5, կետ 4),

3.11. Հուշագրի դադարեցումից հետո՝ կիրառելի ընթացակարգերին համապատասխան, հասանելիություն ապահովել մյուս Կողմի կողմից սեփական սարքավորումներն ապամոնտաժելու նպատակով նշանակված անձնակազմի համար (հոդված 5, կետ 9),

3.12. առանց հապաղելու մյուս Կողմին փոխանցել համապատասխան ապամոնտաժված սարքավորումները (հոդված 5, կետ 10),

3.13. կրել Հայաստանի Հանրապետության համապատասխան ինտերնետ կապին առնչվող ծախսերը, որոնք պահանջվում են անվտանգ կապուղի ստեղծելու համար (հոդված 6, կետ 3),

3.14. անվտանգ կապուղու տեղափոխման անհրաժեշտության դեպքում՝ որպես տեղափոխող, կրել տեղափոխման ծախսերը (հոդված 6, կետ 4),

3.15. կրել Հայաստանի Հանրապետության սեփական սարքավորումների ապամոնտաժման և առաքման ծախսերը՝ Հուշագրի 5-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան (հոդված 6, կետ 5),

3.16. չհակասելով Աշխատանքային համաձայնագրի 20-րդ հոդվածին՝ պատասխանատվություն կրել անվտանգ կապուղու ստեղծման, իրականացման, շահագործման, փոխարինման և ապամոնտաժման հետ կապված սխալ գործողությունների հետևանքով մյուս Կողմին պատճառված ցանկացած վնասի համար և այդ դեպքերում ձգտել արդարացի լուծում գտնել կրած վնասը փոխհատուցելու համար (հոդված 7, կետ 1),

3.17. երրորդ կողմի գործողության, պահանջի կամ վարույթի պաշտպանության համար առաջացած ծախսերը և Հուշագրի հետ կապված որևէ վնասի համար մյուս Կողմի կողմից երրորդ կողմին վճարված փոխհատուցումը, ըստ պահանջի, փոխհատուցել, եթե դրանք առաջացել են Հայաստանի Հանրապետության դիտավորյալ կամ անզգույշ գործողության կամ անգործության հետևանքով, ինչպես նաև աջակցել մյուս Կողմին և ձգտել արդարացի լուծում գտնել հատուցման համար (հոդված 7, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ

հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

22 մարտի 2024 թվականի
ՍԴՈ-1721



ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԱՊՈՒՂՈՒ ՄԱՍԻՆ» ՓՈԽԸՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1721 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի մարտի 22-ի ՍԴՈ-1721 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի մարտի 22-ի ՍԴՈ-1721 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի մարտի 22-ի ՍԴՈ-1721 որոշմամբ 2023 թվականի հունիսի 27-ին և 2024 թվականի փետրվարի 5-ին ստորագրված «Հայաստանի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎՈՐԻ ԴԱՏԱՐԱՆ

Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև անվտանգ կապուղու մասին» փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում,

երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«22» մարտի 2024 թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՍԻԱԿԱՆ
ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 ապրիլի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի,
Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի
տեղակալ՝ Ռ. Գևորգյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-
րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի
հունիսի 29-ին ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների
ասիական բանկի մասին» համաձայնագրում ամրագրված
պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության
հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի 25 հունվարի N 101-Ա
որոշմամբ հավանություն է տվել «2015 թվականի հունիսի 29-ին
ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի
մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 2(114)2024

վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հունվարի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի հունիսի 29-ին՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Պեկին քաղաքում:

Համաձայնագրով հիմնադրվող Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի (այսուհետ՝ Բանկ) նպատակն է խթանել կայուն տնտեսական զարգացումը, ստեղծել նյութական արժեք և բարելավել Ասիայում ենթակառուցվածքների փոխկապակցվածությունը՝ ներդրումներ կատարելով ենթակառուցվածքներում և այլ ճյուղերում, խթանել տարածաշրջանային համագործակցությունը և գործընկերությունը զարգացման մարտահրավերներին դիմակայելու հարցում՝ սերտորեն համագործակցելով զարգացման բազմակողմանի և երկկողմանի այլ հաստատությունների հետ (հոդված 1):

Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագիրը վավերացնում է պայմանով, որ իրեն իրավունք է վերապահում Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին վճարվող աշխատավարձից և պարգևատրումներից ստացվող եկամուտները հարկելու՝ հիմք ընդունելով Համաձայնագրի 51-րդ հոդվածը (Հավելված ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 25-ի N 101-Ա որոշման):

Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 60 հոդվածից, և հավելվածներից, մասնավորապես՝ Հավելված Ա. «Հայտարարված կանոնադրական կապիտալում նախնական բաժանորդագրություններն այն երկրների համար, որոնք կարող են անդամ դառնալ՝ 58-րդ հոդվածին համապատասխան» և Հավելված Բ. «Տնօրենների ընտրությունը»:

Համաձայնագրում ամրագրված են Բանկի ստեղծման նպատակի, անդամակցության ընթացակարգի, կապիտալին բաժանորդագրման, անդամավճարի փոխանցման կարգի, Բանկի գործառնությունների ու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

կառավարման, կարգավիճակի, անձեռնմխելիության, արտոնությունների տրամադրման և այլ դրույթներ:

Բանկի հայտարարված կանոնադրական կապիտալը կազմում է հարյուր միլիարդ ամերիկյան դոլար (\$100.000.000.000)՝ բաժանված յուրաքանչյուրը 100.000 հազար դոլար (\$100.000) անվանական արժեքով մեկ միլիոն (1.000.000) բաժնետոմսերի, որոնք հասանելի են միայն անդամների կողմից բաժանորդագրման համար (հոդված 4):

Բանկին անդամակցության գործընթացը նախատեսում է բաժանորդագրում Բանկի բաժնետիրական կապիտալի բաժնեմասերին՝ վճարվող և ցպահանջ բաժնեմասերի միջոցով: Մեկ բաժնեմասի արժեքը 100 հազ. ԱՄՆ դոլար է:

Ըստ Համաձայնագրի՝ Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը առաջարկվող 374 բաժնեմասին բաժանորդագրվելու դեպքում բաժանորդագրության ընդհանուր գումարը կկազմի 37,400,000.0 ԱՄՆ դոլար:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում, երբ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում առնվազն տասը ստորագրող կողմերի, որոնց նախնական բաժանորդագրությունները, ինչպես սահմանված է Համաձայնագրի Ա հավելվածում, ընդհանուր առմամբ կազմում են ոչ պակաս, քան այդպիսի բաժանորդագրությունների ընդհանուրի հիսուն տոկոսը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

2.1. բաժանորդագրվել՝ Բանկի կանոնադրական կապիտալի բաժնետոմսերին (հոդված 5, պարբերություն 1),

2.2. որպես Համաձայնագրի ստորագրող կողմ՝ Բանկի վճարված կապիտալի համար 58-րդ հոդվածին համապատասխան անդամ դարձող, ի սկզբանե բաժանորդագրությամբ նախատեսված գումարի վճարումը կատարել Համաձայնագրի 6-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ սահմանված կարգով (հոդված 6, պարբերություն 1),

2.3. երաշխավորել, որ կապիտալի բաժնետոմսերը չեն ենթարկվի գրավադրման կամ ցանկացած եղանակով ծանրաբեռնման (հոդված 7, պարբերություն 2),

2.4. երաշխավորել, որ որևէ սահմանափակում չի դրվի արժույթների վրա, ի թիվս այլնի, ցանկացած երկրում վճարում կատարելու համար Բանկի կամ Բանկի ցանկացած շահառուի կողմից այն ստանալու, պահելու, օգտագործելու կամ փոխանցելու կապակցությամբ (հոդված 19, պարբերություն 1),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

2.5. նշանակել մեկ կառավարիչ և կառավարչի մեկ տեղակալ՝ որպես անդամ Կառավարիչների խորհրդում (հոդված 22, պարբերություն 1), ինչպես նաև համապատասխան պաշտոնական մարմին, որի հետ Բանկը կարող է կապ հաստատել Համաձայնագրի շրջանակներում ծագող ցանկացած հարցի առնչությամբ (հոդված 33, պարբերություն 1),

2.6. նշանակել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին կամ Բանկի հետ համաձայնեցված այդպիսի այլ հաստատություն՝ որպես դեպոզիտարիա, որտեղ Բանկը կարող է պահել Հայաստանի Հանրապետության արժույթային ռեզերվները, ինչպես նաև Բանկի այլ ակտիվներ (հոդված 33, պարբերություն 2),

2.7. ապահովել Բանկին այնպիսի տեղեկություններով, որոնք այն կարող է խելամտության սահմաններում պահանջել Հայաստանի Հանրապետությունից իր գործառույթների իրականացումը խթանելու նպատակով (հոդված 34, պարբերություն 2),

2.8. ձեռնարկել անհապաղ անհրաժեշտ միջոցներ Համաձայնագրի IX գլխում ներկայացված դրույթներն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դնելու նպատակով և Բանկին տեղեկացնել ձեռնարկած գործողությունների մասին (հոդված 44, պարբերություն 2),

2.9. երաշխավորել Բանկի անձեռնմխելիությունը ցանկացած տեսակի իրավական գործընթացների նկատմամբ՝ բացառությամբ փոխառությունների միջոցով կամ այլ եղանակով ֆինանսական միջոցներ ներգրավելու, պարտավորությունները երաշխավորելու կամ արժեթղթեր վաճառելու ու գնելու կամ դրանց անդերռայթինգ իրականացնելու հետ կապված իր լիազորություններից բխող կամ դրանց առնչվող դեպքերի (հոդված 46, պարբերություն 1),

2.10. երաշխավորել՝ չհակասելով Համաձայնագրի 46-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթներին, որ ընդդեմ Բանկի հայց չի ներկայացվի Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության որևէ գործակալության կամ հաստատության, կամ ցանկացած սուբյեկտի կամ անձի կողմից, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գործում է կամ պահանջներ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության որևէ գործակալության կամ հաստատության անունից. Բանկի և դրա անդամների միջև վեճերի լուծման համար օգտվել Համաձայնագրում, Բանկի ներքին իրավական ակտերում և կանոնակարգերում կամ Բանկի հետ կնքված պայմանագրերում սահմանված հատուկ ընթացակարգերից (հոդված 46, պարբերություն 2),

2.11. երաշխավորել, որ Բանկի գույքն ու ակտիվները՝ անկախ դրանց գտնվելու վայրից և այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԾՆԵՆԿԱԳԻՐ 2(114)2024

անձեռնմխելի են առգրավման, արգելադրման կամ կատարման բոլոր ձևերի նկատմամբ՝ նախքան Բանկի դեմ վերջնական դատական ակտ կայացվելը (հոդված 46, պարբերություն 3),

2.12. երաշխավորել, որ Բանկի գույքն ու ակտիվները՝ անկախ դրանց գտնվելու վայրից և այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, անձեռնմխելի են խուզարկության, ռեկվիզիցիայի, բռնագանձման, էքսպրոպրիացիայի կամ կատարողական կամ օրենսդրական գործողությունների միջոցով վերցնելու կամ բռնագանձման ցանկացած այլ ձևի նկատմամբ (հոդված 47, պարբերություն 1),

2.13. երաշխավորել, որ Բանկի արխիվները և, առհասարակ, դրան պատկանող կամ դրանում պահվող բոլոր փաստաթղթերն անձեռնմխելի են՝ անկախ դրանց գտնվելու վայրից և այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում (հոդված 47, պարբերություն 2),

2.14. երաշխավորել, որ Բանկի ամբողջ գույքն ու ակտիվները գերծ կլինեն ամեն տեսակի սահմանափակումներից, կարգավորումներից, հսկողությունից և մորատորիումից այնքանով, որքանով դա անհրաժեշտ է Բանկի նպատակներին հասնելու և գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու համար, ինչպես նաև հաշվի առնելով Համաձայնագրի դրույթները (հոդված 48),

2.15. երաշխավորել Բանկի բոլոր կառավարիչների, տնօրենների, նրանց տեղակալների, Նախագահի, փոխնախագահների և մյուս պաշտոնատար անձանց ու աշխատողների, այդ թվում՝ Բանկի համար հանձնարարություններ կատարող կամ ծառայություններ մատուցող փորձագետների ու խորհրդատուների՝ անձեռնմխելիությունը ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրականացված գործողությունների հետ կապված դատական գործընթացների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը հրաժարվում է անձեռնմխելիությունից, ինչպես նաև երաշխավորել բոլոր պաշտոնական փաստաթղթերի և արձանագրությունների անձեռնմխելիությունը (հոդված 50, ենթապարբերություն i),

2.16. երաշխավորել, որ Համաձայնագրի 50-րդ հոդվածում նշված անձինք, եթե նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն, ապա նրանց կտրամադրվի ներգաղթի սահմանափակումների, օտարերկրացիների գրանցման վերաբերյալ պահանջների ու պետական ծառայության հետ կապված պարտավորությունների մասով այն նույն անձեռնմխելիությունը, ինչպես նաև տարադրամի փոխանակման հետ կապված կանոնակարգերի մասով այն նույն հնարավորությունները, որոնք Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվում են մյուս անդամների համանման կարգի ներկայացուցիչներին, պաշտոնատար

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

անձանց և աշխատողներին, ինչպես նաև ճամփորդելու հետ կապված հնարավորությունների առումով նրանց կտրամադրվի այն նույն պայմանները, որոնք Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվում են մյուս անդամների համանման կարգի ներկայացուցիչներին, պաշտոնատար անձանց և աշխատողներին (հոդված 50, ենթապարբերություններ ii, iii),

2.17. ազատել Բանկին, դրա ակտիվները, գույքը, եկամուտը և Համաձայնագրի համաձայն դրա գործառնություններն ու գործարքները բոլոր տեսակի հարկերից և բոլոր տեսակի մաքսատուրքերից, ինչպես նաև ազատել Բանկին ցանկացած հարկի կամ տուրքի վճարման, պահման կամ հավաքման պարտավորությունից (հոդված 51, պարբերություն 1),

2.18. երաշխավորել, որ որևէ տեսակի հարկ չի գանձվի Բանկի կողմից Բանկի տնօրեններին, փոխտնօրեններին, Նախագահին, փոխնախագահներին և մյուս պաշտոնատար անձանց կամ աշխատողներին, այդ թվում՝ Բանկի համար հանձնարարություններ կատարող կամ ծառայություններ մատուցող փորձագետներին ու խորհրդատուներին որոշակի հանգամանքներում վճարվող աշխատավարձից, պարգևատրումներից և ծախսերից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետությունը վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու մասին փաստաթղթի հետ մեկտեղ ի պահ կհանձնի հայտարարություն այն մասին, որ Հայաստանի Հանրապետության իրեն և իր քաղաքական ստորաբաժանումներին վերապահում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Բանկի կողմից որոշակի հանգամանքներում վճարվող աշխատավարձից և պարգևատրումներից հարկեր գանձելու իրավունք (հոդված 51, պարբերություն 2),

2.19. երաշխավորել, որ Բանկի կողմից թողարկված որևէ պարտատոմս կամ արժեթուղթ, այդ թվում՝ դրանցից ստացված ցանկացած շահութաբաժին կամ տոկոսագումար՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, չի հարկվի որևէ տեսակի այնպիսի հարկով՝ որով խտրականություն կդրվի այդ պարտատոմսի կամ արժեթղթի նկատմամբ միայն այն պատճառով, որ այն թողարկվել է Բանկի կողմից, կամ, եթե այդպիսի հարկման համար միակ իրավաբանական հիմքը դրա թողարկման վայրն է կամ այն արժույթը, որով այն թողարկվել է և ենթակա է վճարման կամ վճարվում է, կամ էլ Բանկին պատկանող որևէ գրասենյակի գտնվելու վայրը կամ գործունեության իրականացման վայրը (հոդված 51, պարբերություն 3),

2.20. երաշխավորել, որ Բանկի կողմից երաշխավորված որևէ պարտատոմս կամ արժեթուղթ, այդ թվում՝ դրանցից ստացված ցանկացած

շահութաբաժին կամ տոկոսագումար՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, չի հարկվի որևէ տեսակի այնպիսի հարկով, որով խտրականություն կդրվի այդ պարտատոմսի կամ արժեթղթի նկատմամբ միայն այն պատճառով, որ այն երաշխավորվել է Բանկի կողմից, կամ, եթե այդպիսի հարկման համար միակ իրավաբանական հիմքը Բանկին պատկանող որևէ գրասենյակի գտնվելու վայրը կամ գործունեության իրականացման վայրն է (հոդված 51, պարբերություն 4):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված նպատակին՝ Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն ընձեռելով մասնակցելու տարածաշրջանային խոշոր ներդրումային ծրագրերին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2015 թվականի հունիսի 29-ին ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

9 ապրիլի 2024 թվականի
ՍԴՈ-1722

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024 ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2015
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՍԻԱԿԱՆ
ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1722
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2015 թվականի հունիսի 29-ին ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-1722 որոշմամբ որոշել է, որ 2015 թվականի հունիսի 29-ին ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-1722 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿՎԱԳԻՐ **◆** 2(114)2024

արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-1722 որոշմամբ 2015 թվականի հունիսի 29-ին ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում են, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 2(114)2024

(օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն

ՍԱՀՄԱՆԱՐԴՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը

ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«09» ապրիլի 2024 թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 18-Ի «ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԹԻՎ 1 ՀՈԴՎԱԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝
ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ
ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵԼՈՒ
ԴԵՊԻ ԵՆԹԱՍԱՀԱՐԱԿԱՆ ԱՖՐԻԿԱ ԵՎ ԻՐԱՔ» ԹԻՎ 259
ԲԱՆԱԶԵՎՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 2(114)2024

Քաղ. Երևան

9 ապրիլի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի,
Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Կառավարության ներկայացուցիչ՝ Ֆինանսների նախարարի
տեղակալ Է. Հակոբյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-
րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վերակառուցման
և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023

թվականի մայիսի 18-ի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի փետրվարի 15-ի N 202-Ա որոշմամբ հավանություն է տվել «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023 թվականի մայիսի 18-ի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի փետրվարի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ բանաձևը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևը (այսուհետ՝ նաև Բանաձև) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ նաև Բանկ) կառավարիչների խորհրդի կողմից ընդունվել է 2023 թվականի մայիսի 18-ին:

Բանաձևով լրացում է կատարվում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի 1-ին հոդվածում,

որը ներկայում գործում է հետևյալ խմբագրությամբ. «Տնտեսական առաջընթացին և վերակառուցմանը նպաստելու մասով Բանկի նպատակն է խրախուսել անցումը բաց շուկայական կողմնորոշմամբ տնտեսություններին և խթանել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի այն երկրներում մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները, որոնք հավատարիմ են բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքներին և կիրառում են այդ սկզբունքները: Նույն պայմանների պահպանմամբ Բանկի նպատակը կարող է իրականացվել նաև Մոնդոլիայում, ինչպես նաև Հարավային ու Արևելյան Միջերկրածովյան անդամ երկրներում՝ Բանկի որոշմամբ՝ Կառավարիչների առնվազն երկու երրորդի դրական քվեարկությամբ, որոնք ներկայացնում են անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երեք չորրորդը: Հետևաբար սույն համաձայնագրում և դրա հավելվածներում «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներ», «երկրներ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից», «ստացող երկիր (կամ երկրներ)» կամ «ստացող անդամ երկիր (կամ երկրներ)» բառերին արված ցանկացած հղում վերաբերում է Մոնդոլիային, ինչպես նաև Հարավային ու Արևելյան Միջերկրածովյան երկրներին»:

2. Բանաձևի նպատակն է Բանկի գործառնությունների աշխարհագրության աստիճանական ընդլայնումը Ենթասահարական Աֆրիկայի տարածաշրջանի սահմանափակ թվով պետությունների և Իրաքի վրա:

3. Բանաձևը կազմված է նախաբանից և երեք կետերից:

4. Բանաձևով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունը.

որպես Բանկի անդամ Բանաձևով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրում կատարվող փոփոխության վերաբերյալ դիրքորոշում հայտնել՝ (ա) կատարելով և Բանկին ի պահ հանձնելով փաստաթուղթ, որում նշված է, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Բանկի անդամ, ընդունել է նշված փոփոխությունը՝ իր օրենսդրության համաձայն և (բ) ներկայացնելով ապացույցներ՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, որ փոփոխությունն ընդունվել է, և ընդունման փաստաթուղթը կազմվել և ի պահ է հանձնվել այդ անդամի օրենսդրությանը համապատասխան (կետ 2):

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԸՍԵՆԿԱԳԻՐ 2(114)2024

Ընդամին, Բանաձևի պաշտոնական հայերեն թարգմանության և դրա բնօրինակ անգլերեն տեքստերի միջև առկա են մի շարք թարգմանչական, տեխնիկական անճշտություններ: Մասնավորապես՝ Բանաձևի նախաբանում նշված «1», «2» և «3» կետերն անգլերեն տեքստում սահմանված են որպես «(i)», «(ii)» և «(iii)», ինչպես նաև Բանաձևի 1-ին մասն ունի «ա», «բ» և «գ» կետեր, որտեղ «բ» կետի թվագրումը բացակայում է:

Այնուամենայնիվ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ թերությունները չեն կարող ազդել Բանաձևի՝ որպես Սահմանադրական դատարանի քննության առարկա միջազգային պայմանագրի կնքման իրավաչափության և դրանում ամրագրված պարտավորության սահմանադրականության գնահատման վրա:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023 թվականի մայիսի 18-ի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

9 ապրիլի 2024 թվականի
ՍԴՈ-1723

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

«ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի «ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԹԻՎ 1 ՀՈՂՎԱԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՁԵՌԵԼՈՒ ԴԵՊԻ ԵՆԹԱՍԱՀԱՐԱԿԱՆ ԱՖՐԻԿԱ ԵՎ ԻՐԱՔ» ԹԻՎ 259 ԲԱՆԱՁԵՎՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1723 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023 թվականի մայիսի 18-ի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-1723 որոշմամբ որոշել է, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023 թվականի մայիսի 18-ի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-1723 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-1723 որոշմամբ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2023 թվականի մայիսի 18-ի «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հիմնադրման համաձայնագրի թիվ 1 հոդվածի փոփոխություն՝ Բանկի գործունեության աշխարհագրական շրջանակի սահմանափակ և աստիճանական ընդլայնման հնարավորություն ընձեռելու դեպի Ենթասահարական Աֆրիկա և Իրաք» թիվ 259 բանաձևում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ 2(114)2024

միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«09» ապրիլի 2024 թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԼԻԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԵՎ ՀԱՍՄԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 184-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 ապրիլի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների՝ Լիա Մնացականյանի և Հասմիկ Մնացականյանի ներկայացուցիչ Ա. Զեյնալյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լիա Մնացականյանի և Հասմիկ Մնացականյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 2(114)2024

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ին:

Օրենսգրքի՝ «**Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավունքը**» վերտառությամբ 184-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է.

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները, ինչպես նաև նրանց իրավահաջորդները, եթե վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն.»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը որևէ փոփոխության և լրացման չի ենթարկվել:

Գործի քննության առիթը Լիա Մնացականյանի և Հասմիկ Մնացականյանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի վերաբերելի դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

01.06.2011 թ. Վճռաբեկ դատարանի նախագահը № Ե-2966 գրությամբ (իր նախաձեռնությամբ՝ դիմումի բացակայությամբ) ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին հանձնարարել է դատավոր Սամվել Մնացականյանի (այսուհետ նաև՝ Դատավոր) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ (տեղեկատվության աղբյուրը ներկայացված դիմումն է):

Կարգապահական հանձնաժողովը 02.06.2011 թ. կայացրել է «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացականյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ արդարադատության խորհրդին դիմելու վերաբերյալ» № Կ-2-10/2011 որոշումը:

Արդարադատության խորհուրդը 24.06.2011 թ. քննության է առել Կարգապահական հանձնաժողովի 02.06.2011 թ. որոշմամբ

ներկայացված միջնորդությունը և կայացրել է «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սամվել Մնացականյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ» թիվ ԱԽ-13-Ո-17 2011 թ. որոշումը (հետայսու՝ 24.06.2011 թ. Որոշում), ըստ որի՝

«1. Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել: Դիմել Հանրապետության Նախագահին Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սամվել Մնացականյանի լիազորությունները դադարեցնելու միջնորդությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման»:

ՀՀ Նախագահը, հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 24.06.2011 թ. Որոշումը և ղեկավարվելով Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ և 95-րդ հոդվածի 5-րդ կետերով՝ 11.07.2011 թ. ընդունել է հրամանագիր, որով դադարեցրել է Դատավորի լիազորությունները:

Սամվել Մնացականյանի ներկայացուցիչը 24.08.2011 թ. Վարչական դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ Արդարադատության խորհրդի և ՀՀ Նախագահի՝ Արդարադատության խորհրդի 24.06.2011 թ. ԱԽ-13-Ո-17 2011 թ. որոշման առ ոչինչ լինելը հաստատելու կամ այն անվավեր ճանաչելու, ինչպես նաև ՀՀ Նախագահի 11.07.2011 թ. «Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացականյանի լիազորությունները դադարեցնելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին (թիվ ՎԴ/4264/05/11 վարչական գործ):

Վարչական դատարանի 31.08.2011 թ. որոշմամբ Սամվել Մնացականյանի հայցադիմումի ընդունումը՝ Արդարադատության խորհրդի 24.06.2011 թ. «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սամվել Մնացականյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ» ԱԽ-13-Ո-17 որոշման առ ոչինչ լինելը հաստատելու կամ անվավեր ճանաչելու պահանջի մասով, մերժվել է, իսկ հայցադիմումը՝ ՀՀ Նախագահի 11.07.2011 թ. «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացականյանի լիազորությունները դադարեցնելու մասին» հրամանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով, վերադարձվել է:

Վերաքննիչ վարչական դատարանը, գրավոր ընթացակարգով քննության առնելով Վարչական դատարանի 2011 թվականի օգոստոսի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

31-ի «Հայցադիմումի ընդունումը մասով մերժելու, մասով հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ Սամվել Մնացականյանի ներկայացուցիչներ Արտակ Զեյնալյանի և Արայիկ Ղազարյանի վերաքննիչ բողոքը, 12.10.2011 թ. որոշել է Սամվել Մնացականյանի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը մերժել և Վարչական դատարանի 2011 թվականի օգոստոսի 31-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանը, քննարկելով Վերաքննիչ վարչական դատարանի 12.10.2011 թ. «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Սամվել Մնացականյանի ներկայացուցիչների բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, 23.11.2011 թ. որոշել է վերադարձնել հիշյալ որոշման դեմ Սամվել Մնացականյանի ներկայացուցիչների բերած վճռաբեկ բողոքը:

16.12.2011 թ. Վարչական դատարանում ստացվել է Սամվել Մնացականյանի ներկայացուցիչների դիմումը՝ հայցում թույլ տրված խախտումները վերացնելու մասին:

Վարչական դատարանի 23.12.2011 թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ՝ ՀՀ Նախագահի 11.07.2011 թ. հրամանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով:

Վարչական դատարանը, քննության առնելով վարչական գործն ըստ հայցի Սամվել Մնացականյանի ընդդեմ ՀՀ Նախագահի և Արդարադատության խորհրդի՝ ՀՀ Նախագահի 11.07.2011 թ. հրամանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, 02.05.2012 թ. վճռել է հայցը մերժել:

Վերաքննիչ վարչական դատարանը, քննելով ըստ Սամվել Մնացականյանի հայցի ընդդեմ ՀՀ Նախագահի և Արդարադատության խորհրդի՝ ՀՀ Նախագահի 2011 թվականի հրամանագիրն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ, թիվ ՎԴ/4264/05/11 վարչական գործով Վարչական դատարանի 2012 թվականի մայիսի 2-ի վճռի դեմ Սամվել Մնացականյանի վերաքննիչ բողոքը դռնբաց դատաքննությամբ, 11.09.2012 թ. որոշել է ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել և վճիռը թողնել անփոփոխ:

Վճռաբեկ դատարանը, քննարկելով ըստ հայցի Սամվել Մնացականյանի ընդդեմ ՀՀ Նախագահի, Արդարադատության խորհրդի՝ ՀՀ Նախագահի 11.07.2011 թ. հրամանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով Վարչական դատարանի 02.05.2012 թ. վճռի և Վերաքննիչ վարչական դատարանի 11.09.2012 թ. որոշման դեմ Սամվել Մնացականյանի ներկայացուցիչների բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, 24.10.2012 թ. որոշել է վերադարձնել բերված վճռաբեկ բողոքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Դատավորի անունից գանգատ է ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան), որի քննության ընթացքում՝ 17.08.2021 թ., վերջինս մահացել է:

Եվրոպական դատարանը Մնացականյանն ընդդեմ Հայաստանի գործով (գանգատ № 2463/12) 06.12.2022 թ. կայացրել է վճիռ, որով նշել է.

«66. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ խախտվել է դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը (տե՛ս վերևում հիշատակված՝ *Բակայի* գործը, § 121, և դրանում մեջբերված համապատասխան միջազգային փաստաթղթերը):

67. Հետեաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում»:

Դատարանն արձանագրել է նաև, որ «(...) *դիմումատուի այրին՝ տկն Լիա Մնացականյանը, և դուստրը՝ օրիորդ Հասմիկ Մնացականյանը, իրավունք ունեն դիմումատուի փոխարեն շարունակելու սույն գործով վարույթը՝*»:

Եվրոպական դատարանի 06.12.2022 թ. վճռի հիման վրա Լիա Մնացականյանը և Հասմիկ Մնացականյանը (այսուհետ նաև՝ Դիմողներ) ներկայացրել են՝ ըստ հայցի Սամվել Մնացականյանի ընդդեմ ՀՀ Նախագահի, Արդարադատության խորհրդի՝ ՀՀ Նախագահի 11.07.2011 թ. հրամանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.11.2011 թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» և 24.10.2012 թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումների դեմ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վճռաբեկ բողոք (դիմում):

Վճռաբեկ դատարանը 30.06.2023 թ. որոշել է թիվ ՎԴ/4264/05/11 վարչական գործով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.11.2011թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» և 24.10.2012 թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումների դեմ նոր հանգամանքի հիմքով Դիմողների ներկայացրած դատական ակտի վերանայման վճռաբեկ բողոքը (դիմումը) վարույթ ընդունելը մերժել:

¹ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/#%7B%22fulltext%22:%5B%22Mnatsakanyan%20v.%20Armenia%22%22%5D%22%22documentcollectionid%22:%5B%22GRANDCHAMBER%22%22CHAMBER%22%22%5D%22%22itemid%22:%5B%22001-222821%22%22%5D%7D>

2. Դիմողների դիրքորոշումները

Դիմողների կողմից բարձրացվում է Մարդու իրավունքների Եվրոպական դատարան գանգատ ներկայացրած և գործի քննության ընթացքում մահացած անձի իրավահաջորդի՝ ժառանգի կողմից, որի իրավահաջորդությունը Եվրոպական դատարանն ընդունել է և կայացրել է իրավունքի խախտումը ճանաչելու վերաբերյալ դատական ակտ, մահացածի իրավունքների վերականգնման հնարավորության օրենսդրական կարգավորման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարց:

Դիմողները գտնում են, որ անհրաժեշտ է պարզել և գնահատել անձի մահվան հիմքով՝ նոր հանգամանքով նրա մասնակցությամբ դատական գործի վերաբացման ընդհանուր կանոնից նրա և նրա իրավահաջորդների իրավունքների վերականգնման համար գործի վարույթը վերաբացելու իրավունքի բացառության լիարժեքությունը՝ Օրենսգրքում՝ մարդու արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների իրացման, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի սահմանադրական իրավունքների իրացման երաշխավորվածության տեսանկյունից:

Դիմողների համոզմամբ՝ օրենսդրի կողմից դատավարական օրենսգրքերի ընդունման նպատակը Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության իրավունքն ապահովելն է: Արդար դատաքննության իրավունքի բովանդակության մաս են կազմում և այն մեկնաբանելիս պետք է հաշվի առնվեն Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, այդ թվում՝ Եվրոպական դատարանի պրակտիկան և իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներն ընդհանրացնելով՝ Դիմողները նշում են, որ միջազգային դատարան դիմելու՝ անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է Եվրոպական դատարանի վճռի հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին՝ վերականգնելու Եվրոպական դատարանի կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) խախտում ճանաչելու հետևանքով խախտված իր կոնվենցիոն, հետևաբար՝ սահմանադրական իրավունքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՍԱՍՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Դիմողները նշում են. «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների, Եվրոպական դատարանի վճիռների, Նախարարների կոմիտեի հանձնարարականների վերլուծությունից հետևում է, որ միջազգային դատարանի ակտերի կատարումը՝ չի ներառում իրավունքի խախտման զոհին այդ ակտով սահմանված՝ միայն փողի տրամադրում (...) և Կոնվենցիայի (միջազգային պայմանագրի՝ ընդհանրապես) խախտում թույլ տված դատական ակտի վերանայում-բեկանում: Իսկ անձի՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման զոհ, տուժող հանդիսանալ-չհանդիսանալու, այդ կարգավիճակը պահպանել-կորցրած լինելու շուրջ վեճը լուծում է միջազգային դատարանը՝ իր նախաձեռնությամբ կամ պատասխանող պետության կառավարության պահանջով՝ մրցակցային պայմաններում»:

Դիմողների գնահատմամբ՝ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի անխուսափելիորեն՝ ipso facto (փաստի ուժով) վերանայման պահանջը նույնությամբ, հավասարապես վերաբերում է և՛ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի, և՛ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով դրանք օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, հետևաբար՝ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1114 որոշման եզրահանգման օրինակով, ըստ Դիմողի՝ «(...) եթե Եվրոպական դատարանը գործով անձին ճանաչել է դիմող սուբյեկտ, մերժել է Կառավարության պահանջը՝ դիմողի մահվան կամ լուծարման հետևանքով նրա ժառանգի կամ իրավահաջորդի կողմից զոհի՝ «իրավաչափ շահ» ունեցողի կարգավիճակը կորցնելու հիմքով գանգատը գործերի ցուցակից հանելու վերաբերյալ, արդեն իսկ գանգատն ընդունել է քննության և իրավունքի խախտումը ճանաչելու մասին դատական ակտ է կայացրել, ապա այդ որոշումը կասկածի տակ դնելու և տարաբնույթ մոտեցումներով դրա կատարումից խուսափելու՝ վճռաբեկ դատարանի պալատին լիազորություն օրենքով վերապահելը, խաթարում է միջազգային դատարան դիմելու իրավունքի բուն էությունը և հակասում է ՀՀ Սահմանադրության 61, 63-րդ հոդվածներին»:

Ամփոփելով իրենց դիրքորոշումները՝ Դիմողները խնդրում են՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1, 3, 6, 61 և 63, 62, 75, 79, 80-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «եթե վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն» դրույթը՝ նոր հանգամանքի մասով:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատասխանող) նշում է, որ Օրենսգրքի 184-րդ հոդվածը նոր և նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավունք է տալիս դատավարության մասնակիցներին և նրանց իրավահաջորդներին, սակայն միաժամանակ սահմանում է պայման, այն է՝ եթե վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:

Այսինքն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնել հնարավոր է, եթե դիմումը ներկայացնում է դատավարության մասնակիցը, ինչպես նաև նրա իրավահաջորդը՝ վիճելի իրավահարաբերության իրավահաջորդություն թույլ տալու դեպքում:

Վերոգրյալից ելնելով՝ Պատասխանողը գտնում է, որ օրենսդրի կողմից նման ձևակերպումն ինքնանպատակ չէ, քանի որ գոյություն ունեն մի խումբ իրավունքներ, որոնք անձի հետ անխզելիորեն կապված են, և հետևաբար՝ դրանք չեն կարող փոխանցվել այլ անձանց իրավահաջորդության կարգով: Նշվածից հետևում է, որ բացարձակ բնույթ չի կարող կրել դատավարության մասնակիցների իրավահաջորդների կողմից նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավունքը՝ պայմանավորված անձի հետ անխզելիորեն կապված իրավունքների և պարտականությունների առկայության հանգամանքով:

Պատասխանողի համոզմամբ՝ վիճարկվող դրույթը որոշակիության տեսանկյունից չի կարող համարվել խնդրահարույց, քանի որ «նյութական իրավունքի նորմերով սահմանվում են անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Հետևաբար, դատավարության ժամանակ իրավահարաբերության իրավահաջորդություն թույլ տալու հանգամանքի գնահատման համար անհրաժեշտ սկզբունքները օրենսդրի կողմից բավարար հստակությամբ սահմանվում են, և իրավակիրառ պրակտիկայում գործնական և իրատեսական հնարավորությունն առկա է նման եզրահանգման գալու համար»:

Պատասխանողը նշում է նաև, որ քննարկվող իրավանորմում կամ դատավարությունն իրավակարգավորող նորմատիվ իրավական ակտում սպառիչ հնարավոր չէ թվարկել իրավահաջորդություն թույլատրող իրավահարաբերությունները, քանի որ իրավահարաբերության իրավահաջորդության հարցը յուրաքանչյուր դեպքում ենթակա է քննարկման և գնահատման:

Միևնույն ժամանակ Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը բավարար չափով որոշակի է և կանխատեսելի, քանի որ այն նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավունք է տալիս դատավարության մասնակիցներին և նրանց իրավահաջորդներին՝ հստակ պայմանի առկայության դեպքում: Նշված պայմանը (իրավահարաբերության իրավահաջորդություն թույլ տալու պայմանը) գնահատողական բնույթ ունի և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատվի դատարանների կողմից՝ հաշվի առնելով նյութական իրավունքի նորմերով սահմանված անձի հետ կապված իրավունքների և պարտականությունների բնույթը:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի 30.06.2023 թ. որոշմամբ վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությանը՝ Պատասխանողը գտնում է, որ այն խնդրահարույց է այն առումով, որ անձի խախտված իրավունքը՝ դատարանի մատչելիության իրավունքը, դիտարկվել է որպես անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, որն իրավահաջորդության կարգով փոխանցման ենթակա չէ, սակայն, ըստ Պատասխանողի, դա չի կարող հանգեցնել վիճարկվող դրույթի հակասահմանադրականության:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը խնդրում է վիճարկվող դրույթը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- վիճարկվող դրույթով, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության պայմաններում երաշխավորվում է արդյոք դատական պաշտպանության և մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքների բաղադրատարր հանդիսացող նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավական հնարավորությունը.

- վիճարկվող դրույթով ամրագրված իրավակարգավորման, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության պայմաններում պահպանվում է արդյոք մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջը:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության՝ «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական էությանը, 2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշմամբ ընդհանրացնելով և վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ, փաստել է.

«(...) - դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը (...):»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրական ամրագրումը կոչված է երաշխավորելու մարդու իրավունքների և ազատությունների ամբողջական և լիարժեք պաշտպանություն, ինչը ենթադրում է ոչ միայն ներպետական դատական արյանների կողմից գործի քննություն անկախության, անաչառության և արդարության սկզբունքների լույսի ներքո, այլև ներպետական դատական պաշտպանության միջոցների սպառումից հետո իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցով մարդու իրավունքների միջազգային մարմիններ դիմելու իրավական հնարավորություն:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

Իրավական այս հնարավորության նախատեսումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության գործընթացը ներպետական դատական պաշտպանության միջոցներով չսահմանափակելու, ինչպես նաև պետության կողմից վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու, ըստ այդմ՝ պետության, որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, այլ պետությունների առջև (տվյալ դեպքում ՄԻԵԴ-ով) ստանձնած իր պարտավորությունները բարեխղճորեն կատարելու իրողությամբ:

*Իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքն այն արդյունավետ լրացուցիչ լծակն է, որը կոչված է երաշխավորելու անձի խախտված իրավունքի լիարժեք և ամբողջական վերականգնումը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վնասների համարժեք հատուցումը: Հետևապես՝ բովանդակային առումով սահմանադրական այս իրավունքը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու հնարավորությունից զատ, ենթադրում է նաև **միջազգային մարմնի կողմից կայացված որոշման կատարման իրական հնարավորությունների ապահովման անհրաժեշտություն:***

Սահմանադրորեն նման երաշխիքների նախատեսումը պայմանավորված է այն իրողությամբ, որ ներպետական դատական ատյանների միջոցով իրավունքների պաշտպանության հնարավորությունների սպառումից հետո իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով միջազգային դատարան դիմելու իրավունքի նպատակը, ի վերջո, ներպետական իրավական համակարգում խնդրի վերջնական լուծումն է: Ուստի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված իրավակարգավորումները երաշխավորում են անձի՝ ոչ միայն ներպետական դատական պաշտպանության միջոցով իրավունքների և ազատությունների պաշտպանություն, այլև այդ խնդրով միջազգային մարմիններ դիմելու, իսկ այդպիսի մարմնի կողմից որոշման կայացման արդյունքում՝ իրավունքների և ազատությունների պաշտպանության գործընթացն ավարտին հասցնելու **իրական և արդյունավետ հնարավորություն:**

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանված դատական պաշտպանության և մարդու

իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավական հնարավորությունները յուրաքանչյուր իրավունքի և ազատության պաշտպանությունն անկախության, անաչառության և արդարության պայմաններում իրականացնելու երաշխավորված միջոցներ են, ուստի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի **իրական երաշխավորումից է կախված սահմանադրորեն ամրագրված մյուս հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը:**

5.2. Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքի կենսագործումը չի հանգում միայն միջազգային մարմիններ, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու իրավական հնարավորության իրացմանը. այն, ի թիվս այլնի, ներառում է նաև միջազգային մարմնի կողմից կայացված ակտի կատարման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի երաշխավորումը:

Ըստ այդմ՝ դատավարական օրենսդրության շրջանակներում նախատեսվել է նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման իրավական հնարավորություն, որը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ միջազգային դատարանը հաստատել է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը (բարեկամական կարգավորումը) կամ Հայաստանի Հանրապետության կողմից արված միակողմանի հայտարարությունը:

Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավական հնարավորության նախատեսումը կոչված է երաշխավորելու անձանց իրավունքների և ազատությունների **ամբողջական և իրական պաշտպանությունը**, քանի որ քիչ չեն դեպքերը, երբ անձը, օգտվելով դատական պաշտպանության իրավունքից, չի ստանում իրավունքի կամ ազատության պաշտպանության իր «չափաբաժինը»: Ուստի՝ անձի համար ներպետական դատական պաշտպանության միջոցների սպառումից հետո միջազգային մարմիններ դիմելու իրավական հնարավորության երաշխավորումը մեծ կարևորություն է ներկայացնում, եթե, իհարկե, այդ իրավունքի իրացման հարցում ևս ապահովվեն ամբողջական և իրական պաշտպանության համարժեք կառուցակարգեր: Այդպիսի կառուցակարգերից է եվրոպական

դատարանի համապատասխան վճռի դեպքում նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման իրավական հնարավորությունը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2013 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1099 որոշմամբ արձանագրել է, որ «(...) նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը**: Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս **վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum)**: Այն դեպքում, երբ անձի սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է տվյալ անձի համար այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն, խնդրո առարկա դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը **հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու պարագայում**: Հետևաբար, նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքի վերականգնման միջոց, առաջին հերթին պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի վերացմանը /բեկանմանը/, և սա օրենսդրորեն հստակ ամրագրման անհրաժեշտություն ունի»:

Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ՝ «(...) նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, **և դատական ակտի վերանայման հասկացության նշված ընկալումն էլ պետք է կանխորոշի վերանայման վարույթի բովանդակությունը, դրա խնդիրները և դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը**: Ըստ այդմ, դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պետք է ձեռնարկվեն արդարադատական այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն գործի վերաքննություն, նոր քննություն, ինչը հնարավոր է միայն

հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մտած **դատական ակտերի բեկանման պայմաններում**: Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի տվյալ գործի նոր քննություն՝ կիրառված նորմի հակասահմանադրականության և կոնվենցիոն իրավունքի խախտման փաստի առկայության պայմաններում՝ **հաշվի առնելով նաև սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները**:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է **ipso facto հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի և կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը**:

Սակայն հիմնախնդիրը միայն դրանով անհրաժեշտ լուծում չի ստանում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթը կարող է ապահովել այդ վարույթի սահմանադրաիրավական նպատակի ու խնդիրների իրացումն այն դեպքում, երբ վերանայման վարույթը կանոնակարգող օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան ձևավորվեն հետևյալ իրավական մոտեցումներին համապատասխան.

ա/ վերանայման բողոքում նոր հանգամանքի շարադրանքի և բողոքին կից՝ նոր հանգամանքը հաստատող ապացույցի առկայությունը, ի լրումն բողոքին ներկայացվող մյուս վավերապայմանների առկայությանը, բավարար հիմք պետք է դիտվի վերանայման վարույթ հարուցելու համար,

բ/ վերանայման պահանջը կարող է մերժվել, եթե միայն հարուցված վերանայման վարույթի շրջանակներում բողոքի քննության արդյունքներով պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ դատական ակտը վերանայելու համար հիմք չէ, այսինքն՝ այդ հանգամանքը տվյալ դեպքում նոր հանգամանք չի հանդիսանում,

գ/ եթե վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն հակասահմանադրական նորմ կիրառած կամ կոնվենցիոն իրավունքի խախտմամբ ընդունված դատական ակտերը,

դ/ վերոհիշյալ դատական ակտերի՝ ուժը կորցնելու պայմաններում կազմակերպվող՝ գործի կամ բողոքի նոր քննությունը պետք է հաշվի առնի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

նոր հանգամանք հանդիսացող դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումները»:

Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների համալրաբարձրում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հնարավորությունները բխում են Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու հիմնարար իրավունքներից, քանի որ կոչված են ապահովելու դատական պաշտպանության, այն է՝ իր խնդրով դատարան դիմելու և գործի արդարացի լուծում ստանալու իրավական հնարավորության ամբողջական և լիարժեք իրացումը: Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքները կդառնան առարկայազուրկ, եթե անձը չունենա միջազգային մարմնի կայացրած ակտի հիման վրա դատական ակտի վերանայման իրական հնարավորություն: Վերոնշյալ նկատառումներից ելնելով էլ՝ Սահմանադրության 80-րդ հոդվածն ամրագրում է հիմնական իրավունքների և ազատությունների էության անխախտելիության պարտադիր պահանջը, որի լույսի ներքո պետք է երաշխավորվի յուրաքանչյուր իրավունքի այնպիսի կենսագործում, որն ամբողջությամբ կծառայի այդ իրավունքի իրական առաքելության և բուն նպատակի իրացմանը:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման իրավական հնարավորության արդյունավետ կենսագործման երաշխավորումը պետք է ապահովվի ոչ միայն սահմանադրական համապատասխան կարգավորումների և օրենսդրական կառուցակարգերի առկայության, այլև այդ կարգավորումների կիրառման գործընթացում դրանց տրվող մեկնաբանությունների արդյունքում: **Ուստի՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վերաբերյալ առկա օրենսդրական այս կամ այն նորմը մեկնաբանելիս կարևոր է հաշվի առնել նոր հանգամանքով դատական ակտի վերանայման ինստիտուտի էությունն ու նշանակությունը, դրա երաշխավորման կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման լույսի ներքո:**

5.3. Վերոգրյալ իրավական դիրքորոշումների և վերլուծությունների համատեքստում անդրադառնալով վիճարկվող դրույթով ամրագրված կարգավորման, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության սահմանադրականության խնդրին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում առանձնացնել հետևյալ նկատառումները.

վիճարկվող դրույթը վերաբերում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներին, որոնց շարքում են, առաջին հերթին, դատավարության մասնակիցները, ինչպես նաև նրանց իրավահաջորդները, եթե վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:

Այսինքն՝ եթե դատավարության մասնակիցները համապատասխան հանգամանքների առկայության դեպքում անվերապահորեն իրավունք ունեն ներկայացնելու դատական ակտի վերանայման դիմում, ապա նրանց իրավահաջորդներն այդ իրավունքի իրացման հնարավորությունից օգտվում են **պայմանով**, այն է՝ **եթե վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:**

Այս առումով Սահմանադրական դատարանը հայտնում է, որ կարևոր է նախ՝ բացահայտել իրավահաջորդության թույլատրելիության օրենսդրական սահմանները և դրա վերաբերելիությունը վիճարկվող դրույթով ամրագրված կարգավորմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դատավարություն ենթադրում է մասնակիցների որոշակի կազմ, որոնք ունեն կոնկրետ շահագրգռվածություն քննվող հարցի և դրա լուծման համար, ուստիև նրանք պետք է օժտված լինեն, ի թիվս այլնի, նաև նոր հանգամանքով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու իրավական հնարավորությամբ: Այնուամենայնիվ, չեն բացառվում իրավիճակներ, երբ օբյեկտիվ պատճառներով դատավարության մասնակիցն այլևս չի կարող ներկայացնել դատական ակտի վերանայման դիմում (տվյալ դեպքում՝ մահվան պատճառով): Այս իրավիճակում կենսագործվում է դատավարական իրավահաջորդության ինստիտուտը, որը, Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ենթադրում է դատավարությունից կողմերից մեկի դուրս գալու դեպքում (իրավաբանական անձի կամ վարչական մարմնի վերակազմակերպում, ֆիզիկական անձի մահ կամ պարտավորություններում անձանց փոփոխման այլ դեպքեր) այդ կողմի փոխարինում նրա իրավահաջորդով, ինչի վերաբերյալ կայացվում է որոշում՝ առանձին դատական ակտի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

տեսքով: Ընդ որում՝ օրենսդիրն իրավահաջորդությունը հնարավոր է համարում դատավարության յուրաքանչյուր փուլում:

Անդրադառնալով վիճարկվող դրույթով ամրագրված իրավակարգավորմանը՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ այն հնարավորություն է ընձեռում նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմում ընդունող դատարանին գնահատելու վիճելի իրավահարաբերության մասով իրավահաջորդության առկայության կամ բացակայության հանգամանքը, որից ելնելով էլ՝ կայացնելու դիմումն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ որոշում:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմումի ներկայացումը բխում է Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքներից, ուստի՝ այդպիսի դիմումների ընդունելիության փուլում ևս պետք է որպես ելակետ ընդունել նշյալ իրավունքների երաշխավորման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Հետևաբար՝ վիճարկվող դրույթով ամրագրված իրավակարգավորմամբ առկա **«եթե վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն»** ձևակերպումը ենթադրում է ոչ թե դիմումի ընդունելիության փուլում Դիմողների կոնկրետ իրավունքների և ազատությունների իրացման հստակ ու միանգամայն կանխատեսելի հեռանկարների դիտարկում (որոնք պետք է պարզվեն գործի քննության շրջանակներում), այլ **իրավահաջորդությունը բացառող ակնհայտ հանգամանքների բացակայության դեպքում անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունների ապահովում:**

Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ դատարանում քննվող վեճի լուծման արդյունքում իրավունքների խախտումն իրավահաջորդի մասով հնարավոր չէ վերականգնել ամբողջ ծավալով, սակայն առերևույթ առկա է դրանք մասնակի վերականգնելու հնարավորություն, այլ կերպ՝ նույնիսկ մասնակի նյութական շահագրգռվածության առկայության դեպքում վիճելի իրավահարաբերությունում իրավահաջորդությունը պետք է թույլատրելի լինի: Ուստի՝ դատական վեճի լուծման արդյունքում դատավարության մասնակցի իրավահաջորդի համար որևէ հնարավոր դրական հետևանքի (խախտված իրավունքի թեկուզ մասնակի վերականգման հնարավորության) բացակայությունը միայն կարող է հանդիսանալ վիճելի իրավահարաբերությունում վերջիններիս իրավահաջորդությունը բացառող հանգամանք:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ իրավահաջորդության ինստիտուտի էությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության գործընթացի շարունակականության և ամբողջականության ապահովմանը, քանի որ բոլոր այն դեպքերում, երբ անձն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով ի գորու չէ շարունակելու իր իրավունքների պաշտպանության գործընթացը, իրավահաջորդության գործարկումը հնարավորություն է ընձեռում կանխել իրավունքների պաշտպանության հարցում գործադրված քայլերի և ձեռնարկված միջոցների իմաստագրկումը: Վերջինս վերաբերում է նաև այն անձանց, որոնց կարգավիճակը դատավարության մասնակցի ընդհանուր (քաղաքացիաիրավական) իրավահաջորդության իմաստով կասկած չի հարուցում, և որոնց նյութական իրավունքներն այս կամ այն ծավալով շոշափվելու են ակնկալվող դատական ակտով:

5.4. Վերոթվարկյալ դիրքորոշումների և վերլուծությունների տիրույթում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությանը:

Վիճարկվող դրույթի բովանդակության բացահայտման համատեքստում Վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «(...) Սամվել Մնացականյանի խախտված իրավունքը՝ դատարանի մատչելիության իրավունքը, անձի հետք անխզելիորեն կապված իրավունք է, որն իրավահաջորդության կարգով փոխանցման ենթակա չէ (...)»:

Անդրադառնալով վերոնշյալ դիրքորոշմանը՝ Սահմանադրական դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ դատական պաշտպանության իրավունքը սահմանադրորեն երաշխավորված այն բացառիկ իրավական հնարավորությունն է, որի իրացման միջոցով անձինք հնարավորություն են ստանում պաշտպանելու իրենց հիմնական մյուս իրավունքներն ու ազատությունները: Այսինքն՝ այս իրավունքն այն առանցքային երաշխիքն է, որի միջոցով հնարավոր է իրացնել սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքներն ու ազատությունները, վերականգնել խախտված իրավունքները կամ հասնել դրանց խախտման արդյունքում պատճառված վնասների հատուցման: Այսինքն՝ յուրաքանչյուր իրավունքի կամ ազատության դատական կարգով պաշտպանությունն իրացվում է հենց դատական պաշտպանության իրավունքի միջոցով, հետևաբար՝ այս իրավունքի՝ իրավահաջորդության կարգով փոխանցման բացառումն

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԾԵՂԵԿԱԳԻՐ 2(114)2024

ուղղակիորեն հանգեցնում է յուրաքանչյուր իրավունքի կամ ազատության պաշտպանության հնարավորությունների բացառման, ինչը ոչ միայն չի բխում սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների բովանդակությունից և դրանց իրացումը երաշխավորող սկզբունքներից և գաղափարներից, այլև հակասում է դրանց:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դատական պաշտպանության իրավունքի էությունը դատարանների գոյության և գործունեության իմաստավորումն է, հետևապես՝ այս իրավունքի էությանը հակասող մեկնաբանությունները ստվերում են ինչպես դատական պաշտպանության իրավունքի, այնպես էլ դրա իրացման համար նախատեսված բացառիկ մարմնի՝ դատարանի գոյության և առաքելության իմաստը:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ Վճռաբեկ դատարանի՝ խնդրո առարկա մեկնաբանության պայմաններում դատական պաշտպանության իրավունքի իրավահաջորդության կարգով փոխանցելիության բացառումը կարող է խաթարել դատական պաշտպանության իրավունքի էությունն ու դրա հիմքում սահմանադրի դրած իմաստն ու նշանակությունը՝ հաշվի առնելով, որ խնդրո առարկա հիմնական իրավունքը միտված է Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունքների և ազատությունների՝ դատական կարգով արդյունավետ պաշտպանությանը. հակառակ մեկնաբանության պայմաններում՝ սույն հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորումը կկրի հոչակագրային բնույթ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների և վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ նախ՝ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Եվրոպական դատարանն իր վճռում արդեն իսկ արձանագրել է Դիմողների՝ Հասմիկ և Լիա Մնացականյանների իրավահաջորդության թույլատրելիությունը՝ նշելով, որ «(...) դիմումատուի այրին՝ Կլեմ Լիա Մնացականյանը, և դուստրը՝ օրիորդ Հասմիկ Մնացականյանը, իրավունք ունեն դիմումատուի փոխարեն շարունակելու սույն գործով վարույթը»:

Տվյալ վճռով դիտարկվող հարցի կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է նաև, որ «Այս առնչությամբ Դատարանը կրկին նշում է, որ այս հարցը քննարկելիս հիմնական խնդիրը ոչ թե այն է, թե քննարկվող իրավունքները փոխանցելի են ընթացակարգը շարունակել ցանկացող ժառանգներին, թե՛ ոչ, այլ այն, թե արդյոք ժառանգները կամ մերձավոր ազգականները կարող են սկզբունքորեն իրավաչափ շահ հետապնդել՝

Դատարանից պահանջելով գործը քննել դիմումատուի՝ Դատարան գանգատ ներկայացնելու իր անհատական և անձնական իրավունքից օգտվելու ցանկության հիման վրա (տե՛ս վերևում հիշատակված՝ *Էրգեզենի* գործը, § 29. *Քսենզը և այլք ընդդեմ Ռուսաստանի* [*Ksenz and Others v. Russia*], թիվ 45044/06 և 5-ը, §§ 8687, 2017 թվականի դեկտեմբերի 12, և *Բարախոյեն ընդդեմ Ռուսաստան* [*Barakhoyev v. Russia*], թիվ 8516/08, §§ 22-23, 2017 թվականի հունվարի 17): Այնուհետև այն կրկնել է, որ մարդու իրավունքների վերաբերյալ գործերն ընդհանուր առմամբ ունեն բարոյական հարթություն, և դիմումատուին մոտ կանգնած անձինք կարող են իրավաչափ շահ ունենալ արդարադատության իրականացումն ապահովելու համար՝ նույնիսկ դիմումատուի մահից հետո (տե՛ս վերևում հիշատակված՝ *Քսենզը և այլք* գործը, § 86, և *Մալխաուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [ՄՊ] [*Malhous v. the Czech Republic (dec.)* [GC]], թիվ 33071/96, ՄԻԵԴ 2000XII)»:

Ստացվում է, որ Դիմողների իրավահաջորդության հանգամանքը, այն է՝ գործով վարույթը շարունակելու կարողությունն արդեն իսկ հաստատված է Եվրոպական դատարանի կողմից, ուստի՝ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմումի ընդունելիության փուլում դատարանի կողմից պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ Դիմողներն ունեն դատավարական իրավահաջորդություն, իսկ թե դրա իրացման արդյունքում կոնկրետ ինչ իրավունքների պաշտպանության կարող են հավակնել, պետք է գնահատման առարկա դառնա վերանայման դիմումը վարույթ ընդունելուց հետո:

5.5. Սահմանադրության՝ «Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան» վերտառությամբ 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջազգային այդպիսի մարմինների շարքում ուրույն տեղ է զբաղեցնում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 19-րդ հոդվածի ուժով հիմնված Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

Այս առումով Սահմանադրական դատարանը հայտնում է, որ ներպետական դատական պաշտպանության միջոցներից զատ,

որպես իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ հնարավորություն, ՀՀ քաղաքացիները գլխավորապես օգտվում են հենց Մարդու իրավունքների եվրոպական դատարանում գանգատարկման հնարավորությունից:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն՝ նույն Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Հետևաբար՝ կոնվենցիոն իրավունքների պաշտպանության երաշխավորման հարցում կարևոր նշանակություն է ձեռք բերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների և դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների պատշաճ կատարումը:

Ըստ այդմ, Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ **Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են:** Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Նախարարների կոմիտեի կողմից, ուստի՝ դրանց կատարման վերաբերյալ ամրագրված իրավակարգավորումների բովանդակության բացահայտումը Սահմանադրական դատարանը հարկ է համարում իրականացնել ինչպես այդ հարցի վերաբերյալ Եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումների և Նախարարների կոմիտեի հանձնարարականների, այնպես էլ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Կոնվենցիոն համակարգի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ այն ներառում է դրանով ամրագրված դրույթների՝ Կոնվենցիային համապատասխանությունը վերանայելու մեխանիզմ: Այսպիսով, Կոնվենցիան Պայմանավորվող պետություններից ոչ միայն պահանջում է պահպանել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները (հոդված 1), այլ նաև ստեղծում է դատական մարմին՝ Եվրոպական դատարանը (հոդված 19), որն իրավասու է վճիռների միջոցով հայտնաբերել Կոնվենցիայի խախտումները, որոնք Պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել (հոդված 46, 1-ին կետ): Բացի այդ, այն ստեղծում է վճիռների կատարման վերահսկման մեխանիզմ, որը վստահված է Նախարարների կոմիտեին (46-րդ հոդվածի 2-րդ կետ): Նման մեխանիզմը ցույց է տալիս Կոնվենցիայի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

համակարգում Դատարանի վճիռների արդյունավետ իրականացման կարևորությունը (Verein Gegen Tierfabriken Schweiz (vgt) v. Switzerland (No. 2), application no. 32772/02, 30.06.2009, §84),

(...) վճիռը, որով Դատարանն արձանագրել է իրավունքի խախտում, Պատասխանող պետությանը պարտավորեցնում է վերջ տալ խախտմանը և դրա հետևանքների դիմաց հատուցել այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև խախտումը գոյություն ունեցած վիճակը (Papamichalopoulos and others v. Greece, application no. 14556/89, 31.10.1995, §34),

Պայմանավորվող պետությունը պարտավոր է ոչ միայն վճարել դիմումատուին արդարացի փոխհատուցման կարգով շնորհված գումարները, այլև ձեռնարկել անհատական և/կամ, անհրաժեշտության դեպքում, ընդհանուր միջոցներ դատարանի կողմից հայտնաբերված խախտումը վերացնելու համար (Verein Gegen Tierfabriken Schweiz (vgt) v. Switzerland (No. 2), Application No. 32772/02, 30.06.2009, § 85),

Դատարանը պարզաբանում է, որ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի կարգավորումները, առաջին հերթին, հնարավորություն են տալիս դատարանին իր վճռով երաշխավորել Կոնվենցիայով նախատեսված պաշտպանության արդյունավետությունը և կանխել խնդրո առարկա իրավունքների շարունակական խախտումները՝ կարևորելով Նախարարների կոմիտեի աջակցությունը վերջնական վճռի կատարման վերահսկման հարցում: Նման կարգավորումները նաև հնարավորություն են տալիս և պահանջում են, որ շահագրգիռ պետությունը հնարավորինս արագ վերջ դնի Դատարանի կողմից հայտնաբերված Կոնվենցիայի խախտմանը (Kavala v. Turkey, Application No. 28749/18, 11.07.2022, § 148²):

Թեև Կոնվենցիան չի պարունակում որևէ դրույթ, որը Պայմանավորվող կողմերին պարտավորեցնում է իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսել վարույթի վերանայում կամ վերաբացում, նման հնարավորությունների առկայությունը, հատուկ հանգամանքներում, ապացուցվել է, որ կարևոր է, և որոշ դեպքերում, իրապես միակ միջոցն է խախտված իրավունքի վերականգնման համար: Ըստ այդմ, մեծ թվով

² Guide on Article 46 of the European Convention on Human Rights, Updated on 31 August 2022, էջ 9, Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.echr.coe.int/documents/d/echr/Guide_Art_46_ENG

պետություններ ընդունել են հատուկ օրենսդրություն, որը նախատեսում է նման վերաքննության կամ վերաբացման հնարավորությունը³:

Այն վճիռները, որոնցում Դատարանը խախտում է գտնում, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են.

վճարել դատարանի կողմից նշանակված ցանկացած գումար՝ արդարացի փոխհատուցման կարգով, անհրաժեշտության դեպքում ընդունել անհատական միջոցներ՝ վերջ դնելու Դատարանի կողմից հայտնաբերված խախտմանը և հնարավորինս փոխհատուցելու դրա հետևանքները,

անհրաժեշտության դեպքում ընդունել ընդհանուր միջոցներ, որոնք անհրաժեշտ են նմանատիպ խախտումներին վերջ տալու կամ դրանք կանխելու համար⁴:

Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-1573 որոշմամբ հայտնել է, որ «Եվրոպական դատարանի վճռում [*Case of Papamichalopoulos and others v. Greece, application no. 14556/89, 31/10/1995*] արտահայտված *restitutio in integrum* սկզբունքը հետագայում իր արտացոլումը գտավ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին» R (2000) 2 հանձնարարականում: Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հիշյալ հանձնարարականի համաձայն՝ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ բացառիկ հանգամանքներում գործերի վերաքննությունը կամ վարույթի վերաբացումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը մինչև խախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելուն (*restitutio in integrum*) հասնելու համար, ուստի Նախարարների կոմիտեն խրախուսում է Պայմանավորվող պետություններին, մասնավորապես, ուսումնասիրել իրենց ազգային իրավական համակարգերը՝ ապահովելու գործի վերաքննության համարժեք հնարավորությունների

³ Recommendation No. R (2000) 2 of the Committee of Ministers to member states on the re-examination or reopening of certain cases at domestic level following judgements of the European Court of Human Rights, 3-րդ կետ, 19.01.2000թ.:

Հասանելի է հետևյալ հղումով՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2f06

⁴ Recommendation CM/Rec(2008)2 of the Committee of Ministers to member states on efficient domestic capacity for rapid execution of judgments of the European Court of Human Rights, b) կետ, 06.02.2008թ., հասանելի է հետևյալ հղումով՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805ae618

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

առկայություն, այդ թվում՝ վարույթի վերաբացումը, այն դեպքերում, երբ Դատարանը գտել է Կոնվենցիայի խախտում:

(...) այն դեպքում, երբ անձի կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, անձը պետք է ունենա այդ իրավունքի վերականգնման նպատակով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու հնարավորություն»:

5.6. Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու իրավունքի վերջնական նպատակը Եվրոպական դատարանի վճռով իրավունքի խախտման փաստն արձանագրելն ու այդ խախտումը վերացնելուն հասնելն է: Նշյալ նպատակի կենսագործման նկատառումներից ելնելով էլ՝ մի կողմից՝ Կոնվենցիայի 46-րդ հոդվածով նախատեսվել է Եվրոպական դատարանի վճիռները կատարելու պարտականություն, մյուս կողմից՝ ներպետական օրենսդրության շրջանակներում ամրագրվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման հնարավորություն, նաև այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ միջազգային դատարանը հաստատել է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը (բարեկամական կարգավորումը) կամ Հայաստանի Հանրապետության կողմից արված միակողմանի հայտարարությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ իրավական հնարավորություններն ու դրանց արդյունավետ կենսագործման համար նախատեսված օրենսդրական կառուցակարգերն ու ընթացակարգերը կոչված են երաշխավորելու անձի իրավունքի պաշտպանությունը, որը, կախված գործի հանգամանքներից, կարող է դրսևորվել ինչպես մինչև իրավունքի խախտումը եղած վիճակի վերականգնմամբ, այնպես էլ իրավունքի խախտումը վերացնելով կամ խախտված իրավունքի արդյունքում պատճառված վնասների հատուցմամբ:

Այս առումով անդրադառնալով վերոգրյալ խնդրի առնչությամբ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանն առ այն, որ «(...) դատական ակտի վերանայման համար էքս սուբո կոնվենցիոն իրավունքի խախտում արձանագրող Եվրոպական դատարանի վճիռը նոր հանգամանք կարող է համարվել, եթե դրա հիման վրա վերանայման արդյունքում անհրաժեշտ և հնարավոր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԾԵՂԵԿԱԳԻՐ 2(114)2024

է խախտված իրավունքի վերականգնումը», Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

հաստատելով այն մտայեցումը, որ խախտված իրավունքի վերականգնումն իրապես իրավունքի պաշտպանության ամենաարդյունավետ միջոցն է, այնուամենայնիվ, չպետք է անտեսել իրավունքի պաշտպանության այլ միջոցների դերը՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ մի շարք դեպքերում օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով անհնար է լինում խախտված իրավունքի վերականգնումը: Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավունքի պաշտպանության գործիքակազմի նման սահմանափակումը համահունչ չէ իրավունքի պաշտպանության, այդ նպատակով դատական արյաններ դիմելու, ներպետական դատական արյանների սպառման արդյունքում միջազգային մարմիններ դիմելու իրավական հնարավորությունների գործադրման իրական էությանն ու նշանակությանը:

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավունքների պաշտպանությունը Եվրոպական դատարան դիմելու միջոցով իրացնելու արդյունքում անձն ակնկալում է, առաջին հերթին, **նախկին վիճակի վերականգնում, սակայն դա չի բացառում իրավունքի պաշտպանության այլ միջոցների գործադրման հնարավորությունն այն դեպքերում, երբ խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր չէ:**

Սահմանադրական դատարանը հայտնում է, որ ներպետական որևէ ընթացակարգ չպետք է խոչընդոտի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված ակտերի կատարմանը և դրանով իսկ անձի խախտված իրավունքի վերականգնմանը (եթե ոչ ամբողջ ծավալով, ապա՝ մասնակի), ինչը տվյալ պարագայում հնարավոր է իրավահաջորդության ինստիտուտի պատշաճ կիրառման պայմաններում՝ սույն որոշման շրջանակներում վիճարկվող իրավանորմին տրված մեկնաբանությանը համահունչ:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը հայտնում է, որ Վճռաբեկ դատարանի որոշմամբ՝ վիճարկվող դրույթին տրված մեկնաբանությունը համահունչ չէ Սահմանադրության 81-րդ հոդվածով ամրագրված միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու սահմանադրական պահանջին, քանի որ դրա արդյունքում անտեսվում է Եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածով ամրագրված՝ Եվրոպական դատարանի վճիռների պարտադիր կատարման պարտականությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով

Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Սահմանադրության 61 և 81-րդ հոդվածների բովանդակությունից ելնելով՝ դատավարության մասնակցի իրավահաջորդի կողմից նոր հանգամանքով դատական ակտի վերանայման դիմումը ենթակա է քննության վեճի լուծման արդյունքով ծագող նյութական իրավունքների մասով նրա իրավահաջորդությունը ամբողջ ծավալով բացառող հանգամանքների բացակայության դեպքում:

2. Դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտով՝ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հունիսի 30-ի թիվ ՎԴ/4264/05/11 որոշմամբ կիրառված Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը Դիմողների նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի ուժով հիմք է Դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերանայման համար:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

9 ապրիլի 2024 թվականի
ՍԴՈ-1724

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԹՐԱՆՍ ԿԱՎԿԱԶՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 131-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ
ՄԱՍԻ ԵՎ 195-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 ապրիլի 2024թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԹՐԱՆՍ ԿԱՎԿԱԶՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Դիմող) ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Բ. Պաղտասարյանի, Մ. Դանիելյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի (այսուհետ՝ Պատասխանող) ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ԹՐԱՆՍ ԿԱՎԿԱԶՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

և 195-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ին:

Օրենսգրքի՝ «Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը» վերտառությամբ 131-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետևյալ միջանկյալ դատական ակտերը.

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին.

3) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.

5) վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.

6) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.

7) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին.

8) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.

9) սույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը.

10) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.

11) ինքնաբացարկի մասին դատական ակտերը.

12) այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում»:

Ազգային ժողովի կողմից 2019 թվականի հուլիսի 9-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքով

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

(ՀՕ-128-Ն) վերոնշյալ հոդվածը լրացվել է 12-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում»:

Օրենսգրքի՝ «Դիմումի ապահովումը վարչական դատարանի որոշմամբ» վերտառությամբ 195-րդ հոդվածը սահմանում է՝

«1. Գործը վարույթ ընդունելուց հետո վարչական դատարանը դիմողի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ մինչև գործի դատաքննության ավարտը կարող է կասեցնել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդառնալի կամ ծանր հետևանքների դիմողի կամ հանրության համար:

2. Վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման մասին որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am) հրապարակման պահից»:

Օրենսգրքի վերոնշյալ հոդվածը չի փոփոխվել և չի լրացվել:

Գործի քննության առիթը Դիմողի՝ 2024 թվականի հունվարի 22-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, սույն գործով Դիմողի և Պատասխանողի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի վերաբերելի դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1. Դիմողը 2023 թվականի փետրվարի 13-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Կառավարության՝ վերջինիս կողմից 2022 թվականի նոյեմբերի 24-ին ընդունված և 2022 թվականի նոյեմբերի 25-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1528-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1785-Ն որոշումը՝ որպես ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի դրույթներին հակասող, Դիմողի իրավունքներն ու ազատությունները խախտող նորմատիվ իրավական ակտ, անվավեր ճանաչելու պահանջի մասին, որն ընդունվել է վարույթ (թիվ ՎԴ/0839/05/23 վարչական գործ):

1.2. Դիմողի կողմից վերոնշյալ վարչական գործի շրջանակներում Դատարան է ներկայացվել միջնորդություն՝ դիմումի ապահովման նպատակով վիճարկվող նորմատիվ իրավական ակտի գործողությունը՝ մինչև նույն գործի քննության ավարտը կասեցնելու վերաբերյալ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

1.3. Դատարանը 2023 թվականի մայիսի 17-ին որոշել է Դիմողի կողմից ներկայացված միջնորդությունը մերժել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի ուժով նորմատիվ իրավական ակտի վիճարկման դեպքում նման ակտի գործողության կասեցման նպատակը հետազայում դիմողի կամ հանրության համար անդառնալի կամ ծանր հետևանքներ առաջացնելու բացառումն է, որպիսի վրանգների առկայության հանգամանքը կամ դրանց առաջացման հավանականության աստիճանը գնահատում է ՀՀ վարչական դատարանը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի փաստական փյալները:

Տվյալ դեպքում Դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ դիմումատուի միջնորդությունն անհիմն է, ուստի այն ենթակա է մերժման, քանի որ վերջինիս կողմից բերված փաստարկներով ու գործի փաստերով որևէ կերպ չի հաստատվում այն հանգամանքը, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի գործողության չկասեցումը դիմումատուի կամ հանրության համար կարող է հանգեցնել անդառնալի (անվերականգնելի) կամ ծանր (ներկա պահի համեմատ նյութական անհամեմատ վատ վիճակի հանգեցնող) հետևանքների»:

1.4. Դատարանի վերոնշյալ որոշման դեմ Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք: Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանը 2023 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքի ընդունումը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման:

Վերոգրյալ նորմերի համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ կողմերն անմիջական կարգով իրավունք ունեն բողոքարկելու միայն այն միջանկյալ դատական ակտերը, որոնց բողոքարկման հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է այն միջանկյալ դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Ընդ որում, նշված միջանկյալ դատական ակտերի շարքը սպառիչ է, ինչը նշանակում է, որ այն դատական ակտերը, որոնք նախատեսված չեն այդ ցանկում, չեն կարող բողոքարկվել վերաքննության կարգով:

(...)

Հետևաբար այն պարագայում, երբ բողոքարկվել է այնպիսի միջանկյալ դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման և ընդգրկված

չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ցանկում կամ դրա համար ուղղակի բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ, վերաքննիչ դատարանն իրավասու է կայացնել որոշում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին:

(...)

Տվյալ պարագայում կայացվել է «Նորմատիվ իրավական ակտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշում, որպիսի որոշումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածով, ինչպես նաև դրա՝ վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված չէ նաև «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը» հատուկ վարույթ գլխով:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ Դատարանի կողմից 17.05.2023թ. կայացված «Նորմատիվ իրավական ակտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը» վերադատությամբ 26-րդ գլխով չի հանդիսանում բողոքարկման ենթակա դատական ակտ, ուստի ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումն ենթակա է մերժման»:

1.5. Վերոնշյալ որոշման դեմ Դիմողի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանն իր՝ 2023 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

2. Դիմողի դիրքորոշումները

2.1. Դիմողը, վկայակոչելով Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին, 2 և 4-րդ մասերով, 91-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև 195-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները, գտնում է, որ օրենսդրի կողմից Օրենսգրքով, ըստ վարույթների տեսակների, նախատեսվել են դատական ակտերի կատարման ապահովմանն ուղղված տարբեր կառուցակարգեր: Մասնավորապես՝ հայցային վարույթի շրջանակներում՝ վիճարկման հայցատեսակի դեպքում նախատեսված է վարչական ակտի կատարման կասեցման կառուցակարգ, պարտավորեցման, գործողության կատարման և ճանաչման հայցատեսակների դեպքում՝

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

հայցի ապահովման կառուցակարգ, հատուկ վարույթների պարագայում՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու դիմումի դեպքում՝ նորմատիվ իրավական ակտի գործողության կասեցման կառուցակարգ:

2.2. Դիմողի համոզմամբ՝ թե՛ հայցի ապահովմանը, թե՛ վարչական ակտի կատարման կասեցմանը, թե՛ նորմատիվ իրավական ակտի գործողության կասեցմանն ուղղված միջնորդությունները մերժելու վերաբերյալ որոշումներն անհրաժեշտ է, որ լինեն անմիջական բողոքարկման ենթակա դատական ակտեր, քանի որ հակառակ պարագայում՝ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման պահին արդեն իսկ վրա հասած լինեն այն հետևանքները, որոնց բացառման նպատակով էլ նախատեսված են այդ կառուցակարգերը: Դիմողը պնդում է, որ խնդրո առարկա դատական ակտերի անմիջական բողոքարկման անհնարինությունը կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների, ինչպիսիք են խախտված իրավունքների վերականգնման անհնարինությունը, ոչ արդյունավետ կամ ոչ լիարժեք վերականգնումը և այլն:

2.3. Դիմողը գտնում է, որ Օրենսգիրքը, 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանելով անմիջական բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի ցանկը, այդ ցանկում ի թիվս այլնի ներառել է վարչական ակտի կատարման կասեցումը մերժելու մասին միջանկյալ դատական ակտը (9-րդ կետ) և հայցի ապահովումը մերժելու մասին միջանկյալ դատական ակտը (3-րդ կետ), մինչդեռ նույն ցանկում չի ներառել հատուկ վարույթում այդ դատական ակտերին համարժեք/այլընտրանքային մեկ այլ դատական ակտ՝ նորմատիվ իրավական ակտի գործողության կասեցումը մերժելու մասին միջանկյալ դատական ակտը, ինչը հակասում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին:

2.4. Դիմողը նշում է. «(...) վարչական դատավարության շրջանակներում հատուկ վարույթին առանձնահատուկ՝ դիմումի ապահովման մերժման մասին միջանկյալ դատական ակտը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով և 195-րդ հոդվածով անմիջական բողոքարկման ենթակա չլինելն առաջնահերթ հանգեցնում է դատարան դիմած անձի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման խաթարմանը»:

2.5. Դիմողը գտնում է, որ «(...) դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացման խաթարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին միջանկյալ դատական ակտն անմիջական բողոքարկման ենթա-

կա չէ, ինչը խախտում է դիմումատուների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի գործողությունը կասեցնելու մասին անձի միջնորդությունը մերժվում է ոչ իրավաչափորեն, և անձը իրավունք ու փաստացի հնարավորություն չունի՝ անմիջականորեն բողոքարկել մերժման վերաբերյալ դատական ակտը, հասնել թույլ տրված դատական սխալի վերացմանն ու վերադաս դատական ատյանի միջոցով կասեցնել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի գործողությունը, մինչդեռ համազոր այլ իրավիճակներում, երբ խոսքը վարչական ակտի կատարման կասեցումը կամ հայցի ապահովման կիրառումը մերժելու մասին է՝ անձն այդպիսի իրավունքով ու փաստացի հնարավորությամբ օժտված է»:

2.6. Դիմողի համոզմամբ՝ Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով և 195-րդ հոդվածով դիմումի ապահովումը մերժելու մասին որոշումը որպես անմիջական բողոքարկման ենթակա դատական ակտ չնախատեսելը խախտում է Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը, ինչպես նաև 80-րդ հոդվածով սահմանված՝ հիմնական իրավունքների և ազատությունների էության անխախտելիությունն այն հիմնավորմամբ, որ հանիրավի ու անհարկի սահմանափակում է անձի նկատմամբ կայացված անբարենպաստ դատական ակտի անմիջական բողոքարկման իրավունքը՝ իրավաչափ համարելով անձի իրավունքների խախտումը և հետագա արդյունավետ վերականգնման անհնարինությունը՝ խաթարելով անձի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

2.7. Դիմողը խնդրում է. «(...) Որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի և 195-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև 78-րդ և 80-րդ հոդվածներին»:

3. Պատասխանողի դիրքորոշումները

3.1. Պատասխանողը, ներկայացնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների վերաբերելի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Օրենսգրքի վիճարկվող դրույթները, գտնում է, որ այն դիտարկումները, թե «(...) դատական ակտերի անմիջական բողոքարկման անհնարինությունը կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների, ինչպիսիք են, օրինակ, խախտված իրավունքների վերականգնման անհնարինությունը, ոչ արդյունավետ կամ ոչ լիարժեք վերականգնումը, դատարան դիմած

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

անձի իրավունքների պաշտպանության ունակությունների կամ հնարավորությունների կամ հետաքրքրվածության հարկադիր վերացմանը՝ արդյունքում հանգեցնելով անձի արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների խախտմանը», անհիմն են:

3.2. Պատասխանողը նշում է, որ օրենսդիրը վիճարկվող նորմատիվ իրավական ակտի գործողության կասեցման վարույթի կարևորությունը ընդգծելու նպատակով սահմանել է որոշումներ կայացնող՝ թվով ավելի շատ դատավորների կողմից կազմ, ինչն էլ ինքնին կհանգեցնի կատարյալ դատական ակտ ունենալուն և կբացառի նշված դատական ակտը ենթադրյալ սխալներով և վրիպակներով կայացնելը: Այսինքն՝ օրենսդրի կողմից բավարար երաշխիքներ են սահմանվել առանձնահատուկ պայմաններով գործի արդյունավետ քննության և դատական ակտերի վերջնական լինելու ապահովման նպատակով, մասնավորապես՝ որպես այդպիսի երաշխիք անհրաժեշտ է դիտարկել գործի քննության իրականացումը կողմից՝ հինգ դատավորի կազմով: Նման պայմաններում կայացված դատական ակտի բողոքարկման ինստիտուտի բացակայությունն արդարացված և հիմնավորված է:

3.3. Հիմք ընդունելով Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Պատասխանողը պնդում է, որ վիճարկվող դրույթի համատեքստում անձի սահմանադրական որևէ իրավունքի սահմանափակում առկա չէ, ուստիև՝ համաչափության սկզբունքի խախտման փաստ ևս առկա չէ:

3.4. Պատասխանողը խնդրում է Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի և 195-րդ հոդվածի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակներում վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին Դատարանի որոշման

վերաքննության կարգով անմիջական բողոքարկման օրենսդրական հնարավորության բացակայությունը համահունչ է արդյո՞ք Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատական պաշտպանության և դրա բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքին՝ հաշվի առնելով նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության սահմանադրաիրավական պահանջը:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության՝ «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ այդ առնչությամբ, մասնավորապես, արտահայտելով ներքոնշյալ իրավական դիրքորոշումները.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում):

- «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազորվել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249 որոշում):

- «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշում):

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴՍՏԱՐԱՆ 2(114)2024

Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրատարր է դատական բողոքարկման հնարավորությունը, որի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումները հանգում են նաև հետևյալին.

- «(...) Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս արյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում):

- «(...) սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (...)): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ-936 որոշում):

- «(...) Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին արյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» (2012 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-1037 որոշում):

Այսպիսով՝ Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կարևոր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

բաղադրիչներից մեկը դատական ակտի բողոքարկման իրավունքն է: Դատական բողոքարկման ինստիտուտն այն առանցքային իրավական գործիքակազմն է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը, որպիսի պայմաններում դատավարության կողմը կարող է ակնկալել իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական ակտի վերանայում վերադաս դատարանի անկախ դատավորի կամ դատավորների կազմի կողմից: Այս իմաստով՝ դատական բողոքարկման իրավունքի առանցքային գործառույթը հանգում է, ի թիվս այլնի, նաև նրան, որ դատական բողոքարկմամբ համապատասխան սխալները շտկելու հնարավորություն ընձեռելը նպաստում է նաև արդարադատության համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանն այն հաշվառմամբ, որ անձը ձեռք է բերում վերադաս դատարանում իր նկատմամբ կայացված դատական ակտի վերաքննության իրական հնարավորություն՝ վերջնարդյունքում ակնկալելով ստանալ օրինական և հիմնավորված դատական ակտ:

Անդրադառնալով միջանկյալ դատական ակտերի բողոքարկմանը՝ որպես անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարի, Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշմամբ նշել է, որ «(...) օրենսդիրը փարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հեփաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հեփագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախադեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ թեև օրենսդրի հայեցողությունն է սահմանել վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շրջանակը, այնուամենայնիվ, դրանց բողոքարկելիության կարգի հիմքում պեղք է դրվեն թե՛ դրանց վարույթային առանձնահատկությունները (վարույթի ընթացքը կասեցնող բնույթ ունենալը), թե՛ դրանցով վրա հասնող

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

հետևանքները՝ իբրև գերնպաստակ ունենալով մարդու հիմնական իրավունքների և ազատությունների անխախտելիությունը, ներառյալ՝ դատական պաշտպանության արդյունավետության երաշխավորումը:

5.2. Վարչական արդարադատության անկյունաքարային խնդիրներից է ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը հանրային իշխանության ոչ իրավաչափ գործողություններից կամ անգործությունից:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ վարչական արդարադատության շրջանակներում օրենսդիրը ֆիզիկական և իրավաբանական անձանց հնարավորություն է ընձեռել վիճարկելու պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք առնչվում են կամ անմիջականորեն կարող են առնչվել իրենց իրավունքներին և օրինական շահերին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նորմատիվ իրավական ակտերի վիճարկումը հանրային իշխանության՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի ոչ իրավաչափ ներգործությունից անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներից է, որն ուղղված է վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) իրավաչափությունը պարզելուն՝ այդ ակտի (դրա վիճարկվող դրույթի) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին համապատասխանության տեսանկյունից:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթն իրականացվում է Օրենսգրքի՝ «Հատուկ վարույթներ» վերտառությամբ 5-րդ բաժնի 26-րդ գլխի կանոնակարգումներին համապատասխան:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդիրը, ելնելով քննվող գործերի առանձնահատկություններից, հատուկ վարույթի շրջանակներում տարբերակված մոտեցում է դրսևորել որոշակի խումբ գործերի (այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի) քննության ընթացակարգի նկատմամբ՝ հիմք ընդունելով հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով Դատարանի առջև դրված կոնկրետ խնդիրները և դրանք լուծելու իրավական արդյունավետ միջոցի ընտրության առաջնահերթությունները: Այլ կերպ՝ «Հատուկ վարույթներ» վերտառությամբ 5-րդ բաժնում գետեղված գործերով վարույթները, ելնելով դրանց առանձնահատկություններից, Դատարանի կողմից քննության են ենթակա *ընդհանուր (հայցային վարույթի) դատավարական կարգավորումներից փարբերվող կարգավորումներով:*

Սահմանադրական դատարանը 2016 թվականի հոկտեմբերի 11-ի ՍԴՈ-1314 որոշմամբ Օրենսգրքի ընդհանուր և հատուկ իրավակարգավորումներ նախատեսող նորմերի համակարգված վերլուծության արդյունքում հանգել է այն եզրակացությանը, ըստ որի՝ «(...) հատուկ վարույթի շրջանակներում նախատեսված ընթացակարգերն օբյեկտիվորեն առանձնահատուկ են ըստ՝

- դատական վերահսկողության օբյեկտների (նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու, հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, ընտրական իրավունքի պաշտպանության, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու, անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման, անձնական տվյալների պաշտպանության, լիցենզիայի հետևանքով իրավաչափությունը վիճարկելու, նորարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև դատավորների գնահատման հանձնաժողովի որոշումների վիճարկման վերաբերյալ գործեր),

- դատարանի կազմի (առաջին արյանի կոլեգիալ և միանձնյա կազմով),

- գործ հարուցելու և վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման (դիմող անձանց կազմի) առանձնահատկության,

- հայց ներկայացնելու ժամկետների (կրճատ ժամկետների) և կարգի,
- հայցադիմումը վարույթ ընդունելու և մերժելու ընթացակարգի,
- գործի վարույթը կասեցնելու և կարճելու ընթացակարգի,
- դատաքննության կազմակերպման, փաստական հանգամանքների ապացուցման,

- գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու և այդ ակտերից բխող իրավական հետևանքների և բողոքարկելիության (բողոքարկելի կամ բողոքարկման ոչ ենթակա) առանձնահատկության»:

Վերահաստատելով նախկինում իր արտահայտած վերոնշյալ դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտել այն հանգամանքը, որ հատուկ վարույթի շրջանակներում նախատեսված իրավակարգավորումները, վերոնշյալից զատ, առանձնահատուկ են նաև այդ գործերով կայացվելիք միջանկյալ դատական ակտերի, դրանց բողոքարկելիության և այդ ակտերից բխող իրավական հետևանքների տեսանկյունից:

Օրենսգրքի՝ «Դիմումի ապահովումը վարչական դատարանի որոշմամբ» վերտառությամբ 195-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

գործը վարույթ ընդունելուց հետո Դատարանը դիմողի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ մինչև գործի դատաքննության ավարտը կարող է կասեցնել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդառնալի կամ ծանր հետևանքների դիմողի կամ հանրության համար: *Այսպիսով՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու գործերի քննության առանձնահատկություններից է նաև դատարանի կողմից այնպիսի նախնական իրավական պաշտպանության միջոցի կիրառման հնարավորությունը, ինչպիսին է վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցումը, որը միտված է դիմող կողմին որոշակի իրավական երաշխիքներ տրամադրելուն՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման համարեքստրում:*

Միաժամանակ Օրենսգրքի՝ «Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը» վերտառությամբ 131-րդ հոդվածի 1-ին մասը սպառիչ ցանկով սահմանում է վերաքննության կարգով անմիջական բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքի վերոնշյալ դրույթը, ըստ էության, սահմանելով վերաքննության կարգով անմիջական բողոքարկման ենթակա Դատարանի միջանկյալ դատական ակտերի սպառիչ ցանկ (1-11-րդ կետերով սահմանված ակտեր), միաժամանակ այդ ցանկով սահմանում է բաց թվարկում (12-րդ կետ), ինչը ենթադրում է թվարկվածից զատ այլ՝ այդ թվում՝ հատուկ վարույթի կարգով քննության ենթակա գործերով վերաքննության կարգով անմիջական բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտեր՝ օրենքով հստակ նախատեսված լինելու պայմանով: Օրենսդրի կողմից նման մոտեցման որդեգրման հիմքում ընկած է այն ողջամիտ տրամաբանությունը, որ այն դատական ակտերը, որոնք նախատեսված չեն ինչպես այդ ցանկում (ընդհանուր կարգավորմամբ), այնպես էլ օրենքով սահմանված այլ՝ հատուկ կարգավորումներով, *չեն կարող վերաքննության կարգով անմիջական բողոքարկման առարկա հանդիսանալ:*

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի հստակ նախատեսումն ինքնանպատակ չէ, քանի որ նման սահմանափակումը.

- ապահովում է Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքն այնքանով, որքանով դատավարության մասնակիցների համար որոշակի է դառնում, թե ո՞ր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով,

- ապահովում է դատավարության բնականոն ընթացքը, քանի որ հակառակ պարագայում՝ ցանկացած միջանկյալ դատական ակտի բողոքարկման դեպքում դատավարության բնականոն ընթացքը կարող է խաթարվել:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ մինչև «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-128-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (օրենքն ուժի մեջ է մտել 2019 թվականի օգոստոսի 4-ին) Օրենսգրքը սահմանում էր բացառապես վերաքննության կարգով անմիջական բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի սպառիչ ցանկ, մինչդեռ վերոնշյալ օրենքով Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 12-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «12) այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում»: Օրենսդրի կողմից նման լրացում նախատեսելը վկայում է վերջինիս կողմից անձանց դատական պաշտպանության իրավունքի, մասնավորապես՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացմանն ուղղված *արդյունավետ կառուցակարգեր և հավելյալ երաշխիքներ սահմանելուն միտված հեղինակականության մասին*:

Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննության կարգով անմիջական բողոքարկման ենթակա դատական ակտերի սպառիչ ցանկում՝ Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-11-րդ կետերով, չնախատեսելը սահմանադրականության տեսանկյունից ինքնին խնդրահարույց չէ՝ հաշվի առնելով վիճարկվող դրույթի 12-րդ կետով նախատեսված կարգավորման հիմքում ընկած տրամաբանությունը և օրենսդրի հայեցողությունը՝ համապատասխան կարգավորումն Օրենսգրքի հատուկ, թե ընդհանուր հայցային վարույթների կարգավորումներում ամրագրելու տեսանկյունից՝ ելնելով որոշակիության, կանխատեսելիության կամ իրավական տեխնիկայի կանոնների ապահովման, ինչպես նաև ներինստիտուցիոնալ առումով առավել համակարգային ու համապարփակ լուծում տալու նկատառումներից:

5.3. Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ վարչական արդարադատության ոլորտում Դատարանի կողմից կիրառման ենթակա նախնական իրավական պաշտպանության միջոցներին և դրանց սահմանադրաիրավական նշանակությանը:

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

Այսպես՝ Օրենսագիրքը նախատեսում է նախնական իրավական պաշտպանության միջոցների կիրառման հետևյալ դեպքերը.

- վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցում (Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մաս),
- հայցի ապահովում (Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մաս),
- վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցում (Օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մաս):

Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նախնական իրավական պաշտպանության միջոցը կիրառվում է բացառապես վիճարկման հայց ներկայացնելիս, իսկ Օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված են հայցի ապահովման ընդհանուր եղանակներն ու միջոցները, որոնք կիրառվում են պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցերի դեպքում:

Այսինքն՝ հայցային վարույթի շրջանակներում քննության ենթակա գործերով օրենսդիրը սահմանել է դատավարության համապատասխան մասնակցի իրավունքների նախնական իրավական պաշտպանության երկու եղանակ.

(1) Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը (օրենքի ուժով կասեցում)՝ բացառությամբ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ (8-րդ կետն ուժի մեջ է մտնելու 2025 թվականի հունվարի 1-ից) կետերով նախատեսված դեպքերի: Հայցվորի միջնորդությամբ Դատարանը կարող է գործի քննության ժամանակ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը: Վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտը միտված է վարչական ակտի կատարմամբ հայցվորին զգալի վնաս պատճառելը, ինչպես նաև նրա իրավունքների պաշտպանությունն անհնարին դարձնելը կանխելուն:

(2) Պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցերի դեպքում Դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը: Հայցի ապահովման ինստիտուտը հետապնդում է երկու հիմնական նպատակ: Առաջինն ուղղված է արդեն իսկ խախտված իրավունքների վերականգնմանը, իսկ երկրորդը՝ իրավունքների խախտման կանխարգելմանը: Այլ խոսքով՝ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում կայացվելիք դատական ակտի կատարումը: Սահմա-

նադրական դատարանը 2020 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-1561 որոշմամբ արձանագրել է, որ «(...) հայցի ապահովման միջոց կիրառելու օրենսդրական հնարավորություն նախատեսվել է այն անձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու և երաշխավորելու համար, որոնք տարբեր պահանջներով դիմել են դատարան՝ ակնկալելով իրենց խնդիրների լուծում, սակայն, կախված հանգամանքներից՝ կան ռիսկեր, որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել դատական ակտի կատարումը, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել լրացուցիչ քայլեր, որոնք կապահովեն հետագայում կայացված դատական ակտի պատշաճ կատարումը: Ուստի նման ինստիտուտի նախատեսումն ինքնին իրավաչափ և ընդունելի է պայմանով, որ առկա են համարժեք և բավարար հիմքեր՝ մյուս կողմի իրավունքները և ազատությունները մինչև դատական ակտի կայացումը սահմանափակելու համար»:

Օրենսգրքով վիճարկման հայց ներկայացնելու դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու հնարավորություն չնախատեսելու հարցի շրջանակներում անդրադառնալով վիճարկման հայցը վարույթ ընդունվելու դեպքում վիճարկվող վարչական ակտի կատարման՝ օրենքի ուժով կասեցմանը՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՍԴԱՈ-248 աշխատակարգային որոշմամբ նշել է. «Նշված կարգավորման տրամաբանությունը, ի թիվս այլնի, կայանում է նրանում, որ վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելով վիճարկվող վարչական ակտը պարզապես կորցնում է իր իրավաբանական ուժը: Այլ կերպ ասած՝ նշված տեսակի հայցի բավարարման դեպքում կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը, որպես այդպիսին, պայմանական բնույթ է կրում, քանի որ այն չի ենթադրում միջնորդավորված որևէ գործողություն և, այդպիսով, չի առաջացնում կատարման հետ կապված այնպիսի դժվարություններ, որոնք բնորոշ են դասական իմաստով կատարում ենթադրող դատական ակտերին»:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև վիճարկման հայցի պարագայում օրենսդիրը չի նախատեսել հայցի ապահովման միջոց կիրառելու հնարավորություն, սակայն սահմանել է հայցվորի իրավունքների նախնական իրավական պաշտպանության մեկ այլ միջոց՝ վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցում: Ինստիտուցիոնալ առումով համանման իրավական կարգավորում է նաև հատուկ՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակներում կիրառվող վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի)

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

գործողության կասեցումը՝ դիմողի միջնորդությամբ կամ դատարանի հայեցողությամբ:

Այսպես՝ Օրենսգրքի՝ «Նորմատիվ իրավական ակտերի իրավա-
չափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի
դատական ակտերը, դրանց բնույթը և իրավական հետևանքները»
վերտառությամբ 199-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ
իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ
գործերով Դատարանը կայացնում է հետևյալ դատական ակտերից մեկը.

- վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող
դրույթն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ
իրավական ակտին համապատասխանող ճանաչելու մասին,

- վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող
դրույթն անվավեր ճանաչելու մասին,

- վիճարկվող ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտը կամ դրա
վիճարկվող դրույթը ոչ իրավաչափ ճանաչելու մասին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական
ակտն անվավեր ճանաչելու մասին Դատարանի դատական ակտերը
պաշտոնական հրապարակման պահից Հայաստանի Հանրապետության
ամբողջ տարածքում պարտադիր են բոլորի համար: Իսկ նույն հոդվածի
3-րդ, 6-րդ և 12-րդ մասերը սահմանում են նորմատիվ իրավական ակտերի
իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով Դատարանի
դատական ակտերի՝ ըստ ժամանակի (ratione temporis) ազդեցության
առանձնահատկությունները, համաձայն որոնց՝

(1) անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն իր
իրավաբանական ուժը կարող է կորցնել այն անվավեր ճանաչելու մասին
Դատարանի որոշման պաշտոնական հրապարակման պահից (ex nunc),

(2) անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն իր
իրավաբանական ուժը կարող է կորցնել ուժի մեջ մտնելու պահից
(ex tunc), եթե նման որոշում չընդունելը կարող է ծանր հետևանքներ
առաջացնել հանրության կամ պետության համար,

(3) անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի
իրավաբանական ուժը կորցնելու ժամկետը Դատարանի կողմից կարող
է հետաձգվել, եթե վերջինս համարում է, որ Դատարանի որոշման
ուժի մեջ մտնելու պահին այդ ակտի ուժը կորցնելն անխուսափելիորեն
կառաջացնի իրավական կարգավորման այնպիսի բացեր, որոնք
կխաթարեն այդ ակտի վերացմամբ տվյալ պահին հաստատվելիք
իրավական անվտանգությունը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ նորմատիվ իրավական
ակտի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործով դիմումի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2(114)2024

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆

382

բավարարման դեպքում վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա վիճարկվող դրույթը, կախված վերջինիս իրավաբանական ուժը կորցնելու իրավական ռեժիմից, պարզապես կորցնում է իր իրավաբանական ուժը. այլ խոսքով՝ այն չի ենթադրում միջնորդավորված որևէ գործողություն, ինչպես և վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելով՝ վիճարկվող վարչական ակտը պարզապես կորցնում է իր իրավաբանական ուժը՝ այդպիսով չառաջացնելով կատարման հետ կապված այնպիսի բարդություններ, որոնք բնորոշ են դասական իմաստով կատարում ենթադրող դատական ակտերին:

Անդրադառնալով Օրենսգրքով նախատեսված վերոգրյալ նախնական իրավական պաշտպանության միջոցների կողմից հետապնդվող նպատակներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդպիսիք են՝ **(1) դատական ակտի արդյունավետ կատարումն ապահովելը** (այդ թվում՝ դատական ակտի կատարման անհնարինությունը կանխելը), **(2) հայցվորի համար անդառնալի հետևանքների առաջացումը կանխելը**: Այս իմաստով վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցումը՝ որպես հարուկ վարույթի շրջանակներում կիրառվող նախնական իրավական պաշտպանության միջոց, հետապնդում է նույն վերոհիշյալ իրավաչափ նպատակները, ինչ հայցային վարույթի շրջանակներում կիրառվող Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցում նախնական իրավական պաշտպանության միջոցը, համաձայն որի՝ վիճարկման հայցը վարույթ ընդունվելու դեպքում վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցվում է օրենքի ուժով (*ipso jure*)՝ վիճարկման հայցով հայցադիմումը վարույթ ընդունելն ինքնին հիմք է հանդիսանում արվյալ վարչական ակտի կատարումը կասեցնելու համար (բացառությամբ նշյալ կարգավորմամբ նախատեսված դեպքերի¹), ինչպես նաև Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ հայցի ապահովում ժամանակավոր պաշտպանության միջոցը, համաձայն որի՝ պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցերի դեպքում Դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը:

¹ Հայցվորի միջնորդությամբ Դատարանը կարող է գործի քննության ժամանակ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասը վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման համար որպես իմպերատիվ պայման է սահմանում կասեցման մասին որոշում չընդունելու հետևանքով՝ դիմողի կամ հանրության համար անդառնալի կամ ծանր հետևանքների առաջացումը: Այսինքն՝ համապատասխան որոշում կայացնելիս Դատարանը հաշվի է առնում *ոչ միայն մասնավոր, այլև հանրային շահը*:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցային վարույթի կարգով քննության ենթակա գործերով կիրառման ենթակա նախնական իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ կայացվելիք Դատարանի որոշումները, այն է՝ հայցի ապահովման վերաբերյալ համապատասխան որոշումներն ու Օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված որոշումները, համապատասխանաբար, Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 3 և 9-րդ կետերի իմաստով, *ենթակա են անմիջական բողոքարկման վերաքննության կարգով* հաշվի առնելով դրանց արդյունքում վրա հասնող հետևանքները, մինչդեռ համանման իրավական հնարավորություն նախատեսված չէ նույն իրավաչափ նպատակը հետապնդող, սակայն հատուկ վարույթի կարգով քննության ենթակա՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակներում կիրառման ենթակա վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման վերաբերյալ կայացվող միջանկյալ դատական ակտերի վերաքննության կարգով անմիջական բողոքարկման մասով:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասը, հայցվորի համար նախատեսելով վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցման հնարավորություն, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ է նախատեսել նաև դատավարության մյուս կողմի համար, քանի որ նշյալ դատական ակտերը՝ Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի իմաստով, հանդիսանում են վերաքննության կարգով անմիջական բողոքարկման ենթակա դատական ակտեր:

Ինչ վերաբերում է նախնական իրավական պաշտպանության մյուս միջոցի՝ հայցի ապահովման կիրառման պայմաններում դատավարության մյուս կողմի համար նախատեսված իրավական երաշխիքներին, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն պարագայում, թեև օրենսդիրը չի նախատեսել հայցի ապահովման մասին որոշման վերաքննության կարգով անմիջական բողոքարկման

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԾՆԵԿԱԳԻՐ 2(114)2024

հնարավորություն, սակայն նախատեսել է հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, փոփոխելու կամ վերացնելու մասին միջնորդություն ներկայացնելու հնարավորություն: Օրենսդրի կողմից նման իրավական կառուցակարգերի նախատեսումը դատավարության մասնակցի՝ *արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման գործուն երաշխիք է*, որը կոչված է ապահովելու ողջամիտ հավասարակշռվածությունը հայցի ապահովման մասին որոշման՝ վերաքննության կարգով անմիջական բողոքարկման օրենսդրական հնարավորության բացակայության և դատավարության մասնակցի՝ համարժեք իրավական պաշտպանության միջոց ունենալու միջև: Հակառակ պարագայում՝ դատավարության մի կողմը, ունենալով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, մյուս կողմի համեմատ կհայտնվի առավել բարենպաստ վիճակում:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Դատարանի՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու մասին ներկայացրած միջնորդությունը թե՛ բավարարելու, թե՛ մերժելու մասին որոշումներն իրավական հետևանքներ են առաջացնում ոչ միայն դիմող կողմի համար, այլև անձանց անորոշ շրջանակի համար: Այլ կերպ՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունն ըստ անձանց շրջանակի չի սահմանափակվում բացառապես դիմող սուբյեկտով. այն մնում է գործողության մեջ, կամ վերջինիս գործողությունը կասեցվում է անձանց անորոշ շրջանակի համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից ընտրված այն մոտեցումը, համաձայն որի՝ առկա է նախնական իրավական պաշտպանության այլ միջոցների վերաբերյալ դատական ակտերի վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, սակայն նախատեսված չէ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման միջնորդությունը մերժելու մասին դատական ակտի վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, սահմանադրականության առումով խնդրահարույց է:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ մի կողմից՝ ակնհայտորեն իմաստազուրկ է և օբյեկտիվորեն հնարավոր չէ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը Դատարանի որոշման՝ *«հեղաձգված բողոքարկման» շրջանակներում վիճարկելը*, իսկ մյուս կողմից՝ գործող իրավակարգավորումների պայմաններում բացակայում է նորմատիվ իրավական ակտի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

գործողության կասեցման միջնորդությունը մերժելու մասին Դատարանի կայացրած որոշման վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորությունը: Այլ կերպ՝ սահմանելով նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի քննության առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված հատուկ ընթացակարգերը (այդ թվում՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման միջնորդություն ներկայացնելու իրավական հնարավորությունը)՝ Օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա վերաքննության կարգով անմիջականորեն բողոքարկել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը, մինչդեռ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է՝ արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համարեքսպում՝ հաշվի առնելով դրա վարույթային բնույթն ու դրանով վրա հասնող հետևանքները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակներում օրենսդրի կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողության կասեցման միջնորդությունը մերժելու մասին միջանկյալ դատական ակտը վերաքննության կարգով անմիջական բողոքարկման օրենսդրական հնարավորություն չնախատեսելը համահունչ չէ Սահմանադրությամբ երաշխավորված անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին:

5.4. Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության վերոնշյալ պահանջն ուղղված է Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ և իրական կենսագործմանը, քանի որ իրավունքի կամ ազատության սոսկ ամրագրումը բավարար չէ տրված իրավական հնարավորության լիարժեք իրացման համար, ուստի՝ համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումն անհրաժեշտ երաշխիք է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումն ապահովելու համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է, որ «(...) ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը»:

2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»:

Սահմանադրական դատարանը սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ թիվ ՎԴ/0839/05/23 վարչական գործով Վերաքննիչ վարչական դատարանի 2023 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ Դիմողի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «(...) Դատարանի կողմից 17.05.2023թ. կայացված «Նորմատիվ իրավական ակտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշումը ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 131-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը» վերադատությամբ 26-րդ գլխով չի հանդիսանում բողոքարկման ենթակա դատարանական ակտ, ուստի ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումն ենթակա է մերժման», իսկ Վճռաբեկ դատարանը 2023 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է սահմանել կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակներում վիճարկվող

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորությունը՝ ապահովելով արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր դատական բողոքարկման իրավունքի արդյունավետ կենսագործումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 195-րդ հոդվածն այնքանով, որքանով չի նախատեսում վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

3. Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասը՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

16 ապրիլի 2024 թվականի
ՍԴՈ-1725

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԼԵՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ
11-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 ապրիլի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ «Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ-ի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Ստեփանյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունվարի 10-ին և ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 11-ին:

«Պետական տուրքի մասին» օրենքի՝ «Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ծայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ծայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը» վերտառությամբ 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

(...)

11) վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝	
ա. դրամական պահանջի գործերով	վճռաբեկ բողոքում նշված վիճարկվող գումարի 5 տոկոսի չափով, իսկ եթե վերաքննիչ դատարանում վիճարկվել են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, և վերաքննիչ դատարանը կայացրել է բողոքն ամբողջությամբ բավարարելու կամ մերժելու մասին որոշում, ապա հայցագնի 5 տոկոսի չափով, սակայն բոլոր դեպքերում ոչ պակաս բազային տուրքի 30-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 10 000-ապատիկից

Վերոնշյալ հոդվածի վերնագիրը փոփոխվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-282-Ն օրենքով, խմբագրվել՝ 2018 թվականի

փետրվարի 9-ի ՀՕ-111-Ն և 2021 թվականի ապրիլի 19-ի ՀՕ-177-Ն օրենքներով:

Իսկ նշված հոդվածի վիճարկվող դրույթները խմբագրվել են 1998 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-277 օրենքով, լրացվել և փոփոխվել՝ 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ՀՕ-219 օրենքով, փոփոխվել՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-282-Ն օրենքով, խմբագրվել՝ 2018 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-111-Ն և 2021 թվականի ապրիլի 19-ի ՀՕ-177-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը «Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ՝ 2023 թվականի նոյեմբերի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

«Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Դիմող) Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով վիճարկել է նաև «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «բ»-«ժ» ենթակետերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասը, «Պետական տուրքի մասին» օրենքի 21-րդ հոդվածը, «Պետական տուրքի մասին» օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետը: Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «բ»-«ժ» ենթակետերի սահմանադրականության հարցով դիմողն իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասի, «Պետական տուրքի մասին» օրենքի 21-րդ հոդվածի, «Պետական տուրքի մասին» օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի մասով դիմողի կողմից ներկայացված հարցը Սահմանադրական դատարանում քննության ենթակա հարց չէ, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, 2024 թվականի ապրիլի 23-ի ՍԴԱՌ-62 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթն այդ մասերով կարճել է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 2(114)2024

1. Գործի դատավարական նախապատմությունը

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԴ/54735/02/21 քաղաքացիական գործն ըստ հայցի «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ընդդեմ «Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, 2022 թվականի հուլիսի 12-ի որոշմամբ գործի վարույթը կարճել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պահանջն ուղղված է գումարի բռնագանձմանը, նույն գումարի բռնագանձմանը, ինչը «Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է թիվ ԵԴ/3185/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում, ուստի նման պահանջի բավարարումն ուղղված է «Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գումարի բռնագանձման պահանջի հաշվանցմանը, ներկայացված պահանջի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառում է սկզբնական հայցի բավարարումը՝ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի մասով, ինչպես նաև գումարի բռնագանձման պահանջների միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համարեղ քննությունը կարող էր ապահովել գործի առավել արագ և արդյունավետ լուծումը:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն գործով հայցվորը, չօգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածով սահմանված իրավունքից, թիվ ԵԴ/14669/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում չներկայացնելով հակընդդեմ հայց, զրկվել է հետագայում այդպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից»:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2023 թվականի փետրվարի 9-ի որոշմամբ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի հուլիսի 12-ի քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել է. վերացրել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 12.07.2022 թվականի քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) «Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ-ի կողմից վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2023 թվականի փետրվարի 9-ի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը 2023 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ վերադարձրել է, ի թիվս այլնի,

նաև այն պատճառաբանությամբ, որ «(...) հայցադիմումով դատարան է ներկայացվել դրամական պահանջ՝ ընդհանուր 10.091.834.1 ՀՀ դրամի (9.000.000 ՀՀ դրամ + 1.091.834.1 ՀՀ դրամ), ինչպես նաև հայցադիմում ներկայացնելու օրվանից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված փոկոսների բռնագանձման վերաբերյալ: Հետևաբար սույն գործով վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարման ենթակա պետական փուրքի գումարը կազմում է 504.591,705 ՀՀ դրամ (10.091.834.1 ՀՀ դրամ x 5%): Մինչդեռ բողոքաբերը վճռաբեկ բողոքին կցել է 20.000 ՀՀ դրամի չափով պետական փուրքի գումար վճարված լինելու փաստը հավաստող ապացույց և չի ներկայացրել չվճարված մասով պետական փուրքի վճարման գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդություն»:

«Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ-ն, կրկին ներկայացված վճռաբեկ բողոքով անդրադառնալով պետական տուրքի վճարման հարցին, նշել է, որ «Պետական փուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «թ» ենթակետից չի բխում, որ 20.000 ՀՀ դրամ պետական փուրք չի գանձվում ամբողջությամբ կամ մասնակիորեն առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքների համար՝ հաշվի առնելով, որ այն չի բխի «Պետական փուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի «թ» ենթակետից, որպիսի պայմաններում կստացվի, որ եթե բողոքարկվեր քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին որոշումն ուժի մեջ թողնելու՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը, ապա պետք է դրամական պահանջով նախատեսված պետական փուրքի դրույքաչափը կիրառվեր, մինչդեռ օրենսդրական կարգավորման տրամաբանությունը հանգել է նրան, որ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումների դեմ վճռաբեկ բողոքի համար նախատեսված պետական փուրքի դրույքաչափը կազմում է 20.000 ՀՀ դրամ: Միաժամանակ ներկայացրել է պետական փուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն և նշել, որ եթե Վճռաբեկ դատարանը գտնի, որ վերոնշյալ կարգավորումը սույն բողոքի նկատմամբ կիրառելի չէ, ապա խնդրում է պետական փուրքի մնացած մասի վճարումը հետաձգել և այդ հարցին անդրադառնալ կայացվելիք եզրափակիչ դատական ակտով:

Վճռաբեկ դատարանը 2023 թվականի մայիսի 17-ի որոշմամբ «Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ միջնորդությունը՝

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

պետական տուրքի չվճարված մասի վճարման ժամկետը հետաձգելու մասին, մերժել է հետևյալ պատճառաբանությամբ. «Վերաքննիչ դատարանի 09.02.2023 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացրած անձը վկայակոչել է 504.591,705 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը վճարելու հնարավորությունից զրկված լինելու փաստը: Ի հիմնավորումն վճարելու հնարավորության բացակայության՝ բողոքաբերը Վճռաբեկ դատարան է ներկայացրել «Այդի Բանկ» ՓԲԸ-ում Ընկերության հաշիվների մնացորդների վերաբերյալ տեղեկանք, որի համաձայն՝ առկա հաշիվների մնացորդները կազմում են՝ USD՝ 0,00, EUR՝ 0,00, AMD՝ 3.941,10:

Վճռաբեկ դատարանը բողոքաբերի գույքային դրությունը գնահատելիս հաշվի առնելով գործով ներկայացված դրամական պահանջի չափը (10.091.834.1 ՀՀ դրամ) և բողոքաբերի գույքային դրության վերաբերյալ քաղաքացիական գործի հանգամանքները՝ արձանագրում է, որ ներկայացված տեղեկանքը սույն գործի փաստերի հաշվառմամբ բավարար չէ բողոքաբերի անբարենպաստ գույքային դրության մասին հետևության հանգելու համար:

Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև բողոքաբերը միջնորդել է կիրառել պետական տուրքի գծով արտոնություն, սակայն միջնորդությունը չի բովանդակում որևէ հիմնավորում և չի ուղեկցվում բողոքաբերի գույքային դրության վերաբերյալ բավարար ապացույցներով, որոնք հիմք կհանդիսանային պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու և պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու համար, ուստի միջնորդությունը ենթակա է մերժման»:

Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ հանգամանքը դիտարկելով վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելիս թույլ տրված նոր խախտում, վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

2. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ օրենսդիրը, գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ վերաքննիչ բողոքների համար սահմանելով բազային տուրքի 10-ապատիկի չափով պետական տուրքի գումար, նպատակ է ունեցել տարանջատել գործն ըստ էության լուծող եզրափակիչ դատական ակտերի և գործն ըստ էության չլուծող եզրափակիչ դատական ակտերի բողոքարկման վարույթի համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերը՝ հաշվի առնելով, որ բողոքարկվում են ոչ թե գործն ըստ էության լուծող դատական ակտեր, այլ գործի վարույթի ավարտման վերաբերյալ դատական ակտեր, որոնք թեև գործն ըստ էության լուծող դատական ակտեր չեն, սակայն եզրափակիչ դատական ակտեր են:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

Հետևաբար, ըստ դիմողի, եթե պետական տուրքի դրույքաչափերի միջև տարբերություն չի դրվում գործն ըստ էության լուծող դատական ակտերի և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման դեպքում, մասնավորապես՝ տվյալ դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշման բողոքարկման արդյունքում կայացված՝ գործն ըստ էության չլուծող եզրափակիչ դատական ակտի և նույն գործով կայացվելիք վճռի՝ որպես գործն ըստ էության լուծող եզրափակիչ դատական ակտի միջև առաջանում է իրավական անորոշություն, այդ թվում՝ օրենսդրական բաց, որը համահունչ չէ Սահմանադրության 61, 63, 75, 78 և 79-րդ հոդվածներին:

Հավելելով՝ Դիմողը գտնում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված նշված միջոցը պիտանի և անհրաժեշտ չէ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, քանի որ նման օրենսդրական մեկնաբանման և կիրառման արդյունքում էականորեն խաթարվում են վճռաբեկ բողոք բերող անձի արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքները՝ կապված պետական տուրքի գումարի զգալի չափի էական տարբերության հիմքով պետական տուրքի գումարը չվճարելու արդյունքում բողոքարկման իրավունքի սահմանափակման հետ, քանի որ գործին մասնակցող մի կողմի համար վերաքննիչ բողոք բերելու դրույքաչափը սահմանվել է 10.000 ՀՀ դրամ, իսկ մյուս կողմի համար հիշյալ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված եզրափակիչ դատական ակտի համար հայցապահանջով պահանջվող դրամական գումարի 5 տոկոսը, ինչով գործին մասնակցող անձը մյուս կողմի համեմատ նույն հարցի վերաբերյալ վերադաս բարձր դատական ատյան դիմելու համար հայտնվում է անհավասար և նվազ բարենպաստ իրավիճակում:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող) գտնում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝ դրամական պահանջի գործերով («Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետ) և ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն գործի վարույթը կարճելու, ինչպես նաև ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներով

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆

(«Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «թ» ենթակետ) վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Ըստ Պատասխանողի՝ օրենսդիրը, չսահմանելով գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված՝ որոշումը վերացնելու և գործը վերսկսելու վերաբերյալ որոշումների դեմ վճռաբեկ բողոքների համար առանձին կարգավորում, առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ դա կարգավորված է ընդհանուր կանոնով, և չկա որևէ առանձնահատկություն՝ այդ որոշումների վճռաբեկության կարգով բողոքարկման դեպքում պետական տուրքի այլ դրույքաչափ սահմանելու համար:

Պատասխանողը պնդում է, որ տվյալ դեպքում «Պետական տուրքի մասին» օրենքով հստակ սահմանված է բոլոր դեպքերում դատարաններին վճարվող պետական տուրքի չափերը, և որոշ դեպքերում սահմանվել են պետական տուրքի այլ չափեր, հետևաբար գործի վարույթը կարճելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշմամբ վճռաբեկության կարգով բողոքարկման համար պետական տուրքի առանձնահատուկ կամ տարբերվող չափ չսահմանելը չի կարող գնահատվել որպես օրենսդրական բաց: Գործի վարույթը կարճելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման համար պետական տուրքի չափը «Պետական տուրքի մասին» օրենքով հստակ սահմանված է և որևէ տարրնկալում չի առաջացնում, և բավարար չափով առկա է կարգավորում, որը հնարավորություն է տալիս հստակեցնել վճարման ենթակա անհրաժեշտ պետական տուրքի չափը:

Պատասխանողը նշում է, որ վերադաս դատարանի քննության արդյունքում ստորադաս դատարանի կողմից ընդունված ակտը վերացնելը հետապնդում է ինքնուրույն նպատակ՝ տվյալ գործի քննության գործընթացում կողմերի համար առաջացնելով իրավական նոր հետևանքներ: Հետևաբար, դատական նման ակտի արդյունքում առաջանում են նաև տվյալ ակտի բողոքարկման հետ կապված նոր իրավահարաբերություններ, որը չպետք է նույնացնել գործի վարույթը կարճելու որոշման հետևանքների հետ:

Ելնելով վերոգրյալից՝ Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

4. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի իրացման համար հայցագնի ընդհանուր գումարից ելնելով պետական տուրքի վճարման պարտականության սահմանումը համահունչ է արդյո՞ք Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով սահմանված՝ անձի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքներին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակում վիճարկվող դրույթը քննության առարկա է դարձնում միայն առաջին ատյանի դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման հարցի մասով, ձեռնպահ մնալով այդ հարցից դուրս նշված դրույթի սահմանադրականության ստուգումից:

5.1. Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը քննարկել Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված՝ պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության և դատական պաշտպանության, ինչպես նաև դատարանի մատչելիության իրավունքների հարաբերակցության համատեքստում:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների լիարժեք իրականացման երաշխավորման և ապահովման վերաբերյալ: Սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով:

(...) Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում),

- «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել [2005 թ. փոփոխություններով] ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249 որոշում):

Դատական պաշտպանության իրավունքը, լինելով անձի սահմանադրական իրավունքների երաշխավորման և պաշտպանության հիմնարար կառուցակարգ, ինքնին հանդիսանում է նաև առանձին հիմնական իրավունք, որի իրացումն ու պաշտպանությունը, ինչպես մնացյալ հիմնական իրավունքների պարագայում, պետության պոզիտիվ պարտականությունն է: Նշվածի համատեքստում առանցքային է այն հարցը, թե որքանով է անձին հասանելի դատական ակտերի բողոքարկման իրավունքը՝ որպես դատական պաշտպանության իրավունքի կառուցակարգ:

Դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտերի բողոքարկման հնարավորության վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումները հանգում են հետևյալին.

- «(...) սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝ անձի իրավունքն է (դատական բողոքարկումը ([2005 թ. փոփոխություններով] ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ-936 որոշում),

- «(...) դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ [2005 թ. փոփոխություններով] ՀՀ Սահմ. 18, 19-րդ հոդվածներ),

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը» (2011 թվականի փետրվարի 8-ի ՍԴՈ-936 որոշում):

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է նաև դատական ակտերի բողոքարկման իրավունքի

իրացման նախապայման հանդիսացող՝ օրենքով սահմանված դեպքերում պետական տուրք վճարելու պարտականության և դատարանի մատչելիության իրավունքի հարաբերակցությանը: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը.

- «Դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը» (2010 թվականի մայիսի 25-ի ՍԴՈ-890 որոշում),

- «(...) դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ» (2010 թվականի մայիսի 25-ի ՍԴՈ-890 որոշում),

- «(...) չնայած պետական տուրքի դրույքաչափերի սահմանման՝ օրենսդրի լայն հայեցողությանը, այնուամենայնիվ, այդպիսիք իրավական պետությանը և վերջինիս հատկանիշ իրավունքի գերակայությանը հարիր կարող են համարվել, եթե դրանք լինեն համաչափ, արդարացի ու հիմնավորված, հաշվի առնեն և ապահովեն, որ՝

- արդարադատության իրականացումը չպայմանավորվի և կանխորոշվի զուտ անձի գույքային հնարավորություններով կամ դրությամբ,

- դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար պետական տուրք վճարելու պայմանի սահմանումը չհետապնդի սոսկ ֆինանսական կայուն միջոցներ կամ եկամուտ ստանալու նպատակ, և որ արդարադատության իրականացման պայման չդիտարկվի առաջացած ծախսերն ամբողջապես և բացառապես անձանցից գանձելը (ստանալը),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

- պետական տուրքի դրույքաչափը սահմանելիս պահպանվեն պետության կողմից ծառայության համար կատարված ծախսի և դրա դիմաց գանձման ենթակա եկամտի միջև որոշամիտ հարաբերակցությունը և համարժեքությունը» (2022 թվականի հուլիսի 1-ի ՍԴՈ-1655 որոշում):

Դատական ակտերի դեմ բողոք ներկայացնելու նախապայման հանդիսացող՝ օրենքով սահմանված դեպքերում պետական տուրք վճարելու պարտականության վերաբերյալ դիրքորոշումներ տեղ են գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) վճիռներում: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ արդարադատության իրականացման շահերի նպատակով անձի նկատմամբ արդարադատության մատչելիության համար ֆինանսական սահմանափակում դնելը կարող է արդարացվել, հետևաբար՝ դատարանը գտել է, որ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գործերով տուրքեր վճարելու պահանջը չի կարող դիտվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին անհամատեղելի է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ: Այնուամենայնիվ, դատարանը վերահաստատել է, որ վճարի չափը, որը գնահատվում է կոնկրետ գործի հատուկ հանգամանքների լույսի ներքո, ներառյալ՝ դիմումատուի՝ դրանք վճարելու կարողությունը, և դատավարության փուլը, որով սահմանվել է այդ սահմանափակումը, էական գործոններ են որոշելու, թե արդյո՞ք անձն օգտվում է դատարանի մատչելիության իր իրավունքից, թե՛ ոչ, և արդյո՞ք իր գործը լավել է դատարանի առջև (*Kreuz v. Poland, app. no. 28249/95, 19.06.2001, §59-60, Karahasanoglu v. Turkey, app. no. 21392/08, 16.03.2021, §134, Stankov v. Bulgaria, app. no. 68490/01, 12.07.2007, §52*):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքների բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի նկատմամբ կարող են նախատեսվել սահմանափակումների տեսքով որոշակի պահանջներ: Իրենց հերթին այդ պահանջները չպետք է հանգեցնեն դատական պաշտպանության իրավունքի ոչ համաչափ սահմանափակման: Ի թիվս այլնի, նման սահմանադրական պահանջ է Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի հիման վրա օրենքով սահմանված դեպքերում նախատեսված՝ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի վճարման պարտականությունը: Փաստորեն, նշված սահմանադրական պարտականությունը գտնվում է դատական պաշտպանության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

իրավունքի, ի մասնավորի՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքի հետ սերտ կապի մեջ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենքով սահմանված դեպքերում դատական ակտի դեմ բողոք ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի վճարումն անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման նախապայմաններից մեկն է, քանի որ պետական տուրքի վճարման հանգամանքով է պայմանավորված արդարադատություն իրականացնող մարմիններին դիմելու անձանց հնարավորությունը: Ուստի՝ պետական տուրքի վճարման պարտականության նախատեսումը չի կարող ուղղված լինել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից անձին զրկելուն կամ այդ իրավունքի իրացումը սահմանափակելուն: Ավելին՝ դատարանի դիմելու, այդ թվում՝ ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու համար օրենքով սահմանված դեպքերում պետական տուրք վճարելու պարտականությունն այլ հավասար պայմանների դեպքում դատարանի մատչելիության իրավունքի լեգիտիմ սահմանափակում է: Ընդ որում, Սահմանադրական դատարանը հատկապես կարևորում է այն, որ նման սահմանափակումներ նախատեսված լինելու դեպքում իրավակիրառողները ոչ մի դեպքում չպետք է այդ սահմանափակումներ նախատեսող նորմերին տան տարածական մեկնաբանություն:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է ապահովել ողջամիտ հավասարակշռություն դատավարության մասնակիցների դատական ակտերի բողոքարկման իրավունքի և դրա իրացման համար օրենքով սահմանված դեպքերում նախատեսված պետական տուրքի վճարման պարտականության միջև, ինչը հնարավոր է իրականացնել օրենսդրական այնպիսի կառուցակարգերի ամրագրմամբ, որոնք չեն հանդիսանա ոչ համաչափ միջամտություն վերջիններիս իրավունքներին և օրինական շահերին՝ հանգեցնելով դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտման: Ուստի՝ օրենսդրի խնդիրն է մի կողմից՝ անձանց՝ պետական տուրք վճարելու պարտականության, և մյուս կողմից՝ դատարանում վերջիններիս իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու սահմանադրական իրավունքի իրացման կապակցությամբ արդյունավետ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի նախատեսումը: Ըստ այդմ, օրենսդրին է պատկանում, ի թիվս այլնի, նաև պետական տուրքի դրույքաչափերի վերաբերյալ կարգավորումներ նախատեսելու լիազորությունը: Ընդ որում, թեև սահմանադրական վերը նշված դրույթով՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով չի նախատեսվում պետական տուրքի վճարման վերաբերյալ մանրամասն կարգավորումներ՝ դրանք թողնելով օրենսդիր մարմնի հայեցողության տիրույթում, այդուհանդերձ, պետական տուրքի դրույքաչափերին

վերաբերող, օրենսդրի կողմից նախատեսվող կարգավորումները և դրանց կիրառումը չպետք է խոչընդոտ հանդիսանան դատավարության մասնակցի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման համար: Ավելին՝ պետական տուրքի դրույքաչափի սահմանումը պետք է ապահովի ողջամիտ հարաբերակցություն պետական տուրքի հետապնդած լեզիտիմ նպատակի և սահմանված չափի միջև: Հետևաբար՝ օրենսդրի կողմից պետական տուրքի դրույքաչափերի վերաբերյալ նախատեսվող կարգավորումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դատավարության մասնակիցների կողմից իրենց բողոքարկման իրավունքը գործնականում իրականացնելու ողջամիտ պայմաններ:

5.2. Նկատի ունենալով այն, որ դատական ակտի բողոքարկման իրավունքը սերտորեն փոխկապակցված է օրենքով սահմանված դեպքերում պետական տուրք վճարելու պարտականության հետ, Սահմանադրական դատարանը սույն գործով քննության առարկա հարցի առնչությամբ անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգավորումներին:

Այսպես՝ պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է («Պետական տուրքի մասին» օրենքի 2-րդ և 7-րդ հոդվածներ): Միաժամանակ օրենսդիրը դատավարական օրենսգրքերով պետական տուրքը դիտարկել է որպես դատական ծախսի տարատեսակ¹ օրենքով սահմանված դեպքերում այն համարելով ինչպես դատարան դիմելու, այնպես էլ դատական ակտերի դեմ վերաքննության և վճռաբեկության կարգով բողոք ներկայացնելու իրավունքի նախապայման²: Ըստ այդմ, նշված պարտականության կատարումը նախատեսել է դատական գործի քննության տարբեր փուլերի, այդ թվում՝ դատական ակտերի բողոքարկման փուլերի համար:

¹ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդված, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդված:

² ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122, 127, 368, 371, 393 և 395-րդ հոդվածներ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 74, 79, 134, 136, 158 և 160-րդ հոդվածներ:

Սահմանադրական դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով պետական տուրք վճարելու պարտականությանը, նշել է, որ «[դրա] սահմանումը նպատակ է հետապնդում, նախ՝ որոշակիորեն փոխհատուցել պետության կողմից հանրային ծառայություններ մատուցելու, այդ թվում՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, իսկ վերջինիս դեպքում նաև՝ մասամբ նախականելու ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը՝ նպաստելով թե՛ արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը և թե՛ դատարան դիմելու իրավունքի իրացման հնարավոր շահարկման կանխարգելմանը» (2018 թվականի հուլիսի 10-ի ՍԴՈ-1423 որոշում):

Անդրադառնալով «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված իրավակարգավորումներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի դրույքաչափերի վերաբերյալ սահմանել է տարբեր կարգավորումներ՝ այն պայմանավորելով տարբեր հանգամանքներով, մասնավորապես՝ տարբերակման համար հիմք է ընդունվել՝

- ներկայացվող պահանջների բնույթը՝ ըստ այդմ առանձնացնելով դրամական և ոչ դրամական պահանջների առնչությամբ գանձվող պետական տուրքի դրույքաչափեր: Մասնավորապես՝ դրամական պահանջների կապակցությամբ պետական տուրքի դրույքաչափը կազմում է վճռաբեկ բողոքում նշված վիճարկվող գումարի 5 տոկոսի չափով, իսկ եթե վերաքննիչ դատարանում վիճարկվել են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, և վերաքննիչ դատարանը կայացրել է բողոքն ամբողջությամբ բավարարելու կամ մերժելու մասին որոշում, ապա հայցագնի 5 տոկոսի չափով, սակայն բոլոր դեպքերում ոչ պակաս բազային տուրքի 30-ապատիկից և ոչ ավելի բազային տուրքի 10.000-ապատիկից: Հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանը, 2010 թվականի մայիսի 25-ի ՍԴՈ-890 որոշմամբ անդրադառնալով գույքային և ոչ գույքային (համապատասխանաբար դրամական և ոչ դրամական) պահանջների առնչությամբ սահմանված պետական տուրքի էությանը, նշել է. «Գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքը համամասնական տուրք է, և հաշվարկվում է հայցագնի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ, իսկ ոչ գույքային պահանջի առնչությամբ գանձվող տուրքը պարզ տուրք է, և գանձվում է հաստատագրված գումարի չափով»:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

- դատական գործի վարույթային առանձնահատկությունները, մասնավորապես՝ օրենսդիրը, ելնելով կոնկրետ վարույթի առանձնահատկությունից, սահմանել է իրարից էապես տարբերվող պետական տուրքի դրույքաչափեր: Օրինակ՝ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի դրույքաչափը սահմանվել է բազային տուրքի 20-ապատիկի չափով, իսկ օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ վճռաբեկ բողոքների համար՝ բազային տուրքի 70-ապատիկի չափով:

- դատական ակտի տեսակը, մասնավորապես՝ օրենսդիրը սահմանել է պետական տուրքի տարբեր դրույքաչափեր՝ ելնելով տվյալ եզրափակիչ դատական ակտի բնույթից, այսինքն՝ թե արդյո՞ք տվյալ դատական ակտով գործին մասնակից դարձած անձանց միջև առկա նյութափրավական վեճին տրվել է ըստ էության լուծում, թե՛ ոչ: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է գործին մասնակից դարձած անձանց միջև առկա նյութափրավական վեճն ըստ էության չլուծող վերաքննիչ քաղաքացիական դատարանի եզրափակիչ դատական ակտի դեմ վճռաբեկության կարգով բողոք ներկայացնելիս պետական տուրքի դրույքաչափ՝ հաստատագրված գումարի չափով, իսկ նյութափրավական վեճին ըստ էության լուծում տվող եզրափակիչ դատական ակտերի դեպքում հիմք է ընդունվում ներկայացված նյութափրավական պահանջի բնույթը, այսինքն՝ այն դրամական է, թե՛ ոչ դրամական³:

Այսպիսով, վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի դրույքաչափը որոշելիս պետք է նախևառաջ պարզել, թե արդյո՞ք բողոքարկվող դատական ակտը հանդիսանում է գործին մասնակից դարձած անձանց միջև առկա նյութափրավական վեճին ըստ էության լուծում տվող եզրափակիչ դատական ակտ, թե՛ ոչ: Օրենսդրի կողմից նման տարբերակված կարգավորում նախատեսելու նպատակը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական տուրքի դրույքաչափը պետք է համարժեք լինի անձի կողմից դատարան ներկայացված պահանջին (այդ թվում՝ վերադատության կարգով ներկայացված բողոքում նշված պահանջին) և համապատասխանաբար դրա առնչությամբ պետության կողմից անձին

³ Նշված ընդհանուր կանոնից առանձնացվել են հատուկ վարույթային առանձնահատկություն ունեցող դատական ակտերը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

մատուցված ծառայությանը: Ըստ այդմ, գործին մասնակից դարձած անձանց միջև առկա նյութաիրավական վեճին ըստ էության լուծում տված դատական ակտի վերադասության կարգով բողոքարկման պարագայում պետական տուրքի դրույքաչափի բարձր չափ նախատեսելն արդարացված է՝ նկատի ունենալով նյութաիրավական վեճի ըստ էության լուծմանն ուղղված, դատարանի կողմից կատարված մի շարք գործողությունները: Եվ հակառակը՝ նյութաիրավական վեճին ըստ էության լուծում չտվող դատական ակտի վերադասության կարգով բողոքարկման պարագայում պետական տուրքի դրույքաչափի բարձր չափ նախատեսելը կոխտարկվի ոչ համաչափ միջամտություն անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով, որ անձի վրա դրվելու է ֆինանսական ծանր բեռ՝ վերջինիս կողմից բարձրացված նյութաիրավական վեճին դատարանի կողմից ըստ էության լուծում չտրվելու պարագայում: Հետևաբար՝ օրենսդիրը դատական ակտի բողոքարկման համար պետական տուրքի դրույքաչափ սահմանելիս պետք է ելնի անձի կողմից բողոքարկման իրավունքի գործարկման իրական հնարավորություն ստեղծելու նպատակից:

Նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակում բարձրացված հարցը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի իրականացման առնչությամբ սահմանված պետական տուրքի դրույքաչափին և դրա առնչությամբ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությանը, Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նշված հարցի առնչությամբ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքի իրացման համար պետական տուրք վճարելու պարտականության վերաբերյալ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգավորումներին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սպառիչ ցանկով սահմանել է եզրափակիչ դատական ակտերի տեսակները (5-րդ հոդվածի 2-րդ մաս): Նշված դրույթի ուսումնասիրությունից հետևում է, որ օրենսդիրը, ի թիվս այլնի, դրանում ներառել է նաև գործի վարույթը կարճելու մասին որոշումը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից նշված կարգավորման նախատեսումը պայմանավորված է տվյալ դատական ակտի իրավական բնույթով, մասնավորապես՝ թեև նշված դատական ակտով դատական գործի շրջանակում բարձրացված նյութաիրավական վեճն ըստ էության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԾՆԵՆԿԱԳԻՐ 2(114)2024

լուծում չի ստանում, այդուհանդերձ, այդ դատական ակտը հիմք է հանդիսանում դատական գործով հարուցված վարույթն ավարտելու համար, ինչն էլ իր հերթին, որպես կանոն, արգելք է հանդիսանում հետագայում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ կրկին դատարան դիմելու համար:

Ըստ այդմ, օրենսդիրը «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանել է գործի վարույթը կարճելու մասին որոշումների բողոքարկման առնչությամբ պետական տուրքի հետևյալ դրույքաչափերը՝

- առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վերաքննիչ բողոքների համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով,
- վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վճռաբեկ բողոքների համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով:

Վերոնշյալ իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրը, ելնելով գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բնույթից, դրանց վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման առնչությամբ սահմանել է պարզ պետական տուրք՝ հաստատագրված գումարի չափով, այն է՝ համապատասխանաբար բազային տուրքի 10-ապատիկի և 20-ապատիկի չափով: Այսինքն՝ օրենսդիրը պետական տուրքի դրույքաչափի նման սահմանման հարցում կարևորել է դատաքննության արդյունքը, այն է՝ դատարանի կողմից նշված դատական ակտերով գործին մասնակից դարձած անձանց միջև առկա նյութաիրավական վեճին ըստ էության լուծում չտալը: Փաստորեն, օրենսդիրը գործի վարույթը կարճելու մասին դատական ակտերի բողոքարկման առնչությամբ պետական տուրքի նման դրույքաչափերի նախատեսմամբ որդեգրել է գործին մասնակցող անձանց դատական ակտերի բողոքարկման իրավունքը երաշխավորող մոտեցում:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ օրենսդրի կողմից պետական տուրքի վճարման տեսքով որևէ կարգավորում չի նախատեսվել այն դեպքերի համար, երբ վճռաբեկության կարգով բողոքարկման առարկա է դառնում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը (համապատասխանաբար նշված հարցի առնչությամբ վերաքննիչ բողոքը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ):

Մինչդեռ սույն գործով ներկայացված դիմումի հարուցման հիմք ծառայող դատական գործի շրջանակում Վճռաբեկ դատարանը «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետին տվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ նշված կարգավորմամբ սահմանված պետական տուրքի դրույքաչափը վերաբերում է նաև առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման համար նախատեսված պետական տուրքին (նկատի ունենալով հայցվորի կողմից ներկայացված նյութափրավական պահանջի դրամական պահանջ հանդիսանալու հանգամանքը): Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը հիշյալ դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման համար նախատեսված պետական տուրքի չափի առնչությամբ եկել է հետևյալ եզրահանգման՝ «Տվյալ դեպքում հայցադիմումով դատարան է ներկայացվել դրամական պահանջ՝ ընդհանուր 10.091.834.1 ՀՀ դրամի (9.000.000 ՀՀ դրամ + 1.091.834.1 ՀՀ դրամ), ինչպես նաև հայցադիմում ներկայացնելու օրվանից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տրոկոսների բռնագանձման վերաբերյալ: Հետևաբար սույն գործով վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը կազմում է 504.591,705 ՀՀ դրամ (10.091.834.1 ՀՀ դրամ x 5%)»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետին իրավակիրառ պրակտիկայում տրված վերոնշյալ մեկնաբանությունն անձի՝ դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքների ենթադրյալ խախտման առումով սահմանադրականության խնդիր է առաջացնում հետևյալ պատճառաբանությամբ.

թեև «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը չի պարունակում որևէ կարգավորում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի իրացման համար պետական տուրքի վճարման և դրա դրույքաչափի վերաբերյալ, այդուհանդերձ «Պետական տուրքի մասին» 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետին տրված դատական մեկնաբանությունն այնպիսին է, որ հենց այդ նորմով է նախատեսված առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

բողոքարկման արդյունքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու դեպքերի համար պետական տուրք վճարելու անձանց պարտականությունը:

Իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության պայմաններում ստացվում է մի իրավիճակ, որ դրամական նյութաիրավական պահանջ ներկայացված լինելու դեպքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների վերաքննության կարգով բողոքարկման համար պետական տուրքի դրույքաչափը կազմելու է բազային տուրքի 10-ապատիկի չափով, իսկ նշված որոշման բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշման համար պետական տուրքի դրույքաչափը հաշվարկվելու է հայցագնի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ: Նման պայմաններում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վերաքննիչ բողոք ներկայացնող գործին մասնակցող անձը կրելու է ավելի նվազ պետական տուրքի տեսքով դատական ծախս, մինչդեռ դրա բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման դեպքում գործին մասնակցող մյուս անձը զգալի չափի դրամական պահանջ ներկայացված լինելու դեպքում կրելու է անհամեմատ ավելի բարձր պետական տուրքի վճարման պարտականություն: Այսինքն՝ դատավարության տարբեր մասնակիցներ նույնանման հանգամանքներում իրենց բողոքարկման իրավունքն իրացնելիս հայտնվում են ոչ հավասար պայմաններում: Բացի նշվածից, հնարավոր է նաև այնպիսի իրավիճակի առկայություն, որի պայմաններում դրամական նյութաիրավական պահանջ ներկայացված լինելու դեպքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների վերաքննության կարգով բողոքարկման համար գործին մասնակցող անձը վճարելու է պետական տուրք՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով, մինչդեռ նշված բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը չբավարարվելու դեպքում դատավարության նույն մասնակիցը վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը վճռաբեկության կարգով բողոքարկելու համար կրելու է հայցագնի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ պետական տուրքի վճարման պարտականություն: Այսինքն՝ նշված իրավիճակում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի իրացման համար բարձր պետական տուրքի դրույքաչափի սահմանումը հանգեցնելու է վերջինիս բողոքարկման իրավունքի իրացման ոչ համաչափ ներգործության, ինչը չի բխում Սահմանադրությամբ սահմանված դատական պաշտպանության և դատարանի մատչելիության իրավունքների նպատակից: Ավելին՝ նման տարբերակված մոտեցումը, չունենալով որևէ սահմանադրաիրավական նպատակ, գործնականում կարող է հանգեցնել վերաքննիչ դատարանի վիճահարույց դատական ակտերը վճռաբեկ դատարան չբողոքարկելուն՝ ֆինանսական անհամաչափ բեռ ենթադրող պետական տուրքի վճարման պարտականության պատճառով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումը պետք է ապահովվի դատական ակտերի բողոքարկման բոլոր փուլերում: Նշված հարցի վերաբերյալ կարգավորումները հատկապես կարևորվում են՝ ելնելով այն հանգամանքից, որ դատավարական օրենսգրքով դատական գործի քննության արդյունքում գոյացած բոլոր դատական ծախսերը գեներացվում և վերջնարդյունքում բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, որի արդյունքում դատական ծախսերը վճարում է դատավարության պարտվող կողմը: Հատկանշական է, որ «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով սահմանված պետական տուրքի դրույքաչափը վերաբերում է գործին մասնակից դարձած անձանց միջև առկա նյութաիրավական վեճին ամբողջական, ըստ էության լուծում տված վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի վճռաբեկության կարգով բողոքարկմանը: Այսինքն՝ նշված կարգավորման նպատակը դատարանների կողմից անձին մատուցված՝ գործին մասնակից դարձած անձանց միջև առկա նյութաիրավական վեճին ամբողջական, ըստ էության լուծում տալուն ուղղված ծառայության դիմաց որոշակի փոխհատուցումն է: Մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում նշված դրույթին տրված մեկնաբանության պայմաններում անձը կարող է հայտնվել այնպիսի իրավիճակում, երբ առաջին աստիճանի իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի իրացման համար պետական տուրքի նշված դրույքաչափը վճարելուց հետո, ապագայում գործին մասնակից դարձած անձանց միջև առկա նյութաիրավական վեճին ամբողջական, ըստ էության լուծում տված վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի բողոքարկման դեպքում ևս կրի պետական տուրքի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 2(114)2024

վճարման նույն չափի պարտականություն, ինչն արդեն իսկ կրել էր առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի վճարեկության կարգով բողոքարկման դեպքում: Նման պայմաններում անձի կողմից բողոքարկման իրավունքի իրացումը կհանգեցնի նույն չափի պետական տուրքի բազմակի վճարման՝ ստեղծելով անձի կողմից իր բողոքարկման իրավունքը գործնականում իրականացնելու ոչ ողջամիտ պայմաններ:

Ելնելով վերոնշյալ դիրքորոշումներից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Պետական տուրքի մասին» օրենքի կարգավորումները հանգում են հետևյալին.

- «Պետական տուրքի մասին» օրենքով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքի դրույքաչափը սահմանվել է բազային տուրքի 10-ապատիկի չափով,

- «Պետական տուրքի մասին» օրենքով վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի դրույքաչափը սահմանվել է բազային տուրքի 20-ապատիկի չափով,

- «Պետական տուրքի մասին» օրենքով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի կոնկրետ դրույքաչափ սահմանված չէ,

- իրավակիրառ պրակտիկայում «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետին տրվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ նշված կարգավորմամբ սահմանված պետական տուրքի դրույքաչափը վերաբերում է նաև առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու համար նախատեսված պետական տուրքին (հայցվորի կողմից նյութաիրավական պահանջի դրամական պահանջ ներկայացված լինելու դեպքում),

- «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար դրամական պահանջի գործերով վճարման ենթակա պետական տուրքի դրույքաչափը, որպիսի դրույքաչափի հաշվարկման համար հիմք է ընդունվում վճռաբեկ բողոքում վիճարկվող գումարի չափը: Իսկ առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքով բողոքաբերի կողմից վիճարկվում է ոչ թե որևէ գումարի չափ, այլ առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործի վարույթը կարճելու, այն է՝ գործի քննությունը (առանց գործին մասնակցող անձանց միջև առկա նյութաիրավական վեճին ըստ էության լուծում տալու) ավարտելու գործողությունը:

Վերոնշյալի արդյունքում Սահմանադրական դատարանը գալիս է այն եզրահանգման, որ առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկելու համար պետական տուրքի դրույքաչափի վերաբերյալ որևէ կարգավորում նախատեսված չլինելու արդյունքում իրավակիրառ պրակտիկայում առաջացել է մի իրավիճակ, որպիսի դեպքում առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի վերաքննության կարգով բողոքարկումը, ինչպես նաև վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն վճիռը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումների վճռաբեկության կարգով բողոքարկումը ենթադրում են դատավարության մասնակցի համար ֆինանսական նվազ բեռ, իսկ առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված համասեռ դատական ակտը վճռաբեկության կարգով բողոքարկելու համար դատավարության մասնակիցը պետք է կրի ֆինանսական էլ ավելի ծանր բեռ:

Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետին տրված մեկնաբանությունն առ այն, որ նշված կարգավորմամբ սահմանված պետական տուրքի դրույքաչափը վերաբերում է նաև առաջին աստյանի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

ընդհանուր իրավասության դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացված դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու համար նախատեսված պետական տուրքին (հայցվորի կողմից իր նյութաիրավական պահանջը դրամական պահանջի տեսքով ներկայացված լինելու դեպքում), հանգեցրել է անձի դատական պաշտպանության և դատարանի մատչելիության հիմնարար իրավունքների խախտման:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դրանով սահմանված կարգավորումը չի տարածվում առաջին ատյանի դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի իրացման վրա:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

23 ապրիլի 2024 թվականի
ՍԴՈ-1726

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի «ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԼԵՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 11-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1726 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2024 թվականի ապրիլի 23-ի՝ «Փաստաբանական գրասենյակ Լև Գրուպ» ՍՊԸ դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1726 որոշման վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով և Սահմանադրական դատարանի աշխատակարգով սահմանված են որոշումների կայացմանն առնչվող այնպիսի ընթացակարգեր, որոնք, ի թիվս այլնի, ապահովում են որոշումների կայացմանը Սահմանադրական դատարանի դատավորի բովանդակային մասնակցությունը, ըստ այդմ՝ որոշումների կայացման օրինականությունը: Մասնավորապես, այդպիսի կարգավորումների շարքին են դասվում նիստերի վերաբերյալ ծանուցումները, գործի նյութերին նախապես ծանոթանալու իրավասությունը, որոշման նախագծի տեքստը դատավորներին նախապես ուղարկելու պարտականությունը, նախագծի՝ գրավոր տարբերակով տրամադրումը, անհրաժեշտության դեպքում նախնական քննարկումների կազմակերպումը՝ քննվող գործի և կայացվող որոշման առնչությամբ դատավորի կողմից պատշաճ դիրքորոշում, համոզմունք ձևավորելու և ըստ այդմ քվեարկելու համար:

Սույն գործով որոշման նախագիծը դատավորներին է ուղարկվել նիստից մի քանի օր առաջ՝ 2024 թվականի ապրիլի 18-ին: Նախնական քննարկումներ չեն եղել: Խորհրդակցական սենյակում քննարկումների արդյունքում որոշում է կայացվել ընդունել զեկուցողի կողմից նախնական ներկայացված նախագծից ոչ թե խմբագրական, այլ բովանդակային

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 2(114)2024

առումով տարբերվող մեկ այլ որոշում: Այնուհետև հայտարարվել է ընդմիջում, որի ժամանակ զեկուցողը պատրաստել է որոշման եզրափակիչ մասը, ներկայացրել այն դատավորներին խորհրդակցական սենյակում ընթացող նիստի ժամանակ: Ձեկուցողը բանավոր հայտնել է, թե որոշման տեքստում ինչպիսի փոփոխություններ են նախատեսվում, այդ թվում՝ դիմումում ներկայացված որոշ պահանջների մասով վարույթի կարճման առնչությամբ, որոնք բացակայել են ներկայացված նախագծում: Իմ առաջարկությունը՝ մնալ խորհրդակցական սենյակում, ստանալ զեկուցողի կողմից ներկայացված համապատասխան փոփոխությունները ներառող նախագծի գրավոր տարբերակը և այնուհետև քվեարկել, Սահմանադրական դատարանի կողմից չի ընդունվել:

Ուստի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քվեարկության պահին ինձ տրամադրված է եղել միայն որոշման եզրափակիչ, այլ ոչ խմբագրված որոշման նկարագրական ու պատճառաբանական մասերը, որոնք կազմում են որոշման էական և անքակտելի տարրերը, դեմ եմ քվեարկել որոշմանը՝ դրա վերաբերյալ դիրքորոշում ձևավորելու հնարավորության բացակայության պատճառով:


Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ իմ անհամաձայնությունն եմ հայտնում որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի, ինչպես նաև այդ եղանակով որոշումների ընդունմանը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

2 մայիսի 2024 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԱԹԵՆՔՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 մայիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23,40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2023 թվականի դեկտեմբերի 14-ին Աթենքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 2(114)2024

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի մարտի 7-ի N 316-Ա որոշմամբ հավանություն է տվել «2023 թվականի դեկտեմբերի 14-ին Աթենքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) ստորագրվել է 2023 թվականի դեկտեմբերի 14-ին Աթենքում:

2. Համաձայնագրի նպատակներն են՝ Կողմերի պաշտպանական կարողություններն ուժեղացնելու համար առկա ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելով՝ սովորական պաշտպանական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության ընթացակարգի հաստատումը և այդ նպատակով և պաշտպանական արդյունաբերության ոլորտի հնարավորություններն ընդլայնելու համար նոր տեխնոլոգիաների և ռազմական նշանակության ապրանքների հետազոտության, զարգացման և արտադրության ոլորտներում համագործակցության խթանումը:

3. Համաձայնագիրը կազմված է նախաբանից և տասնմեկ հոդվածից:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

4.1. իրականացնել փորձի և տեղեկատվության փոխանակում ռազմական նշանակության ապրանքների մշակման, արտադրության և փորձարկման վերաբերյալ (Հոդված 5, կետ 1),

4.2. իրականացնել Հայաստանի Հանրապետությունում և Հունաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության ապրանքների հետազոտություն և մշակում, ինչպես նաև աշխատանքների ընդլայնում և փորձարկում (Հոդված 5, կետ 2),

4.3. իրականացնել ռազմարդյունաբերական ոլորտի մասնագետների վերապատրաստում՝ ըստ Կողմերի իրավունքների և կարողությունների (Հոդված 5, կետ 3),

4.4. մատուցել երրորդ երկրներում արտադրված ռազմական նշանակության ապրանքների նորոգման ու շահագործման հետ կապված ծառայություններ (Հոդված 5, կետ 4),

4.5. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները Համաձայնագրի իրականացման ընթացքում ձեռք բերված գաղտնի տեղեկատվության՝ երրորդ կողմերի համար բացահայտումը կանխելու համար (Հոդված 7, մաս 1),

4.6. ապահովել Համաձայնագրի գործողության դադարեցումից հետո ցանկացած գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, մինչև Հունաստանի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետությանը նման պարտավորությունից ազատումը (Հոդված 7, մաս 2),

4.7. Համաձայնագրի շրջանակներում երրորդ կողմերին համատեղ աշխատանքի արդյունքների և սարքավորումների վաճառքի և արտադրության նպատակով տրամադրել թույլտվություն Հունաստանի Հանրապետության կողմից նախապես տրված գրավոր համաձայնությամբ (Հոդված 8, մաս 1 և մաս 2),

4.8. հոգալ Համաձայնագիրն իրականացնելու և համագործակցությունը դյուրացնելու նպատակով ստեղծվելիք և Կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից կազմված Համատեղ հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետությունում նիստերի գումարման հետ կապված բոլոր կազմակերպչական ծախսերը,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԾԵՂԵԿԱԳԻՐ 2(114)2024

ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելիս Հունաստանի Հանրապետությունը ներկայացնող անդամների կեցության և սննդի հետ կապված ծախսերը (Հոդված 9, մաս 1 և մաս 3),

4.9. Համաձայնագրի իրականացման ընթացքում Կողմերի միջև ծագած ցանկացած տարաձայնություն կարգավորել խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով (Հոդված 10):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2023 թվականի դեկտեմբերի 14-ին Աթենքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

14 մայիսի 2024 թվականի
ՍԴՈ-1727

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԱԹԵՆՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1727 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2023 թվականի դեկտեմբերի 14-ին Աթենքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1727 որոշմամբ որոշել է, որ 2023 թվականի դեկտեմբերի 14-ին Աթենքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1727 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ 2(114)2024

որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1727 որոշմամբ 2023 թվականի դեկտեմբերի 14-ին Աթենքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության

կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԾՆԵԿԱԳԻՐ 2(114)2024

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ 2(114)2024

միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ

ՍԱՀՄԱՆԱՐԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 ◆ 2(114)2024

Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փորձադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«14» մայիսի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 2(114)2024



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2000 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱ-
ԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 մայիսի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի,
Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Արտաքին գործերի նախարարի
սեղակալ Մ. Սաֆարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2000
թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրված «Անկախ Պետությունների
Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ
պայմանագրերի դադարեցման մասին» արձանագրությամբ ամրագրված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի մարտի 21-ի N 397-Ա որոշմամբ հավանություն է տվել «2000 թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի մարտի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2000 թվականի դեկտեմբերի 1-ին Մինսկում՝ Անկախ Պետությունների Համագործակցության իրավապայմանագրային հենքի գույքագրման նպատակով:

2. Արձանագրությանը կցված է երկու հավելված՝

1) թիվ 1 հավելված. «Միջազգային պայմանագրերը, որոնք դադարեցրել են իրենց գործողությունը գործողության ժամկետը լրանալու և հետագա պայմանագրեր կնքելու հետ կապված»,

2) թիվ 2 հավելված. «Միջազգային պայմանագրերը, որոնց գործողությունը դադարում է»:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է՝

3.1. արձանագրել՝ Արձանագրության թիվ 1 հավելվածում թվարկված պայմանագրերի դադարեցումը՝ դրանց գործողության ժամկետը

լրանալու և հետագա պայմանագրեր կնքելու պատճառով (հոդված 1),

3.2. Արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից դադարեցնել Արձանագրության թիվ 2 հավելվածում թվարկված պայմանագրերի գործողությունն այդ պայմանագրերի մասնակից պետությունների հետ հարաբերություններում (հոդված 2):

4. Ըստ Արտաքին գործերի նախարարության 2024 թվականի մարտի 5-ի գրության՝ Արձանագրության կատարման համար պատասխանատու մարմին է հանդիսանում Արտաքին գործերի նախարարությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2000 թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

14 մայիսի 2024 թվականի
ՍԴՈ-1728

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2000
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՆԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1728
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2000 թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2024 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1728 որոշմամբ որոշել է, որ 2000 թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2024 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1728 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 2(114)2024

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր 2024 թվականի մայիսի 14-ի ՍԴՈ-1728 որոշմամբ 2000 թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 2(114)2024
 ՏԵՂԵԿԱԳԻՐ

ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները (22-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ հոդվածի 1-ին մաս, 46-րդ հոդվածի 2-րդ մաս, 74-րդ հոդվածի 1-ին մաս, 88-րդ հոդվածի 6-րդ մաս) թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Վերահաստատելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում արտահայտված դիրքորոշումները՝ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, իսկ նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը, որում պետք է նշված լինի էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Քննարկվող դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Ելնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումների (օրինակ՝ ՍԴՈ-1581, ՍԴՈ-1620, ՍԴՈ-1622, ՍԴՈ-1674, ՍԴՈ-1676, ՍԴՈ-1706 և այլն) կապակցությամբ իմ կողմից ներկայացված՝ հատուկ կարծիքներում վկայակոչված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից՝ կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա որևէ ստորագրության բացակայության պայմաններում, կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«14» մայիսի 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԿԱԳԻՐ **◆** 2(114)2024



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԻՄԻՆ**



2024 թվականի մարտի 20-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) Հայաստանի Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի տեխնիկական տնօրեն Պատրիկ Վուչեքին և ծրագրի թիմին՝ նորանշանակ ղեկավար Հասմիկ Հակոբյանի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրերին՝ Բարձր դատարանի նախագահը վերահաստատել է Սահմանադրական դատարանի անփոփոխ հանձնառությունը ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Արման Դիլանյանն ընդգծել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ հաստատված և ակնհայտորեն զարգացող օրինակելի համագործակցությունը, որը նշանակալի դեր ունի Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումների, գործունեության թափանցիկության և վարչարարության զարգացման գործում:

ԱՄՆ ՄՁԳ Հայաստանի Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի տեխնիկական տնօրեն Պատրիկ Վուլֆբլը շնորհակալություն է հայտնել Սահմանադրական դատարանի նախագահին և դատարանի աշխատակազմին համագործակցության համար: Պատրիկ Վուլֆբլն ընդգծել է Բարձր դատարանի բաց և արդյունավետ մասնագիտական աշխատանքը Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի շրջանակներում՝ այն համարելով օրինակելի համագործակցություն, և պատրաստակամություն է հայտնել խթանելու նաև երկու երկրների Բարձր դատարանների մասնագիտական շփումներն ու հարաբերությունների հաստատումը:

ԱՄՆ ՄՁԳ Հայաստանի Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի ղեկավար Հասմիկ Հակոբյանն իր հերթին շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ ներդնելու է բոլոր ջանքերը Բարձր դատարանի հետ համագործակցության շարունակականությունն ապահովելու ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքային մակարդակում համաձայնեցնել Սահմանադրական դատարանի և ԱՄՆ ՄՁԳ Հայաստանի Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի միջև համագործակցության հետագա աշխատանքներն ու առաջնահերթությունները:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ
ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԱԳՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**



2024 թվականի մարտի 21-ին Սահմանադրական դատարանի դատավոր, փոխնախագահ Վահե Գրիգորյանն աշխատանքային հանդիպում է ունեցել Նիդերլանդների Թագավորության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչների հետ՝ «Աջակցություն Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումներին» ծրագրին առնչվող հարցերի քննարկման նպատակով:

Ողջունելով հյուրերին՝ ՍԴ փոխնախագահը շնորհակալություն է հայտնել Նիդերլանդների Թագավորության կողմից Հայաստանի ժողովրդավարական ինստիտուտների զարգացման և իրավունքի գերակայության ոլորտներում ցուցաբերվող աջակցության համար: Նիդերլանդների ԱԳՆ ներկայացուցիչներ պարոն Արիան Սխութոֆը և տիկին Իվոնե Ստասսենը Նիդերլանդների Թագավորության ժողովրդի անունից շնորհակալություն են հայտնել Սահմանադրական դատարանի փոխնախագահին ջերմ ընդունելության համար՝ ընդգծելով Սահմանադրական դատարանի դերը Հայաստանի սահմանադրական ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐՆԸՆԿԱԼԿԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԴԱՏԱԿԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ



2024 թվականի ապրիլի 11-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Եվրոպայի խորհրդի Ծրագրերի համակարգման տնօրեն Կլաուս Նոյկիրխի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Սահմանադրական դատարանի նախագահն ընդգծել է ՀՀ Բարձր դատարանի և Եվրոպայի խորհրդի միջև առկա սերտ և արդյունավետ համագործակցությունը՝ վկայակոչելով համատեղ իրականացված մեծածավալ ծրագրերը: Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը կարևորել է Հայաստան-ԵԽ 2023-2026 թթ. Գործողությունների ծրագրի շրջանակում Սահմանադրական արդարադատության ոլորտում նախանշված նոր ծրագրերը, որոնք համահունչ են Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումների օրակարգին:

Եվրոպայի խորհրդի Ծրագրերի համակարգման տնօրեն Կլաուս Նոյկիրխը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ ընդգծելով, որ արդարադատության ոլորտում իրականացվող ծրագրերի շրջանակներում Սահմանադրական դատարանը մշտապես հանդիսանում է Եվրոպայի խորհրդի վստահելի գործընկեր: Կլաուս Նոյկիրխն առաջարկել է ի թիվս Հայաստան-ԵԽ 2023-2026 թթ. Գործողությունների ծրագրով արդարադատության ոլորտին ուղղված միջոցառումների շրջանակում իրականացվելիք համատեղ աշխատանքների, 2024 թվականի հուլիս ամսին, Երևանում, «Ժողովրդավարություն՝ իրավունքի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 2(114)2024

միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) հետ համատեղ կազմակերպել նաև միջազգային գիտաժողով:

Սահմանադրական դատարանի նախագահը նշել է, որ Բարձր դատարանը ողջունում է Երևանում միջազգային գիտաժողովի կազմակերպման առաջարկը և իր կողմից կներդնի բոլոր ջանքերը՝ այն հավուր պատշաճի կյանքի կոչելու համար:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) հետ համագործակցությանը, Սահմանադրական արդարադատության արդյունավետության բարձրացմանը, Սահմանադրական դատարանի գործունեության հրապարակայնության խթանմանը վերաբերող մի շարք հարցերի: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ծրագրերի իրականացման ճանապարհային քարտեզը մշակել աշխատանքային հանդիպումների ընթացքում՝ ձևավորվելիք աշխատանքային խմբերի ձևաչափով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԸՆԴՀԱՆՍՈՒՅՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՄ 2(114)2024

2024 թվականի ապրիլի 10-ին Սահմանադրական դատարանի դատավոր, փոխնախագահ պրն. Վահե Գրիգորյանն ընդունել է ԱՄՆ Հավայի նահանգի գերագույն դատարանի դատավոր պրն. Թոդ Էդինսին:

Ողջունելով հյուրին՝ փոխնախագահ Գրիգորյանը կարևորել է դատարանների միջև երկխոսությունը և միմյանց իրավական համակարգերի ուսումնասիրության նպատակով դատավորների մասնագիտական հետաքրքրությունը: Դատավոր Էդինսը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար՝ իր հերթին ընդգծելով համագործակցության ակտիվացման և փորձի փոխանակման նպատակով փոխայցելությունների կազմակերպման կարևորությունը:

Հանդիպմանը հաջորդել է «Սահմանադրության մեկնաբանման մեթոդաբանական մոտեցումներ. ԱՄՆ փորձը» թեմայով աշխատանքային ձևաչափով մասնագիտական քննարկումը, որին մասնակցել են նաև Սահմանադրական դատարանի աշխատակազմի մասնագիտական ստորաբաժանումների աշխատակիցները:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ
ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**



2024 թվականի մայիսի 15-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի նորանշանակ ղեկավար Մաքսիմ Լոգանգեին: Ողջունելով քաղաքավարական այցով Սահմանադրական դատարանում գտնվող բարձրաստիճան հյուրին՝ Դիլանյանն ընդգծել է ՀՀ Սահմանադրական դատարանի և Եվրոպայի խորհրդի միջև առկա արդյունավետ համագործակցությունը, ինչի ապացույցն են համատեղ իրականացված մեծածավալ ծրագրերը:

Սահմանադրական դատարանի նախագահը կարևորել է, որ 2023-2026 թվականներին Հայաստան-Եվրոպայի խորհուրդ համագործակցությամբ իրականացվող «Գործողությունների ծրագրի» շրջանակներում սահմանադրական արդարադատության ոլորտում նախանշված նոր ծրագրերը համահունչ են Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումների օրակարգին:

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ ծրագրերի մանրամասները քննարկել աշխատակազմերի ձևաչափով:

Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավարը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ ընդգծելով, որ ՀՀ Սահմանադրական դատարանն ու Եվրոպայի խորհուրդն արդարադատության ոլորտում վստահելի գործընկերներ են:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 2(114)2024

ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻՆ



2024 թվականի մայիսի 24-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Քրիստինա Քվինին և ԱՄՆ ՄԶԳ տնօրեն Ջոն Ալելոյին:

Ողջունելով հյուրերին՝ Սահմանադրական դատարանի նախագահը բարձր է գնահատել սահմանադրական արդարադատության ոլորտում ԱՄՆ դեսպանության օջակցությամբ իրականացվող ծրագրերը, որոնք միտված են ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի ինստիտուցիոնալ բարեփոխումներին, այնպես էլ ժողովրդավարական կառույցների ամրապնդմանն ու իրավունքի գերակայության խթանմանը:

Հանդիպման ընթացքում կողմերն ընդգծել են հայ-ամերիկյան «Դատական դիվանագիտության» զարգացման անհրաժեշտությունը: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել ՀՀ ՍԴ պատվիրակության ճանաչողական այցին Միացյալ Նահանգներ, որի շրջանակներում նախատեսված են հանդիպումներ ԱՄՆ Գերագույն դատարանում և արդարադատության ոլորտի կառույցներում:

Նշվել է, որ նման այցը լավ հնարավորություն է ՀՀ Սահմանադրական դատարանի և ԱՄՆ Գերագույն դատարանի միջև համագործակցությունն ու երկխոսությունը վերականգնելու և ակտիվացնելու համար:

Հանդիպմանն անդրադարձ է եղել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի:

ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՆՈՐԸՆՏԻՐ ԴԱՏԱՎՈՐ ԴԱՎԻԹ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆԻՆ



2024 թվականի մայիսի 30-ին տեղի ունեցավ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը ստանձնած դատավոր Դավիթ Խաչատուրյանի ներկայացումը Բարձր դատարանի դատավորներին և աշխատակազմին:

Արարողակարգային միջոցառման մեկնարկին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը ներկայացնելով դատավորին՝ մաղթեց արդյունավետ պաշտոնավարում, ինչպես նաև հույս հայտնեց, որ դատավոր Դավիթ Խաչատուրյանն իր ամենօրյա գործունեությամբ կնպաստի մեր երկրում սահմանադրական արդարադատության, իրավունքի գերակայության և սահմանադրականության ամրապնդմանը:

Դատավոր Դավիթ Խաչատուրյանն իր խոսքում նշեց, որ իր համար մեծ պատիվ է Հայաստանի Հանրապետության ժողովրդի վստահությունը վայելող Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի դատավոր ընտրվելը՝ հույս հայտնելով, որ ՍԴ մյուս դատավորների և աշխատակազմի հետ համատեղ արդյունավետ համագործակցության արդյունքում կկարողանա իր գիտելիքներն ու փորձը ծառայեցնել սահմանադրական արդարադատության խնդիրների լուծմանը:

Միջոցառման ընթացքում Սահմանադրական դատարանի դատավոր Դավիթ Խաչատուրյանին հանձնվեցին Սահմանադրական դատարանի դատավորի հատուկ համազգեստը՝ պատմունքանը, ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորի ձևաթղթերը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԺԱՆ ՄՈՆԵԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ



2024 թվականի մարտի 12-ին ՀՀ Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են ժան Մոնեի ձմեռային դպրոցի «ԵՄ արտաքին հարաբերությունները աշխարհաքաղաքական տուրբուլենտության ժամանակաշրջանում. Հարավային Կովկասի օրինակը» դասընթացի մասնակիցները: Եվրասիա միջազգային համալսարանի նախաձեռնությամբ կազմակերպված այցի ընթացքում ուսանողներին ընդունել է ՍԴ դատավոր, փոխնախագահ Վահե Գրիգորյանը: Միջոցառմանը մասնակցել են Օքսֆորդի, Հումբոլդտի, Հայդելբերգի, Պասաուի, Քենթի, Մարբուրգի, Ֆրայբուրգի և Եվրասիա միջազգային համալսարանի ավելի քան երեսուն ուսանողներ: Եվրոպական առաջատար համալսարանների ուսանողների հետ հանդիպմանը ՍԴ փոխնախագահ Վահե Գրիգորյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության էվոլյուցիան: Պարոն Գրիգորյանն ուսանողներին ծանոթացրել է Բարձր դատարանի գործունեության առանձնահատկություններին, նախադեպային իրավունքի վերջին զարգացումներին, դրա փաստարկման մեթոդաբանությանը: Միջազգային ձմեռային դպրոցի մասնակիցների հետ քննարկվել են Հայաստանի իրավական համակարգում եվրոպական չափանիշների և հիմնարար իրավական արժեքների ներդրման գործընթացները, ինչպես նաև ուսանողներին հետաքրքրող մի շարք մասնագիտական հարցեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

**ԵՎՐԱՍԻԱ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՎ «ՏԱԹԵՎ» ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ
ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՅՑ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**



ՀՀ Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են «Տաթև» դպրոցի և «Եվրասիա» ավագ դպրոց-վարժարանի սովորողները: Բարձր դատարանում ճանաչողական այցից հետո երիտասարդները հանդիպումներ են ունեցել Սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի փորձագետներ Ֆենյա Աղաբեկյանի և Սամվել Հակոբյանի հետ:

Հանդիպումների ընթացքում Սահմանադրական դատարանի փորձագետները ներկայացրել են հայկական սահմանադրական իրավունքի զարգացման առանձնահատկությունները, անդրադարձել Հայ ժողովրդի կողմից պետականահաստատ փաստաթղթերում ամրագրված հայոց պետականության հիմնարար և անհաղթահարելի սկզբունքների և համազգային նպատակների նշանակությանը՝ հայկական պետականության կառուցման և պահպանման գործում: Աշակերտները տեղեկացել են նաև վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրի կամքի իմաստավորման պետականապահպան առաքելությանը:

Առանձնակի ուշադրություն է հրավիրվել Սահմանադրական դատարանի՝ որպես Բարձրագույն դատական ատյանի կազմավորման կարգի և գործունեության նպատակների վրա՝ ընդգծելով Սահմանադրական դատարանի տեղն ու դերը պետական մարմինների համակարգում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ



Սահմանադրական դատարանում հյուրընկալվել են «Ուսմունք» ավագ դպրոցի և Լ. Միրիջանյանի անվան թիվ 155 հիմնական դպրոցի աշակերտները: Այցի շրջանակներում աշակերտները հանդիպում են ունեցել Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի հետ: Ողջունելով աշակերտներին՝ Բարձր դատարանի նախագահը հույս է հայտնել, որ նման այցերը դրական ազդեցություն կունենան պատանիների քաղաքացիական կայացման և մասնագիտական կողմնորոշման վրա: Նախագահին ընդգծել է կրթության կենսական նշանակությունը հայկական պետականության կառուցման և զարգացման գործում:

Սահմանադրական դատարան ճանաչողական այցերի ընթացքում ՀՀ ՍԴ իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի փորձագետ Ֆենյա Աղաբեկյանն աշակերտներին ներկայացրել է Հայաստանի Հանրապետության պետականահենք փաստաթղթերի համակարգը, սահմանադրական կարգի հիմունքները, պետականության սահմանադրական ինքնությունը պայմանավորող գերակա պետաիրավական արժեքներն ու մարդու իրավունքների և ազատությունների համակարգի ընդհանուր գաղափարաբանությունը:

Այնուհետև Ֆենյա Աղաբեկյանը պատասխանել է աշակերտներին հետաքրքրող մի շարք հարցերի:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

**ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ**



«Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական Ալինա Փխրիկյանը մայիսի 22-ին մասնակցել է «Կին առաջնորդները արդարադատության ոլորտում. արդարության ձևավորում կանանց ներառման միջոցով» խորագրով պանելային քննարկմանը, որի ընթացքում բանախոսները ներկայացրել են սեփական փորձը, անդրադարձել իրենց հաստատություններում կանանց ներկայացվածությանը, ինչպես նաև արդարադատության ոլորտում կանանց ներգրավվածության հետագա միտումներին:

Ալինա Փխրիկյանը, ներկայացնելով արդարադատության ոլորտում իր բազմամյա փորձը, նշել է, որ այսօր Սահմանադրական դատարանում հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կեսից ավելին կանայք են: Ընդհանուր դատական համակարգում կին դատավորների ներգրավվածությունը կազմում է ավելի քան 30 տոկոս:

Արդարադատության ոլորտում կանանց դերի և ներգրավվածության բարձրացմանը նվիրված քննարկումը կազմակերպվել է ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի կողմից:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ XIX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ



2024 թ. մայիսի 21-ից 24-ը Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանը Մոլդովայի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Դոմինիկա Մանուլեի հրավերով Քիշնևում մասնակցել է Եվրոպական սահմանադրական դատարանների վեհաժողովի XIX համագումարին: Վեհաժողովի մասնակիցներին ողջունել է Մոլդովայի Հանրապետության նախագահ Մայա Սանդուն: Տիկին Սանդուն բարձր է գնահատել Եվրոպական սահմանադրական դատարանների վեհաժողովի XIX համագումարի անցկացումը Մոլդովայի մայրաքաղաքում՝ վեհաժողովի մասնակիցներին մաղթելով արդյունավետ աշխատանք:

Միջոցառմանը մասնակցել են ավելի քան 100 մասնակիցներ՝ Եվրոպական սահմանադրական դատարանների նախագահներ և դատավորներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Սիոֆրա Օ'Լիորին, Վենետիկի հանձնաժողովի նախագահ Քլեյր Բազի Մալաուրեն, Եվրոպական միության արդարադատության դատարանի ներկայացուցիչներ, Ֆրանկոֆոն սահմանադրական դատարանների ասոցիացիայի, Արաբական սահմանադրական դատարանների և խորհուրդների միության, Աֆրիկյան սահմանադրական իրավասությունների կոնֆերանսի, Սահմանադրական դատարանների Եվրասիական ասոցիացիայի, Պորտուգալախոս երկրների

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(114)2024

սահմանադրական իրավասությունների կոնֆերանսի ներկայացուցիչներ:

Եվրոպական սահմանադրական դատարանների վեհաժողովի XIX համագումարում վեհաժողովի նախագահությունը փոխանցվել է Ալբանիային:

Եվրոպական սահմանադրական դատարանների վեհաժողովը միավորում է սահմանադրական վերահսկողություն իրականացնող եվրոպական 40 սահմանադրական կամ համարժեք դատարանների ներկայացուցիչների: Այն ներկայացնում է սահմանադրական վերահսկողությամբ լիազորված դատական մարմինների միջև բազմակողմ համագործակցության եվրոպական կարևորագույն հարթակներից մեկը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** ՏԵՂԵԿԱԳԻՐ **◆** 2(114)2024

2024 թվականի մարտի 26-ին Սահմանադրական դատարանի պատվիրակությունը՝ փոխնախագահ պարոն Վահե Գրիգորյանի գլխավորությամբ, դատավորներ տիկին Սեդա Սաֆարյանի և պարոն Էդգար Շաթիրյանի, ինչպես նաև դատարանի աշխատակազմի աշխատակիցների մասնակցությամբ այց է կատարել Միջազգային քրեական դատարան (Հաագա, Նիդերլանդներ):

Սահմանադրական դատարանի պատվիրակությանն ընդունել է Միջազգային քրեական դատարանի վերաքննիչ պալատի նախագահ, դատավոր Գոչա Լորդկիպանիձեն: Հանդիպման ընթացքում դատավոր Լորդկիպանիձեն ողջունել է Սահմանադրական դատարանի պատվիրակությանը՝ Հայաստանից առաջին դատական պատվիրակության ՄՔԴ այցի կապակցությամբ, քննարկվել են ՄՔԴ-ում գործերի քննության առանձնահատկությունները և Հռոմի Կանոնադրության դրույթների արդյունավետ կիրառմանն ուղղված դատարանների երկխոսության կարևորությունը, թե՛ ներպետական, թե՛ միջազգային իրավական հարթակներում:

Այցիավարտին ՄՔԴ նախագահ տիկին Տոմոկո Ականեի հետ կարճատև հանդիպման ընթացքում փոխնախագահ Գրիգորյանը և նախագահ Ականեն ողջույնի խոսքեր են փոխանցել միմյանց դատարաններին, փոխնախագահ Գրիգորյանը շնորհավորել է նախագահ Ականեին 2024 թ.-ի մարտին ՄՔԴ նախագահ ընտրվելու կապակցությամբ:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ
ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ԵՎ
ԴԱՏԱԿԱՆ ԱՅԼ ԱՅՅԱՆՆԵՐ**



Նիդերլանդների Թագավորություն կատարած այցի շրջանակներում Սահմանադրական դատարանի փոխնախագահ պրն. Վահե Գրիգորյանի գլխավորած պատվիրակությունը (մասնակցությամբ դատավորներ տկն. Սեդա Սաֆարյանի և պրն. Էդգար Շաթիրյանի, ինչպես նաև դատարանի աշխատակազմի աշխատակիցների) մարտի 28-ին հյուրընկալվել է Նիդերլանդների Թագավորության Գերագույն դատարանում:

Գերագույն դատարանի քրեական պալատի դատավոր Իբո Բուրումայի հետ հանդիպմանը քննարկվել են Նիդերլանդների Թագավորությունում սահմանադրական արդարադատության մասնագիտացված մարմինների դերակատարությունը՝ պետությունների սահմանադրական ինքնության պահպանման հարցում:

Նիդերլանդների Թագավորություն կատարած այցի շրջանակներում Սահմանադրական դատարանի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել նաև Նիդերլանդների Թագավորության Դատական խորհրդում, Պետական խորհրդում և Ամստերդամի դատարանում:

ՀՀ ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ Է ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահի հրավերով ՀՀ Բարձր դատարանի դատավորներ Երվանդ Խունդկարյանը և Հովակիմ Հովակիմյանը 2024 թվականի ապրիլի 4-ից 5-ը պաշտոնական այց են իրականացրել Բելառուսի Հանրապետություն՝ մասնակցելու Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի 30-ամյակին նվիրված՝ **«Սահմանադրության գերակայությունը. Սահմանադրական փոփոխությունները և սահմանադրական վերահսկողության ժամանակակից զարգացումը»** թեմայով միջազգային վեհաժողովին:

Վեհաժողովի մասնակիցներին ուղղված իր ելույթ-ուղերձում ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանը, շնորհավորելով բելառուս գործընկերներին, նշել է, որ երեք տասնամյակ առաջ՝ անկախությունից հետո Բելառուսի Հանրապետությունում Սահմանադրական դատարանի ստեղծումը շրջադարձային է եղել երկրում մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության գործում՝ դառնալով պետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման երաշխավորը՝ սահմանադրական արդարադատության իրականացման միջոցով:

«Դատարանի որոշումներն արտացոլում են բելառուսական հասարակության դինամիկ զարգացումը՝ անդրադառնալով բարդ իրավական և բարոյական խնդիրների: Սահմանադրական դատարանն իր որոշումներով ոչ միայն լուծում է իրավական վեճերը, այլև նպաստում է այնպիսի օրենքների ընդունմանը, որոնք համահունչ են ինչպես բելառուս ժողովրդի ձգտումներին, այնպես էլ ժամանակակից զարգացումներին»,- նշել է ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր Երվանդ Խունդկարյանը:

ՍԱՀՄԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՐԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ծ ԵՂԵԿԱԳԻՐ 2(114)2024

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ,
Է. ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Ստորագրված է տպագրության՝ 10.08.2024թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը 70X100 1/16
Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N 2(114)2024
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 2(114)2024
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 2(114)2024

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am

